

ԾՕՀ

Օր. № 2009



**ԱԴՐԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՆԻ ՀԱԿԱՀԱՅ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ**

Էլքհուր - 2007



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍՈՐԵԹԵՐ  
ԱՅԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ



ՓԻՏԱՌԻՍՈՒՄՆԵՍԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

4-23-2001

115-1000-2742

SEARCHED INDEXED  
SERIALIZED FILED  
APR 23 2001  
FBI - MEMPHIS



APR 23 2001



ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ  
ԳԻՏԱՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ  
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԾՕՀ  
Օր. № 209

ՏԻԳՐԱՆ ԴԱՎԻԹԱՎՅԱՆ

ԱՂԴԲԵԶԱՆԻ ՀԱՏՈՒԿ  
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱՀԱՅ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Մենագրություն



ԵՐԵՎԱՆ - 2017

9. p. 855

*Հաստատվում է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի  
գիտական խորհրդի և ՀՀ ԱԿՄ գիտաառարկայական կենտրոնի  
խորհրդի որոշումով*

Խմբագրությամբ՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պ.գ.դ., պրոֆեսոր  
Ռ. Ա. Մախրատյանի և ի.գ.թ., դոցենտ Ա. Լ. Քինոսկյանի

Գրախոսներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Վ. Հ. Վերաբյան,  
պ.գ.թ., դոցենտ Ա. Ա. Փաշայան,  
պ.գ.թ. Լ. Ս. Հովսեփյան

**Դավիթբաղյան Տիգրան Արշալույսի**

Դ 242 Աղբյուրների հատուկ ծառայությունները և դրանց հակահայ  
գործունեությունը / Տ. Դավիթբաղյան, Եր.: ՀՀ կառավարությանն առընթեր  
ազգային անվտանգության ծառայություն, 2017, 301 էջ:

Գրքում ներկայացված են Աղբյուրների Դեմոկրատական Հանրապետու-  
թյան (1918-1920թթ.), Աղբյուրների Խորհրդային Սոցիալիստական Հանրապետու-  
թյան (1920-1991թթ.) և ներկայիս Աղբյուրների Հանրապետության հատուկ ծա-  
ռայությունները, դրանց կառուցվածքները, գործունեության ուղղությունները,  
իրավական նիւթերը, այդ ծառայությունների առջև դրված նպատակները,  
խնդիրները, ինչպես նաև հակահայ գործունեությունը առաջին անգամ գիտա-  
կան շրջանառության մեջ դնելով արխիվաձևի և փաստազտական մի շարք նյութեր:

Գիրքը նախատեսված է ՀՀ և Արցախի պետական իշխանության և կա-  
ռավարման մարմինների, հատկապես պաշտպանության, արտաքին գործերի  
նախարարությունների, ոստիկանության ղեկավար կազմերի համար:

Աշխատությունը կարող է օգտագործվել նաև ռազմաուսումնական  
հաստատություններում որպես ուսումնական նյութ:

НАУЧНО-УЧЕБНЫЙ ЦЕНТР  
СЛУЖБЫ НАЦИОНАЛЬНОЙ  
БЕЗОПАСНОСТИ РА

ИНСТИТУТ ВОСТОКОВЕДЕНИЯ  
НАЦИОНАЛЬНОЙ АКАДЕМИИ НАУК РА

**ТИГРАН ДАВИТАВЯН**

**СПЕЦСЛУЖБЫ АЗЕРБАЙДЖАНА И ИХ  
АНТИАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ**

*Рекомендовано к печати научным советом Института  
востоковедения НАН РА и советом Научно-учебного  
центра СИБ РА*

RESEARCH AND TRAINING CENTER  
OF THE SERVICE OF NATIONAL SECURITY  
OF RA

INSTITUTE OF ORIENTAL STUDIES OF  
NATIONAL ACADEMY OF SCIENCES OF RA

*TIGRAN DAVITAVYAN*

***AZERBAIJAN'S SPECIAL SERVICES  
AND THEIR ANTI-ARMENIAN ACTIVITY***

*Is recommended for publication by a decision of Scientific Council of  
Institute of Oriental Studies of RA National Academy of Sciences and  
Council of Research and Training Center of SNS of RA*

YEREVAN-2017

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ.....9

## ԳԼՈՒԽ 1. ԱՊՐԲԵՋԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՑ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հատուկ ծառայությունների ստեղծումը և դրանց գործունեության ուղղությունները.....20

1.2. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը.....28

1.3. Ռազմական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդդեմ Հայաստանի առաջին հանրապետության.....41

## ԳԼՈՒԽ 2. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Խորհրդային Ադրբեջանի հատուկ ծառայությունները.....53

2.2. Խորհրդային Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործունեության (այդ թվում՝ հակահայ) որոշ դրվագներ.....63

## ԳԼՈՒԽ 3. ԱՊՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունները և դրանց գործունեության իրավական հիմքերը.....78

3.2. Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղություններն ու խնդիրները.....92

3.3. Ադրբեջանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարությունում տիրող կոռուպցիոն բարքերի և

նախարարության վերակազմավորման շուրջ (2015թ.).....	104
3.4. Աղբրեջանի հատուկ ծառայությունների գործունեությունը երկրում էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող հետապնդումների համատեքստում.....	125
3.5. Աղբրեջանի իշխանությունների և հատուկ ծառայությունների կողմից իրականացվող քաղաքական հետապնդումները.....	137
<b>ԳԼՈՒԽ 4. ԱՂԲՐԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ՄԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ</b>	
4.1. Հայերի կոտորածներն Աղբրեջանում և այդ երկրի հատուկ ծառայությունների դերը դրանց իրականացման գործում (1988-1991 թթ.).....	158
4.2. Աղբրեջանի հատուկ ծառայությունների գործողություններն Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ.....	169
4.3. Հայաստանի և Արցախի դեմ Աղբրեջանի հատուկ ծառայությունների հետախուզական քայքայիչ գործունեությունը.....	188
4.4. Աղբրեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների կողմից համացանցի միջոցով Հայաստանի և Արցախի դեմ իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեության որոշ առանձնահատկությունների շուրջ.....	215
4.5. Հայաստանի և Արցախի դեմ Աղբրեջանի դիվերսիոն-հետախուզական գործունեության որոշ դրվագներ.....	224
4.6. «Հայաստանի և Աղբրեջանի միջև խաղաղության հարթակ»-ը որպես Աղբրեջանի հատուկ ծառայությունների նախագիծ.....	236
<b>ԱՄՓՈՓՈՒՄ</b> .....	261
<b>Резюме</b> .....	270
<b>Summary</b> .....	273
<b>ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՐԵՋԱՆԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ</b> .....	276

Ադրբեջանի հակահայ ագրեսիվ քաղաքականությունը կյանքի կոչող պետական առանցքային կառույցներից են այդ երկրի հատուկ ծառայությունները, որոնց գործունեության հետազոտումը կարևոր գիտական և գործնական նշանակություն ունի Ադրբեջանի Հանրապետության ռազմաքաղաքական դեկավարության արդի հակահայ քաղաքականության վերլուծման տեսանկյունից:

1988 թվականի սկզբներին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի (ԼՂԻՄ) բնակչությունն սկսեց ինքնորոշման գործընթաց, որն ամրագրվեց մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի որոշման մեջ՝ դուրս գալ Ադրբեջանական ԽՍՀ (ԱՌՍՀ) կազմից և մտնել Հայկական ԽՍՀ (ՀԽՍՀ) կազմի մեջ: ԼՂԻՄ բնակչության ինքնորոշման իրավունքի իրացմանը միտված քայլերն Ադրբեջանում հանգեցրին հայության նկատմամբ էթնիկ գտումների, կոտորածների ու հակահայ քաղաքականության խորացմանը, ինչը 1991 թ. վերաճեց լայնամասշտաբ պատերազմի հայ ժողովրդի դեմ, որը տարբեր դրսևորումներով շարունակվում է մինչ օրս: Մասնավորապես կարևորվում է այն փաստը, որ Ադրբեջանի և Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միջև 1994 թ. կնքված զինադադարից հետո Ադրբեջանը պատերազմը տեղափոխեց այլ դաշտ՝ դիվերսիոն-հետախուզական, տեղեկատվական-հոգեբանական, քարոզչական, տեղեկատվական-տեխնիկական (կիրերոլորտ) և այլն, որտեղ առաջնային դերակատարում վերապահվեց հատուկ ծառայություններին:

Հաշվի առնելով Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության<sup>1</sup> (այսուհետ նաև Արցախ) դեմ իրականացվող թշնամական քաղաքականությունը, կնքված զինադադարի պարբերական խախտումները, ինչ-

<sup>1</sup> 2017 թ. փետրվարի 20-ին Արցախում տեղի ունեցած հանրաքվից հետո որպես երկրի պաշտոնական անվանում նախընտրելի է կիրառել «Արցախի Հանրապետություն» եզրույթը, իսկ հավանարտության վերաբերյալ անհրաժեշտ է կիրառել «Ղարաբաղյան նիմնախնդիր», «Ղարաբաղյան նիմնահարց», «Լեռնային Ղարաբաղի (ԼՂ) նիմնախնդիր», «ԼՂ նիմնահարց» եզրույթները:

պես նաև դիվանագիտական ոլորտում բացահայտ հակահայ գործողությունները՝ առավել քան արդիական է դառնում այդ երկրի հատուկ ծառայությունների՝ ՀՀ և Արցախի դեմ իրականացվող գործողությունների հետազոտումը: Աղբրեջանի ազդեցիվ գործողություններն օւղակիորեն վտանգում են ՀՀ և Արցախի ազգային անվտանգությունը, և այս համատեքստում լուրջ սպառնալիք է հանդիսանում Աղբրեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը:

Թեմայի ուսումնասիրությունն անմիջականորեն առնչություն ունի ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության և ռազմական դոկտրինի հետ: Մասնավորապես ՀՀ ռազմական դոկտրինի I գլխի III կետի VIII ենթակետով ՀՀ ռազմական անվտանգության արտաքին սպառնալիք է հանդիսանում ՀՀ դեմ օտարերկրյա կազմակերպությունների, անօրինական զինված խմբավորումների և հատուկ ծառայությունների գործունեությունը<sup>2</sup>:

Աղբրեջանական հատուկ ծառայություններն ակտիվ մասնակցություն են ունեցել Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետությունում (ԱՂՀ) 1918-1920, Աղբրեջանական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունում 1988-1991 թթ. հայկական կոտորածների, հայ ժողովրդի նկատմամբ էթնիկ զտումների իրականացմանը, ինչպես նաև XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին թե՛ ՀՀ տարածքում, թե՛ ՀՀ տանհաններից դուրս հայ ժողովրդի դեմ նախապատրաստել անարեկչական գործողություններ, մահափորձ ՀՀ նախագահի դեմ, դիվերսիա Հայաստանի արտոմային էլեկտրակայանի նկատմամբ և այլև, որոնք նախապատրաստման փուլում ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից բացահայտվել և խափանվել են:

Աղբրեջանի գործողություններին մեծապես աջակցել է Թուրքիան, որի հետ Աղբրեջանն ունի ռազմաքաղաքական սերտ հարաբերություններ:

<sup>2</sup> Հայաստանի Հանրապետություն ռազմական դոկտրին (ընդունվել է 2007 թ. դեկտեմբերի 25-ին), <http://www.mil.am/media/2015/07/768.pdf>:



Նշված իրողությունները փաստում են, որ թեման խիստ արդիական է և ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևոր նշանակություն:

Աշխատության նպատակն է հետազոտել և մեկ ամբողջության մեջ ներկայացնել աղբյուրաբանական հատուկ ծառայություններն ու դրանց հակահայ գործունեությունը:

Ուսումնասիրությունն իրականացնելիս խնդիր է դրվել հայտնաբերել Աղբյուրաբանի հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեության վերաբերյալ արխիվային նյութեր, փաստեր, փաստաթղթեր, հետազոտել դրանք և կատարել համակողմանի վերլուծություն: Մեր առջև դրել ենք նաև հետևյալ խնդիրները.

- ուսումնասիրել ԱՂՀ և ԱՄՍՀ հատուկ ծառայությունները և դրանց գործունեության (այդ թվում՝ հակահայ) բնույթը,
- քննության առնել աղբյուրաբանական հատուկ ծառայությունների մարմինների կառուցվածքը,
- պարզաբանել Աղբյուրաբանի Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության իրավական հիմքերը և հիմնական ուղղությունները,
- քննության ենթարկել Աղբյուրաբանի Հանրապետության հատուկ ծառայությունների առջև դրված նպատակները, խնդիրները,
- ուսումնասիրել և քննական վերլուծության ենթարկել Աղբյուրաբանում և Արցախում իրականացված հայկական կոտորածների ու էթնիկ զտումների գործում աղբյուրաբանական հատուկ ծառայությունների մասնակցության փաստերը,
- վերլուծել Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ տարբեր ձեռնարկումներում աղբյուրաբանական հատուկ ծառայությունների ունեցած դերակատարությունը,
- ներկայացնել աղբյուրաբանական հատուկ ծառայությունների կողմից Հայաստանի և Արցախի դեմ իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեությունը, վերհանել այդ գործունեության առանձնահատկությունները:

Աշխատությունն իր բովանդակությամբ առաջին փորձն է հնարավորինս համակողմանի ներկայացնելու աղբյուրաբանական

հատուկ ծառայությունների պատմությունը, կառուցվածքը (ինչպես ԱՂԷ-ի և ԱԽԱՀ-ի, այնպես էլ ներկայիս Ադրբեջանի), դրանց առջև դրված խնդիրները, գործունեության հիմնական ուղղությունները, իրավական հիմքերը և հակահայ գործունեության բնույթը: Փաստագրական, այդ թվում՝ արխիվային բազմաթիվ նյութեր, կապված ադրբեջանական հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեության հետ, լուսաբանվում և քննական վերլուծության են ենթարկվում առաջին անգամ:

Աշխատանքում ներկայացվում են Ադրբեջանի հատուկ ծառայությունների կառուցվածքները, որոնց վերաբերյալ տեղեկություններն այդ երկրում գաղտնի են: Դրանց ամբողջական պատկերն ստացել ենք հիմնվելով բաց աղբյուրներից ստացված տեղեկատվության համադրման, համեմատության, վերլուծության վրա:

Վերլուծվում և ներկայացվում են նաև Ադրբեջանի իշխանությունների կողմից իրականացված հայահալած քաղաքականության՝ ազգային խտրականության, կոտորածների, էթնիկ զտումների և Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ այդ երկրի հատուկ ծառայությունների մասնակցության փաստերը, այդ ծառայությունների կողմից ծրագրված ահաբեկչական, դիվերսիոն-հետախուզական և այլ քայքայիչ գործողությունները:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերը և աշխատանքում տեղ գտած փաստավավերագրական նյութերի զգալի մասը նս մեզանում գիտական շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ:

Ժամանակագրական առումով աշխատությունն ընդգրկում է 1918 թ.-ից մինչև մեր օրերը: Ուսումնասիրությունն սկսել ենք Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության շրջանից, անդրադարձել նորաստեղծ այդ պետության և նաև Ֆորեհրդային Ադրբեջանի հատուկ ծառայություններին ու դրանց հակահայ գործունեությանը, ինչը հնարավորություն է տվել վերհանել XX դարի վերջերի, XXI դարի սկզբների Ադրբեջանի հակահայ քաղաքականության պատմական հիմքերը և շարժառիթները:

Աշխատության համար որպես մեթոդաբանական հիմք օգտագործվել են ինչպես պատմահամեմատական մեթոդը, այնպես

է Ադրբեջանի հատուկ ծառայությունների և դրանց հակահայ գործունեության վերաբերյալ առկա աղբյուրների, նյութերի, փաստերի համադրման, քննական վերլուծության մեթոդները և օբյեկտիվության սկզբունքները:

Աշխատանքը գրվել է հայերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն, թուրքերեն տարատեսակ աղբյուրների, արխիվային ու փաստավավերագրական նյութերի, հետազոտական գրականության հիման վրա:

Օգտագործվել են տասնյակ չիրատարակված փաստաթղթեր, արխիվային նյութեր: Լայնորեն օգտագործվել են ինչպես Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ), այնպես էլ ՀԱԱ հասարակական-քաղաքական բաժնի, ՀՀ դատական դեպարտամենտի արխիվի, ՀՀ անվտանգության մարմինների պատմության թանգարանի նյութերը: Դրանց մի մասը տեղ են գտել մինչ օրս հրատարակված փաստաթղթերի ժողովածուներում, իսկ մի մասը, որոնք վերաբերում են զուտ Ադրբեջանի հատուկ ծառայություններին և դրանց գործունեության բնույթին, մեթոդներին ու ձևերին, դեռևս հրատարակված չեն:

Որպես սկզբնաղբյուր օգտագործել ենք նաև փաստաթղթերի ժողովածուներ<sup>3</sup>, ժամանակակիցների հուշագրություններ<sup>4</sup>,

<sup>3</sup> Գաղտնի փաստաթղթերը Ադրբեջանի դատարանական գործունեությունից մի էջ, Եր., 1920: Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (ցողարական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2000: Հայերի կոտորածները Քաջվի և Ելիզավետպոլի նահանգներում 1918-20 թթ., փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 2003: Մուլյան Յու., Հայաստան-Ադրբեջան հարաբերությունների պատմությունից 1918-1920 թվականներ, Եր., 2009: Մկրտչյան Ե., Արցախյան գրառամներ (փաստավավերագրական ժողովածու), Եր., 2001: Վիրաբյան Վ., Հայաստանի պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Արխիվային փավերագրեր, հավելված 1-5, Եր., 2015: Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и политике, Документы и комментарии, т. I, М., 2008. Нагорный Карабах в международном праве и политике, Комментарии к документам, т. II, М., 2009. Лубянка. ВЧК-КГБ. Документы, Справочник. Москва, 1997. Нагорный Карабах в 1918 - 1923 гг., Сборник документов и материалов, сост. В. А. Миквадзе и др., Ер., 1992. Чехисты Азербайджана. Документы, очерки, рассказы. Баку, 1981.

<sup>4</sup> Արամայիս (Միտոս Տեր-Ղանիկյան), Նարարաղի տազնապը (26 ապրիլի - 26 հուլիսի 1919 թ.), Եր., 1993: Բշխանյան Բ., Քաջուի մեծ սարսափները, (անկնատային տատանասիրություն անպոստերեսան անցքերի 1918), Թիֆլիս, 1920:

պաշտունական աղբյուրներ, օրենքներ և իրավական այլ ակտեր, փաստավավերագրական ֆիլմեր, որոնք հեռաբովորություն են տվել ավելի հանգամանալից հասկանալու աղբրեջանական հաստուկ ծառայությունների գործունեության, այդ թվում հակահայ, առանձնահատկությունները, շարժառիթները, ձևերը, մեթոդները, իրավական հիմքերը, կառուցվածքը: Աղբրեջաներենից թարգմանվել և լայնորեն օգտագործվել են մոտ երկու տասնյակ իրավական ակտեր:

1918-1920 թթ. աղբրեջանական հետախուզական մարմինների հակահայ գործունեության վերաբերյալ տեղեկություններ ենք հայթայթել 1919 թվականից Բաքվում գտնվող Հայաստանի առաջին հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչների կողմից ՀՀ արտաքին գործերի նախարարություն և այլ ստորաբաժանումներ ուղարկված Բազմաթիվ հեռագրերից, զեկուցագրերից, նամակներից (նյութերը պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվում), ՀՀ ռազմական նախարարության տպարանում 1920 թ. հրատարակված՝ «Գաղտնի փաստաթղթերը. Աղբրեջանի դառադրական գործունեությունից մի էջ» ժողովածուից (ժողովածուի մեջ տեղ են գտել Երևանում գտնվող Աղբրեջանի դիվանագիտական ներկայացուցիչների հեռագրերը Բաքու և Թբիլիսի), ինչպես նաև պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Վիրաբյանի<sup>5</sup>, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Յու. Ղուլյանի աշխատություններից<sup>6</sup>:

---

Իրազկի (Յակովբ Տեր-Յակովբեան), Մօտիկ անցեալից պատմական դէպքեր և սպլուններ (1917-1922), Պեյրուք, 1956: Նառոնչյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Տեյրուք, 1968: Կրիվոպուտովկ Վ., Ծովվահույզ՝ Նարարադ, Եր., 2008: Նաթալի Ե., Թուրքերը և մենք, Թուրքիզմը Անգորայի Պաշտ և թրքական օրինեթափան, Եր., 2015: Ռուբեն, Հայ լեռափոխանանի մը յիշատակները, Թեհրան, 1962: Մասունի Կ., Մալիսյան խոսվությունները և թարգարական ապստամբ շրջանները, Թեհրան, 1982: Վրացյան Ա., Անկախ և միացյալ Հայաստան, Եր., 1920: Վրացյան Ա., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993: Քաջազունի Յովի, Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993: Зарезина, Тургун и нахчаранова, Парис 1930. Кривоуцкая В., Мавреков Кривоуц, Ер., 2013. Mehmed-zade Mirza-Bala, Milli Azerbaycan hareketi: Milli az. «Mədəniyyət» xalk firkası tarifi, Berlin, 1938:

<sup>5</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները (Հայոց քաղաքական պատմության էջերից), Եր., 1999, Հայաստանի

Աղբրեջանական հատուկ ծառայությունների կառուցվածքի, գործունեության իրավական հիմքերի, ուղղությունների, դրանց առջև դրված խնդիրների հետազոտման համար, բացի թարգմանված իրավական ակտերից (օրենքներ, կանոնադրություններ, հրամաններ, որոշումներ), որպես աղբյուր օգտագործել ենք նաև աղբրեջանական պաշտոնական կայքէջերը (նախագահի, հատուկ ծառայությունների, ուժային կառույցների), ինչպես նաև Աղբրեջանի հատուկ ծառայությունների ղեկավարների մամուլի ասուլիսների մասին նյութերում, տարբեր նյութների մասին աղբրեջանական էլեկտրոնային լրատվամիջոցներում առկա տեղեկությունները աղբրեջանական հատուկ ծառայությունների վերաբերյալ, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոնում հրատարակված նյութերը<sup>7</sup> և այլն:

Աղբրեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեության ուսումնասիրման համար որպես հիմնական աղբյուրներ օգտագործվել են 1988-1994 թթ. պարբերական մամուլը, մասնավորապես «Արցախկանչ», «Երևկոյան Երևան», «Ջարթօնք», «Մտրիդայի Հայաստան», «Մտրիդային Ղարաբաղ», «Հայաստանի Հանրապետություն», «Ուրբաթ», «Օրինապահության դիրքերում», «Права» թերթերը, ՀՀ Ազգային արխիվում պահվող բազմաթիվ վկայություններ, փաստեր, հաղորդագրություններ, Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի տեղև-

---

Հանրապետության պետական անվտանգության համակարգի տեղծման ու գործունեությունը 1918-1920 թթ., Եր., 2006, Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., 2003, Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., 2009, Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի տեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., 2015:

<sup>6</sup> Ղուլյան Յու., Հայաստան-Աղբրեջան հարաբերությունների պատմությունից 1918-1920 թվականներ, Եր., 2009, Աղբրեջանի հակահայկական քարոզչությունը 1918-1920 թթ., [http://traber.asj-oa.am/479/1/1\\_Gulyan\\_%2B12.pdf](http://traber.asj-oa.am/479/1/1_Gulyan_%2B12.pdf), Հայերի իրավադատարական դրաթյունը Աղբրեջանում (1918 թ. սեպտեմբեր-նոյեմբեր), Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2013, թիվ 140.6, էջ 58-67, Հայերի մասնակցությունը Աղբրեջանի իշխանության մարմիններին (1919 թ. փետրվար-1920 թ. ապրիլ), Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2011, թիվ 134.6, էջ 3-14:

<sup>7</sup> История органов безопасности Азербайджана, Материалы по истории органов безопасности Азербайджана, Азатчилик и музехо МНБ АР, ՀՀ ԱԱԾ ԳՈՒՆ, Եր., 2008:

կազմերը, Մ. Գրիգորյանի հեղինակած «Սովորական ցեղասպանություն» ֆիլմաշարերում տեղ գտած փաստագրական նյութերը, ականատեսների վկայություններ, ԽՍՀՄ ՆԳՆ-ի, ՊԱԿ-ի, դատախազության, ՀՀ ազգային անվտանգության մարմինների պատմության թանգարանում պահվող որոշ նյութեր, Հայաստանի ՊԱԿ-ի ղեկավարների զեկույցներ և այլն:

Աշխատությունը մշակելիս օգտագործել ենք նաև հայ նշանավոր հետազոտողների, պատմաբանների աշխատությունները, հոդվածները, մասնավորապես՝ Ա. Ավագյանի<sup>8</sup>, Ա. Գյուլյան-դանդանի<sup>9</sup>, Ա. Հովսեփյանի<sup>10</sup>, Ա. Մանուկյանի<sup>11</sup>, Բ. Ուլուբաբյանի<sup>12</sup>, Գ. Չոբանյանի<sup>13</sup>, Գ. Ստեփանյանի<sup>14</sup>, Դ. Կնյազյանի<sup>15</sup>, Թ. Հակոբյանի<sup>16</sup>, Է. Ջոհրաբյանի<sup>17</sup>, Լ. Հովսեփյանի և Վ. Իվանովի<sup>18</sup>, Հ. Բաղդասարյանի<sup>19</sup>, Հ. Դեմոյանի<sup>20</sup>, Մ. Աղաջանյանի, Է. Ասատրյանի,

<sup>8</sup> Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան վտարանդիությունը Թուրքիայի արաբին քաղաքականության համատեքստում (1920-71 թթ.). Եր., 2011, Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», Եր., 2006, թիվ 3 (49):

<sup>9</sup> Գիլյանդանեան Ա., Անդրկովկասի Հանրապետությունները, «Հայրենիք», թիվ 4, Բառտն, 1967:

<sup>10</sup> Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր, Եր., 2012:

<sup>11</sup> Անրիկյան Ա. (Մանուկյան Ա.), Դոկտոր, դուք հետախույզ էք, Եր., 2000:

<sup>12</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994:

<sup>13</sup> Չոբանյան Գ., Իզլամի քաղաքական դերը հետխորհրդային Ադրբեջանում, Լորավանք, 21-րդ դար, Եր., 2013:

<sup>14</sup> Ստեփանյան Գ., Հայերի կոստորածներն ու ինքնազաջողականության մարտերը Լոռիի և Արևի գավառներում 1918-1920 թթ., <http://genhist.asj-qa.am/54/1/23-32.pdf>

<sup>15</sup> Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20 թթ., Եր., 2008:

<sup>16</sup> Հակոբյան Թ., Կանաչ և սև արցախյան օրագիր, Եր., 2008, Հայացք Արարատից, հայերը և թուրքերը, Եր., 2012:

<sup>17</sup> Ջոհրաբյան Է., Ազգամիջոցի կոմիտեերը Երևանի նահանգում 1918 թ., Եր., 2000: Լոսիտիանյան ինֆանտարի և Հայաստանի «Չաշնակիցները» (1918 թ. ղեկավարները 1920 թ. ապրիլ), Եր., 2002:

<sup>18</sup> Овсепян Л., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Եր., 2010:

<sup>19</sup> Բաղդասարյան Հ., Հայերի էթնիկական մարքում, բռնազաղծ և ցեղասպանությունն Ադրբեջանում 1988-1991 թթ., Եր., 2013:


Ս. Մինասյանի<sup>21</sup>, Ե. Մկրտչյանի<sup>22</sup>, Ռ. Մաֆրաստյանի<sup>23</sup>, Ս. Չոբանյանի<sup>24</sup>, Վ. Բաղդյան<sup>25</sup>, Վ. Հովհաննիսյանի, Ա. Դարբինյանի, Կ. Մանույանի, Հ. Ավրբեջյանի<sup>26</sup>, Վ. Ղազախեցյանի<sup>27</sup> և այլոց:

Հարկ է նշել, որ պատմական գիտությունների դոկտոր Գ. Ստեփանյանի «Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուխի և Արեշ գավառներում 1918-1920 թթ.» հոդվածում առաջին անգամ օգտագործվել է ԱՂՀ-ում գործած «դահիճների կոմիտե» («colladlar komitəsi») կազմակերպության մասին տեղեկությունը, որը պահպանված է Հայաստանի ազգային արխիվում (Ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 7), և մինչ այժմ այլ աղբյուրներում կազմակերպության մասին տեղեկություններ հայտնաբերված չեն:

Սակայն, հատկանշական է, որ հեղինակները (բացառությամբ աղբյուրների) իրենց աշխատություններում աղբյուրական հատուկ ծառայություններին և դրանց գործունեությանը ուղղակիորեն չեն անդրադարձել, քանի որ հատուկ ծառայություններին բնորոշ է գործունեության գաղտնիությունը, բացի այդ էլ, նրանք իրենց առջև նման խնդիր չեն դրել: Օրինակ՝ Է. Ջոնրաբյանը, Յու. Ղուլյանը, Դ. Կելազյանը, Ա. Գյուլխանդանյանը, Վ. Վիրաբյանը, Վ. Ղազախեցյանը և այլոք անդրադարձել են 1918-1920 թթ. հայ-աղբյուրական հարաբերություններին,

4104015

<sup>21</sup> Demoyan G., *Ցեղասպանությունը Կարսի և արածիսյան կոմիտեում*, Եր., 2013.  
<sup>22</sup> Աղաբաբյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Ս., Աղբյուրական ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի ազնուխախ իրավաբաղադրական հետևանքները և դրանց ազդեցությունը սաղանաշրջանային անվտանգության հետևանքների վրա, Եր., 2007:  
<sup>23</sup> Մկրտչյան Ե., Լեռնային Ղարաբաղ, Աղբյուրականի իրականացրած ցեղասպանության անատմիան, Ստեփանակերտ, 2003:  
<sup>24</sup> Մաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ճեղասպանության իրազրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009:  
<sup>25</sup> Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана, Եր., 1993.  
<sup>26</sup> Բաղդյան Վ., Տեսողաշու. 1988-1994 (Ղարաբաղյան ազատամարտ), Ստեփանակերտ, 2011:  
<sup>27</sup> Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանույան Կ., Ավրբեջյան Հ., Ընդդեմ Աղբյուրականի հայաստացի քաղաքականության, ՀՅ Դաշնակցության հրատարակություն, Եր., 2007:  
<sup>28</sup> Ղազախեցյան Վ., Աղբյուրականի քաղաքային գործունեությունը Հայաստանում 1920 թ., Վեմ համախոսական հանդես, 2013 թ. հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43):



փաստել, որ Հայաստանում վխտում էին աղբրեջանական լրտեսներ ու գործակալներ, որոնք փորձում էին տարատեսակ քայքայիչ գործունեության ծավալել Հայաստանում, սակայն չեն արձանագրել, թե այդ լրտեսներն ու գործակալները աղբրեջանական ո՞ր ծառայության կողմից էին գործուղված, ի՞նչ կոնկրետ խնդիրներ ունեին իրենց առջև դրված և գործունեության ի՞նչ մեթոդներ ու ձևեր էին փորձում կիրառել իրենց նպատակին հասնելու համար: Եույնը կարելի է ասել նաև խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանի հայ-աղբրեջանական հարաբերություններին անդրադարձած հեղինակների աշխատությունների մասին: Այսպես, Ս. Չորանյանը, Վ. Բաղդյանը, Ե. Մկրտչյանը, Ա. Կազիսյանը Հ. Բաղդասարյանը, Բ. Ուլուբաբյանը, Վ. Բաղդյանը, Թոմաս դե Կասլը անդրադարձել են թե՛ խորհրդային, թե՛ հետխորհրդային ժամանակաշրջանում հայ-աղբրեջանական հարաբերությունների խեղրին, Մումգայիթում, Կիրովպարադում, Բաքվում իրականացված հայկական ջարդերին, էթնիկ զտումներին, սակայն խորությամբ չի ուսումնասիրվել դրանցում աղբրեջանական հատուկ ծառայությունների դերակատարությունը, սակավ ուսումնասիրված է միայն աղբրեջանական ՕՍՕՆ-ի և ՊԱԿ-ի դերակատարությունը (Բ. Ուլուբաբյան, Ե. Մկրտչյան, Ս. Չորանյան, Ս. Գրիգորյան):

Ինչ վերաբերում է XX դարավերջին և XXI դարակզրին Աղբրեջանում գործած հատուկ ծառայություններին և դրանց հակահայ գործունեությանը, ապա պետք է փաստենք, որ թեման բացարձակապես ուսումնասիրված չէ ո՛չ հայ, ո՛չ էլ օտարագրի հեղինակների կողմից: Այդ իմաստով հետազոտությանը մեծապես նպաստեցին արխիվային նյութերը, փաստաթղթերը, մամուլի հրապարակումները, ՀՀ քրեական օրենսգրքի «Պետական դավաճանության» և «Լրտեսության» հոդվածներով դատապարտված անձանց դատավճիռները, Աղբրեջանի նախագահի հրամանները, որոշումները, աղբրեջանական հատուկ ծառայությունների պաշտոնական կայքէջերը, ՀՀ ազգային անվտանգության մարմինների մամուլի հրապարակումները և այլ նյութեր:

Օգտագործել ենք նաև աղբրեջանցի հետնյալ հետազոտողների ու վերլուծաբանների աշխատությունները, հոդվածները



Արբասյը Քենեանի<sup>28</sup>, Էլշադ Գոջայի<sup>29</sup>, գրող-հրատարակախոս Ադիգյոզալ Մամադովի<sup>30</sup>, Ալիգիսմաթ Քադալովի<sup>31</sup>, Իբրահիմ Իբրահիմովի<sup>32</sup>, փիլիսոփայության դոկտոր Բիհամ Արբասովի<sup>33</sup>, Մեմեդ Ջաֆարլիի<sup>34</sup>, իրավապաշտպան, քաղաքագետ, կոնֆլիկտաբան Արիֆ Յուսուբի<sup>35</sup>: Օգտվել ենք նաև Ադրբեջանի նախկին Ազգային անվտանգության նախարարության հրատարակած «Heydər Əliyev və milli təhlükəsizlik orqanları», (Քարու, 2009), ինչպես նաև ադրբեջանական ՊԱԿ-ի կողմից հրատարակած «Ғекисты Азербайджана. Документы, очерки, рассказы» (Баку, 1981) աշխատություններից:

Սակայն, հարկ է նաև նշել, որ ադրբեջանցի հեղինակների աշխատություններից օգտվելիս կանգնել ենք խնդրի առաջ, քանի որ դրանք մեծամասամբ գրվել են ադրբեջանական իշխանությունների պատվերով, և դրանցում հիմնականում բացակայում է անկողմնակալությունը: «Գրչով պատմություն ստեղծելու» սկզբունքով ադրբեջանցի հետազոտողները նեեզափոխել են պատմությունը, գլխիվայր շուռ տվել պատմական իրողություններն ու փաստերը: Ուստի, ադրբեջանական աղբյուրներն օգտագործելիս, դրանք համադրելով այլ աղբյուրներում առկա փաստերի հետ, փորձել ենք բացահայտել կեղծիքի ու ստի կոնկրետ դրսևորումները:

<sup>28</sup> Abbaslı Kanan, Milli Təhlükəsizlik orqanlarının tarixi inkişaf mərhələlərinin müqayisəli təhlili, 2010, <https://stiaslemler.wordpress.com/2010/12/07/milli-tahlukesizlik-orqanlarinin-tarixi-inkisaf-marhalelerinin-muqayiseli-tahlili/>.

<sup>29</sup> Elşad Qoca, Azərbaycan kəfiyyəti və əks-kəfiyyəti: 1918-1920-ci illərdə, <http://qaynar.info/xeber-azbaycan-kfiyyat-v-ks-kfiyyat-1918-1920-ci-illrd-c31461.html>.

<sup>30</sup> Adigözəl Məmmədov, 60 illik məbəhisəsinə son qoyan kitab, <http://publika.az/p/3905>.

<sup>31</sup> Əliqismət Bədəlov, Vətənin təhlükəsizliyini qorumaq çox şərəfli işdir, Xalq qəzeti, 2009. 20 mart, 5. 6, [http://anl.az/down/meqale/xalqqazeti/xalqqazeti\\_mar2009/73000.htm](http://anl.az/down/meqale/xalqqazeti/xalqqazeti_mar2009/73000.htm).

<sup>32</sup> Ибрагимов Ибрагим, Стратегия эффективного влияния. Внешняя политика, омигкая сила и энергетическая дипломатия Азербайджана в 21-м веке, М., 2016.

<sup>33</sup> Abbasov İham, Azərbaycan Xalq Cümhuriyyəti dövründə milli təhlükəsizlik orqanlarının təşkili və fəaliyyəti, <http://respublica-news.az/index.php/dig-r-x-b-ri-r/dig-r-x-b-ri-r/item/2694-azərbaycan-khalg-cumhuriyyeti-doevrunda-milli-taehhukesizlik-organlarinin-taeshkili-vae-faaliyyaeti>, 20 Mart 2014.

<sup>34</sup> Məmməd Cəfəri, Azərbaycan Demokratik Respublikasının milli təhlükəsizlik orqanları, Bakı, 2004.

<sup>35</sup> Юнусов А., Исламский фактор в Азербайджане, Баку, 2013.

ԱՂՐԲԵՋԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՏՈՒԿ ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱԿԱՀԱՅ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1. Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետության հատուկ  
ծառայությունների ստեղծումը և դրանց գործունեության  
ուղղությունները

Աղբրեջանի հատուկ ծառայությունների պատմությունը, ինչպես «Աղբրեջան» կոչված պետության ողջ պատմությունը, բաժանվում է երեք փուլի. առաջինը 1918-1920 թթ. ժամանակաշրջանն է, երբ Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետությունում ստեղծվեցին և գործունեություն ծավալեցին դրա հատուկ ծառայությունները, երկրորդը 1920-1991 թթ. ժամանակահատվածն է, երբ Խորհրդային Աղբրեջանում հատուկ ծառայություններն անցան այն բոլոր վերաձևումները, որոնք կային ողջ Խորհրդային Միությունում, և երրորդ փուլը, որը սկսվեց Աղբրեջանի անկախացմամբ ու շարունակվում է մինչև մեր օրերը\*:

1917 թ. Ռուսական կայսրության փլուզումն ու 1918 թ. Անդրկովկասյան սեյմի լուծարումը պայմաններ ստեղծեցին 1918 թ. մայիսի 28-ին Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետության (ԱԴՀ) հռչակման համար: ԱԴՀ հռչակումը կազմում էր Մեծ Թուրանի նախագծի մի մասը: Ռուսական կայսրության փլուզումը նրա արևմտյան (կովկասյան, այսրկովկասյան և միջինասիական) քաղաքական տիրազուրկ տարածքներում պայթյուրքիստական նախագծի իրականացման ճանապարհին ստեղծեց նոր իրավիճակ: Հենց այս ժամանակաշրջանում էլ այսրկովկասյան տարածքում Թուրքիայի երիտթուրքական կառավարությունը նախաձեռնեց նստեղծել թուրքական «պետույթ»

\* Abbasli Konan, Milli Təhlükəsizlik orqanlarının tarixi inkişaf mərhələlərinin müqayisəli təhlili, Dekabr 7, 2010, <https://siyasielmler.wordpress.com/2010/12/07/milli-təhlükəsizlik-orqanlarının-tarixi-inkişaf-mərhələlərinin-müqayisəli-təhlili/>, İsmail Azərbaycan təhlükəsizlik orqanlarının tarixi, [http://www.azerbaijan.az/\\_StatePower/\\_MinistersCabinet/ministersCabinet\\_11\\_a.html](http://www.azerbaijan.az/_StatePower/_MinistersCabinet/ministersCabinet_11_a.html) (nəşrə alınmış tarixi: 04.04.2015 թ.):

յուն»<sup>37</sup> այնուհետև ձգտելով ցամաքային կապ հաստատել երա հետ: Հայաստանի առաջին հանրապետության արտաքին գործերի նախարար Ալեքսանդր Ռատիսյանը վկայում է, որ Բաթումի կոնֆերանսի օրերին Վեհիբ փաշան (Մեհթին Վեհիբ, Բաթումի կոնֆերանսում Թուրքիայի պատվիրակության անդամ, Կովկասի ռազմաճակատի հրամանատար), նկարագրելով Թուրքիայի հետապնդած նպատակները և ցույց տալով քարտեզը, ասել է. «Մեր եղբայրները՝ Պարուն, Չաղստանը, Թուրքեստանն ու Ադրբեջանն են... մենք պետք է իջենք Քուրի հովիտ ու երթանք Պարու»<sup>38</sup>: Իսկ արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրին 1920 թ. նոյեմբերի 8-ին Անկարայից հղված հույժ գաղտնի հեռագրում ասված է. «...մեր գլխավոր եղբայրներն ազերիներն են, մեր հիմնական նպատակը՝ վերացնել Հայաստանը և օգնել Ադրբեջանին՝ ցամաքային կապ հաստատելով երա հետ»<sup>39</sup>:

ԱՂՆ-ի՝ Թուրքիայի անմիջական մասնակցությամբ ստեղծված լինելու փաստի մասին է վկայում նաև այն գաղտնի համաձայնագիրը, որով Ադրբեջանը, առանց Թուրքիայի թույլտվության, այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք չունեի<sup>40</sup> (1920 թ. Ադրբեջանի խորհրդայնացումից հետո անգլիական «The Times» թերթը գրեց, թե իրականում Թաթարական Հանրապետությունը (նկատի ունի ԱՂՆ-ն) ի սկզբանե գտնվել է երիտթուրքերի ու պանթուրանիստների հովանավորության ներքո, որը նրանք դիտում էին որպես Թուրքեստանի հետ կա-

<sup>37</sup> Mehmed-zade Mirza-Bala, Milli Azerbaycan hareketi: Milli az. «Müsavət» halk fikri tarixi, Berlin, 1938, էջ 135: ԱՂՆ-ն թուրքական նախազիջ լինելու մասին տե՛ս նաև Барсегов Ю. Нагорный Карабах в международном праве и политике. Комментарий к документам, М. 2009., т. II, с. 68-69. Казимян А., Полюгон «Азербайджан», Ер., 2011, с. 275.

<sup>38</sup> Ջոհրաբյան Է., Ազգամիջյան կոնֆլիկտը Երևանի նահանգում 1918 թ., Եր., 2000, էջ 114:

<sup>39</sup> Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 192-194:

<sup>40</sup> Турецко-Азербайджанский военный союз (копия официального документа), ЛИИ, ф. 275, г. 5, к. 184, л. 67 և շրջերես:

պող օղակ և Կասպից ծովում ուզմաբազա ունենալու միջոց<sup>41</sup>):

Նորաստեղծ այս պետությունը պետք է դառնար կապող կամուրջ Թուրքիայի և Պոլովժեի, Միջին ու Կենտրոնական Ասիայի թյուրքական բնակչության միջև<sup>42</sup>:

1918 թ. մայիսին, երբ թուրքական զորքերը վերագրավեցին Արևմտյան Հայաստանը և շարժվեցին դեպի Այսրկովկաս, դրանով ցանկություն ունեին իրագործել համաթյուրքականության ծրագրով նախատեսված Օղուզական պետության ստեղծումը, որը պետք է ընդգրկեր Թուրքիան, Ադրբեջանը, Պարսկական Ատրպատականը և Թուրքմենստանը<sup>43</sup>: Այդ պետության ստեղծման հենց առաջին քայլն էլ ԱՂՀ ստեղծումն էր, որը պետք է կամրջեր Թուրքիային Կովկասի և Միջին Ասիայի թրքախոս ժողովուրդների հետ<sup>44</sup>:

ԱՂՀ փաստացի հիմնադիրներ են համարվում էնվեր և Նուրի փաշաները: Նուրի է անձամբ հավաքել ԱՂՀ կառավարության կադրային կազմը, համալրել բանակը: Ըստ ԱՂՀ կառավարության ղեկավար Ֆաթալի խան Նոյսյուու, Ադրբեջանի ստեղծումը առաջին քայլն էր Մեծ Թուրանի նախագծի ճանապարհին<sup>45</sup>:

Եվ անհա նորաստեղծ ԱՂՀ-ն, պանթյուրքիստական գաղափարներով տոգորված, տարածքային պահանջներ ներկայացրեց Այսրկովկասի հայկական զգալի տարածքների նկատմամբ (Կարս, Ղարաբաղ, Ջանգեզուր, Շարուր-Նախիջևան (Նախիջևան), Բեյլուկ-Վեդի (Վեդի), Ջող-Բասարգեչար (Վարդենիս), Ջանգիբասար (Մասիս) և այլն) և ստեղծեց համապատասխան կառույցներ, որոնց միջոցով էլ ձգտեց իրականացնել իր հակահայ քաղաքականությունը: Այդ կառույցներից էին բանակը և հա-

<sup>41</sup> Вольгенъ N 83, Информационного бюро при Армянской Дипломатической Миссии в Грузии, 20 апреля, 1920 г., ЗИУ, т. 275, с. 5, с. 217, р. 29 և շրջերես:

<sup>42</sup> Мелик-Шахназарян Л., Этнополитика Азербайджана, Ер., 2007, с. 92.

<sup>43</sup> Зареванд, Турция и Пантюранизм, Париж, 1930, с. 92.

<sup>44</sup> Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Նուրի և Արեջ գավառներում 1918-1920 թթ., <http://genhist.asj-oc.am/54/1/23-32.pdf> (նդումն արված է 12.06.2015 թ.):

<sup>45</sup> Казинян А., Политгон «Азербайджан», Ер., Центр общественных связей и информации, 2011, с. 270, 281.

տուկ ծառայությունները, որոնց չ կանդադառնանք ստորև:

Այսպես, ԱՂԷ-ի գոյության տարիներին հատուկ ծառայության մարմիններն ստեղծվեցին ռազմական նախարարության ենթակայության ներքո: ԱՂԷ-ի 2-րդ կառավարության (ընդամենը ունեցել է 5 կառավարություն) ռազմական նախարար Սամադ բեյ Մեհմանդարովը (նախարար է եղանակվել 1918 թ. դեկտեմբերին՝ փոխարինելով Ռուսրով բեյ Սուլթանովին<sup>60</sup>) նախարարների խորհրդին նամակ է հղում՝ հիմնավորելով հատուկ ծառայություն ունենալու անհրաժեշտությունը: Առաջարկը կառավարությունում հավանության է արժանանում, և ռազմական նախարարության գլխավոր շտաբ-բնակարանի կազմում նախարար Սամադ բեյ Մեհմանդարովի և գլխավոր շտաբի պետ Սամադ բեյ Սուլկեհիյի՝ 1919 թ. մարտի 28-ի թիվ 157 հրամանով, ի թիվս այլ ստորաբաժանումների, ստեղծվում է հետախուզության և հակահետախուզության բաժանմունքը: Այն ունեցել է 28 աշխատակից, բաժանմունքի պետը՝ 2 օգնականներով, 2 քարտուղարներ ու թվով 23 օպերատիվ-գործակալներ (հավանաբար խոսքն օպերատիվ աշխատակիցների մասին է<sup>61</sup>): Նրանցից 2-ը նախատեսված են եղել ծառայությունն իրականացնել Բաքվում, 2-ը՝ Շուշիում, 1-ը՝ Ադդամում, 1-ը՝ Ղազախում, 4-ը՝ Գյանջայում, 1-ը՝ Նուխիում, 1-ը՝ Ջաբաթալայում, 1-ը՝ Ադդաշում, 1-ը՝ Բիլա-

<sup>60</sup> Մուստաֆան ռազմաքաղաքական գործիչ (1879-1947 թթ.), մասնագիտությամբ բժիշկ: 1917 թ. անդամակցել է «Մուստավաթին», 1918 թ.՝ «Մթթիհալին»: Նա և իր 2 եղբայրները՝ Սուլթանը և Բաքանդեկը հայտնի էին իրենց ծակահայ հայացքներով: Կազմակերպել է Շուշիի հայկական կոտորածները, որոնց գոհ զնազնի ավելի քան 30 հազար հայորդիներ: Եղել է «Բաքվի մանեղական բարեգործական ընկերության» ղեկավար, որի միջոցով զերմանական և թուրքական հետախուզությունները հետախուզական գործունեություն էին ծավալում տարբեր տղամասերում: Եղել է ԱՂԷ ռազմական, այնուհետև հազարգործության նախարար, Ղարաբաղի և Տանգեզուրի գեներալ-նահանգապետ, իսկ Ազրբեջանում խոսքիցային կարգի բարոտավելուց հետո իրեն հռչակել է «Ղարաբաղի հեղկոմի նախագահ»: Խորհրդային իշխանությունների կողմից ձերբակալվել է, ապա Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի միջնորդությամբ ազատվել և հետագեղ Պարսկաստան: Կան տեղեկություններ, որ նա եղել է թուրքական հետախուզության լյուռն:

<sup>61</sup> Azərbaycan təhlükəsizlik orqanlarının tarixi, [http://www.azerbaijan.az/StatePower/MinistersCabinet/ministers Cabinet\\_11\\_a.html](http://www.azerbaijan.az/StatePower/MinistersCabinet/ministers Cabinet_11_a.html) (հղումն աղյված է 10.03.2015 թ.):

ջարիում, 1-ը՝ Փողույում, 1-ը՝ Թիֆլիսում, 1-ը՝ Ղարյազիում, 1-ը՝ Եվլախում, 1-ը՝ Ջյուրդամիրում (մյուսների վերաբերյալ տեղեկություններ չկան): Հաստիքացուցակը հաստատվել է 1919 թ. փետրվարի 25-ին ԱԴՀ-ի Ազգային խորհրդի կողմից՝ «Ռազմական նախարարության հաստիքացուցակի մասին» օրենքով<sup>48</sup>:

Աղբրեջանի հատուկ ծառայությունների գործունեության սկիզբը փաստացի դրվեց 1919 թ. մարտի 28-ի թիվ 157 հրամանով, որով ռազմական նախարարության գլխավոր շտաբի կազմում ստեղծվեց 4 բաժանմունք.

1. Օպերատիվ-մոբիլիզացիոն
2. Մարտական և հաշվետու
3. Հետախուզության և հակահետախուզության
4. Կապի<sup>49</sup>:

Հետախուզության և հակահետախուզության բաժանմունքը<sup>50</sup> գործունեություն է ծավալել մի շարք ուղղություններով՝ Ղեկկենի բանակի, հայ և ռուս «լրտեսների» բացահայտման: Հատկանշական է, որ ստեղծման հեկց հաջորդ օրը՝ 1919 թ. մարտի 29-ին, հետախուզության և հակահետախուզության բաժանմունքի աշխատակիցները Գյանջա (Գանձակ) քաղաքում, իբր անհերքելի ապացույցների առկայության հիման վրա, ձերբակալել են Սմիլով ազգանունով մի սպայի և Գյանջայի կայագործի մի քանի այլ սպաների, որոնք զարտնի տեղեկություններ են

<sup>48</sup> Elmad Qocca, Azərbaycan kəfiyyəti və əks-kəfiyyəti: 1918-1920-ci illərdə, <http://qaynar.info/xeber-azərbaycan-kfiyyat-v-ks-kfiyyat-1918-1920-ci-illrd-31461.html> (hղումն արված է 11.04.2015 թ.):

<sup>49</sup> Məmməd Cəfərlı, Azərbaycan Demokratik Respublikasının milli təhlükəsizlik orqanları, Buxarı, 2004, էջ 6 (զրքում հղում է արված Աղբրեջանի Հանրապետության Ազգային արխիվ, ֆ. 2894, ց. 1, գ. 4, թ. 12): 1997 թ. մարտի 23-ին Աղբրեջանի նախագահ Հ. Ալիևը հրաման ստորագրեց, որով մարտի 28-ը ընդունվեց որպես Աղբրեջանի ազգային անվտանգության մարմինների աշխատակցի օր, տե՛ս Əliqismət Bədəlov, Vətənin təhlükəsizliyini qorumaq çox çətin işdir. Niyədir hər ustadaralıqlıq է 2009 թ. մարտի 20-ին՝ աղբրեջանական «Շողովուրդ» թերթում (Xəbə qəzeti, 2009, 20 mart, S.6):

<sup>50</sup> Կան որոշ տեղեկություններ, համաձայն որոնց ՌԱՀՄ ՆԳ ժողկոմ Լավրենտի Բերիան ևս աշխատել է այս բաժանմունքում, տե՛ս Тарасов С., Ермолаев Л., Под псевдонимом «Казербаев», <http://rosvesty.ru/1945/interes/5328-pod-pseudonimom-ka-kerbayev/> (hղումն արված է 11.04.2015 թ.):

հավաքել ՀՀ համապատասխան մարմիններին փոխանցելու նպատակով<sup>51</sup>:

1919 թ. ապրիլի 2-ին նախարար Ս. Մեհմանդարովը նախարարների խորհրդին զեկուցում է, որ հետախուզական բաժանմունքի սյարտականությունների մեջ է մտնում թշնամու վերաբերյալ կարևոր տեղեկությունների հավաքումը և դրսում ռազմական գործակալներ հավաքագրելը<sup>52</sup>:

Հետախուզության և հակահետախուզության բաժանմունքն ունեցել է առանձին ծառայություններ. հակահետախուզությունը՝ պետական անվտանգության և ներքին գործերի գծով, հետախուզությունը՝ ռազմական նախարարության և արտաքին գործերի նախարարության գծով, ինչպես նաև առանձին սահմանապահ ծառայություն: Ռազմական նախարարության գծով հետախուզության բաժանմունքն ունեցել է ռազմական կցորդների ծառայություն, իսկ դեսպանությունները գտնվել են արտաքին գործերի նախարարության գծով հետախուզության բաժանմունքի պատասխանատվության ներքո<sup>53</sup>:

Բաժանմունքը դրսում գործել է դիվանագիտական քաղիտակ՝ համագործակցելով Արտաքին գործերի նախարարության աշխատակիցների հետ: Օրինակ Թիֆլիսում հետախուզական գործունեություն է ծավալել Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության ռազմական կցորդ. փոխզեղապետ Մամադբեյ Ալիևը, Հայաստանում՝ դիվանագիտական ներկայացուցիչ խան Թեքինսկին<sup>54</sup>, որոնք «հույժ գաղտնի» գաղտնագրով բազ-

<sup>51</sup> Abbasov İlham, Azərbaycan Xalq Cümhuriyyəti dövründə milli təhlükəsizlik orqanlarının təşkili və fəaliyyəti, <http://respublica-news.az/index.php/dig-r-x-b-rl-r/dig-r-x-b-rl-r/item/7694-azərbaydzan-khalq-drumhuriyyeti-doevrundae-milli-taehlu-kaesizlik-organlarinin-taeshkili-vae-faealiyyaeti>, (həqumfi արված է 18.04.2015 թ.):

<sup>52</sup> Elşad Qoca, hq.v.աշխ.:

<sup>53</sup> Azərbaycan xüsusi xidmət orqanlarının tarixi, <http://www.dtx.gov.az/tarix1.php> (həqumfi արված է 07.08.2017 թ.):

<sup>54</sup> Թիֆլիսում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչը ՀՀ արտաքին գործերի նախարարին 08.11.1918 թ. թվագրված գրության մեջ հայտնում է, թե Ադրբեջանի կառավարությունը մտտնանշել է 3 անձի որպես Երևանում իր դիվանագիտական ներկայացուցչի հավանական թեկնածու՝ ցանկանալով խմբել ՀՀ ԱԳՆ դիրքորոշումը նրանց վերաբերյալ: Դիվանագիտական ներկայացուցիչը նաև հայտնում է, որ այդ թեկնածուներից Մամադ խան Թեքինսկին, իր ունեցած

մաթիվ «կարևոր» տեղեկություններ են ուղարկել Բաքու՝ Հայաստանի, Վրաստանի, Հյուսիսային Կովկասի վերաբերյալ<sup>55</sup>:

1919 թ. ապրիլի 2-ին ռազմական նախարար Ս. Մեհմանդարովը կրկին նամակ է հղում նախարարների խորհրդին, որտեղ նշում է, թե, քանի որ հետախուզության և հակահետախուզության բաժանմունքն իրավասու չէ միջամտելու քաղաքացիական գործերին (այն իրավասու էր գրադվել միայն ռազմական հետախուզությամբ և ռազմական հակահետախուզությամբ), այդ պատճառով անհրաժեշտ է ստեղծել մեկ այլ մարմին, որը կզբաղվի ոչ ռազմական, ներքին՝ դիվերսիայի, ահաբեկչության, հեղափոխության դեմ պայքարի խնդիրներով: Եվ անհա 2 ամիս անց՝ 1919 թ. հունիսի 9-ին և 11-ին, ստեղծվեցին երկու այլ հատուկ մարմիններ՝ «Պաշտպանության պետական կոմիտեն» (իր բնույթով ավելի շատ համակարգող մարմին էր) և «Հակահեղափոխության դեմ պայքարի կազմակերպությունը»: «Պաշտպանության պետական կոմիտեն», որի անդամներ դարձան կառավարության ղեկավարը, ռազմական, կապի և տրանսպորտի, արտաքին գործերի և արդարադատության նախարարները, ստեղծումից 2 օր անց՝ հունիսի 11-ին, երկրում մտցրեց արտակարգ դրություն<sup>56</sup>:

«Հակահեղափոխության դեմ պայքարի կազմակերպությունը» հիմնականում պայքար է ծավալել ահաբեկչության, դիվերսիայի և հատկապես բուլշևիկյան հեղափոխության ու Դենիկեների շարժման դեմ: 1919 թ. հուլիսի 27-ին Կազմակերպությանն է փոխանցվում նաև ռազմական հակահետախուզության

---

տեղեկությունների համաձայն, անցանկալի անձ է (սակայն, չգիտեմ ինչու, հենց Ն. Քեքիսկին էլ նշանակվում է այդ պաշտոնում), տե՛ս Հայաստանի Հանրապետության ԱԳՄ. Դիանագիտական Միասնա Վրաստանում, ՅիՖ-լիս, 8 նոյեմբերի, 1918 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 2, գ. 25, թ. 1, տե՛ս նաև Դուլյան Յու., նշվ. աշխ., էջ 416:

<sup>55</sup> Azərbaycan xüsusi xidmət orqanlarının tarixi, <http://www.dia.gov.az/tarix1.php> (հղումն արված է 07.08.2017 թ.):

<sup>56</sup> Məmməd Cəfəli, նշվ. աշխ., էջ 8 (զգրում հղում է արված Ադրբեյջանի Հանրապետության Ազգային արխիվ, ֆ. 100, ց. 1, գ. 26, թ. 149):



գործառույթը<sup>57</sup>։ Ըստ աղբյուրների հետազոտողների, ստեղծման առաջին օրերին այս հատուկ մարմնի աշխատակիցները ձեռքակալել են Դեհիկենի բանակի հետախուզության պետ Չեռնիշովին, որը, սակայն, ազատ է արձակվել ինչ-որ ուժերի ճնշման ներքո<sup>58</sup>։

«Հակահեղափոխության դեմ պայքարի կազմակերպությունն» իր կազմում ունեցել է գործակալական աշխատանքի, ռազմական հակահետախուզության, գրաքննության աշխատանքների և ֆինանսների գծով ծառայություններ, ինչպես նաև տեխնիկական անձնակազմ։ Այն ղեկավարել են Շեյխզամանյը Մամեդբաղըր Մալեհ օղլու (1919 թ. հունիս-օգոստոս) և Շեյխզամանյը Նազը Մալեհ օղլու (1919 թ. օգոստոս, 1920 թ. մարտ) եղբայրները<sup>59</sup> (երկուսն էլ «Մուսավաթ» կուսակցությունից)։ Ծառայությունը գործել է 9 ամիս՝ 1919 թ. հունիսից մինչև 1920 թ. մարտ<sup>60</sup>։ Աղբյուրներից հետազոտողները ԱԴՀ բանակաշինության և պետական անվտանգության կայացման գործում բարձր են գնահատում թե՛ Շեյխզամանյը եղբայրների, թե՛ զենեղաներ Մամադ Բեյ Մեհմանդարովի, Ալիադա Շիխլիսկու և Մամադ Բեյ Մուկկիչի դերը<sup>61</sup>։

ԱԴՀ-ն իր գոյության ողջ ընթացքում սերտորեն համագործակցել է եղբայրակից Թուրքիայի հետ տարբեր, այդ թվում՝ զինված ուժերի և հատուկ ծառայությունների բնագավառներում։ Հայաստանի առաջին հանրապետության հատուկ ծառայությունների կողմից ձեռք է բերվել մի կարևորագույն փաստաթուղթ՝ «Թուրք-աղբյուրեանական ռազմական միություն» (պաշտոնական փաստաթղթի պատճենը) անվամբ, որը հենց ռազմական բնագավառում թուրք-աղբյուրեանական սերտ համագործակցությունն ապացուցող փաստ է։ Այն, ըստ էության, երկու

<sup>57</sup> Նույն տեղում, էջ 8, 9 (զոքում հղում է արված Աղբյուրների Հանրապետության Ազգային արխիվ, ֆ. 1052, ց. 2, գ. 3, թ. 33)։

<sup>58</sup> Abbasov Ilham, նշվ. աշխ.։

<sup>59</sup> Heydar Əliyev və milli təhlükəsizlik orqanları, Bakı, 2009, էջ 14-15։

<sup>60</sup> Azərbaycan xüsusi xidmət orqanlarının tarixi, <http://www.dtx.gov.az/tarix1.php> (նդումն արված է 07.08.2017 թ.)։

<sup>61</sup> Adıgözal Məmmədov, 60 ilin mənbəhisəsinə son qoyan kitab, <http://publika.az/p/3905> (նդումն արված է 07.03.2015 թ.)։

երկրների միջև կնքված համաձայնագիր է՝ (կնքվել է 1919 թ. հոկտեմբերի 29-ին) համատեղ պաշտպանության և ռազմական համագործակցության վերաբերյալ<sup>62</sup>:

ՀՀ դեմ հետախուզական և այլ քայքայիչ գործունեություն հիմնականում ծավալել է ԱՂՀ արտաքին գործերի նախարարությունը՝ իր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով, ներքին գործերի նախարարությունը և ռազմական նախարարության հետախուզության ու հակահետախուզության բաժանմունքը:

Այսպիսով, Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իշխանությունները, հրահանգավորվելով թուրք գորահրամանատարների ու բարձրաստիճան այլ պաշտոնյաների կողմից, կարևորեցին ոչ միայն հետախուզության և հակահետախուզության համակարգի, այլև Հայաստանում գործակալական ցանցի ստեղծումը, որով նպատակ էր դրվում թուլացնելու և պատակտելու Հայաստանը:

## 1.2. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը

Գոյության հենց առաջին օրերից Ադրբեջանը Հայաստանի նկատմամբ իրականացրել է տարարնույթ քայքայիչ գործունեություն: Լորաստեղծ այս պետության գոյության հատկապես առաջին շրջանը՝ 1918 թ. հունիս-հոկտեմբեր ամիսները, բնութագրվում է օսմանյան զաղափարների բացարձակ գերակայությամբ, ուստի Ադրբեջանի արտաքին քաղաքականությունը մեծամասամբ պայմանավորվում էր Օսմանյան Թուրքիայի արտաքին քաղաքականության գերակա նպատակներով ու կազմում էր նրա քաղկացուցիչ մասը<sup>63</sup>:

<sup>62</sup> Турецко-Азербайджанский военный союз (копия официального документа), ՀԱԱ, Ֆ. 275, ց. 5, գ. 184, թ. 67 և շրջերես:

<sup>63</sup> Կեղազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կովկասյան քաղաքականությունը 1918-20 թթ., Եր., 2008, էջ 5:

Դեռևս XX դարի սկզբներին Դրիմի, Վոլգայի և Կովկասի թաթարների մտավորականության շրջանում արդեն լայն տարածում էր ստացել պանթյուրքիզմը, ինչն էլ հենց բացահայտ ռասայական, ծայրահեղական վերաբերմունք էր տարածում հատկապես հայ ժողովրդի նկատմամբ<sup>64</sup>։

Վերոգրյալի վառ ապացույցը ԱՂՆ ներքին գործերի նախարար Բերուդ Ջևանշիրի խոսքերն են. «Սա սրբազան պատերազմ է (խոսքը Լուխիում, Արեշում, Շամախում և Բաքվում հայկական կոտորածներ իրականացնելու մասին է), որի նպատակը միասնական թուրք ազգի բոլոր ճյուղերի միավորումն է։ Այս նպատակի համար հայ ազգի ոչնչացումը բացարձակապես կարևոր է։ Հայերը մեր քաղաքականության հաջողության ճանապարհին միակ խոչընդոտն են։ Իսկ այս քաղաքականությունը մեզ դեպի Հեղկաստան ճանապարհ է բացելու։ Մենք պետք է քնաջեջեք հայերին և նրանց դիակների վրայով առաջ ընթանանք մեր ուղիով։ Հետևաբար, ոչ մեկին մի խղճացեք և խստորեն կատարեք այն, ինչ ձեզ հրամայված է։ Միայն այս կերպ Մոսամբուլը կազատագրի Հեղկաստանը<sup>65</sup>»։

Հողահավաքման քաղաքականության, ՀՀ տարածքային ամբողջականության նկատմամբ ունեցած ռոնձգությունների և հայ-ադրբեջանական հարաբերությունների մասին ՀՅԴ կուսակցության այն ժամանակվա պատասխանատու մարմնի ներկայացուցիչ Ա. Գյուլխանդանյանը գրել է. «Թէև արտաքինապես պահվում էին բարեկամական յարաբերություններ (Հայաստանի և Ադրբեջանի միջև) և այդ երկու երկիրները միմեանց մօտ ներկայացուցիչներ ունեին, սակայն Ադրբեջանի կառավարությունը ամեն ճիգ էր գործադրում, որպեսզի Հայաստանի մեջ մահմեդական տարրերը չնթափվուեն հայկական կառավարութեանը։ Եւ

<sup>64</sup> Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը նաև հայության գոյամարտն էր. Եր., 2012, էջ 77։

<sup>65</sup> Էլիբեգովա Ա., Ադրբեջանական մտավորականության հակահայկական հետադարձությունը խաղաղարարության հետ համատեղելի չէ (մեջբերումը 1921 թ. հուլիսին Ջևանշիրին գեղակահարած Միսակ Թողալյանի գործի դատական քննության ժամանակ հրատարակված Ջևանշիրի գաղտնագրված հրամանից է), <http://theanalyticon.com/?p=3161>, ապրիլ, 2013 (նդումն արված է 08.04.2015 թ.)։

այդ նպատակով Ադրբեջանը սջակցում էր նրանց գեներով, զինուորական ղեկավարներով, մանաւանդ դրամով<sup>66</sup>:

Հայաստանի տարածքում ապրող մուսուլմանների (թաթար, թուրք, թուրքմեն, կարաիֆաֆախ) թիվը 1919 թ. կազմում էր 588.000 մարդ կամ ողջ բնակչության 27%-ը<sup>67</sup>, ինչն էլ բավական էր, որ ՀՀ կառավարությունը մշտապես գտնվեր տագնապի մեջ, մանավանդ, որ նշված զանգվածին փորձում էին կազմակերպել Ադրբեջանից և Թուրքիայից Հայաստան ժամանած լրտեսները, գանազան էմիսարները՝ կեղծ փողերի հսկայական զանգվածով զինված, և դրդել ապստամբության օրինական իշխանությունների դեմ՝ խրախուսելով անջատողական տրամադրությունները<sup>68</sup>: ՀՀ վարչապետ Միմոն Վրացյանը փաստում է, որ 1919 թ. Հայաստանի կյանքի ամենացոլուտ երևույթը մանկողական հակապետական շարժումներն էին կազմակերպված Թուրքիայի և Ադրբեջանի ձեռքերով՝ Հայաստանի անկախությունը խորտակելու դիտավորությամբ<sup>69</sup>:

Թուրքիան տեղի մուսուլմաններին զենք ու զինամթերք և փորձված սպաներ էր մատակարարում, իսկ Ադրբեջանն օժանդակում էր դրամով: Այդ ամենի շնորհիվ Հայաստանի անկախության հետ չհաշտվող թուրքալեզու բնակչությունը Հայաստանի ենթակայության ներքո գտնվող տարածքներում ստեղծել էր շուրջ 20 մեծ ու փոքր կիսանկախ մուսուլման իշխանություններ, որոնք հրաժարվում էին ենթարկվել հանրապետության կառավարությանը: Ընդ որում, դրանցից յուրաքանչյուրն ուներ զեղացիներով և թևառնակներով ապահովված իր զինված ուժերը, որոնց գլուխ կանգնած էին փորձառու թուրք սպաներ<sup>70</sup>:

1919 թ. հուլիսի 18-ին թվագրված, Ադրբեջանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի կողմից ՀՀ արտաքին գործերի նախարարին ուղարկված զեկույցում նշված է. «Ադրբեջանը չի դա-

<sup>66</sup> Գիլյոսեղանեան Ա., Անդրկովկասի Հանրապետությունները, «Հայրենիք», թիվ 4, Քաստն, 1967, էջ 76:

<sup>67</sup> Քաջազունի Յուլի, Հայաստանի Հանրապետության, Եր., 1993, էջ 11:

<sup>68</sup> Վլիբարյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բռնակը 1918-20 թթ., Եր., 2009, էջ 224:

<sup>69</sup> Վրացյան Մ., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 309:

<sup>70</sup> Հայոց պատմություն, խմբ. Միմոնյան Հր., էջ 549:

դարում տեսեղային նախապատրաստություններ տեսնելուց, որպեսզի ինչ գնով էլ ուզում է լինի իր իշխանությունը տարածի Ջանգիզուրի և Նախիջեանի շրջանների վրայ: Թե Ղարաբաղում, թե Ջանգեզուրում և թե Նախիջեանի շրջանում տեղի ունեցող ապստամբական բռնկումները էապես իրար հիտ կապ ունեն և նպատակ ունեն հայությունը շրջապատել թրքական օղակով: Այդ նպատակով տաճկա-թրքական գաղտնի կազմակերպությունները իրենց գործակալների միջոցաւ աշխատում են Հայաստանի մահմեդական ազգաբնակչություն թշնամական սրամաղորությունը ուժեղացնել, մաղակարարելով նրանց թե դրամական միջոցներ, թե զենք և թե ռազմամթիիր»<sup>71</sup>:

Իրենց արտաքին-քաղաքական նկրտումներն իրականացնելու գործն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով ԱՂՀ ղեկավարությունը հետախուզական-քայքայիչ գործունեություն սկսեց ծավալել Հայաստանի Հանրապետության նկատմամբ: Իր գոյության սկզբնական շրջանում Ադրբեջանի հատուկ ծառայությունների դերն ստանձնել էր արտաքին գործերի նախարարությունը: Հատկանշական է, որ ժամանակի թուրքական հատուկ ծառայության Հատուկ կազմակերպության (Teşkilât-ı Mahsusa, որը մեծ դերակատարում է ունեցել Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման գործում) ներկայացուցիչը՝ Ռուշենի բեյը, եղել է ԱՂՀ ԱԳՆ քարտուղար: Վերջինս ամեն կերպ փորձել է վատթարացնել ինչպես հայ-ադրբեջանական, այնպես էլ հայ-վրացական հարաբերությունները<sup>72</sup>:

Ադրբեջանի ԱԳՆ-ն հետախուզական լուրջ աշխատանք էր իրականացնում ՀՀ նկատմամբ իր դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով: «Այլ դեր Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը չունի, քան լրտեսել Հայաստանի գորական ուժերը, գորքերի շարժումները, քաղաքական դիտումները, ֆինանսները և հրահանգներ տալ իր կառավարությանը, թե ինչով

<sup>71</sup> Ջեկուցագիր, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Գաղտնի, Հայաստանի Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչության Ադրբեջանում, 18 Յուլիսի 1919 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50<sup>1</sup>, ք. 12 և շքերես:

<sup>72</sup> Cemil Koçak, "Ey Târihiçi Belgen Kadar Kocuş" Belgesel Bir Teşkilâtı Mahsusa Öyküsü, էջ 34, <http://research.sabanciuniv.edu/10/1/3011800000169.pdf>.

և ինչ ձևով է հնարավոր Հայաստանի Հանրապետությանը վնասներ հասցնել: Ավելին, դեռ երկրի ներսի թշնամի ու ապստամբ տարրերին դրամական ու զինվորական աջակցություն ցույց տալ և խոչընդոտ հանդիսանալ Հայաստանի Հանրապետության ծավալելուն իր պապենական հայրենիքում»<sup>75</sup>:

ՀՀ դեմ հետախուզական գործունեությամբ աչքի են ընկել Երևանում ԱԴՀ ղիվանագիտական ներկայացուցիչները: Այսօր գործող ադրբեջանական կայքերում (բնականաբար պատմական բոլոր դեպքերն ու փաստերը նենգափոխված ձևով) կան տեղեկություններ այն մասին, թե ինչպես է Երևանում Ադրբեջանի ներկայացուցիչ Մ. Ն. Թերքինսկին պարբերաբար ԱԳ նախարար Մ. Ու. Ջաֆարովին տեղեկացրել հայկական բնակավայրերում մուսուլման բնակչության նկատմամբ ՀՀ իշխանությունների՝ իբր խտրական ու հալածական քաղաքականության վերաբերյալ: Այդ են վկայում Բաքվում ՀՀ ղիվանագիտական ներկայացուցիչ Տ. Հ. Բեկզադյանի հեռագրերը ՀՀ ԱԳՆ. «Թուրք և ադրբեջանցի գործակալները սուտ հաղորդումներ են ուղարկում ՀՀ-ից Ադրբեջան, իբր ՀՀ-ում բնակվող ադրբեջանցիների նկատմամբ կիրառվում էն տարատեսակ բռնություններ, որոնք էլ տպագրում են ադրբեջանական թերթերում և տարածվում»<sup>76</sup>: «Լրագրական այդ կեղծ նյութերը միջազգային յարաբերությունների մեջ բացասական դեր են խաղում»<sup>77</sup>:

Թերթերում հաճախակի կարելի էր հանդիպել հոդվածների, որտեղ նկարագրում էին Հայաստանի տարբեր բնակավայրերում թաթարների նկատմամբ կիրառվող «անհավոր բռնությունները»<sup>78</sup>: Բեկզադյանը եզրահանգում է, թե այդ լուրերը

<sup>75</sup> Գաղտնի փաստաթղթերը. Ադրբեջանի դատադրական գործունեությանից մի էջ, Գլխավոր շտաբի տպարան, Եր., 1990, էջ 4:

<sup>76</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի մինիստրություն, *Г-му начальнику Москвой Радио-Станции, г. Эривани, Делопроизводителя, Всем, всем, всем. 13 октября 1919 г.*, ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 44, ք. 107:

<sup>77</sup> Ձեկուցագիր, Արտաքին գործերի Պ. Մյնխտրին, Գաղտնի, Հայաստանի Հանրապետություն Ա.Գ.Մ. Դիվանագիտական Միաձիպ Վրաստանում, Թիֆլիս, 20 մարտի 1919 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 44, ք. 54:

<sup>78</sup> Գրություն, Հայաստանի Խորհրդարանի Մեծ Պ. Նախագահին, Արտաքին գործերի մինիստրից, 29 Մարտ 1919 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 44, ք. 57:

Հայաստանից կարող էր ուղարկել միայն Երևանում գտնվող Աղյրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկին<sup>77</sup>։ Հետագա զեկույցներում նա նաև հայտնում է. «Լրագրական այս աղմուկը ամենայն հաւանականութեան տաճկա-աղբբեջանական գործակալների կազմակերպած գործ պիտի համարել, որը ունի մի նպատակ՝ հասարակական տրամադրություններ ստեղծել և իբր մոտ ապագայում այս կամ այն հայկական շրջանի դեմ յարձակումները սկսելու լինեն՝ հիմնադրելու որպէս արդար գայրոյթի արդյունք<sup>78</sup>»։ Բացի այդ, դիվանագիտական ներկայացուցիչը հայտնում է, թե աղբբեջանական իշխանությունները ռազմաճակատից դիակներ են տեղափոխում Բաքու՝ ավելի սաստկացնելով հայերի նկատմամբ ատելությունը<sup>79</sup>։

Փաստ է, որ Աղյրբեջանը Երևանում ունեցել է գործակալական լայն ցանց, որը գործել է դիվանագիտական ներկայացուցչության քողի տակ։ Հայաստանի առաջին հանրապետության անվանի հետախույզ Տիգրան Դեոյանցն իր հուշերում գրել է. «Երևանում գտնուող Ատրբեճանի դիվանագիտական միսիան ոչ միայն անսովոր արագութեամբ յայտնում էր Թիֆլիս եւ Բագու Հայաստանի գորքերի դասաւորութեան եւ գորքերի ու ռազմամթերքի փոխադրութեանց մասին, այլեւ իր ձեռքի տակ ունեցած էր Հայաստանի գաղտնի հրամաններն ու հրահանգները։ Հայաստանում նստած Աղբբեջանի ներկայացուցիչը, օգտվելով իր դիրքերից, ծածկագիր հեռագրերով իր կառավարությանն անդադար հաղորդում էր իր կատարած աշխատանքների մասին և նոր հրահանգներ ստանում»<sup>80</sup>։

<sup>77</sup> Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետութեան Դիվանագիտական ներկայացուցչութիւն Աղբբեջանում, 10 Յունիսի 1919 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 44, թ. 84։

<sup>78</sup> Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործերի նախարարին, Գաղտնի, Հայաստանի Հանրապետութեան Դիվանագիտական ներկայացուցչութիւն Աղբբեջանում, 22 սեպտեմբր 1919 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 50<sup>1</sup>, թ. 178 և շրջերես։

<sup>79</sup> Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետութեան Դիվանագիտական ներկայացուցչութիւն Աղբբեջանում, 6 ապրիլի 1920 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 119 և շրջերես։

<sup>80</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվանագրության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-20 թթ., Եր., 2006, էջ 96-97։

ԱՂՀ ղեկավարությունը, հայկական բազմաթիվ տարածքների նկատմամբ ունեցած իր նկրտումներն իրագործելու նպատակով, ՀՀ նկատմամբ ծավալել է քայքայիչ գործունեություն՝ զինելով Հայաստանի տարածքում բնակվող մուսուլման բնակչությանը, ինչպես նաև հրահրելով ազգամիջյան բախումներ: Հայաստանի մուսուլմանական շրջաններում թուրք-մուսավաթական գործակալների կողմից հրահրված ավազակաբարոքուրդ և թաթար տարրերը մասսայական շարժում էին սկսել ոչ միայն իրենց հարևանների ունեցվածքին տիրանալու, այլև նրանց քնդհանրապես բնաջնջելու համար<sup>81</sup>:

«Թուրք-թաթարական գործակալները կը վխտան Մակուի, Շարուրի, Նախիջևանի, Ջանկելյան-Պակուի մեջ եւ կը զրգոեն թուրքերը: Մուսավաթը յայտնապէս կը ձգտի Ագրպէյճանը բաժնել Ռուսաստանէն, Ատրպատականը՝ Պարսկաստանէն եւ, միացնելով, ղնել Թուրքիոյ ազդեցության տակ<sup>82</sup>», - նշվում է «Յառաջ» պարբերականում:

Տիգրան Դնոյանցը հիշատակում է մի դեպք, նրբ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչը թալանվել է Շարուր-Նախիջևանի ճանապարհին: Նա մասնավորապես նշում է. «Բազմից ուղարկված այդ գումարով միայն Շարուր-Նախիջևանի շրջանի թաթարական բանակի թիվը պետք է հասներ 10.000-ի, ինչպես նաև ավելանար Բեյուկ-Վեդիի, Ջանգիրասարի և այլ շրջանների կովոզ թաթարների թիվը, ու ամբողջ Հայաստանի հայությունը պետք է գտնվեր բնաջնջման սպառնալիքի տակ»<sup>83</sup>:

Տ. Դնոյանցի հիշատակության հավաստիությունը հաստատվում է ՀՀ ՊՆ ռազմական նախարարության գլխավոր շտաբի կողմից 1920 թ. մայիսին առանձին գրքույկով հրատարակված նյութերով: Դրանք Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչների հեռագիր-հաղորդագրություններն են, որոնք ուղղված էին Բաքու՝ հիմնականում արտաքին գործերի

<sup>81</sup> Ջոնրաբյան է., Ազգամիջյան ... , էջ 29:

<sup>82</sup> Նաթայի Ե., Թուրքերը եւ մենք, Թուրքիզը Անգորայէն Պարու և թրքական օրինեթախու, Եր., 2015, էջ 134:

<sup>83</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական ... , էջ 97:



նախարարին, նախարարապետին, Թիֆլիսի ադրբեջանական գինվորական կցորդին («Գաղտնի փաստաթղթերը», Ադրբեջանի դաւադրական գործունեությունից մի էջ, Երևան, Գլխավոր շտաբի տպարան, 1920), որոնք նաև պահպանված են «Հայաստանի ազգային արխիվում» «Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի և Ադրբեջանի (մուսավաթական) արտաքին գործերի մինիստրության միջև փոխանակված հեռագրերը» վերնագրով<sup>64</sup>: Մասնավորապես, 1919 թ. մարտի 10-ով թվագրված հեռագրի մեջ Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Հախվերդովը արտաքին գործերի նախարարին ահազանգում է. «Հրոսակախմբի նախօրօք պատրաստած ինձ հետ պատահած քստմենլի դեպքից յետոյ, իմ այստեղ մնալը անստույթիւն եմ համարում»<sup>65</sup>: Այնուհետև կա պատասխան (արտաքին գործերի նախարարից), որում նշված է «Հախվերդովը Թիֆլիս գալով ստացել է Նախիջևանի, Զանգիբասարի և այլ շրջանների համար նախօրօք նշանակած փողերը, սակայն Երևան վերադառնալիս չեզօք զոնայում կողոպտվել է չարագործներից»<sup>66</sup>: Հատկանշական է, որ Հախվերդովի կողոպուտից հետո Ադրբեջանի ԱԳ նախարար Խոյսկին հեռագրում է ՀՀ ԱԳ նախարարին տեղեկացնելով կատարվածի մասին, միաժամանակ խնդրելով միջոցներ ձեռնարկել և գտնել հանցագործներին, պատժել նրանց և վերադարձնել ինչպես Ադրբեջանի պետական, այնպես էլ Հախվերդովի անձնական միջոցները<sup>67</sup>:

Գրքույկում տեղ գտած հեռագիր-հաղորդագրություններն ամբողջովին հետախուզական բնույթի տեղեկություններ են

<sup>64</sup> Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչի և Ադրբեջանի (մուսավաթական) արտաքին գործերի մինիստրության միջև փոխանակված հեռագրերը, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299<sup>ա</sup>, 299<sup>բ</sup>, 358 (299<sup>ա</sup> գործը կամակազրությունն է արդեն վերծանված տարբերակով, իսկ 299<sup>բ</sup> գործը ծանկանհեռագրերն են կողոպտված արաբական թվերով):

<sup>65</sup> Գաղտնի փաստաթղթերը ..., էջ 55:

<sup>66</sup> Նույն տեղում:

<sup>67</sup> Дипломатическое Представительство Республики Азербайджана при Правительстве Грузинской Республики 16 марта 1920 года Дипломатическому Представителю Республики Армения при Правительстве Грузинской Республики, ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 207, թ. 29, տե՛ս նաև Ղուլյան Յու., նշվ. աշխ., էջ 433:

ուղարկված դիվանագիտական ներկայացուցից, և հանձնարարություններ՝ ուղղված վերջինիս: Գրքույկի ուսումնասիրությունից և վերլուծությունից հետևում է, որ 1919 թ. մարտ ամսին Երևանում բացված Ադրբեջանի ներկայացուցչությունը դարձել է հակահայկական գործողությունների մշակման և ուղղորդման լրտեսական-հետախուզական կենտրոնատեղի, այլ կերպ ասած՝ ռեզիդենտուրա, որում կենտրոնացած գործակալական ցանցը տեղեկություններ է հավաքել ՀՀ զինված ուժերի և զորաշարժերի մասին, կատարել քաղաքական դիտարկումներ, տեղեկություններ հավաքել ՀՀ ֆինանսական հնարավորությունների վերաբերյալ, հրահանգներ ու խորհրդատվություն տվել սեփական կառավարությանը, թե ինչպես և ինչ ձևերով է հնարավոր վնաս հասցնել ՀՀ ազգային-պետական անվտանգությանը, անգամ կառավարությանը հուշել մուսուլման տարրերով բնակեցված Հայաստանի շրջաններում ապստամբություն բարձրացնելու համար հարմար ժամկետներ: Այսպես, 11-ը հունիսի 1919 թ. թվագրված հեռագրի մեջ Հայաստանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ Թեքինսկիին հայտնում է. «Շարուր-Նախիջևանի շրջանն ունի մոտ 6 հազար կիսականոնավոր զորք՝ հեծելազորով, թղանոթով և զեղացիներով: ...Պատերազմական գործողությունների ժամանակ զինված ուժերի թիվը կարող է հասնել մինչև 10 հազարի»: Հաջորդ օրը նա գրում է. «Զինվորական կցորդը տեղեկություններ բերեց Հայաստանի ուժերի մասին: Հայաստանն ունի 3 հետևակ բրիգադ, 3 ձիավոր գունդ, 12 մարտկոց...»<sup>86</sup>:

Երևանում Ադրբեջանի ներկայացուցիչների՝ լրտեսությանը զբաղվելու փաստի մասին կան այլ վկայություններ ևս: Մասնավորապես, Միմոն Վրացցանը գրել է, թե խան Թեքինսկու Երևան հասնելու առաջին իսկ օրերից Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը ծանոթ է եղել նրա ծածկագրերին, որոնք նախ և առաջ հայտնի են դարձել ՀՀ կառավարությանը<sup>87</sup>:

<sup>86</sup> Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցիչ և Ադրբեջանի (մուսավաթական) արտաքին գործերի մինիստրության միջև փոխանակված հեռագրերը, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 299, թ. 5:

<sup>87</sup> Վրացցան Մ., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, էջ 310:

Պաշտոնական Երևանը Ադրբեջանի կառավարությունից պահանջել է հետ կանչել Թեքինսկուն, որը թեև փոխարինվել է, սակայն մյուս ներկայացուցիչները ևս շարունակել են ծավալել հետախուզական-քայքայիչ գործունեություն (սկսած 1919 թ. հոկտեմբերի 21-ից՝ Բաքու ուղարկված հեռագրերը ստորագրված են այլ ներկայացուցիչների անուններով):

Առկա են Հայաստանի նկատմամբ ԱՂՃ կողմից հետախուզական-քայքայիչ գործունեություն ծավալելու վերաբերյալ այլ ուշագրավ փաստեր ևս:

1919 թ. դեկտեմբերին Երևանի զինվորական դատարանում քննվել է ավստրիական ծառայության նախկին սպա, վրացահայտակ Անտոն Մարոկուտտիի վերաբերյալ քրեական գործը, որը դատապարտվել է 15 տարվա տաժանակիր աքսորի՝ Ադրբեջանի օգտին լրտեսություն կատարելու մեղադրանքով: Եւ ձերբակալվել է Երևան-Ալեքսանդրապոլ գնացքում, վերջինիս մոտ հայտնաբերվել են կեղծ փաստաթղթեր, խռոք չափի գումար, Շարուր-Նախիջևանի վերաբերյալ քարտեզներ: Լրտեսության բացահայտման համար հիմք է հանդիսացել Վրաստանում Ադրբեջանի ղիվանագիտական ներկայացուցչի տեղակալ Վեֆիլովի հեռագիրը, որով վերջինս ՀՀ-ում գտնվող իրենց ներկայացուցչի տեղակալ Հախվերդովին խնդրում էր աջակցություն ցուցաբերել Անտոն Մարոկուտտիին՝ Խալիլ-բեյի բռնակ անցնելու նպատակով<sup>90</sup>: Ա. Մարոկուտտիի գործի հետ անմիջական եզրեր ունի նաև Հայաստանի զինվորական գլխավոր հայթայթիչ գրասենյակի նախկին վարիչ Իվան Տարականովի գործը, որը մեղադրվել է դավաճանության և զինվորական գաղտնիքները թշնամուն հայտնելու մեջ<sup>91</sup>:

Շահան Նաթալին վկայում է, որ ձերբակալվել է նաև «Երեւանի թուրք հիւպատոսի թարգման-քարտուղարը որպէս այդպիսի կապերի խողովակ թուրք հիւպատոսի եւ տեղական թուրքերի միջև», իսկ Երևանում հրատարակվող «Ռանչպար»

<sup>90</sup> Թումոյան Ա., Հայաստանի անվտանգության մարմինների պատմության ուրվագծեր., ՀՀ ԱԱԾ Գիտաուսումնական կենտրոն, Եր., 2009, էջ 18:

<sup>91</sup> Վրաբրյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական ..., էջ 194:

թրքատառ թերթի խմբագիրը պարզվել է, որ մուսավաթական գործիչ է և թուրանական գործակալ<sup>92</sup>:

1920 թ. հունիսի 3-ին ՀՀ զինվորական դատարանի կողմից լսվել է նաև Երևանում Ադրբեջանի դիվանագիտական ներկայացուցչության երեք նախկին աշխատակիցների դատը<sup>93</sup>, ինչի վերաբերյալ Թիֆլիսի ՀՀ ներկայացուցիչ Բեկզադյանին ուղարկվել է հեռագիր<sup>94</sup>: Վերջիններս մեղադրվել են տարբեր քրեաքաղաքական հանցանքների մեջ, որոնք կատարվել էին Երևանում Ադրբեջանի դիվանագիտական հավատարմատար Թեմուրբեկ Մակինսկու անմիջական հանձնարարությամբ<sup>95</sup>: Մաևս Ադրբեջանի կողմից Հայաստանի դեմ իրականացվող քայքայիչ գործունեության խոստուն փաստ է, ինչը հաստատվում է Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Խոյսևու նկատողությամբ. «Նկատողութիւն. 1920 թ. ապրիլի 4-ին Էջմիածնի գաւառի Դաարաբաղ գիւղի մօտ, ապստամբ Ջանգիրասարի շրջանը մեկնող երեք զինուած թուրքեր են բռնած: Կալանաւորածների մօտ գտնուել են Ադրբեջանի բռներ 499.750 ռ., Անդրկովկասեան բռներ՝ 11.050 ռ. և Հայկական չէկեր՝ 1.100 ռ.: Այդ մարդիկ պարզուէլ է Երևանի Ադրբեջանեան միսսիայի պահակներ են եղել, եկել են միսսիայի ատոմօրիլով դիւ. ներկ. Մակինսկու յանձնարարութեամբ և մտադրուէլ էին թափանցել Ջանգիրասար՝ փողը ապստամբների ղեկավար Մոլլա Ղասումին յանձնելու դիտաւորութեամբ: Այդ երեք անձնաւորութիւնները և միսսիայի շոֆերը յանձնուէլ են Հայաստանի Հանրապետութեան զինուորական դատարանին»<sup>96</sup>: Դեպքից անմիջապէս հետո Ադրբեջանի ԱԳ նախարարը հեռագրում է ՀՀ ԱԳ նախարարին պահանջելով

<sup>92</sup> Նաթալի Ե., նշվ. աշխ., էջ 135:

<sup>93</sup> Դատավարությունն ամբողջությամբ տե՛ս Ղազախեցյան Վլ., Ադրբեջանի քայքայիչ գործունեությունը Հայաստանում 1920 թ., Վեմ համահայկական հանդես, 2013 թ. հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ 225-238:

<sup>94</sup> Тифлисск. Миссарымент Бескэданы, июни 1920 г., ՀԱԱ, Տ. 200, ց. 1, գ. 249<sup>թ</sup>, ք. 427:

<sup>95</sup> Վերաբայան Վ., Հայաստանի Հանրապետության պետական ..., էջ 194:

<sup>96</sup> Գաղտնի փաստաթղթերը ..., էջ 56:

ազատ արձակել ձերբակալվածներին, քանի որ նրանց ձերբակալությունը «միջազգային իրավունքի նորմերի խախտում է»<sup>97</sup>:

Բարձրում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը ևս բացահայտումներ է արել Ադրբեջանի կողմից ՀՀ դեմ հետախուզական-քայքայիչ գործունեություն ծավալելու վերաբերյալ: ՀՀ ԱԳՆ ուղարկած զեկույցներից մեկում նշված է. «Ադրբեջանը շարունակ գործակալներ, քարոզիչներ և զենք է ուղարկում... Բացի գործակալներից, Ադրբեջանը Պարսկաստանի վրայով Նախիջեան է ուղարկել 200 հազար հաստ փամփուշտ և 3 միլիոն ռուբլի համապետական թղթադրամ»<sup>98</sup>: Մեկ այլ զեկույցում նշված է հետևյալը. «Նոր Բայազետի Ղարանլուխ գիւղի փոստի գլխավոր Կոշկովը գաղտնի յարաբերութիւնների մէջ է Ադրբեջանի կառավարութեան հետ և հաւանորէն չի խուսափում նաեւ հարկ եղած տեղեկութիւնները հաղորդելու: Հարկ է տնօրինել, որպէսզի խիստ ուշադրութիւն դարձվեն փոստային պաշտօնիաների գործունեութիւն վրա և պարզին, թե նման երեւոյթները նախամտածված դաւաճանական գործ չեն և որ ապագայում զինուորական շտաբի ծրարները պատահականութիւնից զիրծ լինեն»<sup>99</sup>: Մեկ այլ հեռագրում դիվանագիտական ներկայացուցիչ Բեկզադյանը հայտնում է հետևյալը. «Մեր ստացած տեղեկութիւններից պարզվում է, որ ոմն գթութիւն քոյր ազգով ռուս Աննա Ալեքսանդրովնա Կորբուևովա, Ադրբեջանի գաղտնի ոստիկանութիւն գործակալ է և յաճախ լրտեսելու նպատակով ճամբորդում է դէպի Պիտրովսկ, Բաթում և Հայաստան ու գաղտնի հաղորդագրութիւններ տաւում ու բերում ամսական չորս հազար ռուբլի վարձատրութեամբ: Որպիսզի իրեն յանձնուած

<sup>97</sup> К кресту шофера и кавасаов азербайджанской миссии, Визлетем N 85, Информационного бюро при Армянской Дипломатической Миссии в Грузия, 22 апреля, 1920 г., ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 48:

<sup>98</sup> Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետութեան Դիվանագիտական ներկայացուցչութիւն Ադրբեջանում, 18 Յուլիսի 1919 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50<sup>1</sup>, թ. 12:

<sup>99</sup> Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետութեան Դիվանագիտական ներկայացուցչութիւն Ադրբեջանում, 22 սեպտեմբր 1919 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 50<sup>1</sup>, թ. 179 և շրջերես:

գրութիւնները ապահով տեղ հասցնի, եւ այդ գրութիւնները քաղցնում է իւր մագերի մէջ և այդպիսով ազատ ճամբորդում»<sup>100</sup>:

Աղբրեջանական իշխանություններն ու հատուկ ծառայությունները, Շուշիի հայերից դատարկելու իրենց քաղաքականությունը հաջողությամբ իրագործելու նպատակով, հետևելով Թուրքիայի օրինակին ու խորհրդին, ճիշտ «համադիէ» ջոկատների նման ստեղծել էին նաև քրդերից բաղկացած զինված խմբեր, որոնց միջոցով էլ 1920 թ. մարտին ցեղասպանություն իրագործեցին Շուշիում ու շրջակա հայկական գյուղերում, ինչի հետևանքով սպանվի ենթարկվեց ավելի քան 30 հազար հայ (այնքան, որքան կոտորվել էին Բաքվում)<sup>101</sup>: 1920 թ. փետրվարի 7-ին ՀՀ ՁՈւ գլխավոր շտաբ ուղարկված հետախուզական ամփոփագրում նշված է. «Աղբրեջանի արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկը քրդերին իրենց կողմը գրավելն է, և Խոսրով բեկ Սուլթանովին հաջողվել է Ղարաբաղում կազմավորել քրդերից բաղկացած հրաձգային գումարտակ ու հեծելազոր»<sup>102</sup>: Հետագա ամփոփագրերում նշվում է, թե թաթարները քրդերին մեծ գումարներ ու նվերներ են տալիս հայերի դեմ գործունեություն ծավալելու նպատակով: Օրինակ, Ֆաթթի բեկ Շամշադինովին հատկացվել է 60.000 ռուբլի զենք-զինամթերք և այլ իրեր ձեռք բերելու, պարտիզանական խմբեր ձևավորելու նպատակով<sup>103</sup>: Ղարաբաղում քուրդ հրոսակախմբերը գտնվում էին Եսիմազապետ Սուլթանովի եղբոր՝ Սուլթանբեկ Սուլթանովի ենթակայության տակ<sup>104</sup>: Բացի այդ ջոկատներից, ԱՂԸ-ի իշխանություններն ստեղծել էին այլ հատուկ ստորաբաժանումներ ևս, որոնցից էր «դահիճների կոմիտե» («сөл-

<sup>100</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Գաղսնի, Հայտատանի Հանրապետության Դիանազիտական ենթախաղաղության Աղբրեջանում, 17 Յունիսի 1919 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 155, ք. 46:

<sup>101</sup> Տեհրապյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Ղաչնակիցները» (1918 թ. դեկտեմբեր, 1920 թ. ապրիլ), Եր., 2002, էջ 132:

<sup>102</sup> Сводка, Секретно, Разведывательного Отделения Генерального Штаба Военного Министерства, 7 февраля 1920г., г.р. Эриван, N 11, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, ք. 34:

<sup>103</sup> Նույն տեղում., N 13, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, ք. 93 և շրջերես:

<sup>104</sup> Ղարաբաղի ղեկավարից, Տեղեկատու բիւրո, 16 Յունիսի 1919թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 309, ք. 135 և շրջերես:

ladları komitəsi») կազմակերպությունը<sup>105</sup>: Եվ եթե Արևմտյան Հայաստանում հայերի բնաջնջումն իրականացնում էին «Teşkilat-ı Mahsus»-ի հրոսակախմբերը, ապա Նուխիում և Արեշում դա հանձնարարված էր «դահիճների կոմիտեին»<sup>106</sup>:

ՀՀ նկատմամբ ԱՂՀ կողմից իրականացված գործունեության վերաբերյալ բավական խոսուն փաստեր կան նաև Հայաստանի ազգային արխիվում և Բոստոնում պահպանվող Հայաստանի առաջին հանրապետության զինվորական նախարարության գլխավոր շտաբի հետախուզության և հակահետախուզության բաժանմունքի ղեկավարների կողմից երկրի բարձրագույն ղեկավարությանը զեկուցված բազմաթիվ ամփոփագրերում:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ ԱՂՀ հատուկ ծառայությունները Հայաստանի առաջին հանրապետության դեմ իրականացրել են տարատեսակ քայքայիչ գործունեություն, ինչը բխում էր ինչպես այդ երկրի, այնպես էլ նրան «պատմության թատերաբեմ իջեցրած» տերության թուրքիայի ցեղասպանական ու զավթողական քաղաքականությունից:

### 1.3. Ռազմական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդդեմ Հայաստանի առաջին հանրապետության

1918-1920 թվականներին Հայաստանի առաջին հանրապետության գոյության ողջ ժամանակաշրջանում հայ ժողովրդի դեմ գործել են ճակատում թուրք-ադրբեջանական բանակները, թիկունքում՝ երիտթուրքերը, քեմալականներն ու մուսավաթականները: Ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչ, «Նեմեսիս» գործողության կազմակերպիչ Շահան Լաթալին (Յակոբ Տեր-Յակոբեան) վկայում է, որ «Մուսավաթը» հարազատ ցույքն էր «Լրթթիհադի» թե՛ քաղաքականությունով, թե՛ ծրագրե-

<sup>105</sup> Փաստեր և տիղիկություններ Նուխայ և Արեշի հայութեան ոչնչացման մասին, ՀԱԱ, Ֆ. 245, ց. 1, գ. 12, թ. 7:

<sup>106</sup> Մտեփանյան Գ., նշվ. հոդված:

րով, իսկ խոսքով բեկ Մուլթանովն ու խան Խոյսկյի աղբրեջան-  
ցի Թալեսթն ու Էնվերն էին<sup>107</sup>:

Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետության հռչա-  
կումն ինքնին Թուրքիայի ծավալապաշտական քաղաքականու-  
թյան հետևանք էր՝ միաժամանակ ուղղված հայ ժողովրդի դեմ: Աղբրեջանի ստեղծման գաղափարը կազմել է պանթուրքիզմի  
բաղկացուցիչ մասը և մշտապես առանցքային դեր է ունեցել: Այդ  
մասին բազմիցս հայտարարել են երիտթուրքերը:

ԱՂՂ-ի հռչակումից հետո ստեղծվում է առաջին կառավա-  
րությունը, որի կառուցվածքում ընդգրկվում է նաև ռազմական  
նախարարությունը: Ռազմական առաջին նախարար է նշանակ-  
վում խոսքով բեկ Մուլթանովը, որը պաշտոնավարում է մեկ ամ-  
սից ոչ ավելի՝ մինչև հունիսի կեսերը, իսկ հունիսից մինչև նո-  
յեմբեր ռազմական նախարար չի եղել, քանզի Թուրքիան զորաց-  
րել և իր բանակներին էր միացրել աղբրեջանական զորամա-  
սերը, որոնք սկսել էին ենթարկվել թուրքական շտաբին: 1918 թ.  
նոյեմբերից ռազմական նախարարներ են եղել Ֆաթալի խան  
Խոյսկյի և ռուսական բանակի հրետանու գեներալ Ալի բեյ  
Մեհմանդարովը: Ռազմական նախարարության առջև խնդիր էր  
դրվել ստեղծել 25 հազարանոց ազգային բանակ: Պետական  
բյուջեի ավելի քան 24 տոկոսը հատկացվում է ռազմական ծախ-  
սերին<sup>108</sup>:

Անկախության հռչակագրում ԱՂՂ-ի տարածքներ են հայ-  
տարարվում Արևելյան և Հարավային Այսրկովկասները, որով  
փորձ էր արվում Թուրքիայի հետ ուղիղ տարածքային կապն  
ապահովել Հայաստանի հաշվին<sup>109</sup>:

ԱՂՂ հռչակման պահին արդեն Աղբրեջանում հսկայական  
բանակ կար՝ ի դեմս Կովկասի իսլամական բանակի և 1917 թ.  
դեկտեմբերի 11-ին ձևավորված Այսրկովկասի մուսուլմանական  
կորպուսի (այն իր մեջ ներառում էր երկու հրաձգային դիվիզիա,  
երկու հրետանային բրիգադ, մնկական հեծելազորային մարտ-

<sup>107</sup> Լաթալի Ե., նշվ. աշխ., էջ 86:

<sup>108</sup> Bu gün Azərbaycanın Silahlı Qüvvələri Gündəli, 26 İyun 2013, <http://www.gun.az/featured/76327> (նդումն արված է 03.03.2016 թ.):

<sup>109</sup> Կնյազյան Դ., նշվ. աշխ., էջ 24:



կոց և առանձին բրիգադ, սակայն վորների բրիգադ և մեկ օժանդակ ստորաբաժանում), որոնց հիման վրա էլ սկսեց ձևավորվել ադրբեջանական բանակը<sup>110</sup>:

Անկախության հռչակումից անմիջապես հետո ԱՂՀ ղեկավարներն սկսեցին Թուրքիայի հետ բանակցություններ վարել՝ հատկապես ռազմական բնագավառում օժանդակություն ստանալու ակնկալիքով: ԱՂՀ հիմնադիրներից Մամեդ Ռասուլզադեի հանդիպում ունեցավ էնվեր և Թալեթ փաշաների հետ, որից հետո՝ 1918 թ. հունիսի 4-ին, Ադրբեջանը և Թուրքիան կնքեցին խաղաղության և բարեկամության համաձայնագիր<sup>111</sup>: Համաձայնագրի 4-րդ կետով Թուրքիան պետք է ռազմական օժանդակություն ցույց տար Ադրբեջանին (թեև առանց այդ համաձայնագրի էլ Նուրի փաշան իր բանակով անարգել գործունեություն էր ծավալում Ադրբեջանում), իսկ ԱՂՀ-ն պարտավորվում էր երկրից վտարել Թուրքիայի հետ պատերազմող երկրների բոլոր սպաներին ու պաշտոնյաներին, ԱՂՀ սահմանամերձ տարածքներից՝ զինված խմբավորումները<sup>112</sup>: Պայմանագրի կնքումից հետո ադրբեջանական բանակն ակտիվորեն սկսեց համալրվել թուրքական արտադրության զենք-զինամթերքով, համազգեստով, իսկ Գյանջայում թուրքերի օժանդակությամբ բացվեց սպայական դպրոց, որտեղ սկսեցին դասավանդել թուրք հրահանգիչներ<sup>113</sup>:

1918 թ. հունիսի 26-ին ԱՂՀ նախարարների խորհուրդը բանակի կազմավորման վերաբերյալ հրամանագիր ստորագրեց, իսկ հուլիսի 11-ին երկրում հայտարարեց համընդհանուր զորահավաք, որով 1894-1899 թթ. ծնված մուսուլման բոլոր քաղաքացիները զորակոչվում էին բանակ<sup>114</sup>:

<sup>110</sup> Гусейнов А., Армия Азербайджанской Демократической республики, [http://www.ourbaku.com/index.php5/Армия\\_Азербайджанской\\_Демократической\\_республики\\_1918\\_-\\_1920](http://www.ourbaku.com/index.php5/Армия_Азербайджанской_Демократической_республики_1918_-_1920). (նրումն արված է 05.03.2016 թ.):

<sup>111</sup> Azərbaycan Xalq Cümhuriyyəti, [http://www.library.adau.edu.az/\(hazruanin\\_arpilab\\_10.03.2016\\_p.\)](http://www.library.adau.edu.az/(hazruanin_arpilab_10.03.2016_p.)):

<sup>112</sup> Կնյուզյան Դ., նշվ. աշխ., էջ 25:

<sup>113</sup> Гусейнов А., նշվ. հոդված:

<sup>114</sup> <http://mod.gov.az/en/yaranma.html> (ԱՀ ՊՆ պաշտոնական կայքէջը, հղումն արված է 10.03.2015 թ.):

Թուրք-աղբբջանական ռազմաքաղաքական «մերձեցումից» հետո երկու երկրների կառավարող շրջանակները խնդիր դրեցին գրավել Բաքուն, որն այդ ժամանակ ԱՂՀ մաս չէր կազմում, իսկ պետության մայրաքաղաքը Գյանջան էր (Գանձակը): Դեռևս 1918 թ. գարնանը էնվերը մշակել էր Բաքուն գրավելու ծրագիր, որի համաձայն Նուրի փաշան պետք է Պարսկաստանով անցներ Այսրկովկաս և այնտեղ գործող «Մուսավաթ» կուսակցության ջոկատներից ու թուրք ռազմագլխիներից ձևավորեր Կովկասի իսլամական բանակը և շարունակեր առաջնադասումը դեպի Այսրկովկասի խորքերը: 1918 թ. մայիսի 27-ին Ելիզավետպոլ ժամանած 300 սպաներից և հրահանգիչներից բաղկացած ռազմական առաքելությունը Նուրի փաշայի գլխավորությամբ, ձեռնամուխ եղավ Իսլամական բանակի ստեղծմանը, որի կազմում ընդգրկվեցին նաև աղբբջանական կորպուսն ու զինված ուժերը՝ փաստացի անցնելով Թուրքիայի տրամադրության տակ: Նուրի փաշան այդպիսով իր ձեռքում կենտրոնացրեց նաև իշխանության բոլոր լծակները<sup>115</sup>: 1918 թ. հունիսի 15-ից իսլամական բանակի հրամանատարությունը, ունենալով ավելի քան 18-հազարանոց զորք, սկսեց ռազմական գործողություններ Բաքվի ուղղությամբ: Թուրքական դիվիզիաներին էին միացել աղբբջանական զորքերը: Նրանց հետևից, ինչպես ընդունված էր, շարժվում էր թաթարական խաժամուժը գրավված տարածքներում թալանով զբաղվելու համար: Այսպիսով, Գանձակում զինաթափ անելով տեղի հայ բնակչությանը, ապահովելով թիկունքը Նուրի փաշան շարժվեց դեպի Բաքու՝ Կարմիր բանակին ընդառաջ ճանապարհին Նուխի, Արեշի հայկական բնակավայրերն ու հայ բնակչությանը մատնելով հրի ու սրի, սովաբի ու թալանի կիրառելով նույն ձևերն ու եղանակները, ինչ արևմտահայության նկատմամբ: Թուրքիան Բաքուն գրավելու հետ կապված ուներ հետևյալ նպատակները. տիրանալ Բաքվի նավթառուտ շրջանին, անմիջական ճանապարհ բացել դեպի թուրանական աշխարհ, Բաքուն դարձնել նորահայտ աղբբջանական հանրապետության մայրաքաղաք ու հաստատել այնտեղ այդ հանրապետության դրածո կառավարությունը.

<sup>115</sup> Կեղազյան Դ., նշվ. աշխ., էջ 28-29:

դուրս մղել Այսրկովկասից Ռուսաստանին և վերացնել այդ նպատակների իրագործմանը խոչընդոտող հայությանը<sup>116</sup>: 1918 թ. սեպտեմբերի 15-ին թուրք-թաթարական զորքերը գրավեցին Բաքուն: Նույն օրն էլ սկսվեց Բաքվի հայության կոտորածը, ինչին զոհ գնացին ավելի քան 30 հազար հայեր: Նա 1915 թ. Ցեղասպանության ուղղակի շարունակությունն էր<sup>117</sup>, որը միանշանակ պետք է դիտել որպես 1915–1916 թթ. արևմտահայերի ցեղասպանության անքակտելի մաս, քանզի Հայոց ցեղասպանությունը, որպես քաղաքական հիմնահարց, թե՛ իր աշխարհագրական ընդգրկմամբ և թե՛ պատմական իմաստով, համաթյուրքականության ամբողջական ծրագրի իրականացման հետևանք էր<sup>118</sup>: Հատկանշական է, որ Բաքվում կոտորածի ենթարկվեց միայն հայ բնակչությունը. ո՛չ մուսուլմանները, ո՛չ ռուսները, հրեաները, վրացիները, սլավոնական և եվրոպական այլ ազգերի ներկայացուցիչներ, չեն տուժել կամ եթե տուժել են, դա եղել է պատահամամբ կամ տարերային եղանակով<sup>119</sup>:

Հատկանշական է եվրոպացի ժամանակվա դիվանագետների խոսքը հայոց ջարդերի վերաբերյալ. «Նավթն ավելի թանկ է, քան հայերի արյունը»<sup>120</sup>:

Բաքվում հայկական կոտորածների կազմակերպիչներն ու ոգեշնչողներն էին թուրքական զորքերի հրամանատարներ Ֆաթալի խան Խոյսկին և Բեհբուջ Ջևանշիր խանը, որոնք որոշել էին նախօրոք նախատեսված պլանի համաձայն բանդաների և ջարդարարների ողորմածությանը թողնել քաղաքի ու նրա շրջակայքի ամբողջ հայության կյանքն ու ինչքը: «Թո՛ղ մորթեն և ջարդեն որքան կարող են, թո՛ղ առևանգեն և բռնանան, թալանեն

<sup>116</sup> Արամիանյան Լ., Ռեզիստանտական իրադրությունը Բաքվում և Նարաբադում 1918 թ. երկրորդ կեսին, Հայագիտության հարցեր, 2 (8), Եր., 2006, էջ 220:

<sup>117</sup> Ղադայան Ն., Հայերը և Բաքուն (1850 - ական թթ. - 1920 թ.), Լոռավանք ԳԿՆ, Եր., 2006, էջ 4:

<sup>118</sup> Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Բաքվի նահանգում 1918–1920 թվականներին, [http://hpf.asj-qa.am/2586/1/2008-3\(31\).pdf](http://hpf.asj-qa.am/2586/1/2008-3(31).pdf), (նշումն արված է 03.03.2016 թ.):

<sup>119</sup> Իշխանյան Բ., Բաքվի մեծ սարսափները, Թիֆլիս, 1920, էջ 7:

<sup>120</sup> Բաղդասարյան Յու., Բաքուն և հայերը, հանրահայկական քաղաքականությունն ու հայերի էթնիկական մաքրումը Աղբյուրաբանում, Եր., 2014, էջ 119:

ու կողոպտել: Դա նրանց թույլ է տրվում և նրանց է թողնված իրենց էներգիային ու հնարավորությանը համապատասխան<sup>121</sup>: Բաքվի գրավումից հետո մուսավաթ-թրքաանր խան Նոյսկին հայտարարեց. «Աղրբեջանը հասավ իր նպատակին. վերջապես իրագործվեց սուլթանի դրոշի ներքո բոլոր թուրքերին միավորելու երազանքը: Կեցցե՛ բոլոր թուրքերի միավորումը»<sup>122</sup>:

Բաքվի գրավումից հետո ԱՂԸ ղեկավարությունը, Թուրքիայի հորդորով, տարածքային պահանջներ ներկայացրեց Այսրկովկասի հայկական զգալի տարածքների նկատմամբ: Թուրքիայի ու Աղրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարներն առավել կարևորում էին Ղարաբաղի ու Ջանգեզուրի բնակչումը (այդ ժամանակ էր, որ ռազմական նախարար Նոսրով րեկ Մուլթանովը նշանակվեց Եուջիի, Ջանգեզուրի, Ջեբրայիլի և Ջիվանշիրի գեներալ-նահանգապետ, և խնդիր դրվեց շրջափակման, աղան-թալանի, ավազակությունների ու կոտորածների միջոցով խեղդել Ղարաբաղն ու ստիպել, որ այն ընդունի Աղրբեջանի հպատակությունը<sup>123</sup>), քանզի այդ տարածքները ոչ միայն կարող էին ուղիղ գծով միմյանց կապել Աղրբեջանն ու Թուրքիան, այլև ԱՂԸ համար հեշտացնել իշխանության տարածումը Շարուր-Նախիջևանի և Արարատյան դաշտավայրի՝ մուսուլմաններով բնակեցված լայնարձակ տարածքների վրա: Աղրբեջանը ցանկանում էր Ղարաբաղ-Ջանգեզուր-Շարուր-Նախիջևան-Մակու գծով անմիջական կապ հաստատել Թուրքիայի հետ<sup>124</sup>: Դա էլ բավական չէր. Աղրբեջանը հավակնություններ ուներ անգամ Երևանի նկատմամբ՝ պեղելով, թե այն թաթարական քաղաք է՝ հայերին «վնասնձեռոնե» որպես մայրաքաղաք թողնելով Էջմիածինը<sup>125</sup>:

<sup>121</sup> Իշխանյան Բ., նշվ. աշխ., էջ 6:

<sup>122</sup> Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը եւս հայության գոյամարտն էր, Եր., 2012, էջ 109:

<sup>123</sup> Արամայիս (Միսաք Տեր-Ղանիելյան), Ղարաբաղի տազնապը (26 ապրիլի – 26 հուլիսի 1919 թ.), Եր., 1993, էջ 13, 30:

<sup>124</sup> Գաղտնի փաստաթղթերը ..., էջ 11:

<sup>125</sup> Ջաբրևանդ, Կրեւո եւ հաշտուիլ թուրքին հետ. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թվերին, «Հայրենիք» ամսագիր, Բուստոն, թիվ 7, 1963, էջ 58:

Թուրքիայի հետ կապվելու համար Ադրբեջանը Հայաստանից պահանջում էր ամբողջ Ելիզավետապոլի նահանգը՝ բովանդակ Արցախով և Ջանգեզուրով, Երևանի նահանգից՝ Նախիջևանն ու Շարուրը, Երևանի և Էջմիածնի գավառներից՝ Սադաբադի, Վեդիքասարի, Ջանգիքասարի շրջանները, Արաքսի աջ ափը, Մասիսի ստորոտներով՝ ամբողջ Մուրմալուն մինչև Կարսի մարզը, ինչպես նաև Սևանա լճի հյուսիսային ափերը, Վարդենիսը: Դա կազմում էր ավելի քան 50.520 քառակուսի կմ տարածք<sup>126</sup>: Թուրքիայի և Ադրբեջանի հիմնական պանթուրքիստական նպատակն էր ամբողջ Կովկասի գրավումն ու թրքացումը, ինչին հասնելն այնքան էլ դյուրին չէր: Մուսուլմանները կազմում էին Այսրկովկասի ազգաբնակչության մեկ երրորդը: Երիտթուրքերը սեփական փորձով գիտեին, որ հայությանը դավանափոխ և ազգափոխ անելը անհեար է: Մնում էր միայն մեկ եղանակ. սեփական նպատակներին հասնել և իրենց ծրագիրը, ինչպես 1915 թ., իրականացնել մի ամբողջ ժողովրդի ցեղասպանությամբ: Հայերի թվաքանակը Ադրբեջանում մոտ 500.000 էր, որը հանրապետության ամբողջ ազգաբնակչության մեկ քառորդն էր կազմում: Հայերի ֆիզիկական ոչնչացմամբ Ադրբեջանի կառավարող շրջանները փորձում էին հասնել հանրապետության բնակչության միատարրության՝ միաժամանակ զրկելով հայերին իրենց պատմական տարածքների համար պայքարելու հնարավորությունից: Հայության ցեղասպանությամբ կոչնչացվեին նաև նրա ճարտարապետական ու մշակութային արժեքները՝ տարածքների պատկանելության իրական վկայությունները (հետագա տասնամյակներն ապացուցեցին վերոգրյալը):

Հայկական տարածքների նկատմամբ ունեցած իրենց նկրտումներն իրագործելու քայլերը թուրք-թաթարները ձեռնարկեցին Բաքվի գրավումից անմիջապես հետո, երբ նրանց համատեղ զորքերը շարժվեցին դեպի Ղարաբաղ՝ վերջնագիր ներկայացնելով հպատակվել ԱՂՂ-ին, զինաթափվել և թուրքական բանակը ներս թողնել Շուշի: Հոկտեմբերի 8-ին թուրքական երկրորդ դիվիզիան ԱՂՂ կառավարության ներկայացուցիչ

<sup>126</sup> Ուլսեհ, Հայ Յեղափոխականի մը յիշատակները, Կ. Ե., Ֆեհրան, 1982, էջ 184:

Աղիլխան Ջիյադխանովի ուղեկցությամբ մտավ Շուշի<sup>127</sup>: Նույն ամսին Կարաբեքիր փաշան մտավ Նախիջևան<sup>128</sup>: Թուրքիայի ռազմական սլանների մեջ էր մտնում գրավել Շուշին և, այն դարձնելով պլացդարմ, ամբողջ Լեռնային Ղարաբաղը ենթարկել Ադրբեջանին: Այնուհետև թուրք-ադրբեջանական ուժերը մտածում էին զինաթափ անել Գանձակի լեռնային մասի հայկական գյուղերը և ապա, հավաքագրելով Մուղանի, Ագարա գետի հովտի, Նախիջևանի և այլ բնակավայրերի մուսուլման բազմահազար զինված երոսակներին, գրոհել Ջանգեզուրի ու Ղարաբաղյազյազի վրա: Ջանգեզուրի հարցում ևս Ադրբեջանին թե՛ դիվանագիտական, թե՛ ռազմական աջակցություն էր ցույց տալիս Թուրքիան: Կան վկայություններ, որ Ջանգեզուրի դեմ հարձակումը նախապատրաստել են էնվերը և Նուրին, որոնք գտնվել են Ադրբեջանում<sup>129</sup>, իսկ Անդրանիկի բանակի գործողությունների դեմ ՀՀ կառավարությանը բողոք էր ներկայացրել Խալիլ փաշան: Բացի այդ, Ադրբեջանի ղեկավարությունը գաղտնի Ջանգեզուր էր ուղարկել թուրք սպաների ու ասկարների, որպեսզի հրահրեն տեղի մուսուլմաններից բարձրացնել ապստամբություն ընդդեմ ՀՀ իշխանությունների և ղեկի Ջանգեզուր կազմակերպվող հարձակման ժամանակ թիկունքում միանան թուրք-ադրբեջանական զորքերին<sup>130</sup>: Այդ նպատակով Ադրբեջանը նաև զինում էր տեղի մուսուլման բնակչությանը և մեծ զումարներ փոխանցում նրանց՝ Երևանում գործող իրենց դիվանագիտական ներկայացուցչության միջոցով, ինչպես նաև իրականացնում հետախուզական մեծ աշխատանք<sup>131</sup>: Հաջողության դեպքում վերոնշյալ երկու շրջանները ևս պետք է միացվեին Ադրբեջանին: Ղա թուրքերի և մուսավաթական ղեկավարների պակությունքական ծրագրի մի կարևոր մասն էր, որ նրանց աշխատեցին իրագործել ամեն կերպ, նույնիսկ 1919 թ., երբ

<sup>127</sup> Կնյազյան Ղ., նշվ. աշխ., էջ 42:

<sup>128</sup> Хейфец А.Н., Советская Россия и сопредельные страны востока в годы гражданской войны (1918-20 гг.), М. 1964, с. 54:

<sup>129</sup> ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 441, թ. 31-32:

<sup>130</sup> Նույն տեղում:

<sup>131</sup> Գաղտնի փաստաթղթերը ..., էջ 9:

Անդրկովկասում նստած էին Անտանտի հաղթական ներկայացուցիչները՝ անգլիացիների գլխավորությամբ:

Այսպիսով՝ թուրք զորահրամանատարներն ու նրանց ադրբեջանցի կամակատարները նպատակ ունեին զավթել հյուսիս-արևելյան Հայաստանի գոյության համար կարևորագույն նշանակություն ունեցող հայկական տարածքները:

Բաքվի արյունալի դեպքերից հետո նախապատրաստվեցին և իրագործվեցին Գանձակ, Շամախի, Լուխի քաղաքների և Ադրբեջանի հայկական գյուղերի հայության կոտորածները: Միայն Ելիզավետպոլի գավառում այրվեցին 13 հայկական գյուղեր, որոնց բնակչության մի մասն անողորմ հոշոտվեց, իսկ կենդանի մնացածները տեղահանվեցին: Ծանր կացություն էր ստեղծվել նաև Լուխիի, Արևշի, Շամախու գավառներում, Ասկերանում, Ադղամում: Վերջինիս ուղղությամբ Լուրի փաշան կենտրոնացրել էր Գալիպոլիի թերակղզուց Բաքվի ճակատ փոխադրված դիվիզիայի երկու լավագույն մասերը: Բացի դրանից, բավականաչափ զորքեր էին տեղակայված ոչ միայն Ադղամի, այլև հայ-մուսուլմանական սահմանի գրեթե ողջ երկայնքով: Լուրի փաշան փորձում էր համոզել Ղարաբաղի իշխանություններին, որ զենք չբարձրացնեն թուրքերի ու ադրբեջանցիների դեմ, ուղղակի հանձնվեն<sup>122</sup>:

Թուրք-ադրբեջանական ռազմական, քաղաքական ու տնտեսական դաշինքն առավել ամուր հիմքերի վրա դնելու և հարաբերություններին իրավական ուժ տալու նպատակով 1919 թ. հոկտեմբերի 29-ին կնքվեց գաղտնի համաձայնագիր՝ «Թուրք-ադրբեջանական ռազմական միություն» անվամբ, որի 10-րդ հոդվածի «բ» կետով Ադրբեջանն առանց Թուրքիայի թույլտվության այլ պետությունների հետ հարաբերվելու իրավունք չուներ: Դա համատեղ պաշտպանության, ռազմական համագործակցության և ռազմական միություն ստեղծելու երկկողմ պայմանագիր էր՝ ուղղված Հայաստանի և հայ ժողովրդի դեմ<sup>123</sup>:

<sup>122</sup> Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում (1917-1920), <http://hetq.am/arm/news/31718/depqery-jernayin-xarabaxum-1917-1920.html> (հղումն արված է 10.05.2015 թ.):

<sup>123</sup> ՀԱԱ, ֆ. 275, ց. 5, գ. 184, ք. 67:

Թուրքիան և ԱՂՁ-ն 1919-1920 թթ. կնքել են ռազմական 2 դաշնագիր. մեկը վերոնշյալ գաղտնի համաձայնագիրն էր կնքված 1919 թ. հոկտեմբերի 29-ին, իսկ մյուսը, որպես առաջինին փոխարինող և լրացնող, կնքվել է 1920 թ. ապրիլի 15-ին Էրզրումում, վավերացվել ԱՂՁ զինվորական նախարարի օգնական Ալի աղա Շիխլինսկու և թուրքական 15-րդ բանակի հրամանատար Քյազիմ Կարաբեքիրի կողմից<sup>134</sup>: Երկուսն էլ իրականում ուղղված էին Հայաստանի դեմ:

Համաձայնագրի ստորագրումից հետո առավել լայն թափ ստացան թուրք-աղբբեջանական ռազմական համատեղ գործողությունները, թուրք հրահանգիչների ու մասնագետների կողմից աղբբեջանցի զինծառայողների վերապատրաստման աշխատանքները: Թուրք հրահանգիչների օգնությամբ 1919 թ. վերջերին, 1920 թ. սկզբներին արդեն Աղբբեջանում ստեղծվել էին հրետանու մասնագետների և դիպուկահարների պատրաստման մասնագիտական կենտրոններ: Աղբբեջանական զորքերի շատ հրամանատարներ ևս թուրքեր էին: 1920 թ. սկզբներին Ասկերանի տակ հայկական զորքերը պարտության մատնեցին թաթարներին, որից հետո գեներալ Սելիմովի փոխարեն հրամանատար է նշանակվում օսմանցի Խալիլ փաշան<sup>135</sup>: Վերջինս թե՛ հրետանավորների, թե՛ հետևակի և հեծելազորի զորամասերը համալրում է օսմանցի փորձված սպաներով ու ասլյարներով և կարողանում է կտրել հայ պաշտպանական զորքերի դիմադրությունը: Միայն Ասկերանի գրավումով թուրք-թաթարական զորքերը կարողացան շարժվել դեպի Շուշի: 1920 թ. մարտ-ապրիլ ամիսներին Ղարաբաղում ևս թուրք-աղբբեջանական մարդասպանները ամեն կերպ աշխատեցին իրագործել իրենց վաղեմի հրեշալիին ծրագիրը՝ ոչնչացնել հայությանն այնտեղ, որտեղ հնարավոր էր: Աղբբեջանի ռազմական նախարար և գլխավոր հրամանատար գեներալ Մեհմանդարովը հրամայեց զորքին՝

<sup>134</sup> Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետությունը, էջ 473-474:

<sup>135</sup> Խալիլը Էնվերի հորեղբոր որդին էր, համաթուրանականության ջատագովներից մեկը: Անդամակցել է թուրքական հատուկ ծառայությանը «Teşkilat-ı Mahsus»-ին: Տե՛ս Ստեփանյան Գ., Բարոս քաղաքի հայության պատմությունը, Եր., 2011, էջ 363:



չխնայել ո՛չ հայկական գյուղերը և ո՛չ էլ քրանց բնակիչներին<sup>126</sup>։

Նարաբաղի հարցում առավել կոշտ դիրքորոշմամբ աչքի ընկան հատկապես իթթիհադականները։ Դեռևս 1920 թ. հունվարի կեսերին Նուրի և Նալիլ փաշաների մասնակցությամբ Բաքվում կայացած կուսակցական համագումարում «Իթթիհադի» առաջնորդ Կարաբեյ Կարաբեկովն ԱԴՀ կառավարությանն առաջարկեց պահանջել երկրի մեծաքանակությամբ հավաքել մեկ մլրդ ռուբլի և հատկացնել Նուրի ու Նալիլ փաշաներին՝ 200.000-անոց բանակ ստեղծելու համար։ Նաև առաջարկվում էր Ադրբեջան հրավիրել Մուստաֆա Քեմալին պանիսլամիստների խմբի հետ՝ «բազմաչարչար կրոնակիցներին տանջանքներից փրկելու համար»<sup>127</sup>։ Իսկ թուրք ազգայնական, պանթուրքիզմի տեսաբան Յուսուֆ Աքչուրան հայտարարում էր. «Պետք է ոչնչացնել Հայաստանը, զոր դաշնակիցները կուզեն իբր թումբ կանգնեցնել երկու եղբայր հատվածներու Անատոլուի և Կովկասի թրքության միջև»։ Մեկ այլ թուրք ազգայնականի խոսքերով. «Թուրքիզմը մեզի համար կեշտնակե Անատոլուի միացումը Ազրայեյճանի հետ՝ Հայաստանի դիակին վրայով»<sup>128</sup>։

Շուշին հայերից դատարկելու իր քաղաքականությունն իրագործելու նպատակով Ադրբեջանը, կրկին հետնելով Թուրքիայի օրինակին ու խորհրդին, «Համադիե» ջոկատների նման ստեղծեց քրդերից բաղկացած զինված խմբեր, որոնց միջոցով էլ ցեղասպանություն իրագործեց Շուշիում ու շրջակա հայկական գյուղերում<sup>129</sup>։ Նուրի փաշան, թուրք սպաներով ու մի քանի հազարանոց բանակով, ևս եղել է Շուշիում՝ նպատակ ունենալով այնտեղից Ջանգեզուրի վրա կազմակերպել ադրբեջանական լայնամասշտաբ հարձակում<sup>130</sup>։

1920 թ. ապրիլին Ադրբեջանը խորհրդայնացվեց, ինչը, որքան էլ առաջին հայացքից զարմանալի է, ևս մտնում էր պանթուրքիստական ծրագրերի մեջ. դրանով հայ ժողովրդի նկատ-

<sup>126</sup> Թումյան Է., նշվ. աշխ.։

<sup>127</sup> Կեյսազյան Դ., նշվ. աշխ., էջ 154։

<sup>128</sup> Նաթալի Ե., նշվ. աշխ., էջ 48։

<sup>129</sup> Ջոհրայան Է., Լախիջևանյան նիսնահարցը և ..., էջ 132։

<sup>130</sup> ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 441, ք. 71-72։

մամբ իրականացվող ցեղասպանությունը պետք է շարունակվեր այլ մեթոդներով ու ձևերով: Դեռևս 1919 թ. վերջերին Մուստաֆա Բեմալն արդեն նպատակ էր դրել միանալ բոլշևիկների ու Ադրբեջանի հետ, որպեսզի հնարավոր լինի վերջնականապես ոչնչացնել հայ ժողովրդին<sup>141</sup>: Բաքվում ստեղծվեց «Թուրքական կոմունիստական կուսակցությունը», որի հիմնադիրը հայտնի երիտթուրք գործիչ Ֆուաթ Սաբիթն էր<sup>142</sup>, ով միաժամանակ Կարաբեքիր փաշայի կապավորն էր և Հայաստանի ոչնչացման ծրագրերի մեջ կարևորագույն դերակատարներից մեկը: Խորհրդայնացումով, ըստ էության, մուսավաթականներին փոխարինեցին ադրբեջանցի բոլշևիկները: Մուսավաթական Ադրբեջանի նվաճողական ծրագրերը փոխանցվեցին Խորհրդային Ադրբեջանին:

Ամփոփելով «Ռազմական համագործակցությունն Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդդեմ Հայաստանի առաջին հանրապետության» ենթագլուխը ցանկանում ենք փաստել, որ այն ժամանակվա ազգանվեր հայ գործիչները ևս հստակ գիտակցում էին, որ Հայաստանի դեմ Թուրքիան ու Ադրբեջանը գործում են միասնաբար՝ ունենալով մեկ նպատակ՝ ոչնչացնել հայոց պետականությունը, վերացնել հայ ժողովրդին: Այդ է պատճառը, որ հայոց վրիժառուների «Նեմեսիս» գործողության ցուցակում տեղ էին գտել նաև ադրբեջանցի հետևյալ հայատյաց գործիչները՝ Նասիբ Ֆուսիֆբեյլին (Ուսուրեկով, 1918 թ. Ադրբեջանի կրթության ու կրոնական հարցերով նախարարը, 1919-1920 թթ. Ադրբեջանի վարչապետն ու ներքին գործերի նախարարը), Ադրբեջանի 1918-1919 թթ. վարչապետ Ֆաթալի խան Խոյսկին, 1918 թ. Ադրբեջանի արդարադատության նախարար, հետագայում ներքին գործերի նախարար Խալիլ Խաս Մահմադովը, 1918-1920 թթ. Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Հասան Բեկ Աղանը, որը Բաքվի և Եուզիի հայկական ջարդերի հիմնական պատասխանատուներից էր, 1918 թ. Ադրբեջանի ներքին գործերի նախարար Բնեդուք Ջիվանշիր Խանը, որը 1921 թ. արդեն Ադրբեջանական ԽՍՀ ներկայացուցիչն էր Կ. Պոլսում և ուրիշներ:

<sup>141</sup> Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական ..., էջ 113:

<sup>142</sup> Մաֆրատյան Ռ., Օսմանյան կայսրություն, Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., 2009, էջ 200:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՂԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ  
 ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
 ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1. Խորհրդային Ադրբեջանի հատուկ ծառայությունները

Ադրբեջանի խորհրդայնացման հարցը բավական մեծ կարևորություն ուներ խորհրդային հեղափոխության հաղթանակի և տարածման գործում: Դա եախ և առաջ պայմանավորված էր Ադրբեջանի տարածքի բարենպաստ դիրքով և ունեցած բնական հարստությամբ՝ նավթով:

Ադրբեջանի խորհրդայնացումն իրականացավ ռուս-թուրքական մերձեցման արդյունքում: 1920 թ. ապրիլի 26-ին Մ. Քեմալի կողմից Վ. Լենինին հասցեագրված նամակը ևս ապացուցում է, որ քեմալական թուրքիան մեծ դեր է ստանձնել Ադրբեջանի խորհրդայնացման գործում՝ ունենալով իր շահերը: Մ. Քեմալը նամակում մասնավորապես հշել է. «Մենք ռազմական գործողություններ կսկսենք իմպերիալիստական Հայաստանի դեմ ու կստիպենք Ադրբեջանին մտնել խորհրդային օղակի մեջ»<sup>140</sup>:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո վրացական «Գրչա» թերթը գրեց, թե ճիշտ կլիներ, որ Ադրբեջանը երբևէ չներկայանար էլ որպես ինքնիշխան պետություն, այլ հանդես գար որպես թուրք-պանթուրքիստների վասալ, իսկ «Сахаixo Сакме»-ն գրեց, թե ճիշտ կլիներ, որ Ադրբեջանը կոչվեր թուրքիա<sup>141</sup>:

Կան տեղեկություններ, որ նոր ձևավորված ադրբեջանական ժողկոմխորհի («совнарком»-ի) բոլոր անդամները, բացի Ն. Նարիմանովից<sup>142</sup>, հանդիսանում էին Նուրիի և Խալիլի դրածոները<sup>143</sup>:

<sup>140</sup> Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и политике, Комментарий к документам, М., 2009, т. II, с. 159. Տե՛ս նաև Казанян А., հշվ. աշխ, էջ 299:

<sup>141</sup> К событиям в Азербайджане, Вюлетень N 92, Информационного бюро при Армянской Дипломатической Миссии в Грузии, 30 апреля, 1920 г., ЗИУ, 5. 275, ց. 5, գ. 217, ք. 55 և շրջերես:

<sup>142</sup> Ն. Նարիմանովը ևս անավոր հարատյաց անձնավորություն էր, ունի հակահայկական քննադատական արամաղովածություն, ինչը չէր էլ թաքցնում: Նրան լավ

Աղբրեջանի խորհրդայնացումով հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող ցեղասպանության քաղաքականությունը պետք է շարունակվեր այլ մեթոդներով ու ձևերով: Իրականում փոխվեց միայն հանրապետության «ցուցանակը», և Աղբրեջանի Հանրապետությունը վերանվանվեց Խորհրդային Աղբրեջան: Երեկվա մուսավաթականներից շատերը գրադեցրին բարձր պաշտոններ: Նախկին բանակը, որի միջոցով Աղբրեջանն ու Թուրքիան չհայտարարված պատերազմ էին մղում Հայաստանի դեմ և իրականացնում հայերի ցեղասպանությունը, դարձավ Աղբրեջանի կարմիր բանակ՝ շարունակելով իր «սև գործը» հայ բնակչության նկատմամբ: Խորհրդային Ռուսաստանը չկարողացավ ռուսական հեղափոխությունը արտահանել Արևմտյան Եվրոպա և իրականացնել համաշխարհային հեղափոխություն ու դրա իրականացման ուղղությունը տեղափոխեց դեպի Արևելք: Դա իրականացնելու համար անհրաժեշտ էր ուժեղ հենարան և, քանի որ Այսրկովկասում առաջինը խորհրդայնացվել էր Աղբրեջանը (որին միաժամանակ հովանավորում էր Թուրքիան), ուստի նա էլ դարձավ այդ հենարանը: Ինչպես պանթուրքիզմի, այնպես էլ «համաշխարհային հեղափոխության» ճանապարհին խոչընդոտ էր Հայաստանը և հայ ժողովուրդը: Այս անգամ էլ Հայաստանը և հայությունը պետք է զոհ գնային «համաշխարհային հեղափոխության» գաղափարին և դրա իրականացման ծրագրերին:

Աղբրեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Հեղկունը, ապա նաև 11-րդ կարմիր բանակի հրամանատարութ-

---

նկարագրել է Բաքվում 22 դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բնեզդայանը. «Նա (Ն. Նարինանովը) իր խոր հակահայկական տրամադրությունը չի աշխատում գտնել թաքցնել քաղաքավարութեան քոթի տակ և շատ յաճախ մտածում է, որ կոմունիստ է ու խոր ազգային թրքական պատկերը ցայտուն կիրքով հրապարակ է հանում: Անուշտ միտները դրանից ավելի կոմունիստ և ինտերնացիոնալ չեն, բայց իրենց հակակրանքը այդքան ցենիկ չեն արտահայտում», տե՛ս Հայաստանի Հանրապետության Արտաքին գործոց մինիստրին, Հայաստանի Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչության Աղբրեջանում, 9 օգոստոսի 1920 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, ք. 17:

<sup>100</sup> Скюджа, Секретно, Разведывательного Отделения Штаба Командующего Войсками, 7 мая 1920 г., N 16, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427<sup>0</sup>, ք. 278, շրջերես, 279, ֆ. 275, ց. 5, գ. 184, ք. 139-ի շրջերես:

յունը Հայաստանից պահանջեցին Ղարաբաղից, Ջանգեզուրից, Լախիջևանից դուրս բերել գործերը: 1920 թ. ամռանը խորհրդային գործերը սկսեցին այդ երկրամասերի գրավումը: Հայ բնակչությունը ետից հայտնվեց կոտորածի սպառնալիքի առաջ: Ադրբեջանական զինվորները 11-րդ բանակի ստորաբաժանումների հետ սկսեցին ուժակոծել Ղարաբաղի, Ջանգեզուրի հայկական բնակավայրերը, սկսվեց ժողովրդի կողոպուտը և կոտորածը: Շուտով երանց միացան քիմալականները, որոնք ևս պատերազմ սկսեցին Հայաստանի դեմ: Իրավիճակը փոքր ինչ փոխվեց Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո, երբ Խորհրդային Ադրբեջանի հեղկումը, էլեկտրոնորշակի քաղաքական նկատառումներից, 1920 թ. նոյեմբերի 30-ի իր հռչակագրով Ղարաբաղը, Ջանգեզուրը և Լախիջևանը հայտարարեց Խորհրդային Հայաստանի մաս: Սակայն մի քանի ամիս անց Ադրբեջանի ղեկավարությունը կատաղի պայքար սկսեց իր իսկ ընդունած հռչակագրի դեմ: Այստեղ, հավանաբար, իր դերն էր խաղացել Թուրքիան: 1921 թ. մարտի 16-ին Խորհրդային Ռուսաստանի և Թուրքիայի միջև Մոսկվայում կնքվեց «եղբայրության և բարեկամության» պայմանագիր, որով պատմական Հայաստանի տարածքներից Արևմտյան Հայաստանը, Սուրմալուի գավառը, Կարսի մարզը ճանաչվեցին Թուրքիայի տարածքներ, իսկ Լախիջևանը և Շարուրը տրվեցին Խորհրդային Ադրբեջանին: Պայմանագրով ընդհանուր առմամբ Թուրքիային և Ադրբեջանին անցավ ավելի քան 25.000 քառ. կմ տարածք<sup>10</sup>:

Եւյն բախտին արժանացավ նաև Լեռնային Ղարաբաղը: 1921 թ. հուլիսի 5-ի ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի պլենումն առանց քվեարկության, կամային որոշմամբ Լեռնային Ղարաբաղը հանձնեց Խորհրդային Ադրբեջանին: 1923 թ. հուլիսի 7-ին Խորհրդային Ադրբեջանի Կենտգործկոմի ղեկըտով ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը: 1924 թ. փետրվարի 9-ին Ադրբեջանի կազմում ստեղծվեց Լախիջևանի Ինքնավար Հանրապետությունը: Այս տարածքներն Ադրբեջա-

<sup>10</sup> Խաչատրյան Կ., Մուքիսյան Հ., Բաղսայան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԻՄ-ի տարածքային կորուստները 1920-1930-ական թվականներին, ՀՀ ԳԱԱ պատմության ինտիտուտ, եր., 2015, էջ 19-22:

նին բռնակցելուց հետո հայ ազգաբնակչության համար ստեղծվեց նոր վիճակ, որը միանգամայն կարելի է բնութագրել որպես «սպիտակ ցեղասպանություն»:

Փաստորեն նախկին բանակը, որի միջոցով Ադրբեջանն ու թուրքիան չհայտարարված պատերազմ էին մղում Հայաստանի դեմ և իրականացնում հայերի ցեղասպանությունը, դարձավ Ադրբեջանի կարմիր բանակ՝ շարունակելով իր «սև գործը» հայ բնակչության նկատմամբ: 1920 թ. սեպտեմբերի 15-ին ՀՀ ԱԳՆ տեղեկատվական բաժնի վարիչ Մ. Արզումանյանը գեկուցում է. «Մեր և Ադրբեջանի միջև հարաբերությունները ոչ մի փոփոխություն չեն կրել: Հայերի դրությունը Ադրբեջանում շարունակում է մնալ շատ ծանր, մեծ թվով հասարակական գործիչներ, գլխավորապես դաշնակցականներ, շարունակում են տառապել Ադրբեջանի բանտերում»<sup>146</sup>: Իսկ մեկ ամիս անց գրում է. «Թուրքերը ուժեղ պրոպագանդա են մղում (Ղարաբաղում և Ջանգեզուրում) հայ ազգաբնակչությանը Ադրբեջանին հպատակ դարձնելու համար: Խալիլ փաշան, սեպտեմբերին վերադառնալով Մոսկվայից, անցել է Գորիս և առաջարկել Ջանգեզուրի հայությանը ընդունել Ադրբեջանի հպատակությունը՝ նախազգուշացնելով, որ հակառակ դեպքում նա Ջանգեզուրի հայության հետ կվարվի այնպես, ինչպես վարվել է Տաճկաստանի հայության հետ»<sup>147</sup>: Հատկանշական են նաև Ն. Նարխանովի համախոհ, Ղարաբաղի հեղկումի նախագահ Ասադ Կարանի 2 «հույժ գաղտնի» շրջաբերականները Գորիսի հեղկումում գործող իր համախոհին: 1920 թ. հուլիսի 19-ին նա գրում է. «Խորապես սխալ է եղել Ձեր հին քաղաքականությունը, այն է՝ Ղարաբաղի և Ջանգեզուրի նվաճումը գործով: Մեր գործը ջախջախվել է այժմ կառավարությունը որոշել է Ղարաբաղը և Ջանգեզուրը նվաճելու համար բաց թողնել 200 մլն ռուբլի»: Իսկ 2 օր անց նա նոր՝ անողոք ցուցում է տալիս. «Մինչև հիմա դեռ զինաթափված չէ Ջանգեզուրի գյուղերի 90 %-ը,

<sup>146</sup> Մենք և: Մովսեսական Ադրբեջան, Արտաքին գործերի մինիստրություն, Տեղեկագիր, N 13, 15 սեպտեմբերի 1920 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 մաս II, թ. 369 և շրջերես:

<sup>147</sup> Դրությունը Ղարաբաղում և Ջանգեզուրում, Արտաքին գործերի մինիստրություն, Տեղեկագիր, N 15, 15 հոկտեմբերի 1920 թ., Եր., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427 մաս II, թ. 393:

բայց ամենացավալին այն է, որ մինչ այժմ գլխատված չէ գանգե-  
զուրյան հայությունը: Թողե՛ք մարդասիրությունը: Կովողներով  
հարուստ վայրերում հայերին թուլացնելու նպատակով մի ոռու  
գինվոր սպանեք և մեղքը զցեք հայերի վրա... Այդ անիծյալ ցեղը  
պետք է այլևս ոտքի չկարողանա կանգնել»<sup>150</sup>:

Բարձրում գտնվող ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի՝  
31-ը հուլիսի 1920 թ. թվագրված զեկույցը ՀՀ ԱԳ նախարարին  
լույս է ավորում Խորհրդային Ադրբեջանի հավակնությունների  
վրա. «...Ադրբեջանի ներկա քաղաքականության գլխատր  
ուշադրությունը ուղղուած է դեպի ոռու-հայկական բանակցու-  
թիւնները և իրենց տերիտորիալ ծրագրի իրագործումը այն  
պատճառաբանութիամբ, որ Ադրբեջանի մուսուլմանութիան  
համակրանքը գրավելու միակ միջոցն է այն, որ Ադրբեջանին  
կցուին ոչ միայն Ղարաբաղը և Ջանգիզուրը, այլև Նախիջեւանը,  
Շարուրը եւ Սուրմալուն: Այդ տեսակի քարտեզներ ներկայումս  
զարդարում են Ռեւկումի նախագահի և քարտուղարի սինիակ-  
ների պատերը»<sup>151</sup>:

Այսպիսով, 1920 թ. ապրիլի 28-ի գիշերը բուլնիկները,  
թուրքերի աջակցությամբ և Ադրբեջանի խորհրդարանի համա-  
ձայնությամբ, մտան Բաքու և Ադրբեջանում հայտարարեցին  
խորհրդային իշխանություն<sup>152</sup>: Փաստորեն, Խորհրդային Ռու-  
սաստանի XI կարմիր բանակը մտավ Բաքու, տապալեց խամա-  
ճիկային մուսավաթական կառավարությունը և «ապստամբած  
աշխատավորների անուխից» այնտեղ հռչակեց խորհրդային իշ-  
խանություն: Ինչպես կշում է քաղաքագնետ, փիլիսոփայական  
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը՝  
ոռուսական բանակը «վերացրեց թուրքական բանակի հիմնած  
պետականությունը և հիմնեց նորը»<sup>153</sup>:

<sup>150</sup> Սարգսյան Ա., Ադրբեջանի Կոմկուի Կենտկոմի I քարտուղար Ա. Յ. Վեյդի-  
վին, Խորհրդային Հայաստան, Եր., 24 հունիսի 1989, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 3, գ. 10, թ. 13:

<sup>151</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի  
Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչության Ադրբեջանում, 31  
Յուլիսի 1920թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 4, թ. 2, շքերես, 3:

<sup>152</sup> Վրացյան Մ., Հայաստանի Հանրապետության, էջ 400:

<sup>153</sup> Մանասյան Ա., Առևալին Ղարաբաղ, ինչպես է դա եղել, Եր., 2010, էջ 27:

Աղբբեջանի խորհրդայնացման հենց հաջորդ օրը՝ 1920 թ. ապրիլի 29-ին, Աղբբեջանի հեղկումը որոշում ընդունեց Աղբբեջանի արտակարգ հանձնաժողով (ԿԵԿԱ) ստեղծելու մասին Չուրանի ղեկավարությամբ: Սկզբնական շրջանում այն իր սեփական սպարաառը չուներ և գործում էր XI կարմիր բանակի Հատուկ բաժնի կազմում<sup>154</sup>:

Ստեղծման օրն նեթ Արտակարգ հանձնաժողովն իրականացրեց Բաքվում գտնվող օտարերկրյա մի շարք ղիվանագիտական ներկայացուցիչների ձերբակալություններ: Ապրիլի 30-ին, առանց որևէ բացատրության ու հիմքի, Արտակարգ հանձնաժողովի կողմից ձերբակալվեցին նաև ՀՀ ղիվանագիտական ներկայացուցչության անդամները, կեքվեց ներկայացուցչության շենքը<sup>155</sup>: Եվ միայն մայիսի 18-ին և 19-ին նրանք ազատ արձակվեցին՝ անցնելով իրենց պարտականությունների կատարմանը: Երբ ՀՀ ղիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանը փորձել է պարզաբանում ստանալ Արտակարգ հանձնաժողովի անդամների գործողությունների վերաբերյալ, նրան հայտնել են, թե ձերբակալությունները «ներկայումս կատարվում են անսխառն և անպատասխանատու կերպով»<sup>156</sup>:

Խորհրդային Ռուսաստանի, այնուհետև ԽՍՀՄ-ի հատուկ ծառայությունն իր սկզբնավորման շրջանում կոչվում էր Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողով (ԲԿԿ): 1917 թ. դեկտեմբերի 20-ին Ռուսաստանի ժողկոմխորհի նիստում որոշում է կայացվում ԲԿԿ-ի ստեղծման մասին, որի նախագահ է նշանակվում Ֆ. Է. Չերժինսկին: ԲԿԿ-ի առջև դրվում են հետևյալ հիմնական խնդիրները.

• Հետապնդել և վերացնել Ռուսաստանում հակահեղափոխության և սաբոտաժի (սենգադու) բոլոր փորձերն ու գործողությունները.

<sup>154</sup> Чекисты Азербайджана. Документы, очерки, рассказы. Баку, 1981, с. 39:

<sup>155</sup> Ջնկուցագիր, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Հարաստանի Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչություն Աղբբեջանում, 4 Յունիսի 1920 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 571, թ. 7 և շրջերես:

<sup>156</sup> Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչություն Աղբբեջանում, 4 Յունիսի 1920 թ., ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 571, թ. 8:



• Չեղափոխական տրիբունալի դատին հանձնել սաբոտաժներին ու հակահեղափոխականներին, նրանց դեմ մշակել պայքարի միջոցներ<sup>157</sup>:

Վերոնշյալ խնդիրները լուծելու համար էլ ստեղծվեցին 3 բաժիններ՝ ինֆորմացիոն, կազմակերպչական և հակահեղափոխության ու սաբոտաժի դեմ պայքարի<sup>158</sup>, որոնց հետագայում լրացրեցին մյուս կարևորագույն ուղղությունները՝ հետախուզությունն ու հակահետախուզությունը:

Ադրբեջանի խորհրդայնացումից հետո այնտեղ սկսեցին կիրառվել բոլոր այն մեթոդներն ու գործունեության ձևերը, որոնք մինչ այդ կիրառվել էին ԵՊԿ-ի կողմից խորհրդային Ռուսաստանում:

Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի առաջին ղեկավարը եղել է Բաբա Ալի Էլդաշովի Ալինը՝ 1920 թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին, այնուհետև՝ Էյուբ Շիրինօղլի Նաևբուդագովը՝ 1920 թ. հոկտեմբեր, 1921 թ. փետրվար, Միր Ջաֆար Աբբասովի Բաղիրովը՝ 1921 թ. փետրվար, 1927թ. մայիս, որոնք բոլորը հետագայում ենթարկվել են բռնաճշմարտների և դատապարտվել<sup>159</sup>: Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի նախագահը նշանակվում էր Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեի կողմից և, սկսած 1922 թ. մարտի 12-ից, էր Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը մտան Անդրկովկասյան խորհրդային Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության (ԱՆՖՍՀ) կազմի մեջ, հաստատվում ԱՆՖՍՀ խորհրդի կողմից:

1921-23 թթ. Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովում է աշխատել հետագայում ՆՍՀՄ ՆԳ ժողկոմ, ՆԳ մինիստր Լավրենտի Բերիան: 1921 թ. սկզբում նա նշանակվում է Արտակարգ հանձնաժողովի գաղտնի-օպերատիվ բաժնի պետի տեղակալ, հետո այդ բաժնի պետ, ապա՝ Արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ<sup>160</sup>:

<sup>157</sup> Յումույան Ա., նշվ. աշխ., էջ 24:

<sup>158</sup> Сазенко А., Всё о спецслужбах России и СССР, Ростов-на-Дону, 2010, стр. 155.

<sup>159</sup> Azərbaycanın xüsusi xidmət orqanlarının tarixi və rəhbərləri, 28.03.2010, <http://modern.az/articles/3930/1/> (նդումն արված է 20.03.2015 թ.):

<sup>160</sup> К делу революции Л.П. Берия, <http://revolucia.ru/le389.html> (նդումն արված է 12.09.2016 թ.):

Ինչպես նախկին բոլոր խորհրդային հանրապետություններում, այնպես էլ Ադրբեջանում, Արտակարգ հանձնաժողովի առջև դրված թիվ մեկ խնդիրը եղել է հակահեղափոխության դեմ անողորմ պայքարը, ինչն էլ իրականացվել է տեղերում՝ գործունեության տարբեր ձևերով ու մեթոդներով:

ԽՍՀՄ-ում ներքին վիճակի որոշակի կայունացումից հետո անհրաժեշտություն առաջացավ փոփոխելու և կատարելագործելու անվտանգության մարմինների աշխատանքի ձևերն ու մեթոդները, այսինքն՝ առավել հստակեցնելու և նեղացնելու Արտակարգ հանձնաժողովի գործառույթների շրջանակը: Եվ 1926 թ. օգոստոսի 7-ին Անդրկովկասյան ՖԽՍՀ կազմի մեջ մտնող հանրապետություններում Արտակարգ հանձնաժողովը վերակազմավորվեց Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ): Այս փոփոխությունը Ռուսաստանում կատարվել էր դեռևս 1922 թ.<sup>160</sup>:

Համաձայն նոր կառուցողության, ՊՔՎ հիմնական խնդիրն էր հանդիսանում հակահեղափոխական և առավել ծանր պետական հանցագործությունների կանխումն ու քննությունը: Սկզբում ՊՔՎ կողմից քննված գործերը պարտադիր կարգով պետք է հանձնվեին դատարան, սակայն կարճ ժամանակ անց ԱՖՍՀՄ պետական քաղաքական վարչությանը տրվեցին արտադատական լիազորություններ, ընդհուպ մինչև մահապատժի կիրառում՝ հակահեղափոխականության, լրտեսության, բանդիտիզմի, մաքսանեեզության և պաշտոնական հանցագործությունների դեմ մեղադրանքներում:

Պետական քաղաքական վարչության գոյության տարիներին Ադրբեջանի ՊՔՎ ղեկավարներ են եղել՝ Միր Ջաֆար Աբբասովի Բադիրովը՝ 1926 թ. օգոստոսից մինչև 1927 թ. մայիս և 1929 թ. ղեկտնմբերից մինչև 1930 թ. օգոստոս, այնուհետև՝ Նովրուզ Քերիմ օղլի Ռիզանը՝ 1927 թ. մայիս, 1929 թ. հոկտեմբեր, Միխայիլ Պետրովիչ Ֆրանովսկին՝ 1930 թ. օգոստոս, 1933 թ. սպրիլ և Ալեքսեյ Մերգելսիչ Ազրբան՝ 1933-1934 թթ.<sup>162</sup>:

<sup>160</sup> Сисенко А., *loc. cit.*, աշխ., էջ 274:

<sup>162</sup> Azərbaycan xüsusi xidmət orqanlarının rəhbərləri, [http://www.mia.az/w153821/Azərbaycanın\\_xüsusi\\_xidmət\\_orqanlarının\\_tarixi\\_və\\_rəhbərləri/](http://www.mia.az/w153821/Azərbaycanın_xüsusi_xidmət_orqanlarının_tarixi_və_rəhbərləri/) (հղումն արված է 20.03.2015 թ.):

ԽՍՀՄ կենտկոմի 1934 թ. հուլիսի 10-ի որոշմամբ Պետական քաղաքական վարչության հենքի վրա ստեղծվեց նոր մարմին՝ Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը<sup>163</sup>, որն իր գործունեությունը ծավալեց մինչև 1941 թ.՝ վերակազմավորվելով որպես Պետական անվտանգության ժողովրդական կոմիսարիատի՝ գոյատևելով մինչև 1946 թ., որից հետո, վերջինիս հիման վրա, ձևավորվեց Պետական անվտանգության նախարարությունը, որը 1953 թ. միացվեց Ներքին գործերի նախարարությանը՝ գոյատևելով որպես դրա վարչություն մինչև 1954 թ.: Ադրբեջանական ԽՍՀ-ում վերոնշյալ կառույցները գլխավորել են հետևյալ անձինք. Յուվեյիան Նավիդովիչ Սումբատով-Տուպրիձեն՝ 1934 թ. մարտ, 1938 թ. ապրիլ, Միխայիլ Գրիգորևիչ Ռան-Կամինսկին՝ 1938 թ. ապրիլ-նոյեմբեր, Ստեփան Յոդորովիչ Եմելյանովը՝ 1939 թ. փետրվար, 1953 թ. օգոստոս և Անատոլի Միխայիլովիչ Գուսևովը՝ 1953 թ. օգոստոս, 1956 թ. ապրիլ<sup>164</sup>:

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության 1954 թ. մարտի 13-ի հրամանով պետական անվտանգության մարմիններն առանձնացվեցին Ներքին գործերի նախարարությունից և ԽՍՀՄ նախարարների խորհրդին կից ստեղծվեց Պետական անվտանգության կոմիտեն (ՊԱԿ-ԿԵԾ): Լույս օրվա հրամանով ՊԱԿ-ի ղեկավար նշանակվեց Ներքին գործերի նախարարի արդեն նախկին տեղակալ, գեներալ-գեղապետ Ա. Բ. Մերովը<sup>165</sup>: Վերջինիս 1954 թ. մարտի 18-ի հրամանով հաստատվեց ՊԱԿ-ի կառուցվածքը, համաձայն որի՝ այն ունեցավ հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները. 1-ին գլխավոր վարչություն (հետախուզություն արտերկրում), 2-րդ գլխավոր վարչություն (հակահետախուզություն), 3-րդ գլխավոր վարչություն (ոազմական հակահետախուզություն), 4-րդ վարչություն (պայքար հակախորհրդային ընդհատակի, ազգայնական կազմավորումների և թշնական տարրերի դեմ), 5-րդ վարչություն (հակահետախուզական աշխատանք պետական հատուկ կարևորության օբյեկտ-

<sup>163</sup> Лубянка. ВЧК-КГБ. Документы, Справочник. Москва, 1997, с. 12.

<sup>164</sup> Ազեբայսանի քննա չիճմաթ օրգանլարնոն տարիսի və տեճեւերի, 28.03.2010, <http://modern.az/articles/3930/1/> (նախնի արված է 20.03.2015 թ.):

<sup>165</sup> Лубянка. ВЧК-КГБ ..., с. 81.

ների գծով), 6-րդ վարչություն (տրանսպորտային հակահետախուզություն), 7-րդ վարչություն (արտաքին դիտարկում), 8-րդ գլխավոր վարչություն (գաղտնագրում), 9-րդ վարչություն (կուսակցության և կառավարության ղեկավարների պահպանություն), 10-րդ վարչություն (Կրեմլի պարետի վարչություն), քննչական վարչություն, սահմանապահ զորքերի գլխավոր վարչություն, ֆինանսական վարչություն<sup>166</sup> և այլն:

Բացառությամբ որոշ վարչությունների (3-րդ, 10-րդ), մնացած վարչությունների գծով տեղերում՝ հանրապետություններում (այդ թվում՝ Ադրբեջանում) կային հանրապետական նախարարների խորհրդին կից պետական անվտանգության համապատասխան կառույցներ:

Կառուցվածքային վերոնշյալ ձևը հանրապետություններում պահպանվեց մինչև ԽՍՀՄ փլուզումը, իսկ որոշ հանրապետություններում՝ նաև փլուզումից հետո:

Ադրբեջանական ՊԱԿ-ի նախագահներ են եղել՝ Անատոլի Միխայիլովիչ Գուսկովը՝ 1953-56 թթ., Յևդոյ Իվանովիչ Կուպիլովը՝ 1956-59 թթ., Ալեքսանդր Վասիլևիչ Կրադյաշովը՝ 1959-63 թթ., Սեմյոն Կուզմիչ Յվիզուևը՝ 1963-67 թթ., Չեդդար Ալիբաբաևը՝ 1967-69 թթ., Վիտալի Սերգենիչ Կրասիլնիկովը՝ 1969-80 թթ., Ջիյա Մամեդիյա օլլի Յուսիֆ-գադեև՝ 1980-1988 թթ., Իվան Իվանովիչ Գորելովսկին՝ 1988-89 թթ., Վազիֆ Ալիովսաթ օլլի Հուսեյնովը՝ 1989-91 թթ.<sup>167</sup>:

Ադրբեջանական ԽՍՀ-ում վերոնշյալ տարիներին գործել և նույնատիպ խնդիրներ են լուծել նույնանուն հատուկ ծառայությունները՝ ենթարկվելով գլխադասային մարմնին, որը կենտրոնացված էր Մոսկվայում:

<sup>166</sup> Сивенко А., бշվ. աշխ., էջ 275:

<sup>167</sup> Azərbaycanın xüsusi xidmət orqanlarının tarixi və rəhbərləri, 28.03.2010, <http://modern.az/articles/3930/1/> (հղումն արված է 20.03.2015 թ.): Հարկ է նշել, որ Ս. Յվիզուևը հետագայում նշանակվեց ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահի առաջին տեղակալի, իսկ Վ. Կրասիլնիկովը՝ Կենտկոմի ռազմական (գաղտնի) բաժնի վարչի պաշտոնում, որը վերահսկողության էր իրականացնում ուժային կառույցների նկատմամբ:

## 2.2. Խորհրդային Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործունեության (այդ թվում՝ հակահայ) որոշ դրվագներ

Մտեղծման հենց առաջին օրերից Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովն սկսեց անողոք պայքար մղել հակահեղափոխության, այլ կերպ ասած, հեղափոխության արտաքին ու ներքին թշնամիների դեմ, և առաջինը տեսադաշտում հայտնվեցին Մուսավաթական ու Հայ հեղափոխական դաշնակցության կուսակցությունների անդամները: Հակահեղափոխությանը հարելու մեղադրանքի տակ ընկան նաև թուրքական բանակի երամա-նատարներ Լուրի և Ջեմալ փաշաների զինակիցները, որոնք հայտարարվեցին անգլիական հետախուզության գործակալներ՝ մեղադրվելով լրտեսության, դավաճանության ու դիվերսիոն գործողություններ նախապատրաստելու մեջ:

«Չեկայի զինուած գործակալները ամեն զիշեր թրջական թաղերում խուզարկութիւններ ու ձերբակալութիւններ են կատարում գրահատրած ավտոմօրիլի պաշտպանութիամբ»<sup>166</sup>, - նշված է ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի հերթական զեկուցագրում:

Բարձրի ՀՀ դիվանագիտական ներկայացուցչությունը ևս անմասն չմնաց «Չեկայի» մեղադրանքներից, բացի այն, որ ձերբակալվել են ՀՀ դիվանագիտական ներկայացուցչության անդամները, առգրավվել է նաև դիվանագիտական արխիվը և այլ ապրանքներ, արգելվել ռադիո և հեռագրական հաղորդակցությունը ՀՀ-ի հետ, արգելվել օգտվել շիֆրահաղորդագրություններից<sup>167</sup>: Ձերբակալվել են նաև մուսավաթական պառլամենտի հայազգի նախկին անդամները, որոնց տեսակցելու վերաբերյալ ՀՀ դիվանագիտական ներկայացուցչի խնդրանքը մերժվել է Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի կողմից<sup>168</sup>:

<sup>166</sup> Ձեկուցագիր, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչին Ադրբեջանում, 3 նոյեմբերի 1920 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, թ. 63 և շրջերես:

<sup>167</sup> Ձեկուցագիր, Արտաքին գործերի Պ.Նախարարին, Շախանուր քարտուղար Ա. Տեր-Յակովյանից, ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, թ. 36:

<sup>168</sup> Ձեկուցագիր, Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարին, Հայաստանի Հանրապետության Դիվանագիտական ներկայացուցչին Ադրբեջանում, 1 նոյեմբերի 1920 թ., ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 4, թ. 68:

Գոյութեան միայն ուժ ամիսների ընթացքում (1920 թ. ապրիլ, 1921 թ. հունվար) Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի կողմից բացահայտվել և կանխվել են տասնյակ խռովություններ և դավադրություններ՝ կազմակերպված անգլիական, պարսկական ու թուրքական հետախուզությունների կողմից ուղղորդվող «Մուսավաթ» և «Իթթիհաթ-խալան» կուսակցությունների միջոցով: Վերջիններին հայտնաբերումը, դրանց գործունեության խափանումն ու լիկվիդացումը հետագայում համարվեց Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի խոշորագույն ձեռքբերումներից մեկը<sup>171</sup>:

Հակահեղափոխության, սաբոտաժի, բանդիտիզմի և լրտեսության ու օտարերկրյա հետախուզությունների գործունեության դեմ պայքարն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով 1921 թ. մայիսի 29-ին Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի կազմում ստեղծվեցին արտակարգ եղակներ («տրոյկաներ»՝ բաղկացած երեք հոգուց), որոնք անց էին կացնում «Արտակարգ հանձնաժողովի հատուկ խորհրդակցություններ» և իրավունք ունեին երկրից մինչև երեք տարի ժամկետով վտարելու այն մարդկանց, որոնց վտանգավոր էին համարում պետության անվտանգության համար:

Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի կողմից բացահայտված և կանխված թերևս ամենահինչեղ գործը եղել է 1922 թ., երբ մուսավաթականներն ու իթթիհաթականները, համագործակցելով էսեռների, մենշևիկների և այլ հակահեղափոխական տարրերի հետ, ծրագրել էին տապալել խորհրդային իշխանությունը: Վերջիններս, թուրքական բանակի նախկին սպա Խալիլ Շաքիրզադեի գլխավորությամբ, ամենայն մանրամասնությամբ մշակել էին ապստամբության պլանը: Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովի կողմից բացահայտման և համալիր միջոցառումների շնորհիվ կանխվեց այդ ապստամբության փորձը, ձերբակալվեցին 229 ապստամբներ, այդ թվում՝ գլխավոր կազմակերպիչը՝ Շաքիրզադեն:

Հետագա տարիներին ևս Ադրբեջանի արտակարգ հանձնաժողովն ակտիվ պայքար է մղել հակահեղափոխության և այլ հանցագործությունների դեմ, մինչև որ փոխվել է սպառնա-

<sup>171</sup> Чекисты Азербайджана ..., стр. 25.

լիքների բնույթը, ինչի հետ պայմանավորված՝ փոփոխվել են Արտակարգ հանձնաժողովի առջև դրված խնդիրներն ու նպատակները, կառուցվածքն ու գործունեության ուղղությունները<sup>172</sup>:

1926 թ. օգոստոսի 7-ին Անդրկովկասյան ՖևՍՆ-ի հանրապետություններում արտակարգ հանձնաժողովը վերակազմավորվեց Պետական քաղաքական վարչության (ՊՔՎ), որը գոյատևեց մինչև 1934 թ.: Այդ ընթացքում Ադրբեջանի ՊՔՎ աշխատակիցներն աշխատանք են տարել հիմնականում հակահեղափոխության, դիվերսիոն գործողությունների, նավթարդյունաբերությանը խոչընդոտող արտաքին ու ներքին գործոնների ու սպառնալիքների դեմ պայքարի ուղղությամբ: 1927-1932 թթ. Ադրբեջանի ՊՔՎ կողմից բացահայտվել են անգլիական հետախուզության 5 գործակալներ, որոնք առաջադրանք են ունեցել Բաքվում իրականացնել դիվերսիոն գործողություններ, ինչպես նաև կանխվել են արևմտյան նավթային ընկերությունների կողմից կազմակերպված մի շարք ֆինանսական մեքենայություններ: Բացահայտվել են նաև հակահեղափոխական մի շարք կազմակերպություններ՝ «Ադրբեջանի ազգային կենտրոնը», «Ռուսաստանի փրկության Բաքվի կազմակերպված միությունը» և այլն, որոնց գործունեությունը դադարեցվել են:

Հայտնի է, որ 1920-ական թվականներից մինչև 1953 թվականը (հատկապես 1937-38 թթ.)՝ ստալինյան բռնակալության տարիներին, խորհրդային պետական անվտանգության մարմինները, այդ թվում՝ ադրբեջանական համապատասխան ծառայությունները, իրականացնում էին անհիմն ձեռքարկություններ, արքարում, մահապատժի ենթարկում անգամ աննշան կամ անհիմն մեղադրանքներով: Ըստ Ադրբեջանի նախկին ազգային անվտանգության նախարարության պաշտոնական կայքէջի՝ 1920-1950-ական թվականներին Ադրբեջանում նման կերպով դատապարտվել կամ ռեպրեսիայի է ենթարկվել ավելի քան

<sup>172</sup> Ըստ Ադրբեջանի Հանրապետության նախկին ԱԱՆ կայքի՝ Ադրբեջանի Արտակարգ հանձնաժողովի կողմից ռեպրեսիայի է ենթարկվել ավելի քան 40.000 քաղաքացի, տե՛ս նաև Abbas Kona, եջվ. աշխ.:

400.000, վտարվել մոտ կես միլիոն մարդ<sup>179</sup> (այդ թվում՝ Արտակարգ հանձնաժողովի և ՊԲՎ գրեթե բոլոր ղեկավարները): Մակայն այստեղ ևս աղբրեջանցիները փորձել են օգտվել առիթից և անհիմն բռնաճնշումների եթարկել նաև մեծ թվով ազգությամբ հայերի: Միայն 1937 թ. Աղբրեջանում գնդակահարվել է 30 հազար հայորդի<sup>176</sup>:

Այնուհանդերձ ԽՍՀՄ պետական անվտանգության մարմինները բավական լուրջ գործունեություն են ծավալել նաև հատուկ ծառայություններին բնորոշ հիմնական գործառույթով՝ հետախուզությամբ և հակահետախուզությամբ: Հայրենական մեծ պատերազմի տարիներին Աղբրեջանի պետական անվտանգության ժողովրդական կոմիսարիատի կողմից բացահայտվել են գերմանական հետախուզության ավելի քան 200 գործակալ, լիկվիդացվել ֆաշիզմին հարող մի շարք կազմակերպություններ ու խմբեր, որոնք պատրաստվում էին օժանդակություն ցուցաբերել գերմանական զորքերին: Հատկապես Ստալինգրադի ճակատամարտից առաջ բավականին աշխուժացել ու Աղբրեջանում լայն հետախուզական գործունեություն էին ծավալում Թուրքիայի ու Գերմանիայի հատուկ ծառայությունները՝ համագործակցած մուսավաթական կուսակցության վտարանդի առաջնորդների հետ: Դա պայմանավորված էր Ստալինգրադի ճակատամարտում գերմանացիների հաղթանակից հետո Թուրքիայի կողմից պատերազմի մեջ մտնելու և պանթուրքիստական ծրագրերն իրականացնելու սին երազանքներով:

Թուրքիայում անգամ տեղի ունեցավ Գերմանիայի դեսպան Ֆոն Պապելի հանդիպումը աղբրեջանական մուսավաթականների առաջնորդ Մեհթիկի հետ, որի թեման Աղբրեջանում նրանց գործունեության ակտիվացումն էր: Դեսպանի նպատակն էր Կովկասում հաստատել լայն կապեր և հրահրել ապստամբություն: Նա Գերմանիայի արտաքին գործերի նախարարության

<sup>179</sup> Azərbaycan xüsusi xidmət orqanlarının tarixi, <http://www.dtx.gov.az/tarix1.php> (նրումն արված է 07.08.2017 թ.):

<sup>176</sup> Պատմական ճշմարտության և ստամաբամության հետքերով (Մուսկալիբով կատարված ուղեըզուության և Լեոնային Դարպառլի հարցի առթիվ նախ ժողովրդի սրտի ձայնը), Եր., 1998, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 1, գ. 9, թ. 11:



մամուլի վարչության պետ Շմիդտի հետ 1941 թ. նոյեմբերին Անկարայում հանդիպման ժամանակ ներկայացրեց իր ծրագիրը՝ հայտնելով հետևյալը. «Եթե մինչև Կովկասի վրա գերմանական զորքերի հարձակումը ես այնտեղ ապաստամբություն կամ թեկուզ խռովություն չկազմակերպեմ, ուրեմն այնտեղից եկող բոլոր լրտեսները ստում են<sup>175</sup>»:

Խոյիերդային հետախուզությանը հայտնի էր դարձել, որ գերմանացիների հրահանգով սկսել էին լրջորեն ակտիվանալ ադրբեջանցի վտարանդի քաղաքական գործիչները, որոնք Թուրքիայում 1942 թ. սեպտեմբերին, գերմանական իշխանությունների ցուցումով, կազմակերպել էին հավաք: Նմանատիպ հավաքներ տեղի էին ունենում նաև Բեռլինում՝ Լուրի փաշայի գլխավորությամբ, որոնց մասնակցում էին վրացիներից, ադրբեջանցիներից կազմված պատվիրակություններ: Այս հավաքները հարուցել էին հասկապես Հայկական ազգային խորհրդի անդամների անհանգստությունը, քանի որ նրանք կասկածներ ունեին, որ դրանց ժամանակ այդ պատվիրակությունները գերմանական իշխանություններին տրամադրում էին հայերի դեմ<sup>176</sup>: Թուրքիայում 1942 թ. ստեղծվեց կոմիտե, որի խելիքը Ադրբեջանը ԽՍՀՄ-ից անջատելն ու Թուրքիային միացնելն էր<sup>177</sup>:

Կովկասի ուղղությամբ գերմանական զորքերի հարձակման ժամանակ Թուրքիան, իբր Կովկասի թուրք բնակչության պաշտպանության և անվտանգության ապահովման նպատակով պետք է զորք մտցնեք Ադրբեջան: Եվ Ստալինգրադի ճակատամարտից առաջ Թուրքիան Հայաստանի և Վրաստանի սահմանի նրկայնքով հարձակման պատրաստ կանգնեցրեց 26 դիվիզիա:

Ստալինգրադի հաղթանակից հետո Թուրքիայի՝ վերջնականապես պանթուրքիստական ծրագիրը իրագործելու պլանը ուժը կորցրեց և որոշվեց մշակված սցենարը գործի դնել Կուրսկի ճակատամարտից հետո: Բարեբախտաբար, Կուրսկը ես այդ հնարավորությունը չսովեց նրանց:

<sup>175</sup> Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-71 թթ.), Եր., 2011, էջ 247:

<sup>176</sup> Նույն տեղում, էջ 249:

<sup>177</sup> Демоян Г., Внешняя политика Турции и карабахской проблемы, Ер., 2013, с. 112.

Պատմական բոլոր շրջափուլերում, սկսած 1918 թ., Թուրքիան իր արտաքին-քաղաքական ծրագրերը մշտապես շահկապել է նաև Ադրբեջանի հետ: Թուրքիան ստեղծեց Ադրբեջանը պատմական հարմար առիթի դեպքում այն ի նպաստ պանթուրքիզմի օգտագործելու նպատակով:

Ադրբեջանական հատուկ ծառայությունները պատերազմի և նաև հետագա տարիներին գործունեություն են ծավալել նաև դրսում՝ հետախուզության գծով, մասնավորապես Իրանում և Թուրքիայում հատկապես Հայրենական մեծ պատերազմի վերջին տարիներին, երբ բուլշևիկները փորձեր կատարեցին տիրելու Իրանի Ատրպատական նահանգին և այդ նպատակով հետախուզական-գործակալական լուրջ գործունեություն ծավալեցին Իրանում: 1944 թ., երբ Իրանի հյուսիսային շրջանները վերահսկում էր խորհրդային բանակը, Մոսկվայում ծնվեց Իրանից Ատրպատական նահանգի անջատման և խորհրդային Ադրբեջանին միացնելու գաղափարը: 1945 թ. հուլիսի 6-ին Համախոսքենական կոմունիստական կուսակցության քաղցույտի ընդունեց գաղտնի փաստաթուղթ՝ «Հյուսիսային Իրանի Հարավային Ադրբեջանում և այլ շրջաններում անջատողական շարժումների կազմակերպման միջոցառումներ մասին»<sup>178</sup>, որից հետո Նախիջևանի ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը լծվեց աշխատանքի՝ օպերաշխատակից Հ. Ալիևի մասնակցությամբ, քանի որ խորհրդային հետախուզության իրանական գիծը կորոդինացվում էր Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում<sup>179</sup> (հատկանշական է, որ հետագայում Հ. Ալիևին վերապահվեց խորհրդային հետախուզության թուրքական ուղղությունը<sup>180</sup>): Օրագիրն իրագործելու համար Թավրիզ ուղարկվեցին տարբեր բնագավառների թվով 620 մասնագետներ, կուսակցականներ, անվտանգության մագրիսների գործակալներ, հետախույզներ: Անգամ 1945 թ. ձմռանը Իրանի Ատրպատականի նահանգը հռչակվեց «ինքնավար», և տեղի ատրպատականցի մի լրագրող Փիշավարի անունով, հռչակվեց այդ տարածքի վարչա-

<sup>178</sup> Казинков А., с.24. а.24., էջ 381:

<sup>179</sup> Heydar Əliyev və millî təhlükəsizlik orqanları, Bakı, 2009, էջ 25-26:

<sup>180</sup> Демоян Г., с.24. а.24., էջ 216:

պետ «բաշ վեզիր»: 2-րդ աշխարհամարտի ավարտից հետո 1946 թ., Իրանից խորհրդային բանակի դուրս գալուց հետո Փիշավարիի խամաճիկային ռեժիմը տասպալվեց, և Իրանը վերականգնեց իր տարածքային ամբողջականությունն ու լիակատար վերահսկողությունը կանանգում: Այնուհանդերձ, սառը պատերազմի ընթացքում Բարձում կեղծ և անհիմն եղանակով Իրանի հյուսիս-արևմտյան շրջանների համար մի կոր եզր դրվեց շրջանառության մեջ Հարավային Ադրբեջան<sup>161</sup> (Իրանի Ատրպատականի բնակիչները, որոնք տարբեր հաշվարկներով հաշվվում են 12-20 մլն<sup>162</sup>, իրենց իրենց համարում են ազարի՝ ոչ թե ադրբեջանցի: Չնայած հիմնականում թյուրքալեզու լինելուն՝ ազարիներն իրենց և ադրբեջանցիներին չեն նույնացնում և վերջիններին համարում են թյուրք<sup>163</sup>):

Ադրբեջանական ՊԱԿ-ը, ԽՍՀՄ մյուս հանրապետությունների նման, ենթարկված է եղել ԽՍՀՄ ներքին ու արտարին սպառնալիքների դեմ պայքարի գործընթացում:

<sup>161</sup> Տե՛ս Լեոնովի Մերձավոր Արևելքի ինտոլիտուտի պրոֆեսոր Ալի Գրանմայեի հարցազրույցը, «Հարավային Ադրբեջանի թեցուկը», <http://www.armtimes.com/hy/read/31387> (նղումն արված է 20.04.2015 թ.):

<sup>162</sup> Bijan DaBell, Iran Minorities 2: Ethnic Diversity, ԱՄՆ Խաղաղության ինստիտուտ, 03.09.2013, <http://iranprimer.usip.org/blog/2013/sep/03/iran-minorities-2-ethnic-diversity> (նղումն արված է 20.04.2015 թ.): Սակայն հարկ է նշել, որ հատկապես արևմտյան ենդիեակների աշխատություններում դրանց թիվը ուռճացված է: Որոշ մասնագետներ հաշվում են 7-9 մլն-ի ամենահներում, տե՛ս Ասգրան Դ., Этническая композиция Ирана: От "Арийского простора" до Азербайджанского мифа, Кавказской центр иранистики, Ереван, 2012, [http://bs-kavkaz.org/wp-content/uploads/2012/10/iran\\_final.pdf](http://bs-kavkaz.org/wp-content/uploads/2012/10/iran_final.pdf). Ադրբեջանի կախկին կախագահներ Ա. Էլչիրկյը և Հ. Ալիևը ևս անընդարձակ են թեմային. մասնավորապես՝ Հ. Ալիևը մի առիթով հարտնել է թե՛ Իրանում բնակվում են 30 մլն էթնիկ ադրբեջանցիներ, տե՛ս Выступление Президента Азербайджанской Республики Гейдара Алиева в здании посольства Азербайджана в Ташкенте на встрече с соотечественниками, проживающими в Узбекистане - 19 июня 1997 года, Газета "Бакинский рабочий", 26 июня 1997 года, <http://sb.aliyevheritage.org/ru/9173889.html>, իսկ Էլչիրկյը հարտնել է թե՛ 40 մլն ադրբեջանցի թուրքեր և 70 մլն անատոլիայի թուրքեր պետք է միանան ու տեղեկեն տարածաշրջանային հզոր պետություն՝ 110 մլն բնակչությամբ, որի նեւ հաշվի կնստի ամբողջ աշխարհը, տե՛ս Мелюк-Шахназарян Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана, Ер., 2007, с. 8.

<sup>163</sup> Բոլաջան Վ., «Հարավային Ադրբեջանի թեցուկը» (նույն հարցազրույցը):

Ունենալով 1138 կմ սահման Իրանի Իսլամական Հանրապետության (ԻԻՀ) և 12 կմ թուրքիայի Հանրապետության հետ՝ Ադրբեջանի ՊԱԿ-ը ներգրավվել է հենց այդ երկրների, ինչպես նաև այդ երկրների տարածքներից ՆԱՀՄ ուղղությամբ հետախուզական և այլ քայքայիչ գործունեություն ծավալող որոշ երկրների (ԱՄՆ, ԳՂՀ, Ֆրանսիա, Անգլիա, Իսրայել և այլն) հատուկ ծառայությունների գործունեության դեմ կազմակերպվող պայքարի աշխատանքներում: Հայտնի է, որ Իրանի և թուրքիայի տարածքները արևմտյան երկրների հատուկ ծառայությունների կողմից մեծապես օգտագործվել են ՆԱՀՄ-ի դեմ հետախուզական գործունեություն ծավալելու նպատակով, ուստի Ադրբեջանի ՊԱԿ-ը վերոնշյալ երկրների հատուկ ծառայությունների դեմ պայքար է մղել հիմնականում 1-ին և 2-րդ գլխավոր վարչությունների գծով (հետախուզություն, հակահետախուզություն): Աշխատանք է տարվել հատկապես օտարերկրյա պետություններ մեկնող ադրբեջանցիների շրջանում, որոնց դրսում՝ հիմնականում Անգլիայում, Կանադայում, թուրքիայում, Ավստրիայում, Հարավսլավիայում տեղի հատուկ ծառայությունները փորձել են հավաքագրել, որպեսզի վերջիններս ծավալեն հակախորհրդային գործունեություն՝ չվերադառնան Խորհրդային Ադրբեջան, հանդես գան հակախորհրդային կոչերով կամ էլ գումարի դիմաց համագործակցեն նրանց հետ: Մեծ աշխատանք է իրականացվել նաև արտասահմանյան երկրներից Ադրբեջան ժամանող զբոսաշրջիկների, ուսանողների (օտարերկրացի ուսանողները հիմնականում սովորում էին Բաքվի Նավթի և քիմիայի ինստիտուտում), տարբեր մասնագետների շրջանում, որոնց մեջ եղել են օտարերկրյա հատուկ ծառայությունների աշխատակիցներ կամ վերջիններիս հետ համագործակցող անձինք: ԱՆՄՀ ՊԱԿ-ը մեծ աշխատանք է կատարել նաև հակախորհրդային ընդհատակյա կազմակերպությունների դեմ<sup>100</sup>:

Ուսումնասիրելով Ադրբեջանի ՊԱԿ-ի գործունեության վերաբերյալ առկա տեղեկությունները՝ կարող ենք փաստել, որ 1956-1988 թթ. այն հիմնականում աշխատանք է տարել

<sup>100</sup> Чекисты Азербайджана ..., с. 257.

խորհրդային Միության արտաքին ու ներքին սպառնալիքների դեմ պայքարի համատեքստում և իրականացնել գործադրություններ՝ հրահանգներն ստանալով Մոսկվայից՝ ՊԱԿ-ի կենտրոնական մարմնից: Ադրբեջանի ՊԱԿ-ը պատասխանատու էր խորհրդային անվտանգության կոմիտեի շրջանակներում Թուրքիայի դեմ աշխատանքի համար<sup>185</sup> և այդ նպատակով օգտագործում էր քրդական գործունը<sup>186</sup>: Հիմնական խնդիր է հանդիսացել օտարերկրյա հատուկ ծառայությունների գործակալների բացահայտումը, նրանց կողմից հնարավոր քայքայիչ գործունեության ի հայտ բերումը, կանխումը, խափանումը, ինչպես նաև պետության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների, հակախորհրդային ու ազգայնական տարրերի հայտնաբերումը, դրանց գործունեության կասեցումը:

Միաժամանակ պետք է փաստենք, որ Ադրբեջանի իշխանությունները խորհրդային ժամանակաշրջանում փոխեցին իրենց հակահայ քաղաքականության իրականացման մեթոդներն ու ձևերը, և կոտորածներին, հալածանքներին ու բռնի տեղահանություններին փոխարինեցին ազգային խտրականության, կրթամշակութային ու սոցիալ-տնտեսական ճնշումների մեթոդները: Բավական է միայն նշել, որ 1970-ական թվականներին 200.000 հայ բնակչություն ունեցող Բաքվում արդեն փակվել էին մինչպատերազմյան շրջանում գործող 76 հայկական դպրոցներ, Հայկական մանկավարժական ինստիտուտը, հայկական թատրոնը: Հայերի և մյուս ազգային փոքրամասնությունների նկատմամբ գործադրվող խտրական քաղաքականությունն այնքան բացահայտ ու բիրտ էր, որ դրան բազմիցս անդրադարձել են անգամ ԽՍՀՄ կառավարող շրջանակները<sup>187</sup>:

Հայտնյաց քաղաքականությամբ աչքի ընկավ Ադրբեջանի Կոմկոսի կենտկոմի առաջին քարտուղար Մ. Ջ. Բադիրովը: Մինչ 1917 թ. մարտ ամիսը նա եղել է մուսավաթ, իսկ 1917 թ.

<sup>185</sup> Демоян Г., նշվ. աշխ., էջ 216:

<sup>186</sup> Մեջբերում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ակադեմիկոս Ռ. Սաֆարադյանի «Քրտվուլեթ» թերթին տված հարցազրույցից, 15.01.2016 թ.:

<sup>187</sup> Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանույան Կ., Ալվրցյան Հ., Շնորհիմ Ադրբեջանի հայտնյաց քաղաքականության, 28 Դաշնակցության իրատարակություն, Եր., 2007, էջ 11:

մարտին անդամագրվում է բոլշևիկյան կուսակցությանը, ընկերական հարաբերություններ հաստատում Լ. Բերիայի հետ: Պաշտոնավարման քսան տարիների ընթացքում (1933-1953) եւ իրականացնում էր միահեծան իշխանություն և վայելելով Կրեմլի աջակցությունը՝ ջանքեր չէր խնայում Ադրբեջանի ժողովրդագրական պատկերը փոխելու ուղղությամբ: Իսլամադավան ազգերի ներկայացուցիչներին ստիպում էին իրենց անվանել ադրբեջանցիներ, փակում էին ազգային փոքրամասնությունների կրթա-մշակութային հաստատությունները: 1937-38 թթ. Բաղիրովը ռեպրեսիայի ենթարկեց ԼՄՄ-ի ամբողջ ղեկավար կազմը: Նրան անվանում էին «տեղային Ստալին»<sup>108</sup>:

1960-ական թվականներին Ադրբեջանում թևածում էր պանթյուրքականությունը: Խրուշչովյան որոշակի ազատություններից օգտվելով՝ Ադրբեջանում սկսեցին գործել պանթյուրքիստական որոշ համայնքներ: 1963 թվականից Բաքվում սկսեց գործել «Ստրատեգիական հետազոտությունների կենտրոնը», որն զբաղվում էր տեղեկատվա-վերլուծական և քարոզչական գործունեությամբ որպես կողմնորոշիչ ունենալով թուրքերի և ադրբեջանցիների՝ մեկ ազգ լինելու գաղափարը: Կենտրոնը մարդկանց էր ներդնում Ադրբեջանի իրավապահ մարմիններում, անգամ ՊԱԿ-ում: 1967 թ. Ադրբեջանում սկսեց գործել մեկ այլ պանթյուրքական կազմակերպություն՝ «Թուրանյան ազգային ժողովրդական ճակատ» կուսակցությունը, որի նպատակը «Հյուսիսային» և «Հարավային» Ադրբեջանների միավորումն էր: Այդ տարիներին Ադրբեջանի գիտա-ստեղծագործական մտավորականությունը ներկայացնում էր պանթյուրքիստական ակումբները<sup>109</sup>: Հայերի և ադրբեջանցիների միջև սրվեցին հարաբերությունները, բացեիքաց սկսեցին ճնշումներ բանեցնել հայ ազգաբնակչության նկատմամբ: Հնդկականադարձական քարոզչության մեծածավալ աշխատանք էր իրականացնում ԱՆՀ-ի հատուկ ծառայության նախկին ղեկավարներից մեկը՝ Նազը Մալեհ օղլի Շեյխզամաևը: Նա, հանդես գալով «Կելկուրու» ծածկանվամբ, Թուրքիայի Ստամբուլ քաղաքում հրատարակեց աշխատութ-

<sup>108</sup> Բաղդասարյան Յու., նշվ. աշխ., էջ 123-127:

<sup>109</sup> Казимян А., նշվ. աշխ., էջ 473:

յունենրի շարք՝ «Աղբբեջանի թուրքական պետության փառավոր անցյալի» թեմատիկայով կարևորելով պանթուրքիզմի գաղափարախոսության հիմքով Աղբբեջանը Թուրքիայի հետ միանալու պայքարի նոր փուլի մեկնարկը: 1957 թ. հրատարակվեց «Գաջի Ձեյնալարդիև Թադիևի մեկենասը», 1963 թ. «Ձղջում», 1964 թ. «Հիշողություն Աղբբեջանի անկախության համար պայքարի մասին» աշխատությունները: Հատկանշական է, որ վերջին երկու աշխատությունները վերահրատարակվել են 2004 թ. Աղբբեջանի ազգային անվտանգության նախարարություն կողմից<sup>190</sup>:

1965 թ., երբ առաջադեմ մարդկությունը ոգեկոչում էր Հայոց ցեղասպանության զոհերի 50-ամյա հիշատակը, ԼՂՄ-ից 45.000 ստորագրությամբ նամակ ուղարկվեց ԽՄԿԿ կենտկոմ ԼՂՄ-ը Աղբբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմ փոխադրելու խնդրով: Հարցը քննարկվել է անգամ Աղբբեջանի ՊԱԿ-ում և Հ. Ալիևի խորհրդով Աղբբեջանի կենտկոմի քարտուղար Վելի Ադունդովը մեկնել է Մոսկվա, հանդիպել Լ. Բրեժնևի հետ ու համոզել, որ հարցը փակի առանց բավարարելու<sup>191</sup>:

Հայերի նկատմամբ խորական քաղաքականությունն Աղբբեջանում առավել լայն թափ առավ 1970-ական թվականներից՝ հատկապես Հնդդար Ալիևի կողմից բարձր պաշտոններ ստանալուց հետո: 1967 թ. վերջինս դարձավ Աղբբեջանի ՊԱԿ-ի նախագահ (ստացավ նաև գեներալ-մայորի կոչում) և հետագա 20 տարիների ընթացքում փաստացի իր ձեռքում պահեց երկրի կառավարման ղեկը<sup>192</sup>: 1967 թ. Աղբբեջանի ՊԱԿ-ի հերթական հաշվետվության ժամանակ Ալիևը նշել է, թե մանրամասն վերլուծել է ԼՂՄ-ում տիրող իրադրությունը և եկել այն համոզման, որ մարզում քաղաքական վնասարարությունը և հակահասարակական շարժումներն իրականացվում են Հայկական ԽՍՀ ազգայնական տարրերի միջնորդավորված մասնակցությամբ<sup>193</sup>: Սրանով փաս-

<sup>190</sup> Լույս տեղում, էջ 470:

<sup>191</sup> Լույս տեղում, էջ 481-482:

<sup>192</sup> Չորական Գ., Բուլամի քաղաքական դերը հետխորհրդային Աղբբեջանում, Լորավանք, 21-րդ դար, Եր., 2013, էջ 61:

<sup>193</sup> Heydər Əliyev və milli təhnikəçilik orqanları, Bakı, 2009, էջ 48:

տորեն Ալինը հող էր ևսխապատրաստում պետական մակար-  
դակով ԼՂՄ-ում հակահայկական գործունեությանն օրինական  
շղարշ տալու համար:

1969 թ. Հնչդար Ալինը նշանակվեց Ադրբեջանի Կոմկուսի  
կենտկոմի առաջին քարտուղար և այդ պաշտոնն զբաղեցրեց  
մինչև 1982 թ. դեկտեմբեր, երբ դարձավ ՆՄԿԿ Կենտկոմի Քաղ-  
բյուրոյի անդամ ու նշանակվեց ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի  
նախագահի առաջին տեղակալ՝ զբաղեցնելով բավական բարձր  
դիրք ողջ Խորհրդային Միությունում: Հ. Ալինը Ադրբեջանում  
հիմք դրեց թուրքամետ ուղղվածության նախնականյան կլանի  
գերկայությանը, ինչպես նաև քաղաքական իշխանության դերա-  
կատար դարձրեց ՊԱԿ-ը՝ լայնորեն օգտագործելով այդ կառույ-  
ցի ռեսուրսներն ու մեխանիզմները: Այսպես, որպես իշխանութ-  
յան մեխանիզմ և կառավարման մեթոդաբանություն կիրառվեց  
ՊԱԿ-ի կադրերի ներդրումը պետական մարմիններում, համա-  
կարգի 983 նախկին աշխատակիցների 20 %-ը տեղափոխվեց  
Մինիստրների խորհրդի համակարգ, 42 %-ը՝ արդարադատու-  
թյան մինիստրության մարմիններ, 22 %-ը՝ կրթական համակարգ  
և 16 %-ը՝ միլիցիա: Այսպիսով իշխանական համակարգը վերջ-  
նականապես խարսխվեց ազգակցական-կլանային սկզբունքի  
վրա, քանի որ առանցքային պաշտոններում Ալինը նշանակեց  
բացառապես իր մտերիմներին, այդ թվում՝ հիմնականում նախ-  
նականացիներին<sup>194</sup>: Արդյունքում երկրում հաստատվեց Ալինի  
անձնիշխանությունը, որից հետո վերջինս շնչտը դրեց ազգային  
ինքնահաստատման ու հայերի նկատմամբ (հատկապես Արցա-  
խի, Նախիջևանի) ազգային խտրականություն կիրառելու քա-  
ղաքականության վրա: Ինքն անձամբ այդ մասին բազմիցս հայ-  
տարարել է իր հարցազրույցներում. «Բարձր պաշտոններում  
աշխատած տարիներին Լեռնային Ղարաբաղում ես ձգտում էի  
փոխել ժողովրդագրությունը... Այս և այլ միջոցներով ես ջանում  
էի, որ Լեռնային Ղարաբաղում ավելի շատ ադրբեջանցիներ  
լինեին, իսկ հայերի թիվը նվազեր<sup>195</sup>»:

<sup>194</sup> Էվոյան Լ. Ադրբեջանի վերնախավի ձևավորման գործընթացը 1989-1994 թթ., Լոռվանց, 21-րդ դար, Եր., 2012, թիվ 6 (46), էջ 57-58:

<sup>195</sup> Sapcevos IO. Եզվ. աշխ., էջ 349: Տե՛ս նաև Էլիբեգովա Ա., Ադրբեջանական



Հակահայկական քաղաքականության ընդգծված գործիչ էր նաև 1973 թվականից ԼՂԻՄ մարզկոմի առաջին քարտուղար նշանակված Բորիս Կնոբկովը<sup>106</sup>:

Դեռևս անցյալ դարի 60-ական թթ. սկզբից ԼՂԻՄ-ում և հարակից շրջաններում ազատորեն գործում էին հատուկ պատրաստված, այսպես կոչված, աղբրեջանական «գողական» կազմավորումներ: Ի դեպ, դրանց աշխուժացումը ևս կապված էր Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ում Հ. Ալիևի առանձնահատուկ դերակատարության հետ: Բանդիտական այդ կազմավորումները գործում էին սկզբում տարանջատ, բայց Ալիևի՝ ՊԱԿ-ի նախագահի տեղակալ, մանավանդ նախագահ աշխատած տարիներին հանդես էին գալիս իբրև «օրենքով գողեր»: Այս խմբերը տեղերում ղեկավարում էին դպրոցի տնօրեններ, կուսշրջկոմի պատասխանատու աշխատակիցներ, շրջանային միլիտաներ, դատախազներ, իսկ դրանց թիկունքում կանգնած էին հանրապետական մասշտաբի ղեկավար այրեր, մանավանդ ՊԱԿ-ի, ՆԳՆ-ի, կառավարության և Աղբրեջանի կոմկուսի կենտկոմի ղեկավար աշխատողներ: Կազմակերպված այդ խմբավորումներին էլ հենց սերմանում էին հայատյացություն և նախապատրաստում հայոց ջարդեր: Շուշիում գտնվող բանաստեղծ Կազիմի բեռնե ղամբարանը պատրվակ դարձնելով՝ Բաքուն ամեն տարի իսլամական երկրներից հրավիրում էր ծայրահեղականության ու անհարեկչության բնագավառում փորձված «մասնագետների» և կազմակերպում նրանց գաղտնի հանդիպումները հայատյացությամբ դատախարակված աղբրեջանական անհարեկչական խմբերի հրամանատարների հետ: Կերջիններս, անհրաժեշտ հրահանգներ, միջոցներ ստանալով, ավելի էին սաստկացնում ատելությունը հայ ժողովրդի նկատմամբ: ԼՂ-ի պետանվտանգության վարչության աշխատակիցները երբեմն գաղտնի իրազեկում էին Կենտրոն, որ Թուրքիայից նկան «Գորշ գալերի» պատմիրակները սովորաբար չեն մաս-

---

մատվորականության հակահայկական հետտորաբանությունը խաղաղարարության հետ համատեղելի չէ. <http://theanalytic.com/?p=3161>, ապրիլ, 2013 (ժողովն արված է 20.02.2016):

<sup>106</sup> Մարտիյան Ն., Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը 1960-1988 թվականներին, Եր., 2008, էջ 38:

հանցում «վազիֆրան ընթերցամանրին», այլ աղբբեջանցիների ուղեկցությամբ մեկնում էին Կիրովաբադ և Աղդամ՝ հանդիպելու տեղի աղբբեջանցի ահաբեկիչների և գողական խմբավորումների ներկայացուցիչների հետ: Ժամանակին այս մասին Մոսկվա ծավալուն համակ է գրել ԼՂ կուսմարզկոմի հատուկ բաժնի վարիչ, ՊԱԿ-ի գեղատեսի այրի, լուսաճոզի Քնարա Մուսայեյանը, ինչը պահպանվում է<sup>197</sup>: Գողական այս կազմավորումներին հանձնարարված էր հայության շրջանում կազմակերպել ահաբեկչություններ, սպանություններ, հայկական տնտեսություններին պատկանող արտադրական շենքերի ավերումներ, հրկիզումներ, ավտոմիթարներ, անասնագողություններ և այլ հանցագործություններ:

Իրալիճակը և գործունեության մեթոդները փոխվեցին դարաբաղյան շարժման ալիքին զուգընթաց: Աղբբեջանի ղեկավարները ետրամուծություններ մտցրեցին քրեական-ահաբեկչական այս կազմավորումների ծրագրերում, և նրանք ընդգրկվեցին հատուկ ջոկատների, օժտական զինված խմբավորումների մեջ՝ փորձելով ծածկել վերջիններիս գործողություններն օրինակաւության շղարշով: Իսկ վայրագ գործողությունները համակարգելու համար Բաքվից Ղարաբադ էին ուղարկվել ավելի փորձառու, արտասահմանյան ահաբեկչական որջերում մարզված տասնյակ «հրահանգիչներ», որոնք հասցրել էին սերտ կապեր հաստատել թուրքական «Գորշ գայլեր», արաբական «Համաս» և աֆղանական մոջահեդների կազմավորումների հետ<sup>198</sup>: Նորագույն տարբեր զինատեսակներով և պայթուցիկ միջոցներով զինված՝ նրանք սկսեցին լայնածավալ հարձակումներ գործել հայկական գյուղերի, տնտեսությունների վրա: Սպանում, պատանդ էին վերցնում հայ անասնապահներին և անտեր մնացած հոտը, նախիրը թշուր-տանում էին աղբբեջանական շրջաններ: Ճանապարհներին զրավում էին հայերին պատկանող ավտոմեքենաները, զինված հարձակում գործում ավտոբուսների վրա, գեղակահարում ուղևորներին: Միաժամանակ կտրտում, հրդեհում էին հայերին

<sup>197</sup> Մկրտչյան Շ., Առնային Ղարաբադ, Աղբբեջանի իրականացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանակերտ, 2003, էջ 136:

<sup>198</sup> Նույն տեղում:

պատկանող այգիները, ցորենի արտերը, որպեսզի դարաբաղցիներին ետտեն սովի ճիրանները: Այնուհետև ավելի կատարելագործված ու դաժան կերպով կտտանքի էին եթարկում տեղի՝ աչքի ընկնող հայ ղեկավարներին, մտավորականներին, աներևակայելի գլխացին պահանջում նրանց հարազատներից, զարհուրելի խոշտանգումների եթարկում անտեղ մարդկանց՝ կադրային աշխատողների, մտավորականների, երեխաների, ծերերի: Իրականացվում էին այնպիսի գործողություններ, որոնք միանգամայն բնորոշ են ցեղասպանությանը: Եվ այս չարանեեզ սպանությունները Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության դեմ ուղղված սահարելչական ծրագրված գործողությունների մի օղակն էին միայն, որոնք առավել համակարգված ու մեծ թափով շարունակվեցին ամբողջ Ադրբեջանի հայաբնակ շրջաններով մեկ<sup>299</sup>: Գրեթե ողջ XX դարում Արցախ-Ղարաբաղում (և ոչ միայն) անարգել իրագործվել է հայերի հետապնդման, տեղահանման ու ուժացման մի համալիր ծրագիր: Ադրբեջանական ՊԱԿ-ն իր վերահսկողության տակ էր պահում հայ հասարակական-քաղաքական մտքի կարկառուն դեմքերին՝ արգելելով անգամ տպագրել իրենց հողվածներն ու նյութերը: ՊԱԿ-ի սև ցուցակում էին հայտնվում անգամ թանգարանները, գրադարանները, որտեղից հասել էին տալիս Տիգրան Մեծի անվամբ հատված դրամները, Անդրանիկի, Վազգեն Առաջինի դիմանկարները՝ դրանք համարելով վարակված «երևանիզմով», դաշնակցական գաղափարախոսությամբ<sup>200</sup>: Իսկ արդեն 1988-1991 թթ. ադրբեջանական ՊԱԿ-ն սկսեց հետապնդումներ ու հալածանքներ իրականացնել Ղարաբաղի ոչ միայն հայ, այլ նաև այլազգի այն պաշտոնյաների ու իրավապահ մարմինների աշխատակիցների նկատմամբ, ովքեր քիչ թե շատ փորձում էին պաշտպանել հայ բնակչության շահերը<sup>201</sup>:

<sup>299</sup> Լույն տեղում, էջ 135-138:

<sup>200</sup> Լույն տեղում, էջ 221:

<sup>201</sup> Крижопуков В., Метехоний Карабах, Ереван, 2013, с. 223-225.

Հայտնի է, որ Ադր. ԽՍՀ ՊԱԿ-ը 1990 թ. վերջերին ծրագրել էր որոշ հայ անվանի հասարակական-քաղաքական գործիչներին սպանություններ ևս<sup>200</sup>;

Այսպիսով հատակ կարող ենք փաստել, որ Ադրբեջանի իշխանություններն ու հատուկ ծառայությունները, անգամ գտնվելով խորհրդային մեկ-միասնական պետության կազմում, հայ ժողովրդի նկատմամբ իրագործեցին հերքական էթնիկ գառմաները, խորացրին հայաստացությունը, ինչն էլ ի վերջո հանգեցրեց լայնամասշտաբ պատերազմի հայ ժողովրդի դեմ:

### ԳԼՈՒԽ 3.

## ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹ- ՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀՆՍՔԵՐԸ ԵՎ ՀՈՄԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**3.1. Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների մարմինները և դրանց գործունեության իրավական հիմքերը**

Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների ձևավորման ու զարգացման երրորդ փուլը սկսվում է Ադրբեջանի անկախության հռչակումից: Սկսած 1991 թ. այդ երկրի հատուկ ծառայությունների համակարգը ենթարկվել է կառուցվածքային մի շարք փոփոխությունների:

XX դարի վերջերին, XXI դարի սկզբներին Ադրբեջանի Հանրապետությունում գործում էին հետևյալ հատուկ ծառայությունները.

- Ազգային անվտանգության նախարարությունը (ԱԱ), որը ստեղծվել էր 1991 թ. նոյեմբերի 1-ին<sup>201</sup> և 2015 թ. դեկտեմբերի 14-ին Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի հրամանագրով լուծարվեց ու դրա հիման վրա ստեղծվեցին երկու հատուկ ծառայությու-

<sup>200</sup> Լույն տեղում, էջ 65:

<sup>201</sup> Azərbaycan Respublikası Dövlət Təhlükəsizliyi Komitəsinin Azərbaycan Respublikası Milli Təhlükəsizlik Nazirliyinə çəvrilməsi haqqında Azərbaycan Respublikasının qanunu, <http://www.e-qanun.az/framework/6689> (նշումն արված է 20.02.2016 թ.):

յուններ՝ Պետական անվտանգության ծառայությունը և Արտաքին հետախուզության ծառայությունը<sup>204</sup>,

- Ադրբեջանի Հանրապետության նախագահին կից հատուկ վարչությունը (ուժային կառույցների ու հատուկ ծառայությունների գործունեությունը համակարգող մարմին էր), որն ստեղծվել էր 1992 թ. հուլիսի 17-ին նախագահ Ա. Էլչիրեյի կողմից<sup>205</sup> և լուծարվել 1999 թ.,

- Պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչությունը,

- Հատուկ պետական պահպանության ծառայությունը<sup>206</sup>,

- Պետական սահմանապահ ծառայությունը<sup>207</sup>,

- Կասպի և Բարձր տեխնոլոգիաների նախարարության էլեկտրոնային անվտանգության կենտրոնը<sup>208</sup>:

Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունը ստեղծվել էր անկախացումից անմիջապես հետո՝ 1991 թ. նոյեմբերի 1-ին, երբ իշխանության եկավ «Շողովրդական ճակատը»: ԱԱԸ-ն ստեղծվեց ադրբեջանական ՊԱԿ-ի կյութատեխնիկական և կադրային ռեսուրսների հիման վրա<sup>209</sup>: Այն գործադիր իշխանության կենտրոնական մարմին էր, որը Ադրբեջանի օրենսդրությամբ նախատեսված կարգով լիազորված էր իրականացնելու հատուկ ծառայություններին բնորոշ գործունեություն: ԱԱԸ-ն իր գործունեության մեջ ղեկավարվում էր Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենսդրությամբ, մասնավորապես «Ազգային անվտանգության մասին», «Հետախուզական և հակահետախուզական գործունեության մասին»,

<sup>204</sup> MTN ləgü edildi. <http://azspress.com/index.php?a=2&lang=az&cid=&nid=367243>, 14.12.2015, (նդումն արված է 20.12.2015 թ.):

<sup>205</sup> Azərbaycan Respublikası Prezidenti yanında Xüsusi İdarənin yaradılması haqqında Azərbaycan Respublikası Prezidenti fərmanı, e-çanun.az/framework/doc/7532 (նդումն արված է 10.02.2016 թ.):

<sup>206</sup> Հատուկ պետական պահպանության ծառայության պաշտոնական կայքէջը՝ <http://www.dmx.gov.az/>.

<sup>207</sup> Պետական սահմանապահ ծառայության պաշտոնական կայքէջը՝ <http://www.dsx.gov.az/>.

<sup>208</sup> Կասպի և Բարձր տեխնոլոգիաների նախարարության էլեկտրոնային անվտանգության կենտրոնի պաշտոնական կայքէջը՝ <http://www.cert.az/>.

<sup>209</sup> Əbülgəmət Bədəlov, ևշվ. աշխ.:

«Պետական ծառայության մասին», «Օպերատիվ-ինտախուզական գործունեության մասին», «Պետական գաղտնիքի մասին», «Տեղեկատվական անվտանգության մասին», «Անարեկչության դեմ պայքարի մասին», «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» և այլ օրենքներով, նախագահի հրամանագրերով և կարգադրություններով, կառավարության որոշումներով և հրամանագրերով, Ադրբեջանի ազգային անվտանգության հայեցակարգով, ինչպես նաև Ադրբեջանի Հանրապետության կողմից ստորագրված միջազգային պայմանագրերով, ԱԱԼ կանոնակարգով և ԱԱԼ նորմատիվ-իրավական ակտերով<sup>200</sup>:

Ադրբեջանի ԱԱԼ-ն, լինելով հատուկ ծառայության մարմին, իրեն հանձնարարված պարտականություններն իրականացնում էր անմիջականորեն և ստորադաս կառույցների միջոցով: Լախարարությունը կառուցվածքային առումով ներառում էր գլխավոր վարչություններ, վարչություններ, բաժիններ և այլ կառույցներ: Լախարարության կենտրոնական ապարատը, Լախիջևանի Ինքնավար Հանրապետության ԱԱԼ-ն, քաղաքային և տարածքային մարմինները, ռազմական հակահետախուզության կառույցները, ակադեմիան, ռազմաբժշկական հաստատությունը, ինչպես նաև այլ կառուցվածքային միավորներ կազմում էին Լախարարության միասնական համակարգը<sup>201</sup>:

Առկա նյութերի վերլուծության ու համադրության հիման վրա ստացել ենք ԱԱԼ-ի կառուցվածքային ստորաբաժանումները (ներքոնշյալ ստորաբաժանումները, բացառությամբ Հետախուզության գլխավոր վարչության, հավանաբար գործում են ներկայումս ԱԱԼ իրավահաջորդ հանդիսացող Պետական անվտանգության ծառայության կազմում)։

- Հետախուզության գլխավոր վարչություն, որը Ադրբեջանի նախագահի՝ 2015 թ. դեկտեմբերի 14-ի հրամանով առանձ-

<sup>200</sup> Azərbaycan Respublikası Milli Təhlükəsizlik Nazirliyinin Əsasnaməsi, Cənubmüqəddəslik, հոդված 1. День сотрудничества органов национальной безопасности Азербайджана, <http://oqkema.com/date/index.php?mode=holidays&id=283> (հղումն արված են 04.07.2015 թ.):

<sup>201</sup> Լույս տեղում, հոդված 3:

նացավ և դարձավ առանձին ծառայություն՝ Արտաքին հետախուզության ծառայություն,

- Հակահետախուզության գլխավոր վարչություն (ԳՎ),
- Ռազմական հակահետախուզության ԳՎ<sup>212</sup>,
- Հակաահաբեկչության կենտրոն,
- Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ

պայքարի ԳՎ,

- Անդրազգային տնտեսական հանցավորության դեմ

պայքարի ԳՎ,

- Սահմանադրական կարգի պահպանության ԳՎ,
- Էներգետիկայի և տրանսպորտի անվտանգության ԳՎ,
- Օպերատիվ-տեխնիկական ԳՎ,
- Քննչական ԳՎ,
- Հետաքննությունների ԳՎ,
- Մոնիտորինգի կենտրոն,
- Կադրերի ԳՎ,
- Նախարարի աշխատակազմ,
- Հասարակայնության հետ կապի վարչություն,
- Իրավական ապահովման վարչություն,
- Օդանավակայանների վարչություն,
- Վերլուծական վարչություն,
- Արխիվ,
- Փնտրողական վարչություն,
- Տնտեսական վարչություն,
- Տեսչական ծառայություն,
- Ներքին անվտանգության ծառայություն,
- Հ. Ալինի անվան ակադեմիա<sup>213</sup>,
- Հոսպիտալ<sup>214</sup>:

<sup>212</sup> Մինչև 2003 թվականը՝ ռազմական հակահետախուզությունը առանձին ծառայություն էր՝ Ռազմական հակահետախուզության ծառայություն: Այն Անդրբլանի նախագահի կրամառով ԱՄՆ կազմ տեղափոխվեց 2003 թ.:

<sup>213</sup> Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin Heydər Əliyev adına Akademiyası <http://www.itc.gov.az/articles2.php> (հղումն արված է 13.08.2017 թ.):

<sup>214</sup> Prezident MTN-nin xəbəti hospitalın açılışında iştirak edib, 12.11.2012, <http://anspress.com/index.php?n=2&lng=az&nid=175508> (հղումն արված է 14.05. 2015 թ.):

Հարկ է նշել, որ վերոնշյալ կառուցվածքը էականորեն տարբերվում է նախկին ՆՍՀՄ ՊԱԿ-ի կառուցվածքից, թեև որոշ վարչություններ կույնությամբ պահպանվել են:

Ադրբեջանի ԱԱՆ կազմում գործում էր Հ. Ալիևի անվան ակադեմիան, որն ստեղծվել է 1998 թ. դեկտեմբերի 1-ին Ադրբեջանի նախագահի հրամանագրով: Այն ներկայումս նա գործում է, ունի ռազմական բարձրագույն ուսումնական հաստատության կարգավիճակ և զբաղվում է Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության համար կադրերի, մասնավորապես հատուկ բարձրագույն կրթությամբ մասնագետների, սկզբնական շրջանում նաև պետական սահմանապահ ծառայության համար սպաների և սահմանակետերի հսկիչների պատրաստմամբ: Այն ունի 5 ֆակուլտետ.

- Օպերատիվ կազմի պատրաստության,
- Տեղեկատվական անվտանգության,
- Սահմանապահ զորքերի,
- Վերապատրաստման և որակավորման բարձրացման,
- Հեռակա ուսուցման:

Նշված 5 ֆակուլտետներում գործում են 16 ամբիոններ, որոնցից չորսը հատուկ առարկաների գծով, ինչպես նաև

- Սահմանապահ զորքերի մարտավարության ամբիոնը,
- Ինժեներատեխնիկական առարկաների ամբիոնը,
- Համագորային առարկաների ամբիոնը,
- Սահմանդրական իրավունքի ամբիոնը,
- Քաղաքացիական իրավունքի ամբիոնը,
- Քրեական իրավունքի, քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնը,
- տեղեկատվական տեխնոլոգիաների ամբիոնը,
- տեղեկատվական անվտանգության ամբիոնը,
- վարչական կառավարման ամբիոնը,
- օտար լեզուների ամբիոնը,
- հասարակական-քաղաքական առարկաների ամբիոնը,



- ֆիզիկական պատրաստության ամբիոնը<sup>215</sup>:

2008 թ. դրությամբ Ակադեմիային կից գործում էր միզրացիայի հարցերով ուսումնական կենտրոն, որտեղ կազմակերպվում էին դասընթացներ և սեմինարներ Պետական սահմանապահ ծառայության կադրերի պատրաստման ուղղությամբ<sup>216</sup>: Ակադեմիայի պետը ԱՆՍՀ ՊԱԿ-ի նախկին պետ, գեներալ-լեյտենանտ Յուսիֆ-գադե Ջիյա Մամեդիյա օղլին է<sup>217</sup>:

Ուսումնասիրությունն Ակադեմիայում 4 կամ 5 տարի է, շրջանավարտներին տրվում է բարձրագույն կրթության դիպլոմ, շնորհվում է լեյտենանտի զինվորական կոչում, որից հետո նրանք նշանակում են ստանում ըստ մասնագիտության: Ուսումնական գործընթացը հագեցած է հակահայկական նյութերով և քարոզչությամբ: Օրինակ, ԱԱՆ նախկին ղեկավարությունը ձգտում էր ամեն ինչ անել, որպեսզի, ի դեմս Ակադեմիայի շրջանավարտների, ստանա Հայաստանի դեմ աշխատելու ունակ և առավել խորամանկ ու վճռական տրամադրված կադրեր: 2013 թ. դեկտեմբերի 16-ին Ակադեմիայի ելմատորման 15 ամյակին նվիրված միջոցառմանը էլույթ ունենալով՝ Ազգային անվտանգության նախկին նախարար է. Մահմուդովը հայտարարել է. «Ապագայում մենք պետք է հասնենք ավելի բարձր մակարդակի և ուժեղացնենք մեր գործունեությունն ընդդեմ Հայաստանի»<sup>218</sup>:

Սկսած 2015 թ. հոկտեմբերի կեսերից՝ ԱԱՆ-ում բացահայտվեց հանցագործությունների մի շղթա կապված այդ հատուկ ծառայությունում տիրող անօրինական բարքերի հետ: Խոսքը ԱԱՆ ղեկավար էլդար Մահմուդովի և այլ բարձաստիճան պաշտոնյաների պատվերով գործարարների նկատմամբ գործադրված ճնշումների, կոռուպցիոն մեխանիզմների, երկրի

<sup>215</sup> Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin Heydər Əliyev adına Akademiyası <http://www.dtx.gov.az/articles2.php> (նրումն արված է 13.08.2017 թ.):

<sup>216</sup> Материалы по истории органов безопасности Азербайджана, Академия и музей МНБ РА, НУЦ ЧНБ РА, Ер., 2008, с. 1.

<sup>217</sup> [http://hannagitaren.razm.info/wiki/Յուսիֆ-գադե\\_Ջիյա\\_Մամեդիյա\\_օղլու](http://hannagitaren.razm.info/wiki/Յուսիֆ-գադե_Ջիյա_Մամեդիյա_օղլու) (նրումն արված է 13.04.2015 թ.):

<sup>218</sup> Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin Heydər Əliyev adına Akademiyası <http://www.dtx.gov.az/articles2.php> (նրումն արված է 13.08.2017 թ.):

բարձրաստիճան պաշտոնյաների ու գործարարների հետախուսների անօրինական գաղտնալուսումների, անօրինական ձերբակալություններ իրականացնելու, գործարարներից խոշոր և առանձնապես խոշոր չափերի գումարներ կաշառք պահանջելու կամ նրանց բիզնեսը խլելու, սպանություններ ու մարդկանց առեանգումներ պատվիրելու և այլ ծանր, առանձնապես ծանր հանցագործություններ իրականացնելու մասին է: Ընդհանուր առմամբ երեք ամսվա ընթացքում զբաղեցրած պաշտոններից ազատվեցին ԱԱՆ 250 աշխատակիցներ, այդ թվում՝ նախարարը, տեղակալներ, վարչության պետեր, այլ բարձրաստիճան պաշտոնյաներ, որոնց մի մասը ձերբակալվեց<sup>219</sup>: Բացի պաշտոնակալություններից ու ձերբակալություններից, Ադրբեյջանի նախագահ Ի. Ալիևը 2015 թ. դեկտեմբերի 14-ի հրամանով լուծարեց երկրի Ազգային անվտանգության նախարարությունը և ստեղծեց երկու նոր կառույց՝ Պետական անվտանգության ծառայությունը և Արտաքին հետախուզության ծառայությունը<sup>220</sup>: Պետական անվտանգության ծառայության ղեկավար նշանակվեց Ազգային անվտանգության նախկին փոխնախարար գեներալ-լեյտենանտ Մադաթ Գուլիևը<sup>221</sup>, իսկ Արտաքին հետախուզության պետ՝ Օրհան Սեդյար օղլի Սուլթանովը<sup>222</sup>:

Նախիջևանի Ռեքոնվար Հանրապետության հասույժ ծառայությունների համակարգում ևս կատարվեցին նմանատիպ փոփոխություններ: 2015 թ. դեկտեմբերի 19-ին ՆԻՀ Գերագույն

<sup>219</sup> Mədət Quliyev (ԱՀ ազգային անվտանգության նախարարի նախկին տեղակալը, 2015 թ. դեկտեմբերի 14-ից՝ Պետական անվտանգության ծառայության ղեկավարը), «250 yararsız vəsət MİT-dən çıxarıldı», <http://azpolitika.info/?p=177327> (հղումն արված է 18.12.2015 թ.):

<sup>220</sup> Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin və Azərbaycan Respublikasının Xarici Kəşfiyyat Xidmətinin yaradılması haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Fərmanı edildi, 14 dekabr 2015, <http://president.az/articles/17160> (հղումն արված է 18.12.2015 թ.):

<sup>221</sup> M. Q. Quliyevin Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin rəisi təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, 14 dekabr 2015, <http://president.az/articles/17159> (հղումն արված է 18.12.2015 թ.):

<sup>222</sup> O. S. Sultanovun Azərbaycan Respublikasının Xarici Kəşfiyyat Xidmətinin rəisi təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, 14 dekabr 2015, <http://president.az/articles/17158> (հղումն արված է 18.12.2015 թ.):

խորհուրդի որոշմամբ լուծարվեց Ինքնավար հանրապետության ԱԱՆ-ն և ստեղծվեց Պետական անվտանգության ծառայությունը<sup>223</sup>, իսկ 2016 թ. հունվարի 21-ի որոշմամբ ստեղծվեց Արտաքին հետախուզության ծառայությունը<sup>224</sup>:

Ադրբեջանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարներ են եղել հետևյալ անձինք. Հուսեյնով Իլհուսեյն Փիրհուսեյն օղլին՝ 1991 թ. սեպտեմբերից մինչև 1992 թ. մայիս, Թահմազով Ահրադդին Այաթ օղլին՝ 1992 թ. մայիսից մինչև 1993 թ. հունիս, Իմոսնով Նարիման Շամո օղլին՝ 1993 թ. հունիսից մինչև 1994 թ. հոկտեմբեր, Աբբասով Նամիթ Ռաշիդ օղլին՝ 1994 թ. հոկտեմբերից մինչև 2004 թ. հուլիս<sup>225</sup>, Մահմուդով Էլզար Ահմեդ օղլին՝ 2004 թ. հուլիսի 23-ից մինչև 2015 թ. հոկտեմբերի 17-ը:

Ազգային անվտանգության նախարարության վերակազմակերպման արդյունքում ստեղծելով երկու նոր ծառայություններ՝ Արտաքին հետախուզության ծառայությունը և Պետական անվտանգության ծառայությունը, Ադրբեջանի ղեկավարությունն ընդօրինակեց ԱՄՆ-ի (Կենտրոնական հետախուզական վարչության և Հետաքննությունների դաշնային բյուրոյի) և ՌԴ-ի (Արտաքին հետախուզության ծառայության և Անվտանգության դաշնային ծառայության) փորձը:

Ադրբեջանի հատուկ ծառայության մարմիններից է ՋՈւ գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչությունը (ՀԳՎ): Ռազմական անվտանգության սպահովման համակարգում զբաղեցնելով կենտրոնական դիրք՝ ցանկացած երկրի զինված ուժերը հանդիսանում են հատուկ ծառայությունների սեղեկատվության հիմնական սպառողները: Ռազմական ոլորտի յուրահատկությունը բերում է նրան, որ զինված ուժերը ստեղծում են ռազմական

<sup>223</sup> В Нахчыване ликвидировано МНБ, в АР назначен начальник Государственной службы безопасности, 19 Декабря, 2015, <http://report.az/ru/vnutrennyaya-politika/v-nahchyvane-likvidirovano-mnb-v-ar-naznachен-nachal-nik-gosudarstvennoj-sluzhby-bezopasnosti/> (նդումն արված է 20.12.2015 թ.):

<sup>224</sup> Микаилослы Р., Создана Служба внешней разведки Нахчыванской Автономной Республнки, 21 Января 2016, <http://ru.ara.az/news/308551> (նդումն արված է 24.02.2016 թ.):

<sup>225</sup> Azərbaycanın xüsusi xidmət orqanlarının tarixi və rəhbərliyi, 28.03.2010, <http://modern.az/articles/3930/1/> (նդումն արված է 10.04.2015 թ.):

հետախուզության սեփական կառույցները: Ամանորինակ կառույցները կարող են ինքնուրույն կարգավիճակ ունենալ (օրինակ ԱՄՆ-ում), ենթացաբար լինել Գլխավոր շտաբին (ՌԴ-ում) կամ ունենալ խառը ենթակայություն (Իսրայելում)<sup>226</sup>: Ադրբեջանի ռազմական հետախուզությունը գտնվում է ՋՈՒ կազմում՝ առանձին գլխավոր վարչության կարգավիճակով: ՀԳՎ-ի գործունեության իրավական հիմքերն են Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրությունը, նախագահի հրամաններն ու կարգադրությունները, Ռազմական դոկտրինը, Ազգային անվտանգության հայեցակարգը, «Ձինապարտության մասին», «Ձինվորական ծառայության մասին», «Պետական գաղտնիքի մասին» և այլ օրենքներ, ՋՈՒ կանոնադրեր, կանոնադրություններ, ՊՆ ետմատիվ-իրավական ակտեր և այլն: 2014 թ. վարչության պետ է նշանակվել գեղասպետ Իլգար Մազանովը<sup>227</sup>, որը փոխարինել է զեներալ-մայոր Ռահիմ Ջաֆարովին<sup>228</sup>: Հատկանշական է, որ մամուլում հայտնվեց տեղեկատվություն, թե Ի. Մազանովը նախկինում աշխատել է Ադրբեջանի «Ժողովրդական բանկում»՝ որպես անվտանգության ծառայության ղեկավար<sup>229</sup>:

Ադրբեջանի Հանրապետության մեկ այլ հատուկ ծառայության մարմին՝ Հատուկ պետական պահպանության ծառայությունը (ՀՊՊՄ) ստեղծվել է 2002 թ.: Այն հանդիսանում է ղեկոս 1931-1937 թթ. Լեռքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմում գործած Պահպանության բաժնի (V հատուկ դիվիզիա), 1937-1972 թթ. գործած Բաքու քաղաքի գործկոմի Լեռքին գործերի վարչության II դիվիզիայի և 1972-1991 թթ. գործած Ադրբե-

<sup>226</sup> Հարությունյան Ա., Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը այդի փուլում, Թուրքիա. անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, վերլուծական ելույթեր, Եր., 2007, էջ 173-174:

<sup>227</sup> Ordumuzun baş kəşfiyyatçısı kimdir..., <http://virtualaz.org/bogun/17349> (նրումն արված է 18.04.2015 թ.):

<sup>228</sup> Müdafiə Nazirliyində dəyişikliklər proseslər və perspektivlər, <http://www.ayna.az/2013/mudafe-nazirliyinde-deyisiklikler-processler-ve-perspektivler/> (նրումն արված է 18.05.2015 թ.):

<sup>229</sup> Մարգարյան Ա., Բանկի անվտանգության ծառայության ղեկավարը Ադրբեջանի ՊՆ հետախուզության վարչության պետ, 27 հունվարի 2014 թ., <http://raem.info/30249> (նրումն արված է 18.07.2015 թ.):

ջանական ՌՄՀ ԿԳԼ կուսակցական-խորհրդային մարմինների պահպանության բաժնի «հետևորդը»<sup>296</sup>: ՀՊՊԾ-ն պետական զինված կազմակերպություն է, որն անմիջականորեն ենթակա է Ադրբեջանի նախագահին և ունի ինչպես հատուկ ծառայությանը, այնպես էլ հատուկ նշանակության ռազմական ստորաբաժանմանը բնորոշ գործառույթներ: Այն իր գործունեությունն իրականացնում է ՀՊՊԾ կանոնադրությամբ, «Ազգային անվտանգության մասին», «Պետական գաղտնիքի մասին», «Անարևելյան դեմ պայքարի մասին» և այլ օրենքներով, նախագահի հրամաններով, ՀՊՊԾ երմատիվ-իրավական ակտերով, որոշ միջազգային պայմանագրերով<sup>297</sup>: Ծառայության անձնակազմը 2500 հոգի է, որից 500-ը ժամկետային զինծառայողներ են<sup>298</sup>: ՀՊՊԾ-ն ունի հետևյալ կառուցվածքը.

- Տեսչական վարչություն,
- Կադրերի վարչություն,
- Ֆինանսական վարչություն,
- Ընդհանուր բաժին,
- Նախագահի անվտանգության վարչություն,
- Հատուկ կապի և տեղեկատվական անվտանգության պետական գործակալություն,
- Անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչություն,
- Անձնակազմի պահպանության վարչություն,
- Մասնագիտական վերապատրաստման վարչություն,
- Ուսումնական կենտրոն,
- Դիվանագիտական ներկայացուցչությունների պահպանության վարչություն,
- Տեխնիկական հսկողության վարչություն,
- Համալիր հետաքննության վարչություն,

<sup>296</sup> Xüsusi Dövlət Mühafizə Xidməti, Tarixi və döyüş yolu, <http://www.dmx.gov.az/page/1.html> (նորմա արված է 01.07.2015 թ.):

<sup>297</sup> Гасинова Х., Особая государственная служба охраны Азербайджана засекречена охранять работу "Баку-Джейхан", 06.10.2005, <http://www.centrasia.ru/newsA.php?st=1128576000> (նորմա արված է 03.07.2015 թ.):

<sup>298</sup> Խոջազորյան Վ., Դեմոկրաֆիական պատկերն Ադրբեջանի զինված ուժերում, 22.02.2014, <http://raem.info/31391> (նորմա արված է 07.07.2015 թ.):

- Հատուկ նշանակության խմբեր,
- Օբյեկտների պահպանության բաժիններ,
- Նավթի և գազի արտահանման խողովակաշարերի անվտանգության վարչություն,
- Ազգային գվարդիա,
- Բժշկական վարչություն, դիագնոստիկ կենտրոն,
- Նյութատեխնիկական ապահովման վարչություն,
- Կապիտալ շինարարության վարչություն,
- «Աստղ» հանգստի կենտրոն,
- Զինվորական որսորդություն<sup>203</sup>:

Այս ծառայությունը համարվում է Ադրբեջանի ամենագաղտնի կազմակերպությունը, և իշխանությունը, ի դեմս Ալինների կլանի, մեծ ուշադրություն է դարձնում դրան, քանի որ համարում է Ադրբեջանում սուղի ունեցած հեղաշրջումների ու բարձրաստիճան անձանց, այդ թվում՝ Ալինների դեմ մահափորձերի կրկնությունը բացառող հիմնական կառույց: Դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ ՀՊՊ ծառայությունը երկար տարիներ ղեկավարում է Հեյդար Ալինի մտերիմ գեներալ-գեղապետ Վազիֆ Ադունդովը, իսկ նրա տեղակալը՝ Ադրբեջանի նախագահի անվտանգության ծառայության ղեկավարը, Ալինների մերձավորներից քրդական ծագում ունեցող գեներալ-գեղապետ Բալլար Էյուրովն է: Որոշ տվյալների համաձայն՝ վերջինս համարվում է Ադրբեջանում քրդական համայնքի ոչ պաշտոնական ղեկավարը, որի միջոցով ՀՊՊՄ աշխատանքում ներգրավվում են քրդեր, որոնք կատարում են Ադրբեջանի և ՀՊՊՄ ղեկավարության ամենագաղտնի հրահանգները, համարվում են նրանց համար ամենավստահելի անձինք և հայտնի են որպես անզիջում, դաժան ու ազդեցիվ վարքի տեր գրոհայիններ<sup>204</sup>:

Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայությունը (ՊՄՄ) ստեղծվել է 2002 թ. հուլիսի 31-ին՝ նախա-

<sup>203</sup> Xüsusi Dövlet Mühafizə Xidməti, Struktur, <http://www.dmx.gov.az/page/10.html#> (նդումն արված է 08.07.2015 թ.):

<sup>204</sup> Азербайджанская оппозиция назвала курдов спаром номер 2, <http://lexgistan.ru/kurdskaya-ekspansiya/azerbajdzhanakaya-oppozitsiya-nazvala-kurdov-vragom-nomer-2/> (նդումն արված է 15.07.2015 թ.):

գահի հրամանագրով: Մինչ ՊՄՄ-ի ստեղծումը՝ սահմանապահ զորքերը գտնվում էին Ազգային անվտանգության նախարարության կազմում առանձին վարչության կարգավիճակով: Ծառայությունն իր գործունեությունն իրականացնում է Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության հիման վրա, նախագահի հրամաններով ու կարգադրություններով, Ռազմական դոկտրինով, Ազգային անվտանգության հայեցակարգով, ՋՈւ կանոնագրերով, «Զինապարտության մասին», «Զինվորական ծառայության մասին», «Պետական գաղտնիքի մասին», «Պետական սահմանի մասին», «Սահմանապահ զորքերի մասին» և այլ օրենքներով ու կորմատիվ-իրավական ակտերով, Պետական սահմանապահ ծառայության կորմատիվ-իրավական ակտերով և այլն<sup>206</sup>: ՊՄՄ-ին վերապահված են օպերատիվ-մարտական, օպերատիվ-հետախուզական, որոնողական, ռազմական գործառույթներ, ինչպես նաև հետաքննություններ անցկացնելու լիազորություններ<sup>206</sup>:

2007 թ. հունիսի 12-ին Ադրբեջանի նախագահի հրամանագրով ՊՄՄ-ի կառուցվածքում հիմնվել է ակադեմիա: Այն հատուկ ռազմական կրթության ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատություն է, որը պատրաստում է սպայական և հրամանատարական կազմեր, իրականացնում ՊՄՄ կադրերի վերապատրաստում և որակավորման բարձրացում: Ակադեմիայի կոր շենքը բացվել է 2010 թ. օգոստոսի 10-ին<sup>207</sup>:

ՊՄՄ-ն ենթարկվում է երկրի նախագահին և անտիջակա-նորեն կատարում նրա հրամանները: Այն ակտիվորեն համագործակցում է հարևան երկրների՝ ՌԴ-ի, Վրաստանի Հանրապետության (ՎՀ), Թուրքիայի Հանրապետության (ԹՀ), ԻԻՀ-ի, Ղազախստանի և Թուրքմենստանի հանրապետությունների սահմանապահ ծառայությունների հետ: Համագործակցության շրջանակներում անցկացվում են երկկողմ և բազմակողմ հանդի-

<sup>206</sup> Azərbaycan Respublikası Dövlət Sərhəd Xidməti, qanunvericilik, <http://www.dsx.gov.az/qanunlar> (հղումն արված է 02.04.2015 թ.):

<sup>206</sup> Azərbaycan Respublikası Dövlət Sərhəd Xidməti, [http://dsx.gov.az/1992-ci\\_ildən\\_sonra](http://dsx.gov.az/1992-ci_ildən_sonra) (հղումն արված է 18.07.2015 թ.):

<sup>207</sup> Dövlət Sərhəd Xidmətinin Akademiyasının açılışında İlham Əliyevin nitqi, <https://www.youtube.com/watch?v=cyBwHTSDcIk> (հղումն արված է 20.05.2015 թ.):

պումներ, խորհրդակցություններ: Ռուսաստանի և Ղազախստանի սահմանապահ ծառայությունների հետ համատեղ անց են կացվում նաև զորավարություններ: Ադրբեջանի օդային և Կասպից ծովի տարածքներում անվտանգության ապահովման ուղղությամբ Ադրբեջանի ՊՍՕ-ն համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ<sup>298</sup>:

Հարկ է նշել որ Մահմանապահ զորքերը ԱԱՆ-ի կազմից տեղափոխելն ուներ քաղաքական ենթատեքստ: Մահմանապահ զորքերի հրամանատարի և ԱԱ նախարարի միջև լուրջ հակասություններ կային, այդ պատճառով Հ. Ալիևը առանձնացրեց սահմանապահ զորքերը ստեղծելով նոր ծառայություն: Բազմաթիվ նրկներում սահմանապահ զորքերը չեն մտնում որևէ կառույցի մեջ և ասանձի ծառայություններ են:

Ադրբեջանի կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությանը<sup>299</sup> կից էլեկտրոնային անվտանգության կենտրոնը (ԷԱԿ) ստեղծվել է Ադրբեջանի Հանրապետության նախագահի 2012 թ. սեպտեմբերի 26-ի թիվ 708 հրամանի 5-րդ կետի հիմքով և կիբերանվտանգության ոլորտում տեղեկատվական ենթակառուցվածքների սուբյեկտների գործունեությունը համակարգող, էլեկտրոնային առկա և հնարավոր վտանգների մասին իրազեկող, բնակչության, մասնավոր հատվածի և այլ կառույցների կիբերանվտանգության բնագավառում ուսուցում ապահովող և երանց մեթոդական օժանդակություն ցույց տվող կառույցները համակարգող պետական մարմին է: Կենտրոնն իր գործունեության մեջ ղեկավարվում է Ադրբեջանի Հանրապետության Մահմանադրությամբ, օրենքներով, նախագահի որոշումներով ու հրամանագրերով, կառավարության որոշումներով և հրամաններով, Ադրբեջանի կողմից ստորագրած միջազգային պայմանագրերով, Կասպի և բարձր տեխնոլոգիաների նախարարության կանոնակարգով, Կիբերանվտանգության մասին կոնվենցիայով, նախարարության կողմից ընդունված նորմատիվ-իրավական

<sup>298</sup> Эльчин Гуляев (ԱՀ պետական սահմանապահ ծառայության ղեկավարը, գեներալ-լեյտենանտ), *Азербайджан точно сотрудничает с НАТО и Евросоюзом*, 18.08.2015 թ., <http://minva.az/news/123474967> (նրումն արված է 23.11.2015 թ.):

<sup>299</sup> Մինչ 2010 թ. նախարարությունը կոչվել է Կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն:



ակտերով ու էԱԿ-ի կանոնադրությամբ: Կենտրոնն իր պարտականություններն ու իրավունքներն իրականացնելիս նախարարության և նրա ենթակայության ներքո գտնվող մարմինների, կենտրոնական և գործադիր իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ պետական կազմակերպությունների, միջազգային կազմակերպությունների, ինչպես նաև տեղեկատվական անվտանգության բնագավառում մասնագիտացված իրավաբանական ու ֆիզիկական անձանց հետ փոխադարձ համագործակցում է: Կենտրոնն ունի անկախ հաշվեկշիռ, պետական գույքով համալրում, գանձապետական և բանկային հաշիվներ, Ադրբեջանի պետական զինանշանի տեսքով, սեփական անվամբ կնիք, համապատասխան շտամպ և ձևաթղթեր: Կենտրոնը տեղակայված է Բաքու քաղաքում<sup>240</sup>:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների ոլորտում կառուցվածքային փոփոխություններն իրականացվում են բարեփոխումների և դրանց գործունեության արդյունավետության բարձրացման անվան տակ, սակայն իրականում այդ փոփոխություններն իրականացվել են քաղաքական եկատառումներից ելնելով ու լուծել զուտ քաղաքական խնդիրներ: Փոփոխությունները հատուկ ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման վրա որևէ ազդեցություն չեն ունեցել: Հատուկ ծառայությունների գործունեության իրավական հիմքերի վերաբերյալ էլ կարելի է արձանագրել, որ դրանց վերաբերող օրենքներն ու այլ իրավական ակտերն արտատապվել են տարբեր երկրների օրենսդրությունից հարմարեցվելով Ադրբեջանի Հանրապետության Սահմանադրության, Ազգային անվտանգության հայեցակարգի, Ռազմական դոկտրինի դրույթներին ու կենտրին:

<sup>240</sup> Azərbaycan Respublikasının Rabitə və İnformasiya Texnologiyaları Nazirliyi yanında Elektron Təhlükəsizlik Mərkəzi haqqında əsasname, <http://www.cert.az/essaname.html> (bəğlənən tarix: 05.12.2015 j.)

### 3.2. Աղբրեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղություններն ու խնդիրները

XX դարի վերջերին, XXI դարի սկզբներին Աղբրեջանի Հանրապետության հիմնական հատուկ ծառայությունը Ազգային անվտանգության նախարարությունն էր, որի գործունեության հիմնական ուղղություններն էին.

հետախուզական գործունեություն (ներկայումս հանդիսանում է Արտաքին հետախուզական ծառայության հիմնական գործառույթը).

հակահետախուզական գործունեություն.

պետական գաղտնիքի պահպանություն.

տնտեսական անվտանգության ապահովում և կոռուպցիայի դեմ պայքար.

էներգետիկ անվանգության ապահովում.

պայքար ահաբեկչության դեմ.

պայքար թմրանյութերի ապօրինի շրջանառության և մաքսանենգության դեմ.

պայքար անօրինական միգրացիայի և թրաֆիքինգի դեմ.

պայքար կիրերհանցավորության դեմ.

պայքար ապօրինի զենքի շրջանառության դեմ<sup>24</sup>:

ԱԱՆ կանոնադրության համաձայն՝ նշված գործառույթների իրականացման նպատակով ԱԱՆ-ի վրա դրված էին հետևյալ պարտականությունները կամ խնդիրները.

1. Աղբրեջանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ պետական քաղաքականության իրականացման համար բարենպաստ պայմանների ստեղծման նպատակով միջոցների ձեռնարկումը,

2. ազգային անվտանգության ապահովման նպատակով հետախուզական, հակահետախուզական և օպերատիվ-հետախուզական գործունեության կազմակերպումը և իրականացու-

<sup>24</sup> История органов безопасности Азербайджана, Материалы по истории органов безопасности Азербайджана, Академии и музею МНС АР, 22 УУУ ԳՈՒՂ, Եր., 2008, էջ 20:

մը, իր լիազորությունների շրջանակներում քրեական գործերի նախաքննության վարումը,

3. օտարերկրյա հատուկ ծառայության մարմինների, կազմակերպությունների և առանձին անձանց կողմից Ադրբեջանի Հանրապետության ազգային շահերի դեմ ուղղված մտադրությունների, ծրագրերի և նպատակների վերաբերյալ տեղեկությունների ձեռքբերումը, վերլուծումը, ազգային անվտանգության իրական և հնարավոր սպառնալիքների կանխատեսումը,

4. օտարերկրյա հատուկ ծառայության մարմինների, կազմակերպությունների, հանցավոր խմբավորումների և առանձին անձանց կողմից Ադրբեջանի Հանրապետության անկախության, տարածքային ամբողջականության, սահմանադրական կարգի հիմքերի, անվտանգության, տնտեսության, գիտատեխնիկական, պաշտպանական ներուժի և այլ ազգային շահերի վնասմանն ուղղված հետախուզական, դիվերսիոն-ահաբեկչական, այլ քայքայիչ և հանցավոր գործունեության բացահայտման, կանխման և խափանման նպատակով միջոցների ձեռնարկումը,

5. միջազգային ահաբեկչական և անդրազգային կազմակերպված հանցավոր այլ խմբավորումների դեմ պայքարի իրականացումը,

6. Ադրբեջանի Հանրապետության պաշտպանության նախարարության և նրա բաղկացուցիչ կառույցների, Ներքին գործերի նախարարության ներքին գործերի և նրա բաղկացուցիչ կառույցների ու օրենսդրության համապատասխան ստեղծված այլ ռազմական կառույցների հակահետախուզական սպառնալիքները,

7. Ադրբեջանի Հանրապետության օտարերկրյա դիվանագիտական և այլ ներկայացուցչությունների աշխատակիցների ու նրանց ընտանիքի անդամների՝ արտասահմանյան երկրներում գտնվելու ընթացքում, պետական գաղտնիք կազմող տեղեկությունների հետ առնչվող աշխատակիցների, արտասահմանյան երկրներ գործուղված Ադրբեջանի Հանրապետության քաղաքացիների անվտանգության սպառնալիքները և նպատակով անհրաժեշտ քայլերի ու միջոցների ձեռնարկումը,

8. Ադրբեջանի Հանրապետության պետական մարմիններ-

րում, Զինված ուժերում և այլ ռազմական կառույցներում, բաժիններում, ձեռնարկություններում ու կազմակերպություններում, Ադրբեջանի Հանրապետության օտարերկրյա պետությունների դիվանագիտական և այլ ներկայացուցչություններում պետական գաղտնիքի պահպանման, գաղտնի օժիմի, հատուկ կապի միջոցների և կոդավորման անվտանգության ապահովմանը մասնակցությունը.

9. օտարերկրյա հատուկ ծառայության մարմինների տեխնիկական հետախուզության դեմ հակամիջոցառումների կիրառումը և տեխնիկական հետախուզության իրականացումը.

10. Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայության հետ համատեղ Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանի պահպանության միջոցառումների իրականացումը.

11. Ադրբեջանի Հանրապետության ներքին գործերի նախարարության հետ համատեղ Ադրբեջանի Հանրապետության տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների դիվանագիտական և այլ ներկայացուցչությունների անվանգության ապահովման միջոցառումների իրականացումը և այլն<sup>240</sup>:

Սկզբնական շրջանում ԱԱՆ-ն, գործունեության հիմնական ուղղություններով ու խնդիրներով, հիմնականում նմանեցված էր ՊԱԿ-ին: Հետագայում գործունեության ուղղություններն ու խնդիրներն աստիճանաբար փոխվեցին և փորձ կատարվեց քնդօրինակել Թուրքիայի, ՆԱՏՕ-ի որոշ երկրների փորձը:

Ադրբեջանի մյուս կարևորագույն հատուկ ծառայությունը Պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի հետախուզության գլխավոր վարչությունը (ՀԳՎ), զբաղվում է ռազմական հետախուզությամբ: Այն, ինչպես բոլոր երկրների նմանատիպ կառույցները, փակ կառույց է, և դրա կառուցվածքի, խնդիրների ու գործունեության վերաբերյալ տեղեկատվությունը հիմնականում գաղտնի է: ՀԳՎ-ն Հայաստանի և Արցախի դեմ ծավալում է տարատեսակ հետախուզական-քայքայիչ գործու-

<sup>240</sup> Azərbaycan Respublikası Milli Təhlükəsizlik Naxçırlıyının Əsasnaməsi, bax: Azərbaycan təhlükəsizlik orqanlarının tarixi, [http://www.azerbaijan.az/StatePower/MinistersCabinet/ministersCabinet\\_11\\_a.html](http://www.azerbaijan.az/StatePower/MinistersCabinet/ministersCabinet_11_a.html) (bələdiyyələrə aiddir və 15.07.2015 j.):

նեություն հավաքելով ռազմական բնույթի տեղեկություններ, պատրաստելով դիվերսիոն-հետախուզական խմբեր, իրականացնելով դիվերսիոն-հետախուզական գործողություններ: Վարչությունը սերտորեն համագործակցում է Թուրքիայի համանման ծառայության շեռտախուզության գլխավոր վարչության հետ: Համագործակցությունը սկսվել է դարաբաղա-աղբրեջանական պատերազմի տարիներին և ամրապնդվել հետագայում: Թուրքական հատուկ նշանկության ստորաբաժանումների հրահանգիչները մասնակցել են և շարունակում են մասնակցել աղբրեջանական հատուկ նշանկության ստորաբաժանումների ու դիվերսիոն-հետախուզական խմբերի պատրաստմանը՝ այդ նպատակով ստեղծելով տարատեսակ ճամբարներ<sup>240</sup>: ԽՍՀՄ փլուզումից հետո, 2-3 տարվա ընթացքում, Աղբրեջանի տարածքում թուրքական հետախուզության ակտիվ մասնակցությամբ ստեղծվեցին ընդհանուր առմամբ 32 ռազմական հատուկ ուսումնական կենտրոններ<sup>241</sup>, ռազմական ճամբարներ և քաղաքներ: «Գորշ գայլեր» կազմակերպության հիման վրա խոշոր ուսումնական կենտրոն է գործել նաև Աղբրեջանի Այշերտնի շրջանի Պոզդեկ ավանի շրջակայքում: Այստեղ պատրաստվել են ավելի քան 2 հազար զինյալներ, որոնք մասնակցել են դարաբաղյան, չեչենական, աբխազական ռազմական հակամարտություններին: Այդ ճամբար հաճախակի այցելում էր չեչեն գրոհայինների պարագլուխներից Շամիլ Բասաևը<sup>242</sup>: Այդ ռազմական ճամբարներում է մարզվել և 1992 թվականից հետախուզական խումբ ղեկավարել Դիլիամ Ասկերովը<sup>243</sup>, որը 2014 թ. հուլիսին դիվերսիոն-հետախուզական գործողություն իրականացնելու

<sup>240</sup> Ավալյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Աղբրեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», 3 (49), Եր., 2006, էջ 53:

<sup>241</sup> Аташад 3, Азербайджан. Косметический парубок, <http://southcaucasus.com/old/index.php?page=publications&id=2500> (նրանիս արված է 21.03.2015 թ.):

<sup>242</sup> Мухрабан Н., Руби Туркестан и ее стратегическое значение в формировании кланово-политических структур в Азербайджане, [http://www.bvahan.com/Armenianway/aw/figur\\_muhammadan/turk\\_szer/2.html](http://www.bvahan.com/Armenianway/aw/figur_muhammadan/turk_szer/2.html) (նրանիս արված է 25.04.2015 թ.):

<sup>243</sup> İsmayilov Ziyəddin Şura oğlu, Kəlbəcərdə tələmə, atə, <http://www.misa.az/other/4131-klbcr-tk-getm-ata-bajq-gg-.html> (նրանիս արված է 13.04. 2015 թ.):

նպատակով ներթափանցել է Արցախի տարածք և ձերբակալվել Արցախի իրավապահ մարմինների կողմից<sup>267</sup>:

1990-ական թթ. սկզբին, դեռևս չունենալով ռազմական համագործակցության վերաբերյալ որևէ պայմանագիր, Թուրքիան ռազմական զգալի աջակցություն ցուցաբերեց Ադրբեջանին՝ տրամադրելով մի քանի հազար ինքնաձիգ, մեծ քանակությամբ զինամթերք, նռնակներ և այլն: Պատերազմի տարիներին Թուրքիան նաև 30 մլն ԱՄՆ դոլարի չափով վարկ է հատկացրել Ադրբեջանին՝ թուրքական տիպի զինամթերք ձեռք բերելու համար<sup>268</sup>:

Այնուհետև Թուրքիայի և Ադրբեջանի միջև կնքվեցին մի շարք պայմանագրեր (միայն 1992-2001 թթ. ընկած ժամանակահատվածում երկու երկրների միջև ստորագրվել է 16 փաստաթուղթ՝ տարբեր ասպեկտներով երկկողմանի զինվորական համագործակցության մասին), որոնցով էլ կարգավորվում է երկու երկրների միջև ինչպես ռազմական, այնպես էլ հետախուզական բնագավառի համագործակցությունը: Հատկանշական է հատկապես 1996 թ. հունիսի 10-ին Անկարայում կնքված «Զինվորական կրթության, տեխնիկական և գիտական համագործակցության մասին» պայմանագիրը և, ի լրումն այդ պայմանագրի, նույն թվականին կնքված երկու առանձին արձանագրությունները, (որոնց հիման վրա Թուրքիան ստանձնեց Ադրբեջանի սպայական կազմի և զինծառայողների վերապատրաստումը տարբեր ուղղություններով), 1999 թ. հուլիսի 24-ին Բաքվում կնքված համաձայնագիրը, (որով Թուրքիայի կառավարությունն ու գլխավոր շտաբը Ադրբեջանի զինված ուժերին անհատույց տրամադրեցին 3 մլն ԱՄՆ դոլար օգնություն<sup>269</sup>), 2003 թ. մարտի 3-ին Անկարայում կնքված «Ադրբեջանի պաշտպանության նախարարության և Թուրքիայի գլխավոր շտաբի միջև ռազմական հե-

<sup>267</sup> Սաֆարյան Ա., <sup>3</sup>երկին ջարվաճառյան դիվերսանտների մասին. հետաքննական շարք, <http://betq.am/arm/news/57683/krkin-qarvacharyan-diversantneri-masin-betaqnakan-sharq.html/> (նորմալ արված է 10.01. 2016 թ.):

<sup>268</sup> Հովսեփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիականացումն ու ռազմաարդյունաբերությունը, Եր., 2010, էջ 144-145:

<sup>269</sup> Овсепян Л., Иванюк В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Ер., 2010, с. 47.

տախտուգության բնագավառում փոխադարձ համագործակցության մասին» պայմանագիրը և այլ պայմանագրեր ու համաձայնագրեր<sup>250</sup>, որոնցով Ադրբեջանի ու Թուրքիայի հատուկ ծառայություններն իրականացնում են նաև հետախուզական տեղեկատվության փոխանակում<sup>251</sup>: Թուրքիայի հետախուզական ծառայությունը՝ Ազգային հետախուզական ծառայությունը (MIT), անգամ ներկայացուցիչ ունի Ադրբեջանում (1998 թ. ներկայացուցիչը էրթուղդուլ Գյուվենն էր<sup>252</sup>): Թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների որակական նոր փուլի սկիզբ կարելի է համարել 2010 թվականը, երբ Թուրքիայի նախագահ Ա. Գյուլը և Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևը Բաքվում 2010 թ. օգոստոսի 16-ին ստորագրեցին «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը»<sup>253</sup>:

Թուրքական և ադրբեջանական հետախուզական և հատուկ նշանակության տարատեսակ ստորաբաժանումների ղեկավարներ ու տարբեր պաշտոնատար անձինք նաև հաճախակի փոխայցելություններ են կատարում Թուրքիա և Ադրբեջան, որոնց ընթացքում իրականացնում են փորձի փոխանակում, մասնագիտական վերապատրաստումներ, համատեղ գործավարժություններ և այլն: Հատկանշական է Թուրքիայի ՋՈւ հատուկ նշանակության զորքերի հրամանատար, գեներալ-մայոր

<sup>250</sup> Լույս տեղում, էջ 63-64:

<sup>251</sup> Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ., Լոռավանք, 21-րդ Դար, թիվ 6 (46), Եր., 2012, էջ 39:

<sup>252</sup> Ergin Sodar, Azerbaycan darbesi için soruşturma açtım, 03.03.1998, <http://www.hurriyet.com.tr/azerbaycan-darbesi-icin-sorusturma-actirdim-39008622> (նորումն արված է 09.12.2015 թ.):

<sup>253</sup> Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşmasının, Başbakanlık, Kanunlar ve Kararlar 8/12/2010, Genel Müdürlüğün, Sayı: B.02.0.KKG.0.10/101-246/5147. St'u նաև՝ Էվոյան Լ., «Ադրբեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը»՝ թուրք-ադրբեջանական երկկողմ հարաբերությունների որակագույն նոր փուլի սկիզբ, Հայկական բաժակ, Եր., 2012, թիվ 3 (73), էջ 79-88:

Ջեյրահ Աքսաբայլիի՝ 2014 թ. նոյեմբերի 6-ի այցը Ադրբեջան, երբ վերջինս նոյեմբերի 9-ին մեկնել էր առաջնագիծ, գրուցել Ադրբեջանի ՋՈւ գլխածառայողների հետ, դիպուկահար հրացանի նշանատման օպտիկական համակարգով դիտել հայկական զինված ուժերի մարտական դիրքերը, մասնակցել զորավարժությանը<sup>254</sup>։ Հետաքրքրություն առաջացրած այցն առավել մեծ ուշադրություն գրավեց առաջնագծում թուրք զենեքայի՝ ադրբեջանցի զինվորներին ուղղված «ոգևորող» խոսքով. «Ձեզանով հպարտանում են: ...Թուրքիան մշտապես Ադրբեջանի կողքին է: Ադրբեջանի և Թուրքիայի զինվորներն անպարտելի են: Պատերազմներում մենք սա բազմիցս ցուցադրել ենք»<sup>255</sup>։

Ադրբեջանի կա տարածված կարծիք, որ թուրքական բանակը լրջորեն վերահսկում է Ադրբեջանի բանակը: Ադրբեջանական բանակում թուրք հրահանգիչների, հրամանատարների և հատուկ պատրաստվածություն անցած զինվորականների առկայության մասին տեղեկությունները հետզհետե ավելի բացահայտ են դառնում: Թուրքական բանակի շուրջ 50 հրահանգիչներ՝ բրիգադի զենեքայ և Նոգուտ Թաշդեղերի հրամանատարությամբ գտնվում են Ադրբեջանում: Նրանցից երկուսը Ադրբեջանի պաշտպանության նախարարի խորհրդականների կարգավիճակում են, մեկը նույն գործառույթն է իրականացնում Ադրբեջանի զինված ուժերի գլխավոր շտաբում: Երկուական թուրք հրահանգիչներ աշխատում են Ադրբեջանի բոլոր զորատեսակների հրամանատարական կազմի հետ: Եվս 5 հրահանգիչներ ծառայում են ադրբեջանական հատուկ նշանակության զորքերում<sup>256</sup>։ Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ Ադրբեջա-

<sup>254</sup> Zekai Aksakalli: Azərbaycan və Türkiyə əsgəri yenilməzdir, <https://www.youtube.com/watch?v=35Bc9gPQ-jk> (ԹՀ հատուկ նշանակության ուժերի հրամանատարի և Ադրբեջանի պաշտպանության նախարար Ջ. Հասանովի արցախ-ադրբեջանական շփման գիծ այցելությունը և զորավարժությանը մասնակցությունը լուսաբանող տեսանյութը) (հղումն արված է 05.12.2015 թ.):

<sup>255</sup> Պետրոսյան Գ., Թուրք բարձրաստիճան զենեքայի՝ «հատուկ նշանակության» կուրսին առաջնագծում, 14.11.2014 թ., [http://allturkey.am/10\\_840/թուրք-բարձրաստիճան-զենեքայի-նախույժ-նախույժ-նախույժ](http://allturkey.am/10_840/թուրք-բարձրաստիճան-զենեքայի-նախույժ-նախույժ-նախույժ)

<sup>256</sup> Ադրբեջանի բանակը վերահսկվում է Թուրքիայի կողմից, 9 մարտի 2015, <http://www.panarmenian.net/arm/news/189084/> (հղումն արված է 10.02.2016 թ.):



ել գտնվում է Թուրքիայի փաստացի վերահսկողության ներքո: 2015 թ. սկզբից ինչպես դարաբաղա-աղբբեջանական շփման գծում, այնպես էլ ՀՀ հետ սահմանին կտրուկ ավելացել էր հակառակորդի դիվերսիոն ներթափանցման փորձերի թիվը: Դրանցից մեկի ժամանակ ոչնչացված աղբբեջանական հատուկ նշանակության ստորաբաժանման զինծառայողների թվում եղել է նաև թուրք հատուկզոնկատային<sup>207</sup>: Կան տեղեկություններ նաև, որ անցած տարիների ռազմական համագործակցության արդյունքում թուրքական կողմն իր վերահսկողությունը տարածել է ոչ միայն Աղբբեջանի ՋՈւ-ի, այլ նաև այդ երկրի ուժային մյուս կառույցների վրա: Մասնավորապես, թուրքական Ժանդարմերիայի ուժերի հրամանատարության ներկայացուցիչները ղեկավար պաշտոններ են զբաղեցնում Աղբբեջանի ՆԳՆ ներքին գործերի համակարգում: Ռազմական ոլորտում Աղբբեջանին ցուցաբերվող տարատեսակ օժանդակության շրջանակներում թուրքական կողմը հատկապես կարևորում է աղբբեջանական հատուկ նշանակության ուժերի պատրաստությունը և այդ ստորաբաժանումների կողմից հայ-աղբբեջանական ուժերի շփման գծում դիվերսիոն սաղբբանքների միջոցով ձգտում է մշտական լարվածության մեջ պահել տարածաշրջանի քաղաքական իրավիճակը: Աղբբեջանական հատուկ նշանակության ստորաբաժանումների զինծառայողների պատրաստության գնահատման նպատակով թուրք հրաեանեզիչների խմբեր են այցելում շփման գծի մերձակայքում տեղակայված աղբբեջանական գորամասեր: Հստակեշակն է, որ արբեջանական կողմը թուրքական կողմի ստուգումներին պատրաստվում է՝ դրանք դիտարկելով որպես վերադաս հրամանատարության ստուգումներ<sup>208</sup>: Ռազմական վերձագնտների գնահատմամբ՝ Թուրքիայի ՋՈւ հրամանատարության լիակատար վերահսկողության տակ են պահվում Աղբբեջանի անգամ էլիտար համարվող հատուկ նշանակության

<sup>207</sup> Լեսյա տեղում:

<sup>208</sup> Թուրքիան ստանձնել է Աղբբեջանի գլեումի ամբողջական ղեկավարումը, <http://times.am/?p=153141&l=am> (ղղումն արված է 05.02.2016 թ.):

ստորաբաժանումները, և ցանկացած գործողություն մշակվում է թուրք հրահանգիչների անմիջական ղեկավարությամբ<sup>299</sup>:

Հաջորդ հատուկ ծառայության Ադրբեջանի հատուկ պետական պահպանության ծառայության գլխավոր գործատույթներից է Ադրբեջանի նախագահի, Միլլի մեջլիսի, նախագահի աշխատակազմի, կառավարության, արտաքին գործերի նախարարության, սահմանադրական դատարանի, կենտրոնական ընտրական հանձնաժողովի և այլ պետական կառույցների ու դրանց ղեկավարների, հատուկ պահպանվող օբյեկտների, ինչպես նաև դիվանագիտական ներկայացուցչությունների պահպանությունը: ՀՊՊՄ-ն իրականացնում է նաև Ադրբեջանի տարածքում գտնվող օտարերկրյա պետությունների ղեկավարների պահպանությունը<sup>300</sup>:

Մկսած 2003 թվականից՝ ՀՊՊՄ պահպանությանը հանձնվեցին նաև Ադրբեջանի գազի և նավթի բոլոր արտահանվող խողովակները՝ «Բաքու-Մուպսա» նավթամուղը, Հ Ալինի անվան «Բաքու-Թրիլիսի-Ջեյհանը», «Բաքու-Թրիլիսի-Էրզրում» գազամուղը:

Ադրբեջանի Հանրապետության պետական սահմանապահ ծառայությունը պետական ոսգմական կառույց է, որի հիմնական խնդիրն է Ադրբեջանի պետական սահմանի պահպանությունն ու պաշտպանությունը: Բացի դրանից, ՊՄՍ խնդիրներն են նաև.

- մասնակցությունն ապօրինի միգրացիայի և մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարին,
- մասնակցությունը թմրանյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարին,
- Կասպից ծովի ադրբեջանական հատվածում նավթի և գազի խողովակաշարերի պահպանությունը,
- մասնակցությունը միջազգային ահաբեկչության դեմ պայքարին,

<sup>299</sup> Լեյլն տեղում:

<sup>300</sup> Xüsusi Dövlət Mühafizə Xidməti, <http://www.dmx.gov.az/> (նդումն արված է 10.08.2015 թ.):

- մասնակցությունը զանգվածային ոչնչացման գեների և դրա բաղադրիչների տարածման դեմ պայքարին<sup>261</sup>:

Հատուկ ծառայության գործառույթներ ունեցող մեկ այլ մարմնի՝ Ադրբեջանի կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության էլեկտրոնային անվտանգության կենտրոնի (ԷԱԿ-ի) գործունեության ուղղությունները ներքոնշյալներն են.

- կիրերանվտանգության ոլորտում տեղեկատվական ենթակառուցվածքների սուբյեկտների գործունեության համակարգումը,

- տեղեկատվական համակարգերի ու ցանցերի, համակարգչային սարքավորումների ծրագրային ապահովումը, տեղական և կորպորատիվ տեղեկատվական համակարգերի ու ռեսուրսների անվտանգության դեմ ուղղված կիրերհարձակումների, անօրինական ներթափանցումների, վնասակար ծրագրերի (էլեկտրոնային սպամեալիքների) կանխումը, և օգտագործողներից, ծրագրային ապահովումներ և սարքավորումներ ստեղծողներից, արտասահմանյան երկրների վերլուծական կառույցներից և այլ աղբյուրներից տեղեկությունների հավաքումը և վերլուծումը,

- էլեկտրոնային ատկա և հնարավոր վտանգների ու կիրերանվտանգության գծով վերապատրաստման իրականացումը,

- էլեկտրոնային սպամեալիքները, այդ թվում՝ օգտագործողների դեմ կիրառվող խափանարար ծրագրերը կանխելու նպատակով ուղեցույցներ պատրաստելը, առաջարկություններ ներկայացնելը, մեթոդական ցուցումներով ապահովելը,

- համընդհանուր ինտերնետային թրաֆիքինգում գլոբալ կեբերհարձակումները կանխելու նպատակով ազգային ինտերնետ օպերատորի հետ միասին կանխարգելիչ միջոցառումների իրականացումը,

- կիրերանվտանգության պատրաստություն ապահովելու նպատակով երկրում գործունեություն ծավալող այլ իրավա-

<sup>261</sup> Azerbaydjan. Office of Information, Государственной пограничной службы [http://polis.osce.org/countries/details.php?item\\_id=6&lang=ru#\\_content\\_container\\_top](http://polis.osce.org/countries/details.php?item_id=6&lang=ru#_content_container_top) (նորմա սրված է 11.09.2015 թ.).

սու մարմինների հետ փոխադարձ համագործակցության իրականացումը<sup>262</sup>:

Կենտրոնը հատուկ ծառայություններին բնորոշ գործունեություն իրականացնում է Կանոնադրության 2.1.2 կետով նախատեսված (արտասահմանյան երկրների վերլուծական կառույցներից և այլ աղբյուրներից տեղեկությունների հավաքումը և վերլուծումը) կարգով:

Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության տեսանկյունից կարևորություն և վտանգ է ներկայացնում Ադրբեջանի հատուկ ծառայությունների հատկապես հետախուզական և հակահետախուզական գործունեությունը, քանի որ, սկսած 1918-1920 և 1991 թ. մինչ օրս ադրբեջանական հետախուզությունն ու հակահետախուզությունը մեծապես նպաստել են Ադրբեջանում ու Արցախում իրականացված հայ էթնիկ զտումների ու հայկական կոտորածների իրագործմանը. կոտորածներ ու էթնիկ զտումներ, որոնց զոհ գնացին տասնյակ հազարավոր, բռնի տեղահանվեցին 100 հազարավոր հայորդիներ, ինչն իրավամբ կարելի է համարել որպես Հայոց ցեղասպանության շարունակություն<sup>263</sup>:

Հետախուզական գործունեությունը, ըստ «Հետախուզական և հակահետախուզական գործունեության» մասին Ադրբեջանի Հանրապետության օրենքի, Ադրբեջանի ազգային անվտանգության ապահովման նպատակով իրականացվող հատուկ գործունեություն է, որն իրականացվում է համապատասխան պետական մարմինների կողմից երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական, գիտատեխնիկական, ռազմական և այլ ոլորտներում ազգային շահերի պաշտպանության հետ կապված տեղեկատվության ձեռքբերմամբ և վերլուծմամբ<sup>264</sup>:

<sup>262</sup> Azərbaycan Respublikasının Rəhbərlik və İnformasiya Texnologiyaları Nazirliyi yanında Elektron Təhlükəsizlik Mərkəzi haqqında Əvvəmsənəsi, <http://www.cert.az/esaname.html> (hղումն արված է 28.10.2015 թ.):

<sup>263</sup> Դավիթբախտի Ս., Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը 1988-1994 թթ., Բուրբիր Երևանի համալսարանի, 1 (16), Եր., 2015, էջ 16:

<sup>264</sup> Հաջիյյաթ Ե. և Քեշիֆիյյաթ Բ. հոդվածը հարազատության հարցում, [http://www.genprosecutor.gov.az/files/uploader/Keshifiyat\\_ve\\_eka\\_keshifiyat\\_haqqinda.doc](http://www.genprosecutor.gov.az/files/uploader/Keshifiyat_ve_eka_keshifiyat_haqqinda.doc), հոդված 1, կետ 1.1:

Հակահետախուզական գործունեությունը, ըստ նույն օրենքի, Ադրբեջանի համապատասխան պետական մարմինների կողմից օտարերկրյա հատուկ ծառայության մարմինների, կազմակերպությունների և առանձին անձանց կողմից Ադրբեջանի անկախությանը, ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը, սահմանադրական կարգի պահպանմանը, պաշտպանությանը, տնտեսությանը, գիտատեխնիկական ներուժին և ազգային այլ շահերին հնարավոր վնաս հասցվող հետախուզական, ահաբեկչական, դիվերսիոն գործողությունների հայտնաբերման, կանխման և կասեցման նպատակով իրականացվող հատուկ գործունեություն է: Հակահետախուզական գործունեությունը Ադրբեջանի Հանրապետության ազգային շահերի իրականացման խոչընդոտների կամ վտանգների դեմ ստեղծում է պայմաններ, մշակում պաշտպանական միջոցներ<sup>200</sup>:

Ադրբեջանի ԱԱՆ (այժմ արդեն՝ ՊԱՄ) հակահետախուզական գործունեությունը ծառայում է Ադրբեջանի քաղաքական ղեկավարության շահերին, քանի որ, հետեւելով այդ կառույցի կողմից պետական դավաճանության ու լրտեսության մեղադրանքով ձերբակալված ու դատապարտված անձանց քրեական գործերին, քաղաքական հետապնդումներին, էթնիկ և կրոնադավանական փոքրամասնություններին նկատմամբ իրականացվող հալածանքներին, կարող ենք փաստել, որ հակահետախուզությունը Ադրբեջանի ղեկավարության կողմից օգտագործվում է քաղաքական հակառակորդներին, ընդդիմադիր հայացքներ ունեցող հասարակական-քաղաքական գործիչներին, լրագրողներին կամ պարզապես անձնական հակակրանքի արժանացած անձանց «ոչնչացնելու», էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների ներկայացուցիչներին հալածանքների ենթարկելու նպատակով: Եվ դա իրականացվում է բավական պարզունակ ձևով. «անցանկալի անձ» ճանաչվածը կամ մեղադրվում է պետական դավաճանության և օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցելու, կամ «նրա երակներով հայի արյուն հոսելու», կամ էլ անջատողական-ծայրահեղական կազ-

<sup>200</sup> Նույն օրենքը, հոդված 1, կետ 1.2, 1.3, 1.4:

մակերաբարություններին հարելու, թմրամիջոցներ պահելու, օգտագործելու շինծու մեղադրանքներով:

### 3.3. Աղյրեջանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարությունում տիրող կոռուպցիոն բարքերի և նախարարության վերակազմավորման շուրջ (2015թ.)

2015 թ. հոկտեմբերի 17-ից Աղյրեջանի և այլ երկրների բազմաթիվ լրատվամիջոցներով լուրեր տարածվեցին Իշիամ Ալիևի և Ազգային անվտանգության նախարար Էլյար Մահմուդովի հարաբերությունների անսպասելի կտրուկ սրման, վերջինիս պաշտոնանկության և նույնիսկ հնարավոր ձերբակալության մասին:

Ըստ շրջանառվող տեղեկությունների՝ Աղյրեջանի Հանրապետության ազգային անվտանգության խորհրդի՝ 2015 թ. հոկտեմբերի 17-ին հրավիրված նիստից առաջ Ի. Ալիևն առանձնազրույցի է կանչել ազգային անվտանգության նախարար Է. Մահմուդովին, որի ընթացքում վերջինիս ներկայացրել է նրա՝ «Ազգային անվտանգության նախարարի պաշտոնի հետ անհամատեղելի գործունեության» մասին վկայող փաստեր<sup>266</sup>: Նույն օրը Ալիևի հրամանագրով Մահմուդովը պաշտոնազնայն արժեք, որից անմիջապես հետո Ազգային անվտանգության նախարարությունում Աղյրեջանի հատուկ պետական պահպանության ծառայության և գլխավոր դատախազության կողմից անցկացված համատեղ միջոցառումների արդյունքում ձերբակալվեցին ԱԱՆ մոնիթորինգային կենտրոնի (գրադվում է հեռախոսային և այլ կապուղիների գաղտնալսման աշխատանքներով) պետ գեներալ-մայոր Թեյմուր Գուլյիևը և Օպերատիվ-տեխնիկական գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Նաթանյան Մուրվաթովան, ինչպես նաև ԱԱՆ հակահարեկչական կենտրոնի պե-

<sup>266</sup> Բաբունյան Ա., «Արցին զայրացումներն Աղյրեջանում», <http://www.noravank.am/sem/arc-cles/detail.php?ELEMENT/ID=14029> (նյութն արված է 20.11.2015 թ.):

տի տեղակալ գեղապետ Իլդար Ալինը: Մոնիթորինգային կենտրոնը կերպեց, որից հետո սկսվեց հետաքննություն<sup>267</sup>:

Է. Մահմուդովի պաշտոնանկությունից անմիջապես հետո Ազգային անվտանգության նախարարի առաջին տեղակալ և միաժամանակ նախարարի ժամանակավոր պաշտոնակատար նշանակվեց արդարադատության փոխնախարար, քրեակատարողական ծառայության պետ Մադաթ Գուլինը, որին շնորհվեց ԱԱ գեներալ-լեյտենանտի կոչում:

Նոր պաշտոնում վերջինիս առաջին ձեռնարկումը ԱԱ այն նախկին աշխատակիցների «վերադարձի» ապահովումն էր, ովքեր ունեին «արհեստավարժի» համբավ և պաշտոնանկ էին արվել Է. Մահմուդովի օրոք<sup>268</sup>:

Մահմուդովի պաշտոնանկությանը հետևեց ԱԱ ղեկավարության գործունեությունը քննող խմբի ստեղծումը՝ Ադրբեջանի գլխավոր դատախազի տեղակալի ղեկավարությամբ: Քննության շրջանակներում իրականացվեցին ձեռքարկություններ ինչպես ԱԱ-ում, այնպես էլ այլ գերատեսչություններում:

Հարուցված քրեական գործի շրջանակներում 2015 թ. հոկտեմբերի 21-ին ձերբակալվեցին ԱԱ 5 աշխատակիցներ, որոնց մեղադրանք առաջադրվեց պաշտոնական դիրքի չարաշահման, «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» օրենքի խախտման և ձեռնարկատիրական գործունեություն ծավալող սուբյեկտների գործունեությանն անօրինական խոչընդոտելու մեջ<sup>269</sup>: Ձերբակալվածների թվում էին ԱԱ նախարարի տեղակալ գեներալ-լեյտենանտ Հիլալ Ասադովը, էներգետիկայի և տրանսպորտի անվտանգության գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Աքիֆ Չովդարովը, քննչական գլխավոր վարչության պետի տեղակալ գեղապետ Մահիբ Ալեքսիերովը, անդրազգային

<sup>267</sup> Задержаны сотрудники МНБ Азербайджана, <http://haqqin.az/news/55237> (հղումն արված է 20.11.2015 թ.):

<sup>268</sup> Мадат Гулиев: на работу в МНБ снова приглашаются бывшие грамотные и опытные сотрудники министерства, <http://report.az/ru/vnutrennyaya-politika/madat-guliev-na-rabotu-v-mnb-vnov-priglasayutsya-byvshie-gramotnye-i-opytnye-sotrudniki-ministerstva> (հղումն արված է 11.12.2015 թ.):

<sup>269</sup> Арестовано семь должностных лиц МНБ Азербайджана: Генпрокуратура, <http://www.trend.az/azerbaijan/society/2446123.html> (հղումն արված է 20.10.2015 թ.):

կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության բաժնի պետ գեղապետ Ֆիզուլի Ալիևը, մոնիթորինգային կենտրոնի աշխատակից Ֆարիսդ Աբանը<sup>269</sup>:

Հետագա օրերին զբաղեցրած պաշտոններից ազատվեցին ԱԱՆ անդրազգային տնտեսական հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Սուբահիր Ղուբբանովը, հետաքննության գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Փարվիզ Մաֆարովը, գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Թարվերդի Մամեդովը, զորամասի հրամանատար գեներալ-մայոր Վուզար Ալլահգուլիևը, քննչական գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Մովսես Շիխալիևը, օգակալանների վարչության պետ գեղապետ Փարվիզ Վելիևը, կադրերի գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Ալիմուսա Ալիևը, նրա տեղակալ գեղապետ Թեհրան Բարթաթովը, կադրերի ԳՎ դեկավար կազմից Այսել Ալիզադեն (նույն գլխավոր վարչության պետ Ալիմուսա Ալիևի մոտ ազգականը), ԱԱՆ հակահարձակչական կենտրոնի պետի տեղակալ գեղապետ Նաիլ Թագիզադեն, ԱԱՆ աշխատակից էլշահ Մահմուդովը, Խաթայի, Փիրալլահի, Մասալլիի, Ասթարիևի շրջանային ստորաբաժանումների ղեկավարները<sup>271</sup>:

Պաշտոնակ արվեց նաև ԱԱՆ հակահետախուզության գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Ադալաթ Ասադուլ-

<sup>269</sup> Новая информация о «деле МНБ», <http://minval.az/news/123503910> (նդումն արված է 21.10.2015 թ.):

<sup>271</sup> Еще три сотрудника МНБ Азербайджана освобождены от выполнения должности, <http://www.trend.az/azerbaijan/society/2447917.html> (նդումն արված է 24.10.2015 թ.): Եզված անձանցից ԱԱՆ ամենակրիտասարդ գեներալ Վուզար Ալլահգուլիևը, ըստ հրապարակումների, հեռացվել է ծառայողական անհամապատասխանության հիմքով: Նա եղել է նախարար Է. Մահմուդովի ազգակակր: Նրա հարը մեծահարուստ Ջուլֆուղար Ալլահգուլիևն է, <http://minval.az/news/123510517> (նդումն արված է 24.10.2015 թ.):



լանը<sup>272</sup>, իսկ բաժնի պետ գեղապետ Միրազիզ Ասքերովը կալանավորվեց<sup>273</sup>:

Մի քանի օր անց Մ. Գուլիևի հրամանով պաշտոնից ազատվեց ԱԱՆ ռազմական հակահետախուզություն գլխավոր վարչության պետ գեներալ-մայոր Լիզամի Շիրիևովը, ով երկար տարիներ ծառայում էր ԱԱՆ-ում (մինչև ԱԱՆ տեղափոխվելը Ն. Շիրիևովը եղել է Ադրբեջանի նախագահի աշխատակազմին կից նախկին հատուկ վարչության աշխատակից)<sup>274</sup>:

Միաժամանակ նախարարի պաշտոնակատար Մ. Գուլիևն ազատված պաշտոններում կատարում էր նշանակումներ: Այսպես, ԱԱՆ հակահետախուզության գլխավոր վարչության պետ նշակակվեց գեղապետ Իսմայիլ Բադիրովը, ռազմական հակահետախուզություն գլխավոր վարչության պետ՝ գեներալ-մայոր Հաֆիզ Մուսանը, ով մինչև նշանակումը զբաղեցնում էր նույն վարչության պետի տեղակալի պաշտոնը, անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի գլխավոր վարչության պետ՝ Ջեյհուն Շադիևսկին, աշխատակազմի ղեկավարի տեղակալ՝ գեղապետ Սահիր Նազիևը<sup>275</sup>:

Պաշտոնակություններին զուգահեռ շարունակվում էին ձերբակալությունները: Հոկտեմբերի 28-ի դրությամբ արդեն խոսքը գնում էր 15 ձերբակալվածի մասին, որոնք պահվում էին Ադրբեջանի արդարադատության նախարարության թիվ մեկ մեկուսարանում<sup>276</sup>:

Հոկտեմբերի 29-ին ձերբակալվեց Ադրբեջանի կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարության միջազգային հարա-

<sup>272</sup> MTN-ն ազգազնույն գեներալն սալ 9-ա շտմ Օկե-Կաֆիյատ Բալ Իժարմին ռալս զա Վալթալնձառ առաձ էժլլձ, <http://www.aznews.az/gundam/12698-mtn-dan-uzaq-lagdin-lan-generallar-n-say-9-a-çatdı-color-red-oke-kafiyat-baq-idarəsinin-raisi-da-vaəlfəəln-dən-azad-ediłdi.html> (հղումն արված է 05.10.2015 թ.):

<sup>273</sup> Арестован экс-глава отдела Главного управления контрразведки МНБ, <http://minva.az/news/123510149> (հղումն արված է 24.10.2015 թ.):

<sup>274</sup> Военному контрразведку возглавил генерал Мусаев, <http://www.infsoz.org/new/index.php/ru/kheberlenti-rus/23175-ertfshyh> (հղումն արված է 29.10.2015 թ.):

<sup>275</sup> Мадат Гулаев возвращает профессионалов в МНБ, <http://haqqin.az/news/55834> (հղումն արված է 27.10.2015 թ.):

<sup>276</sup> По делу МНБ арестованы 15 человек, <http://haqqin.az/news/55893> (հղումն արված է 28.10.2015 թ.):

բերությունների կենտրոնի ղեկավար Ջալիլ Ջաֆարովը: Լուրեր տարածվեցին, որ եշված նախարարության մի շարք աշխատակիցներ ևս ներգրավված են «ԱԱՆ-ի գործի» մեջ<sup>277</sup>:

Լույս օրը հայտնի դարձավ, որ ԱԱՆ աշխատակիցները 2012 թվականին ունեցան «Վի-դադի Ազիզից խլել են 740 հազար ԱՄՆ դոլար: Վերջինս արտերկրում աշխատելուց հետո ադրբեջանական բանկերից մեկով գումարն ուղարկել է Բարու, այնուհետև անձամբ ժամանել, որպեսզի այդ գումարով զբաղվի գործարարությամբ: Երբ Վ. Ազիզը բանկից ստացել է գումարը, դիմակավորված 20-25 անձինք առնանցել են նրան, տարել ԱԱՆ, խոշտանցել և կողոպտել՝ վերցնելով 740 հազար ԱՄՆ դոլար գումարը: Այդ մասին Վ. Ազիզի հայրը նամակով դիմել է երկրի ղեկավարությանը՝ հայտնելով նաև, որ ԱԱՆ-ում գործում է կազմակերպված հանցավոր խմբավորում՝ կազմված բարձրաստիճան պաշտոնյաներից, որը զբաղվում է մարդկանց առնանցումով և դրամաշորթությամբ<sup>278</sup>:

Ձերբակալությունները շարունակվում էին, և նոյեմբերի 2-ին հերթական ձերբակալվողը ԱԱՆ քննչական գլխավոր վարչության բաժնի պետ գեղապետ Վյուսալ Ալեքսիերովն էր<sup>279</sup>:

Ադրբեջանական մամուլը, քաղաքագիտական ու վերլուծական շրջանակներն սկսեցին տարաբնույթ քացատրություններ ու մեկնաբանություններ տալ ԱԱ նախարար Է. Մահմուդովի անսպասելի պաշտոնանկության և նախարարության բարձրաստիճան պաշտոնյաների ձերբակալությունների վերաբերյալ: Ձգացվում էր, սակայն, որ իրադարձություններն այնքան հանկարծակի ու արագ են զարգանում, որ նրանք չեն կարողանում քիչ թե շատ հողաբաշխ հիմնավորում գտնել: Բուլոնի գարնացնում էր այն, թե որքան կտրուկ և կոպիտ վարվեց իշխող վերնախավն իր՝ թվում էր՝ ամենահավատարիմ «զինակիցներից» մե-

<sup>277</sup> По делу МНБ задержан еще один высокопоставленный чиновник, <http://haqqin.az/news/55962> (նդումն արված է 29.10.2015 թ.):

<sup>278</sup> Сотрудник МНБ отобрали 740 тысяч долларов у семьи изжида, <http://ru.oxa.az/criminal/99371> (նդումն արված է 28.10.2015 թ.):

<sup>279</sup> Арестован еще один полковник МНБ Азербайджана, <http://www.versia.am/arrestovan-eshhe-odni-polkovnik-mnb-azerbajdzhana> (նդումն արված է 02.11.2015 թ.):

կի հետ, որի հետ կապված էր բազմաթիվ տեսանելի ու անտեսանելի թելերով:

Շրջանառվող վարկածներից մեկի համաձայն՝ Է. Մահմուդովի «գաեալիժման» պատճառ է հանդիսացել այն, որ ԱԱԸ ձեռքակալված աշխատակիցները նրա հանձնարարությամբ իբր գաղտնալսել են Ադրբեջանի նախագահի, նրա ընտանիքի անդամների, ինչպես նաև իշխանության որոշ այլ բարձրաստիճան անձանց ու նրանց ընտանիքների անդամների հեռախոսային խոսակցությունները: Դա որոշ մեկնաբանների հիմք տվեց եույսխակ ենթադրելու, որ երկրում հեղաշրջման փորձ է նախապատրաստվել<sup>280</sup>:

Ադրբեջանական ԶԼՄ-ները Է. Մահմուդովի պաշտոնանկության հետքավոր պատճառ համարեցին նաև Ադրբեջանի միջազգային բանկի նախկին ղեկավար Ջահանգիր Հաջինի հետ նրա կոռուպցիոն կապերը, սեփական ապօրինի քիզնեսները և այլն: Բոլոր դեպքերում, ինչպես եզրակացնում էին որոշ ԶԼՄ-ներ, ԱԱԸ երկարամյա ղեկավարին «ոչնչացնելը» ցույց էր տալիս, որ իշխանության ներսում «խաղաղականներն ուժգնանում էին և ներիշխանական խմբավորումների միջև պայքարը հասել էր գագաթնակետին»<sup>281</sup>:

Ադրբեջանական և այլ երկրների լրատվամիջոցները հեղեղվեցին նախարար Է. Մահմուդովի պաշտոնանկության հետ կապված այդ վարկածներով ու «բացահայտումներով»: Նախկին նախարարին սկսեցին մեղադրել ապօրինի բազմաթիվ արարքներ կատարելու, այդ թվում՝ բարձրաստիճան պաշտոնյաների շփումների չարտոնված գաղտնալսումների, ֆինանսա-

<sup>280</sup> Ադրբեջանական կայքերը գրում էին. «Մոդիո 10 տարի առաջ՝ 2005 թ. հունիսի 17-ին, Ի. Ալիևը աշխատակցից հետազոտեց երկու հզոր նախաքարների՝ Ալի Ռուստամլին և Ջաբրահայ Ալիևին ու «պետական հեղաշրջման փորձի» մտադրանքով կալանքի ենթարկեց կրակը: Այն ժամանակ այդ գործողությունը գլխավորում էր ԱԱԸ ղեկավար Է. Մահմուդովը, և, ճակատագրի բերումով, այդ իրադարձությունից ուղիղ 10 տարի անց Ալիևը նույն կերպ վարվում է Մահմուդովի հետ»: *Stu՝ MTN-ն bağlı şok ittibam: «Hakimiyət daxildir» çevrilis etməyə çalışırlar*, <http://news.milli.az/society/376931.html> (նորումն արված է 21.10.2015 թ.):

<sup>281</sup> *Müli Təhlükəsizlik Naziri İddianı Cixarildi – İkin ehtimaldır*, <http://www.azadliq.az/xeber/41901/milli-tahlukesizlik-naziri-iddian-cixarildi> (նորումն արված է 18.10.2015 թ.):

կան գեղծարարությունների, մաքսանենկության, մանր ու միջին բիզնեսի ներկայացուցիչների վրա գործադրվող ճնշումների, արտերկրում հովանավորներ փնտրելու (նշվում էր Մոսկվայի և Անկարայի մասին), ոչ արհեստավարժության և եռյակիկ իսրայելական հատուկ ծառայությունների հետ կապերի մեջ<sup>20</sup>։

Շատ հրապարակվող նյութերի՝ Ազգային անվտանգության նախարարությունն Ադրբեջանում վերածվել էր փոքր և միջին բիզնեսը վերահսկող և կեղերոզ կառույցի։ Անձամբ նախարար է. Մահմուդովի հանձնարարությամբ և ԱԱ զննարալիտետի ու նախարարի անձնական «գանձապահի» համարում ունեցող Աքիֆ Չովդարովի մասնակցությամբ նախարարությունը գաղտնալսող սարքերով վերահսկել է երկրի վերնախաւի ու տնտեսական գործունեություն ծավալող գործարարների, հարուստի ձեռնարկատերերի գործունեությունը՝ վերջիններին վերաբերյալ հավաքելով վարկաբեկիչ նյութեր<sup>21</sup>։

ՋԱՄ-ներում շրջանառվող տեղեկությունների վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ այդ նյութերը հաճախ կրել են շիկեռու բնույթ։ Այսպես, ԱԱ, հետ համագործակցող, ՌԴ-ում գտնվող անձինք կապ են հաստատել ազգությամբ հայերի հետ, ումբեր, հնարավոր է որոշակի վարձատրության դիմաց, գալով Հայաստան, այստեղի հեռախոսահամարներից զանգահարել են Բաբու՝ որպես թիրախ ընտրված գործարարներին կամ նրանց զրասենյակներ, հետաքրքրվել վաճառվող ապրանքի կամ մատուցվող ծառայության բնույթով, որակով ու զներով և հրեթացս հայտնել, որ գրուցակիցը հայ է։ Հեռախոսագրույցից մի քանի օր անց նշված տնտեսավարող սուբյեկտների մոտ իրականացվել են ստուգումներ, ԱԱ, ղեկավարության հրահանգով նախարարության հակաահաբեկչական կենտրոնի ղեկավարի տեղակալ գնդապետ Իլգար Ալիևի միջնորդավորված մասնակցությամբ օպերատիվ խումբը իրականացրել է գործարարների ածորինական

<sup>20</sup> Բարսեղյան Ա., նշվ. հոդված։

<sup>21</sup> Միևէ ձեռքակալվելը (2015 թ. նոյեմբերի 11-ը) Ա Չովդարովն զբաղեցրել է Ադրբեջանի ԱԱ, ներքնակիլայի և տրանսպորտային անվտանգության գլխավոր վարչության պետի պաշտոնը՝ զենկալ-մայորի կոչումով, <https://www.azadliq.org/media/video/27358605.html> (տղումն արված է 21.11.2015 թ.):

Ճեղքակալություններ՝ նրանցից ոմանց շաբաթներ և անգամ ամիսներ շարունակ պահելով ԱԱՆ քննչական մեկուսարաններում<sup>284</sup>։ Գործարարների և ներկայացվել են հետախուսագանգի գրանցման մասին կապի օպերատորների տեղեկանքները, և նրանք մեղադրվել են Հայաստանի հետ շվուսներ ունենալու մեջ։ Դրանից հետո նրանցից շորթվել են մեծ գումարներ՝ սպառնալով հակառակ դեպքում մեղադրել ՀՀ օգտին պետական դավաճանության մեջ։ Արձակման դիմաց պահանջվել է մինչև 350 հազար ադրբեջանական մանաթ (մինչև 2015 թ. 1 մանաթը հավասարագոր էր 1 եվրոյի), իսկ որոշ դեպքերում՝ շատ ավելի մեծ գումար<sup>285</sup>։

Այդպիսով՝ Ադրբեջանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարությունը փաստացի վերածվել էր դրամաշորթությամբ զբաղվող հանցավոր կառույցի։ Ընդ որում՝ ԱԱՆ զեներալիտեոի հանցավոր գործունեությունն ուղղված է եղել առաջին հերթին երկրում քիչ թե շատ անկախ բիզնեսի մոնոպոլիզացիային։ Դրա արդյունքում հարյուրավոր գործարարներ բառացիորեն թալանվել են, իսկ նրանց բիզնեսները խլվել ԱԱՆ ղեկավար կազմի ներկայացուցիչների կողմից։

Ընդ որում՝ բազմաթիվ գործարարներ այդ մասին նամակ-բողոքներ են հղել նախագահ Ալիևին, որոնց հիման վրա վերջինս, հավանաբար եզրակացնելով, որ ԱԱՆ վերնախավը «չափն անցնում է», հրահանգել է գլխավոր դատախազին կոռուպցիայի դեմ պայքարի գլխավոր վարչության միջոցով ստուգել այդ բողոքները, իսկ ինքն անձամբ կառավարության ընդլայնված նիս-

<sup>284</sup> После парламентских выборов в МНБ начнется более масштабная «чистка»: Спецоперация «Разговор по телефону с армянским», [http:// minval.az/news/123505728](http://minval.az/news/123505728) (նդումն արված է 27.10.2015 թ.):

<sup>285</sup> Տե՛ս ձեռնարկատերերից մեկը՝ Մադաուդ Մահմուդովը, օպերատիվ-քննչական խմբին հետագայում հայտնել է, որ ԱԱՆ հակահարկչական կենտրոնում իրենից պահանջել են 250 հազար մանաթ, և ինքը ստիպված 600 հազար մանաթ արժողությամբ իր ձեռնարկությունը վաճառել է 120 հազարով, քանի որ իրեն հարտնել են, որ եթե չվճարի պահանջվող գումարը, ապա նրա նկատմամբ արդեն կհարուցվի քրեական գործ։ Տե՛ս՝ Недовольные предприниматели обратились в Генпрокуратуру Азербайджана по делу арестованных сотрудников МНБ, <http://www.trend.az/azerbaijan/society/2447109.htm> (նդումն արված է 22.10.2015 թ.):

տերից մեկում իրավապահներին հրապարակայնորեն հրահանգել է «չխոչընդոտել ձեռնարկատիրական գործունեությանը և վերջ տալ գործարարներից անօրինական դրամահավաքին»<sup>266</sup>։ Մակայն, անգամ այդ զգուշացումը որևէ ազդեցություն չի ունեցել, և օրեր անց Ա. Չովդարովի հրահանգով Շամփիրում ձերբակալվել են 20 գործարարներ, որոնց նկատմամբ մեկուսարանում կիրառվել են բռնություններ։ Վերջիններիս ազատ արձակման դիմաց Չովդարովը ԱԱՆ ղեկավարության անունից յուրաքանչյուրից պահանջել է 400.000-ական մանաթ։ Որոշ տվյալներով՝ այդ մասին զեկուցվել է Ալինին, ինչն էլ առիթ է հանդիսացել ադմկոտ պաշտոնակույությունների ու ձերբակալությունների համար<sup>267</sup>։

Ի դեպ, դեռ տարիներ առաջ ՋԼՄ-ներում տվյալներ էին հայտնվել Չովդարովի հանցավոր անցյալի վերաբերյալ։ Մասնավորապես, «Ադրբեջանական միջազգային համալսարան» մասնավոր բուհի նախկին ռեկտոր Էլշահ Արդուլլանը, որը մեղադրվել է ծանր հանցանքների կատարման մեջ, մի քանի տարի առաջ հրապարակավ հայտնել է, որ Չովդարովը կազմակերպել է իր եղբոր՝ Մահիր Արդուլլանի առևանգումը։ Է. Արդուլլանը լրատվամիջոցներին փոխանցել է նաև, որ Հեյդար Ալինի կառավարման տարիներին Չովդարովը գտնվել է հետախուզման մեջ և ՌԴ Սվերդլովի մարզում զբաղվել ֆայտանյութի առևտրով, իսկ հանցավոր աշխարհում հայտնի է եղել «Թեփեզդոզ» (կիկլոպ) մականունով<sup>268</sup>։

ԱԱՆ-ում ադմկոտ պաշտոնակույություններն ու ձերբակալությունները, համաձայն այլ վարկածի, կարող էին կապված լինել Ադրբեջանում 2015 թ. նոյեմբերի 1-ին կայացած խորհրդարանական հերթական ընտրությունների հետ, քանի որ իրավիճակը երկրում, հատկապես տնտեսական անկման և սոցիալա-

<sup>266</sup> Դրադարձությունների հետագա ընթացքի վերլուծությունը բույլ է տալիս ենթադրել, որ Ալինը դրանով հող է նախապատրաստել իր համար ձեռնտու սղտին Է. Մանուշյովի և ԱԱՆ ղեկավարության հրապարակալի «ոչնչացման» համար։

<sup>267</sup> Эльдар Махмудов « генералыет МНБ разоблачены », <http://haqqin.az/news/55265> (նդումն արված է 19.10.2015 թ.):

<sup>268</sup> Что значит « кабынет генералов? » - правда сенсация в «деле МНБ», <http://mival.az/news/123510517> (նդումն արված է 28.10.2015 թ.):

կան աճող լարվածության ֆոնին, իշխող ալիևյան կլանի համար դարձել էր անկանխատեսելի:

ՌՆ ԱԳՆ Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտի (МГИМО) ավագ գիտաշխատող Վադիմ Մոխանովի կարծիքով՝ Ադրբեջանի նախագահը սկսեց հաշվի նստել երկրում օրեցօր վատթարացող սոցիալ-տնտեսական վիճակի հետ, որի պատասխանատուներից էր ԱԱ նախարարը: «Երկրում իշխում է կլանային համակարգը, հատկապես որ իշխանությունը Իլհամ Ալիևը ստացավ հորից՝ չեղար Ալիևից: Այնտեղ բարձրաստիճան պաշտոնյաների հրաժարականներ հիմնականում չեն լինում: Իշխանական բարձր օղակների համար չկա ուժեղ, ընդգծված պայքար, ինչպես Հայաստանում և Վրաստանում: Եվ ԱԱ նախարարի պաշտոնակազմությունը կապվում է այն բանի հետ, որ Բ. Ալիևը մտածում է ընտրություններից առաջ աստիճանաբար փոխել հին կադրերին որպես երկրում ծառայած խնդիրների հիմնական մեղավորների», - նշել է Վ. Մոխանովը<sup>299</sup>:

ԱԱ նախարարության շուրջ տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ առաջ քաշվեցին այլ վարկածներ էս: Մասնավորապես, minval.az կայքը գրեց, որ տարբեր վարկածների թվում խոսվում է «ռուսական հետքի», «վահաբիների հետ կապի», «խարայելական հատուկ ծառայությունների կողմից տեղեկատվության արտահոսքի» մասին:

ԱԱՆ-ում ձերբակալություններն սկսվեցին այն ժամանակ, երբ Ռուսաստանը Միրիայում ակտիվ ռազմական գործողությունների անցավ «Բսլամական պետություն» տհաբեկչական կազմակերպության դեմ: Հայտնի է, որ շատ ադրբեջանցիներ Միրիայում մասնակցում են մարտական գործողությունների, իսկ վահաբականությունն Ադրբեջանում, ըստ որոշ տեղեկությունների, հովանավորվում էր հենց ԱԱՆ նախկին ղեկավարության կողմից<sup>300</sup>: Դա էլ, ըստ վարկածի, հանդիսացել է Ռուսաս-

<sup>299</sup> Политолог: отставка главы спецслужбы Азербайджана связана с выборами, <http://ria.ru/world/20151019/1304646659.html> (նդումն արված է 19.10.2015 թ.):

<sup>300</sup> Новая шокирующая информация о «деле МНБ», <http://minval.az/news/123503910> (նդումն արված է 21.10.2015 թ.):

տանի Ղաշնուքյան և Աղբրեջանի Հանրապետության նախագահների առանձնագրույցի ու պարմանավորվածության թեմա, հասկապես որ ձերբակալություններն իրականացվեցին Ի. Ալիևի՝ Աստանայից վերադառնալուց անմիջապես հետո, որտեղ նա հանդիպել էր Վ. Պուտինի հետ<sup>291</sup>:

Պաշտոնանկություններին և ձերբակալություններին զուգահեռ մամուլում սկսվեցին շրջանառվել ԱԱՆ ներսում տիրող կոռուպցիոն երևույթների մասին բացահայտումներ: Մասնավորապես, contact.az էլեկտրոնային կայքը 2015 թ. հոկտեմբերի 24-ին գրեց, որ ԱԱՆ պաշտոնատար անձինք կաշառք են ստացել ոչ միայն ձեռնարկատերերից, այլև ԱԱՆ-ում ծառայության նշանակվողներից, անգամ ԱԱՆ ակադեմիա ընդունվողներից<sup>292</sup>: Կայքի աղբյուրի՝ նախկին քննիչներից մեկի պնդմամբ, էթե իրականացվի օբյեկտիվ քննություն, ապա կբացահայտվեն նաև ԱԱՆ-ի հանցավոր կապերը այլ իրավապահ և իշխանական մարմինների հետ<sup>293</sup>:

Ձերբակալությունների և պաշտոնանկությունների շղթան շարունակվեց հետագայում ևս: 2015 թ. նոյեմբերի 13-ին Ի. Ալիևի հրամանագրով պաշտոնից ազատվեց ԱԱ նախարարի տեղակալ զեներալ-մայոր Էլչին Արսալան օղլի Ալիևը, իսկ ԱԱ նախարարի պաշտոնակատար Մ. Գուլիևի հրամանով պաշտոններից ազատվեցին Իսմայիլիի և Ղաշքեսանի շրջանային վարչությունների պետերը: Օրեր առաջ պաշտոնից ազատվել էր նաև ԱԱՆ Լարիմանի շրջանային վարչության պետը:

Ըստ աղբրեջանական haqqin.az կայքի՝ ԱԱՆ աշխատակիցները տեղեկություններ են հավաքել առանց բացառության

<sup>291</sup> Oruxun Oruxu: MTN-də önməli postlar tutan Akif Çovdarov və digərləri Rusiyaya bağıl idi, <http://contact.az/docs/2015/Interview/111700136663az.html>. (նրումն արված է 17.10.2015 թ.):

<sup>292</sup> Ի դեպ, «բացահայտումների» շղթան շուտով հասավ նաև ԱԱՆ ակադեմիա. ԱԱՆ-ից հեռացված և ձերբակալված ղեկավարների հետ ազգակցական կապ ունեցող կորստանտներից 2016 թ. հունվարի 8-ի դրությամբ Ակադեմիայից հեռացվել են 10-ը՝ «Ակադեմիա սպորտի ընդունվելու և քննությունների կազմը խախտելու համար» պաշտոնական հիմնավորմամբ:

<sup>293</sup> Числа в МВБ не прекращаете их не один день, <http://www.contact.az/docs/2015/Politics/102400134089ru.htm#Vmvdb9KLTDe> (նրումն արված է 24.10.2015 թ.):



բոլոր ձեռնարկատերերի մասին և ցուցակագրել նրանց: Այնու-  
հետև, օգտագործելով «ստացված տվյալները», ամսական 5000  
մանաթ եկամուտ ունեցող ձեռնարկատերերի համար սահմանել  
են ապօրինի տուրքեր: ԱԱՆ-ն կազմել է անգամ այն անձանց  
ցուցակը, ովքեր, աշխատելով օտարերկրյա ընկերություննե-  
րում, ունեցել են 3000 և ավելի մանաթ ամսական եկամուտ: Բո-  
լոր այս տվյալները պարբերաբար դրվել են գեներալ Աքիֆ  
Չովդարովի սեղանին, և ցուցակներում ընդգրկված յուրաքանչ-  
յուր անձի կցվել է մեկ «համակարգող» («կուրատոր»), որը լիար-  
ժեք «ապահովել է» նրա բիզնես-գործունեությունը և «տուրքերը»  
փոխանցել ԱԱՆ: Սակայն գեներալ Ա. Չովդարովը երբեմն չի  
բավարարվել ստացված եկամուտներով և ժամանակ առ ժամա-  
նակ տարբեր ձեռնարկատերերից ուղղակի խլել է ոչ միայն նրա  
բիզնեսը, այլև ողջ սեփականությունը<sup>294</sup>: Ըստ հրապարակումնե-  
րի՝ այդ փաստերի մասին հայտնել են անձամբ ձեռնարկատե-  
րերը, որոնք նշել են նաև, որ Չովդարովի խմբավորումն ունեցել  
է ԱԱՆ-ի հետ կապ չունեցող կալանավախ: Համաձայն տեղեկա-  
սության՝ Չովդարովն իր հանցավոր գործունեությունն իրա-  
կանացրել է ոչ միայն իր ենթակաների, այլև Վրաստանի, Ռու-  
սաստանի հանցավոր աշխարհի ներկայացուցիչների միջո-  
ցով<sup>295</sup>: Չովդարովի խմբավորման հետ անչլվելու համար 2015 թ.  
նոյեմբերի 11-ին զբաղեցրած պաշտոններից ազատվեցին ու  
ձերբակալվեցին ԱԱՆ՝ Ա. Չովդարովի ղեկավարած էներգետի-  
կայի և տրանսպորտի անվտանգության գլխավոր վարչության  
աշխատակիցներ Ալիֆ Ալիևը, Բաժնի պետ Օրհան Օսմանովը,  
ինչպես նաև անդրազգային կազմակերպված հանցավորության  
դեմ պայքարի գլխավոր վարչության աշխատակիցներ Նաթիգ  
Ալիևը և Ջաուր Մամեդովը<sup>296</sup>:

<sup>294</sup> Расулова З., Заработал 5 тысяч манатов – поделюсь с МНБ! Наша трагедия, <http://haqqin.az/news/56719> (նորմալ արված է 09.11.2015 թ.):

<sup>295</sup> Секретные порочки МНБ, <http://haqqin.az/news/56657> (նորմալ արված է 08.11.2015 թ.):

<sup>296</sup> Арестованы еще 4 сотрудника МНБ Азербайджана, <http://vesti.az/news/270730> (նորմալ արված է 27.10.2015 թ.): Стали известны имена 4 арестованных сотрудников МНБ, <http://ru.ara.az/news/303676> (նորմալ արված է 12.11.2015 թ.):

2015 թ. նոյեմբերի 15-ին Սաքայիլի շրջանային դատարանը եռամսյա կալանք սահմանեց Ա. Զովդարովի նկատմամբ<sup>297</sup>, իսկ երկու օր անց նոյեմբերի 17-ին, զբաղեցրած պաշտոնից հեռացվեց Զովդարովի փեսան՝ ԱԱՆ Բաժանմունքի պետ զեղապետ-լեյտենանտ (փոխզեղապետ) Ռաշադ Ամիրջանովը<sup>298</sup>:

Նոյեմբերի 15-ի դրությամբ կադրային փոփոխությունների շրջանակում զբաղեցրած պաշտոններից արդեն ազատվել էին ԱԱՆ 120 աշխատակիցներ, որոնցից 80-ը՝ նախկին նախարար է. Մահմուդովի բարեկամներ ու մտերիմներ<sup>299</sup>:

Այդ օրը ադրբեջանական haqqin.az կայքէջը գրեց, որ նախօրեին իրավապահ մարմինները բացահայտել են սեևսացիոն փաստեր, է. Մահմուդովի աշխատասենյակի խուզարկությամբ հայտնաբերվել է արտարժույթով (ԱԱՆ դուլար և այլն) լցունված 30 արկղ, ինչպես նաև ապակյա տարաներ՝ լի ադամանդներով: Այդ ամենն ուղարկվել է փորձաքննության: Ըստ շրջանառվող լուրերի՝ նախկին նախարարը ուղղակի չի հասցրել թաքցնել այդ հարստությունը կամ հանել երկրից, քանի որ զբաղեցրած պաշտոնից ազատումն իր համար անակնկալ է եղել (ինչպես նշվեց, է. Մահմուդովն անապատելի կանչվել է նախագահի նստավայր, իսկ Հատուկ պետական պահպանության ծառայության և Գլխավոր դատախազության աշխատակիցներն այդ ընթացքում ներխուժել են ԱԱՆ): Կայքէջը նշում էր. «Դատելով առգրավված դրամական միջոցների և թանկարժեք ապրանքի ահռելի չափից՝ է. Մահմուդովը փաստորեն հանդիսացել է կոռուպացված բուրգի ղեկավար և կուտակել հսկայական ֆինանսական միջոցներ: Մինչև անգամ խոսվում է 17 տոննա քաշով բնոյի տեղափոխման կասեցման մասին, ընդ որում՝ դա եղել է թղթադրամ, որը փորձել է երկրից դուրս հանել նախարարներից մեկը: Սակայն հատկանշական է, որ է. Մահմուդովի անվան փոխարեն շոշափվում է Տրանսպորտի նախարար Զիա Մահմեդովի

<sup>297</sup> Арестован бывший начальник управления Министерства национальной безопасности, <http://ru.ara.az/news/303858/15.11.2015> (հղումն արված է 17.11.2015 թ.):

<sup>298</sup> Уволен еще один начальник отдела МНБ, <http://haqqin.az/news/57224> (հղումն արված է 17.11.2015 թ.):

<sup>299</sup> Уволен замминистра национальной безопасности, <http://haqqin.az/news/57030> (հղումն արված է 13.11.2015 թ.):

անուր»։ Այնուհետև կայքը գրում է, որ այդ ապատեղեկատվության հետևում կանգնած է ինքը՝ Է. Մահմուդովը, որը, փորձելով այլ նախարարների ու պաշտոնյաների նս մեղադրել ֆինանսական չարաշահումների ու երկրից անոնլի գումարներ դուրս բերելու մեջ, ձգտել է մեղմել իր նկատմամբ առաջացած զայրույթն ու ատելությունը<sup>302</sup>։

Շուտով լրատվամիջոցները հայտնեցին է. Մահմուդովի ու Ա. Չովդարովի կոռուպցիոն գործունեության նոր դրվագների մասին։ Ձերբակալված անձանց խափանման միջոցը փոխելու, քրեական գործը կարճելու համար ԱԱ-ն պահանջել է 300 հազարից մինչև 350 հազար ԱՄՆ դոլար գումար։ Ընդ որում, դա չի տարածվել քաղաքական մտտիվներով ձերբակալվածների վրա։ Այդ մասին հայտնել է Ադրբեջանում հայտնի փաստաբաններից մեկը, ըստ որի՝ որպես ԱԱ ղեկավարության վստահելի անձինք հանդես են եկել հեևց փաստաբանները։ ԱԱ քննչական վարչությունը ունեցել է փաստաբանների խումբ, որի անդամները բանակցել են կալանավորված անձանց հետ<sup>303</sup>։

Ադրբեջանի գլխավոր դատախազության կոռուպցիայի դեմ պայքարի գլխավոր վարչության կողմից կապի և բարձր տեխնոլոգիաների նախարարությունում իրականացված ստուգումների արդյունքում բացահայտվել է նախարարության աշխատակիցների անչությունը «ԱԱ գործի» հետ, ինչպես նաև հայտնաբերվել են լուրջ իրավախախտումներ, կոռուպցիայի և պետական հսկայական միջոցների վատնման փաստեր։ Դրա արդյունքում այդ նախարարությունում նս իրականացվել են ձերբակալություններ։ Ավելի վաղ Բ. Ալիևի հրամանագրով զբաղեցրած պաշտոնից ազատվել էր Կապի և բարձր տեխնոլոգիաների նախարար Ալի Աբբասովը<sup>304</sup>։ Պարզվել է, որ ԱԱ համար այդ նախարարությունը հանդիսացել է հանցավոր գործունեության ծածկ։ Այդ մասին հայտնել է Ադրբեջանի խորհրդարանի պատ-

<sup>302</sup> Керимли Р., Провокация Эльдера Мухмудова против Эки Мамедова?, <http://haqqin.az/news/57125> (նդումն արված է 15.11.2015 թ.):

<sup>303</sup> Арест в МНБ можно было избежать за \$350 тысяч, <http://minval.az/news/123512465> (նդումն արված է 15.11.2015 թ.):

<sup>304</sup> Арестованы более 10 должностных лиц Министерства связи и информационных технологий, <http://ru.spa.az/news/303718/> (նդումն արված է 17.11.2015 թ.):

զամավոր Ռաֆայել Ջաբրայիլովը: Եւ եղել է, որ եւսիսարարութունն օժանդակել է ԱԱ-ին մարդկանց հետախուսային խոտակցությունների ապօրինի գաղտնալսման հարցում<sup>300</sup>: Իսկ խորհրդարանի մեկ այլ պատգամավոր, անվտանգության և պաշտպանության հանձնաժողովի անդամ Ջահիդ Օրուջը հայտարարել է, թե կասկած չկա, որ Կապի և բարձր տեխնոլոգիաների եւսիսարար Ալի Աբբասովը ենթարկվել է Է. Մանմուրովի շանտաժին և պաշտոնից հեռացվել հենց նրա պատճառով<sup>301</sup>:

Եւսիսարարի կեսերին քրեական գործի շրջանակներում ձերբակալվեցին ԱԱ ևս երեք բարձրաստիճան պաշտոնյաներ՝ գեղապետ Ռասուլ Ռասուլովը, փոխգեղապետներ Էլիան Օմարովը և Ալի Նաբիևը, որոնք աշխատել էին Չովդարովի գլխավորած վարչությունում: Վերջիններիս մեղադրանք է առաջադրվել սպանությունների և բանդիտիզմի մեջ<sup>302</sup>:

Աղյուսեղանի գլխավոր դատախազությունում հարուցված քրեական գործի քննության ընթացքում եւսիսարարի վերջերին 57 անձ ճանաչվել էր տուժող, վնասի չափը կազմել էր տասնհարյուրից ավելի դոլարներ: Գլխավոր դատախազությունը հայտարարեց, որ ձեռք են բերվել բավարար ապացույցներ ԱԱ եւսիսարարի բարձրաստիճան պաշտոնյաների կողմից պաշտոնեական դիրքի չարաշահման, հետախուսային խոտակցությունների անօրինական լսման, տևտեսվարող սուբյեկտների գործունեությանն ապօրինի միջամտության, Բաքվում և այլ շրջաններում ձեռնարկատիրական գործունեության վերահսկման, ուրիշի գույքի հափշտակության, սեփականությունից ապօրինի զրկման, դրամաշոթության, մարդկանց՝ ազատությունից ապօրինի զրկման, տեղեկատվական տեխնոլոգիաների անօրինական օգտագործ-

<sup>300</sup> Миссиями Азербайджана превратилось в инструмент МВБ для незаконных действий, <http://www.trend.az/azerbaijan/society/2455902.html> (նդումն արված է 13.11.2015 թ.):

<sup>301</sup> Али Аббасов уволен из-за Эльдара Мехмедова, <http://haqqin.az/news/57005> (նդումն արված է 13.11.2015 թ.):

<sup>302</sup> Обыски на квартирах полковников МВБ, <http://haqqin.az/news/57272> (նդումն արված է 17.11.2015 թ.):

ման և այլ փաստերով: Հարուցված քրեական գործով ներգրավվել է 21 կասկածյալ, որոնցից 19-ը կալանավորվել է<sup>306</sup>:

Շուտով պաշտոնից ազատվեց նաև ԱԱՆ հակաահաբեկչական կենտրոնի ղեկավար գեներալ-մայոր Էլչին Գուլինը, որը որոշ ժամանակ անց ձերբակալվեց<sup>307</sup>:

Գլխավոր դատախազությունը «ԱԱՆ գործով» ձերբակալված անձանց նոր մեղադրանք առաջադրեց Ադրբեջանի Հանրապետության քրեական օրենսգրքի 217-րդ (բանդիտիզմ) և 218-րդ (կազմակերպված հանցավոր խմբավորումներ ստեղծելը) հոդվածներով:

Նույն թվականի դեկտեմբերի 9-ին և 10-ին ՋԼՄ-ներում նոր տեղեկություններ հայտնվեցին է. Մահմուդովի ունեցվածքի վերաբերյալ: Գրվեց, որ վերջինիս որդին՝ Անար Մահմուդովը Լոնդոնի ամենաթանկ շքաներից մեկում՝ Սենթ-Ջեյմսում ունի 8 սենյականոց բնակարան, որի արժեքը կազմում է մոտ 30 միլիոն ֆունտ սթերլինգ (շուրջ 48 միլիոն դոլար): Սակայն, ինչպես մամուլին հայտնեց ԱԱՆ, նախկին աշխատակից Արատուն Օրուջլուն, դա միայն «սառցաբեկորի գլուխն է, և Մահմուդովների անշարժ գույքի հիմնական մասը գտնվում է Իսպանիայում ու Չեխայում և գնահատվում է մինչև կես միլիարդ դոլար»<sup>308</sup>:

2015 թ. դեկտեմբերի 11-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում ԱԱ նախարարի պաշտոնակատար Մ. Գուլինը հայ-

<sup>306</sup> Генпрокуратура обвиняет генералов МНБ: 57 жертв и десятки миллионов, <http://haqqin.az/news/57827> (նդումն արված է 25.11.2015 թ.):

<sup>307</sup> Глава Антитеррористического центра МНБ Азербайджана освобожден от занимаемой должности, <http://www.trend.az/azerbaijan/society/2461649.html> (նդումն արված է 26.11.2015 թ.): General Elçin Quliyev hebs edildi, <http://www.qafqazinfo.az/criminal-5/general-elcin-quliyev-hebs-edildi-yenilenib-133233>. Հասկանալի է, որ Ա. Չովդարովը սկզբում եղել է է. Գուլինի տեղակալը, պաշտոնի բարձրացումից հետո նրա փոխարեն է. Գուլինի տեղակալ է նշանակվել գնդապետ Իլգար Ալիևը: Stu՝ Генерал Эльчин Гулиев и был начальником Акифа Човдарова, <http://haqqin.az/news/57891> (նդումն արված է 26.11.2015 թ.):

<sup>308</sup> Eldar Mahmudovun ələ sorvetləri <http://www.meydan.tv/az/site/politics/12117/> (նդումն արված է 10.12. 2016 թ.):

տարարեց, որ երկու ամսվա ընթացքում ԱԱՆ-ից հեռացվել է 250 «անօգուտ աշխատակից»<sup>308</sup>:

Նախարարի պաշտոնակատարը նաև ամեն կերպ փորձում էր համոզել հասարակությանը, թե երկրի կարևորագույն գերատեսչությունն իրականում զբաղված չի եղել միայն թալանով, կողոպուտով ու անօրինական գործունեությամբ: «Միզուցն ԱԱՆ որոշ աշխատակիցներ կատարել են հանցագործություններ, ինչին կտրվի իրավական գնահատական: Բոլորը պետք է իմանան, որ Ադրբեջանը իրավական պետություն է, և բոլոր հանցագործները պետք է պատասխան տան արդարադատության առջև: Մակայն, մեր աշխատակիցների 90 տոկոսն արդար է Մեր ժողովուրդը հավատացել է ԱԱՆ-ին, հավատում է և հավատալու է», - հայտարարեց Մ. Գուլիևը<sup>309</sup>:

Ադրբեջանի ԱԱՆ և նրա նախկին ղեկավարի հանցավոր կյանքի շարունակվող բացահայտումների ֆոնին Իլհամ Ալիևը հրապարակավ հանձնարարություններ էր տալիս նախարարությունում իրականացնել «լուրջ, արմատական, նպատակաուղղված փոփոխություններ՝ կապված կաշառակերության և այլ անօրինական գործողությունների բացառման, անձնակազմի կարգապահության մակարդակի բարձրացման, զինվորական ծառայության կանոնների խախտումների և օպերատիվ-ծառայողական գործունեության մեջ բացթողումների վերացման» հետ<sup>310</sup>: Մակայն, հաշվի առնելով Ադրբեջանի իշխանական վերնախավում տիրող բարքերը և երկրում ընդհանուր կոռուպցիայի մակարդակը՝ Ալիևի նման ցուցումներն այլ կերպ, քան պարզագույն պոպուլիզմ, դժվար է գնահատել:

Պատահական չէ, որ ադրբեջանական վերլուծաբանների մի մասի պնդմամբ՝ մեծ հեջությունն ստացած հետաքննութ-

<sup>308</sup> Ադրբեջանի ԱԱՆ-ից հեռացվել է «250 անօգուտ աշխատակից», [http://www.azatotyun.am/content/article/27421022.html?utm\\_source=divr.it&utm\\_medium=facebook](http://www.azatotyun.am/content/article/27421022.html?utm_source=divr.it&utm_medium=facebook) (նդումն արված է 11.12.2015 թ.):

<sup>309</sup> Мадат Гулиев: «Возможно, несколько сотрудников МНС совершили преступления, их действиям дается правовая оценка», <http://ru.ara.az/news/304288> - (նդումն արված է 22.11.2015 թ.):

<sup>310</sup> МНВ: Иллахам Алиев поставил серьезные задачи перед Министерством, <http://ru.ara.az/politics/100561> (նդումն արված է 04.11.2015 թ.):

յուրը մի օր հանկարծակի կդադարեցվի: Երբ իշխանությունները համարեն, որ որպես թիրախ ընտրված անձինք արդեն պատժվել են, դրանով ամեն ինչ կավարտվի, և ԱԱՆ ղեկավարության հանցավոր գործունեության ամբողջական պատկերն այդպես էլ չի բացահայտվի<sup>312</sup>:

Մակայն, բոլոր դեպքերում, մինչ օրս առկա բացահայտումները թույլ են տալիս միանշանակ եզրակացություն անել այն մասին, որ 2004 թվականից Ադրբեջանի ԱԱՆ նախարարի պաշտոնն զբաղեցնող Է. Մահմուդովը ստեղծել էր ազդեցիկ կլան, որն իր հովանավորության տակ էր վերցրել նույնիսկ որոշ նախարարների, կարողացել էր իրեն հավատարիմ մարդկանց տեղավորել փոխնախարարների, գերատեսչությունների, ստորաբաժանումների ղեկավարների և այլ բարձր պաշտոններում:

Այդ ամենը հաշվի առնելով՝ Է. Մահմուդովի անկումը չէր կարող չանդրադառնալ իր կլանի ներկայացուցիչների հետագա ճակատագրի վրա, և նրանցից շատերը տեղ գտան պաշտոնաակարմած անձանց ցանկում:

Ջուզահեռաբար մամուլում մանրամասն տեղեկություններ էին հայտնվում ԱԱՆ-ում տիրող բարքերի մասին, ըստ որոնց՝ պաշտոնների նշանակման գինը է. Մահմուդովի ղեկավարած տարիներին տատանվել է 15-ից մինչև մի քանի հարյուր հազար ԱՄՆ դոլար: Իսկ Բաքվի կայագործի սահմաններում տեղակայված վարչություններում և բաժիններում պետ նշանակելու համար պահանջվել է մինչև 500 հազար ԱՄՆ դոլար: Այդ «բիզնեսը» տնօրինել են է. Մահմուդովի մերձավոր շրջապատի անձանց համարում ունեցող ԱԱՆ կադրերի գլխավոր վարչության պետը և նրա տեղակալը:

ԱԱՆ նախկին աշխատակից փոխգեղապետ Իլհամ Իսմայիլովը ԱԱՆ-ում իրականացվող կադրային գտումների վերաբերյալ հայտնել է, թե Է. Մահմուդովը և Ա. Չովդարովը, լինելով շուկայական հոգեբանության տեր անձնավորություններ, վերջին 11 տարիների ընթացքում ԱԱՆ-ում աշխատանքի ընդուն-

<sup>312</sup> Чистка в МНБ не прекращается ни на один день, <http://www.cccfact.az/docs/2015/Politics/102400134089u.htm#.Vmvdib9KLTDe> (նղումն արված է 24.10.2015 թ.):

ման միակ չտիանիշ են համարել փողը, ոչ թե մասնագիտական կրթությունն ու ունակությունը<sup>333</sup>:

Շատ շրջանառվող տեղեկությունների՝ Ադրբեջանի ԱԱՆ ղեկավարության կողմից օֆշորային գոտիներ փոխանցված անօրինական գումարներն այնքան մեծ են եղել, որ «դա մեծ հարված է հասցրել երկրի տնտեսությանը»:

Հարկ է նշել, սակայն, որ ԱԱՆ-ում տիրող բարքերի, գործարարների նկատմամբ ճնշումների, կոռուպցիոն մեխանիզմների մասին հրապարակումներ բազմիցս եղել են, և դրանք Ադրբեջանի իշխանությունների համար ևորություն չէին: Ամենայն հավանականությամբ, ինչ-որ փուլում այդ գործընթացները սկսել են վնասել իշխող վարչակարգի տնտեսական, չի բացառվում նաև՝ քաղաքական շահերին, ինչին հետևեց այդ կառույցի «զլխատումը»: Մյուս կողմից, չի կարելի բացառել նաև, որ «ոեկե-տին» գուգանեո այդ կառույցը ձախողումներ է արձանագրել նաև հայաստանյան-արցախյան «ճակատում» ու գուգանեո ընթացող տապալումները պարզապես չեն ներվել<sup>334</sup>: Եվ ահա Իլհամ Ալիևը որոշեց իշխող վարչակարգին անվերապահորեն ծառայած այդ գերատեսչությունը տրոհել երկու մասի (վերակազմավորման ենթարկվեց նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետության ազգային անվտանգության նախարարությունը):

Վերոգրյալի վերլուծության հիման վրա, կարծում ենք, որ, բոլոր դեպքերում, ԱԱՆ շուրջ տեղի ունեցող իրադարձությունները սխալ կլիներ դիտարկել Ադրբեջանում ընթացող սոցիալ-տնտեսական բուռն իրադարձություններից անջատ: Իշխող վարչակազմը, Ի. Ալիևի ղեկավարությամբ, չէր կարող չկանխատեսել շուրջ 1,5 տարվա ընթացքում եւմթի գների ավելի քան եռակի անկման հետևանքով երկրի տնտեսությունում սպասվող

<sup>333</sup> Подполковник МНВ Ильхам Исмаилов: «На работу в МНВ брали за деньги», <http://haqqin.az/multimedia/57215> (նորում արված է 17.11.2015 թ.):

<sup>334</sup> Հաշվի առնելով վերը նշված փաստերը, ինչպես նաև այն հանգամանքը, որ ԱԱՆ-ում քննվող շատ գործեր չիճեո են եղել, ադրբեջանցի որոշ լրագրողներ կարծիք հայտնեցին, որ կարելի է հարցանանի տակ դեռ Ազգային անվտանգության նախարարության գործունեությունն ընդհանրապես և բարձրացել Հայաստանի օգտին լրտեսության ծամար դատապարտված Ռաուֆ Միրջադիբովի գործը վերանայելու հարցը: Տես՝ Բարսեղյան Ա., նշվ. հոդված:



ցնցումները: Դրանց ակտիվ փուլը սկսվեց 2015 թ. դեկտեմբերի 21-ին, երբ ադրբեջանական մանաթը մեկ օրվա մեջ արժեզրկվեց միանգամից 47 %-ով: Դրան հետևեց առաջին անհրաժեշտության ապրանքների գների մինչև 50% աճը: Փորձելով ձեռք բերել դեռևս չթանկացած ապրանքները՝ բնակչությունը բառացիորեն պաշարեց առևտրի կենտրոնները: Իրար հետևից սկսեցին փակվել խանութներն ու ձեռնարկությունները: Դադարեցվեց արտարժույթի փոխանակման կետերի մեծամասնության և մի շարք բանկերի գործունեությունը: Աշխատող սակավաթիվ կետերը միայն ընդունում էին արտարժույթ, բայց չէին վաճառում: 2015 թ. դեկտեմբերի 22-ից մինչև 2016 թ. հունվարի 8-ը մանաթն արժեզրկվեց ևս մոտ 20 %-ով, այսինքն՝ ընդհանուր առմամբ ավելի քան 65%-ով: Ստեղծված իրավիճակի պատճառով արդեն 2015 թ. ընթացքում կառավարությունը 350 միլիոն մանաթով կրճատել էր սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը և 3,7 միլիարդ մանաթով (չուրք 50%-ով)՝ տնտեսության մեջ պետությունից ֆինանսավորվող ներդրումները:

Ադրբեջանի կենտրոնական բանկի պաշտոնական արտարժույթային պահուստները 2016 թ. հունվարի 1-ի դրությամբ նախորդ տարվա համեմատ կրճատվեցին մոտ 3 անգամ՝ կազմելով քիչ ավելի, քան 5 միլիարդ դոլար և հասնելով 2009 թ. ցուցանիշին:

Երկրում կտրուկ բարդացավ քրեածին իրավիճակը: Ըստ հրապարակումների՝ Քաբվում, չեսյած ամենուրեք ոստիկանական պարեկների առկայությանը, էապես մեծացավ ավազակային հարձակումների և այլ հափշտակությունների թիվը: Մայրաքաղաքում անվտանգ չէ միայնակ զբոսնել անգամ ցերեկային ժամերին:

Եվ անհա, ԱԱՆ շուրջ իրադարձությունները, սկսած 2015 թ. հոկտեմբերի 20-ին Է. Մահմուդովի պաշտոնակազմությանից մինչև դեկտեմբերի 14-ին ԱԱՆ տրոհումը պետականության և արտաքին հետախուզության ծառայությունների, անկախ նրանից, թե իրականում ինչն էր նման կտրուկ փոփոխությունների առիթը, անմիջապես նախորդեցին այդ ցնցումներին: Դրանով, կարծում ենք, լուծվեց մի քանի խնդիր.

1) պետական ապարատի և բնակչության ամբողջ ուշադրությունը սեռովեց «մահմուդովյան խմբավորման» հանցավոր գործունեության վրա, որի ահռելի չափերն ընդհուպ ազդեցություն են ունեցել երկրի տնտեսության մասշտաբով: ԱԱՆ և դրա ղեկավարների մերկացումն ի օգուտ ալիևյան ռեժիմի օգտագործվեց նաև քարոզչական նպատակներով՝ խորհրդարանական ընտրություններից առաջ: ԶԼՄ-ները երկար ժամանակ հեղեղված էին ԱԱՆ և նրա ղեկավարների շուրջ գլխապտույտ արագությանը տեղի ունեցող իրադարձությունների մասին լուրերով<sup>105</sup>.

2) քանի որ այդ խմբավորման գործունեությունն էականորեն խոչընդոտել է հատկապես փոքր և միջին բիզնեսին, դրա «բացահայտումն ու ոչնչացումը» որոշակի խանդավառություն ստաջացրեց ձեռնարկատերերի այդ շերտի, ինչպես նաև բնակչության լայն զանգվածների մոտ.

3) ալիևյան ռեժիմի համար «մահմուդովյան խմբավորման» առկայությունը որևէ կերպ չէր տնդավորվում 2015 թ. դեկտեմբերի 21-ից սկիզբ առած և դեռևս շարունակվող տնտեսական ցնցումների և սոցիալական բուևտերի դեմն առնելու սցենարի մեջ: Եթե բնակչության ընդվզումը փորձ արվեր կանխել Մահմուդովի ղեկավարած ԱԱՆ-ի ուժերով, ապա հետևանքներն իսկապես անկանխատեսելի կարող էին լինել, քանի որ դա կբազմապատկեր ըմբոստացողների քանակը և գայրույթը<sup>106</sup>.

---

<sup>105</sup> Ի դեպ բնակչության ուշադրությունը ներքին սոցիալ-տնտեսական ճգնաժամից շեղելու համատեքստում կարելի է դիտարկել նաև 2015-2016 թթ. հայ-ադրբեջանական շփման զեռում ադրբեջանական բանակի հաճախակիացած սադրանքները, այդ թվում՝ 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմը:

<sup>106</sup> 2016 թ. հունվար ամսին բողոքի ցույցեր և ռստիկանության հետ բախումներ տեղի ունեցան Ադրբեջանի Աղջարեղիի, Լեևրոբանի, Ֆիզուլիի, Միազանի, Զալիլաբադի, Աստարայի, Բելազանի, Աքուլիևի և Բաքվի որոշ շրջաններում և արվարձաններում: Բողոքի այլքը մնումնու նպատակով 2016 թ. հունվարի 18-ին Ի. Ալիևը հրամանագիր ստորագրեց ֆեևրվարի 1-ից բյուջետային մի շարք ոլորտների՝ առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի, սպորտի և սոցիալական ազակաուության աշխատողների, ինչպես նաև ռստիկանության աշխատակիցների աշխատավարձերը 10%-ով բարձրացնելու վերաբերյալ: Հաջորդ օրը Ի. Ալիևի մեկ այլ հրամանագրով 10 %-ով բարձրացվեցին նաև

4) «Ժաների օրենքների» համաձայն՝ կլանային հանցավոր ռեժիմների կողմից իրենց ներսում գործող միևի խմբավորումների կամ կլանների «հավատարմությունն ու նվիրվածությունը» ապահովելու նպատակով ժամանակ առ ժամանակ հարկ է վիճում հրապարակավ «պատժել զանցառուներին», որպեսզի ռեժիմի մաս կազմող մյուս ուժերը «զգաստանան և չփայփայեն ռեժիմի գլուխ կանգնած «առաջնորդի» կողմից չվերահսկվող որևէ քայլ կատարելու կամ կողմնակի հարստություն ղիգելու սին հույսեր»:

**3.4. Աղբրեջանի հատուկ ծառայությունների գործունեությունը երկրում էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող հետապետումների համատեքստում**

Աղբրեջանի Հանրապետությունում բնակվող էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ կիրառվող հետապետումներում կա հստակ ծրագրված պետական քաղաքականություն, ինչը գալիս է դեռևս Աղբրեջանի Դեմոկրատական Հանրապետության գոյության, այնուհետև խորհրդային ժամանակներից: Պատմության թատերաբեմում գոյություն և չունեցող «աղբրեջանցի» ազգ ստեղծելու համար անհրաժեշտ էր արհեստակաևորեն ստեղծված այդ պետությունում բնակվող էթնիկ ու կրոնադավանական փոքրամասնությունների կամ ձուլել, կամ վտարել երկրից, կամ էլ ֆիզիկապես ոչնչացնել, ինչպես փորձ արվեց 1988-1991 թթ. Սումգայիթում, Բաքվում, Շահումյանում, Մարտունաշենում և այլ բնակավայրերում ոչնչացնել հայ ազգաբնակչությանը: Պատկերը միանգամայն հստակեցվում է, երբ ուսումնասիրում եք Աղբրեջանական ՌԱՀ-ում և Աղբրեջանի Հանրապետությունում անցկացված մարդահամարների արդյունքները: Դեռևս Խորհրդային Միությունում 1926 թ. անցկացված մարդահամարի տվյալներով «աղբրեջանցի» ազգ գոյություն

---

Աղբրեջանի պաշտպանության նախարարության ծառայողների աշխատավարձերը, ինչպես նաև պատերազմի մասնակիցների սոցիալական նպատակները:

չունենք<sup>307</sup>: Եվ միայն 1937 թ. ԽՍՀՄ նոր Մահմանադրության ընդունումից առաջ, Բ. Սուալիևի հրամանով, Աղբրեջանի թյուրքերին լեզուն վերանվանվեց աղբրեջաներեն, իսկ Աղբրեջանի թյուրքերը՝ աղբրեջանցիներ<sup>308</sup>:

Լերկայիս Աղբրեջանի Հանրապետությունում էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող հետապնդումներին լծված են Երկրի հատուկ ծառայությունները, Կրոնական կազմակերպությունների հետ տարվող աշխատանքների պետական հանձնաժողովը, տեղական ինքնակառավարման ու պետական այլ մարմիններ:

Վերջին տարիների ինչպես քաղաքական, այնպես էլ էթնիկ և կրոնադավանական փոքրամասնությունների նկատմամբ իրականացվող հետապնդումները Աղբրեջանում լայն թափ ստացան հասկապես Հեյդար Ալիևի իշխանության գալուց հետո, այնուհետև շարունակվեցին վերջինիս որդու՝ Իլհամ Ալիևի իշխանության տարիներին: Հատկապես ընդդիմադիր կենցածք ունեցող մուսուլման հոգևորականների, հավատացյալների, կրոնական ակտիվիստների նկատմամբ կիրառվող ճնշումներն ընդունեցին մասշտաբային բնույթ: Հալածանքների ենթարկվեցին ինչպես սուննիները, շիաները, սալաֆիներն<sup>309</sup> ու նուրջու-

<sup>307</sup> Всероссийская перепись населения 1926 года. Национальный состав населения по республикам СССР, [http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr\\_nac\\_26.php?reg=5](http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_26.php?reg=5) (նորմալ արված է 28.01.2016 թ.), տե՛ս նաև Լանդապետյան Լ., Քանի տարեկան է աղբրեջանցի ժողովուրդը. կրկին Ապշերոնյան մահմեդականների ինքնության շուրջ, Լոյսվանք ԳԿԷ, «21-րդ դար», թիվ 6 (58), Եր., 2014, էջ 70:

<sup>308</sup> Փաստաթղթերագրական ֆիլմ «Պատմության կեղծարարները, Աղբրեջան», <https://www.youtube.com/watch?v=AvnTAKc25mE>.

<sup>309</sup> Գաղափարական առումով սուլաֆիականությունը նկատի է առնում վերադարձ դեպի ակունքները, մասնավորապես իսլամի պատմության Մադինայի շրջանը (622-632 թթ.), կրթ ձևավորվեց Մուհամեդ մարգարեի կողմից դեկավարվող առաջին մուսուլմանական համայնքը՝ Ումմահ: Սալաֆիականությունը հիմք է ընդունում Դուրանը և սուեհան: Շեյխներապետ իսլամի պատմության գրեթե բոլոր ժամանակներում ի հայտ են եկել իսլամական կրոնական և կրոնաքաղաքական շարժումներ, որոնք կոչ են արել վերադառնալ վաղ իսլամի ակունքներին: Հենց սալաֆիականության զիրքերում էր կանգնած 18-րդ դարի արաբ կրոնական քարոզիչ Մուհամմադ իբն Աբդ Ալ-Վահաբը, որի ուսմունքն էլ առաջավի վանքականությունն անվանումը: Տե՛ս Փաշայան Ա., Բա-

ները<sup>300</sup> (այդ թվում՝ գյուլեսեականները), այնպես էլ այն քաղաքական կուսակցություններն ու կազմակերպությունները, որոնք հանդես էին գալիս որպես կրոնական իրավապաշտպան հասարակական կառույցներ<sup>301</sup>: Պատահական չէ, որ Ադրբեջանի հոգևոր առաջնորդ, միաժամանակ Կովկասի մուսուլմանների առաջնորդ Ալլահշուքուր Փաշազադեն, որն անթաքույց բացասական վերաբերմունք ունի ոչ միայն սալաֆիականների, այլև նուրջուականների նկատմամբ, դեռևս 2007 թ. նրանց համարեց ոչ ցանկալի, վտանգավոր աղանդներ, որոնք իրենց գործունեությամբ վնաս են հասցնում իսլամին<sup>302</sup>:

Ադրբեջանական իշխանությունների և հատուկ ծառայությունների կողմից կրոնական գործոնի չեզոքացման նպատակով բազմիցս իրականացվել են զանգվածային հալածանքներ, որոնցից կանդրադատանք ատավել հեչեդություն ստացած մի քանի դեպքերի: Այսպես, 2008 թ. օգոստոսի 17-ին «Աբու Բաքր» սալաֆիական մզկիթում տեղի ունեցավ անարեկչություն<sup>303</sup> (գոհվեց 2, վիրավորվեց 18 մարդ), ինչի հետևանքով իշխանություններն սկսեցին իրականացնել զանգվածային ձերբակալություններ, արգելեցին դրսում իրականացվող աղոթքը և փակեցին «Աբու

---

լամն Ադրբեջանում, անցալը և ներկան, Լորավանք ԳԿԸ, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2014, էջ 107:

<sup>300</sup> 1991 թ. հետո Ադրբեջանում, բացի թուրքական «զաչտոնական իսլամից», տարածում ստացավ թուրքական կրոնական մեկ այլ ուղղություն՝ սուֆիականությունը, որն Ադրբեջանում համախառն անվանում են նաև նուրջու (nuru), քանի որ չարժան էին նախադիրը՝ թուրք-իսլամական քաջուդչ իմամ Ֆեթուլա Գյուլենը, քրդական ծագումով առավանձաբան Մայիլ Լուրսիի (1877-1960) ուսմանը հետևողի է Տե'ս Փաշայան Ա. Եշվ. աշխ., էջ 95-96: Հարկ է նշել, որ մինչև Ֆ. Գյուլենի և ՔԸ Նախագահ Ռ. Էրդողանի միջև ծագած հակամարտությունը, թուրքական հատուկ ծառայությունները, օգտագործելով այս ուսմանը, տարբեր երկրներում իրականացնում էին հեռախոսային գործունեության, տե'ս Հովսեփյան Լ., Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, Դրոշակ, Լոյններ, 2010, թիվ 11:

<sup>301</sup> Юнычов А., Исламский фактор в Азербайджане, Баку, 2013, с. 161.

<sup>302</sup> Azerbaijan: Independent Islam and the State, Europe Report N°191, 25 March, 2008, p. 9.

<sup>303</sup> "Obu-bakr" mescidin in imami Qamot Süleymanov tərəfindən mətbuat açıqlaması, 11 Sentyabr 2008, <http://abubakr-mescidi.com/obu-bakr-mescidinin-imamiqamot-suleymanov-tarafindan-matbuat-aciqlaması/> (həqumun արված է 12.03.2016 թ.):

Բարր» մզկիթը: Անարեկչության կազմակերպման մեջ պետությունը մեղավոր ճանաչեց «Անտառային եղբայրներ» անունով արմատական խմբավորմանը, որի հետ կապ ունեցող մոտ երեք տասնյակ մեղադրյալներ դատապարտվեցին<sup>324</sup>: Չնայած երկարատև դատական գործընթացին, մզկիթն այդպես էլ չբացվեց համայնքի անդամների, մզկիթ այցելողների և շրջակայքում ապրող բնակիչների համար անվտանգ չլինելու հիմնավորմամբ: Արու Բարր մզկիթ այցելողները սկսեցին ադոթել սալաֆիական ուղղվածությամբ այլ մզկիթներում<sup>325</sup>:

2009 թ. հունիսին Ադրբեջանի խորհրդարանը «Դավանանքի ազատության մասին» օրենքում փոփոխություններ կատարեց, համաձայն որոնց՝ արտերկրում աստվածաբանական կրթություն ստացած անձանց արգելվեց իսլամական կրոնական արարողություններ վարելը: Դրանք կարող էին իրականացնել միայն Ադրբեջանի Հանրապետության այն քաղաքացիները, ովքեր կրոնական կրթություն էին ստացել Ադրբեջանում<sup>326</sup>: Մրանով իշխանությունները նպատակ ունեին օրենքի ուժով կասեցնել ընդդիմադիր հոգևորականների, ինչպես նաև Ադրբեջանի համար ոչ ավանդական կրոնական ուղղությունների քարոզիչների գործունեությունը, իսկ ադրբեջանցի բազմաթիվ երիտասարդներ կրոնական կրթություն էին ստացել իսլամական աշխարհի տարբեր կենտրոններում: Բացի այդ, պարտադրվեց կրոնական կազմակերպություններին ու համայնքներին վերագրանցվել: Անկախությունից ի վեր կրոնական համայնքներն արդեն մի քանի անգամ գրանցվել էին: Գրանցման գործընթացը պետք է իրականացնեք Կրոնական կազմակերպությունների հետ աշխատանքի պետական հանձնաժողովը մինչև 2010 թ. հունվարի 1-ը: Գրանցված չլինելու դեպքում համայնքները լուծարվելու էին: Նոր օրենքն, ըստ էության, միտված էր կրոնական դաշտի վերահսկողությանը և անցանկալի կառույցներից հեշ-

<sup>324</sup> Религиозная свобода в независимом Азербайджане, 2017 Октябрь 21, <http://www.turan.az/ext/news/2017/10/free/Want%20to%20Say%20no%20to%20Seyran%2066195.htm> (նրանում արված է 12.03.2016 թ.):

<sup>325</sup> Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 118:

<sup>326</sup> Dini etiqad azadligi haqqinda Azərbaycan Respublikasının qanun, հարված 21:

տորեն ազատվելուն: Օրենքում անդրադարձ կար եւս կրոնական գրականության գրաքննության չափորոշիչներին<sup>227</sup>:

Եվրոխորհրդի Վենետիկյան հասնձնաժողովը և ԵԱՀԿ-ն ևս արձանագրել են, որ «Կրոնական ազատության մասին» Ադրբեջանի Հանրապետության օրենքը, հատկապես 2009 թ. օրենսդրական փոփոխություններից հետո, չի համապատասխանում մարդու իրավունքների չափորոշիչներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն էլ կարծիք է հայտնել, որ օրենքը «անսահմանափակ լիազորություններ» է տվել Ադրբեջանի իշխանություններին՝ հետապնդելու կրոնական գործունեությունը<sup>228</sup>:

Ընդհանրապես 2009 թվականը Ադրբեջանի հավատացյալների շրջանում մեաց որպես «մզկիթատյացության» տարի: 2009 թ. օրենսդրական փոփոխություններից հետո Ադրբեջանում մի շարք մզկիթներ չկարողացան հաղթահարել այն պահանջները, որոնք առաջ էին քաշվել կրոնական կազմակերպություններին ու համայնքներին վերագրանցվելու համար և կանգնեցին փակման վտանգի առաջ: 2009-2010 թթ. Ադրբեջանի հասարակական առանձին շրջանակներում դժգոհությունների ալիք առաջացրին սուննիական ու շիայական մի քանի մզկիթներ անվտանգության, տեխնիկական վիճակի կամ օրենքի հետ կապված խնդիրներ ունենալու պատճառով քանդելու կամ փակելու մասին իշխանությունների որոշումները: 2009 թ. սկզբներին փակվեցին «Շահիդյար» և «Սուլեյմանյի» մզկիթները, այնուհետև քանդվեցին Գերանբոյ և «Նավթե քարեր» կոչվող բնակավայրերի մետաղական էտակադայով մզկիթները, փակվեցին Բարդիսի և Եվլախի շրջանային մզկիթները: Իշխանությունները պարզաբանում էին, իբր դրանք անօրինական շինություններն են և այդպիսի 10 մզկիթներ դեռ պետք է քանդվեն կամ փակվեն: Եվ 2009 թ. ընթացքում փակվեցին նաև Բարվում 2, Գյանջայում՝ 1, Մեդիա-

<sup>227</sup> Փաշայան Ա., նշվ. աշխ., էջ 57-58:

<sup>228</sup> USCIRF: Azerbaijani dini azadlıqlar pislənməkdə davam edir, [https://www.amerikainisəsi.org/ai/sin\\_azadliq/2744453.html](https://www.amerikainisəsi.org/ai/sin_azadliq/2744453.html) (hղումն արված է 11.02.2017 թ.):

բաղում՝ 1, հետագա տարիներին՝ եւ 4 մզկիթներ տարբեր վայրերում<sup>229</sup>:

Հավատացյալների իրավունքների ոտնահարումն Ադրբեջանում մզկիթների փակումով ու հիջաբ կրելու արգելքով<sup>230</sup> չսահմանափակվեց: Հատկապես երկրի հյուսիսային շրջաններում հատուկ ծառայություններն ու ոստիկանությունը ակտիվ պայքար էին սկսել սալաֆիների դեմ: Նրանց շրջանում պարբերաբար իրականացնում էին ձերբակալություններ, բերման ենթարկում ոստիկանական բաժանմունքներ, ենթարկում ծեծի ու նվաստացումների, որից հետո սափրում նրանց մորուքները: 2004-2012 թթ. Ադրբեջանում ձերբակալվել է 562 հավատացյալ<sup>231</sup>:

Հատկանշական է, որ բոլոր ձերբակալվածները մեղադրվել են ծանր կամ ասանձնապես ծանր հանցագործություններ նախապատրաստելու կամ իրագործելու մեջ՝ անարեկչական գործողություններ նախապատրաստելու, զինված խմբեր ստեղծելու, պետական դավաճանության կամ էլ պետական հեղաշրջում նախապատրաստելու:

Վերջին տարիների մեծ հնչեղություն ստացած կրոնական բնույթի բազմաթիվ քրեական գործերից մեկը «Մայիդ Դադաշբեյլի խմբավորման» գործն է: Այն ոչ միայն լայն արձագանք ստացավ երկրում, այլև դարձավ դիվանագիտական սկանդալի պատճառ Ադրբեջանի և Իրանի միջև: Համաձայն Ադրբեջանի Հանրապետության նախկին ազգային անվտանգության նախարարության կողմից տրված տեղեկատվության, խմբավորման

<sup>229</sup> Միջազգային կրոնական ազատության հարցերով ԱՄՆ-ի հանձնաժողովի (USCIRF) գնկույթը Ադրբեջանի մասով, էջ 6, [https://www.uscirf.gov/sites/default/files/Azerbaijan%202017%20reviewed\\_Russian.pdf](https://www.uscirf.gov/sites/default/files/Azerbaijan%202017%20reviewed_Russian.pdf), տե՛ս նաև *Ազերբայժան արքայազմի ՀԿԲԼ-ՑԿԵ*, <http://www.contact.az/wap/2017/4/free/Want%20to%20Say/ru/61328.htm>, *Почему в Азербайджане закрывают мечети*, [http://www.bbc.com/russian/international/2009/11/091103\\_azeri\\_mosque\\_closures.shtml](http://www.bbc.com/russian/international/2009/11/091103_azeri_mosque_closures.shtml) և այլն (հղումներն արված են 19.02.2017 թ.):

<sup>230</sup> Ադրբեջանի իրավապահ մարմինների և հավատացյալների միջև բազմաթիվ ընդհարումներ են եղել իշխանությունների կողմից հիջաբ կրելն արգելելու պատճառով:

<sup>231</sup> Հնարավորվածների թիվը շատ ավելի մեծ է, քանի որ այդ թիվը ստացվել է ադրբեջանական ՔԼԲ-ների կողմից ձեռք բերված փաստերի հիման վրա, մինչդեռ բավական թվով դեպքեր իրավապահ մարմինների կողմից թաքցվել են, Юныцов А., *եզվ. աշխ.*, էջ 169-170:



բոլոր 16 անդամները ձերբակալվել են 2007 թ. հունվարի 13-ին, որոնցից 6 հոգին ազատ են արձակվել: Մնացած 10-ը մեղադրվել են այն բանում, որ, ղեկավարվելով կրոնական ծայրահեղական գաղափարներով, իրենց առջև նպատակ են դրել բռնությամբ գավթել իշխանությունը, տապալել Ադրբեջանի Հանրապետության աշխարհիկ քաղաքական կարգը և երկիրը կառավարել շարիաթի օրենքներով: Այդ նպատակով Մայիդ Դադաշբեյլիև և նրա համակիրները ստեղծել են կրոնական-ծայրահեղական գաղտնի կազմակերպություն՝ «Իմամ Մենթիի հյուսիսային բանակ» անվամբ<sup>302</sup>: Կազմակերպության անդամները, ըստ նախկին ԱԱՆ-ի, գաղտնի համագործակցել են իրանական հատուկ ծառայությունների հետ, ստացել հանձնարարություններ՝ հավաքել տարբեր բնույթի տեղեկություններ ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի և Բուրայելի կողմից Ադրբեջանում ծավալած գործունեության վերաբերյալ: Սակայն «Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտը պարզել է, որ 2007 թ. հունվարի 13-ին վերոնշյալ մեղադրանքով ձերբակալվել է ոչ թե 16, այլ 30 մարդ, ընդ որում երանց մի մասը, առանց որևէ բացատրության, հասարակական վայրերից ուղղակի առնանգվել է քաղաքացիական համագգեստով անձանց կողմից և տարվել ԱԱՆ մեկուսարան, այնուհետև նրանց մի մասին ստիպել սուտ ցուցմունքներ տալ մյուսների վերաբերյալ: Միաժամանակ, ԱԱՆ աշխատակիցները ցուցադրաբար, բոլորի աչքի առաջ ներխուժել են ձերբակալվածների բնակարաններ և այնտեղ տեղադրել զենքեր ու ձերբակալությունների համար այլ հանցանշաններ: Բացի այդ էլ, ձերբակալվածներին ԱԱՆ մեկուսարանում պարբերաբար ենթարկել են ծեծի ու կտտանքների, պահել ծարավ և քաղցած, կիրառել հոգևորագործող միջոցներ՝ հորդորելով ընդունել իրենց մեղավորությունը, այլապես սպառնալով վնասել ընտանիքի անդամներին<sup>303</sup>: Ձերբակալվածներից մեկը՝ Էմին Մամեդովը, չլիմանալով ծեծին ու խոշտանգումներին, մահացել է հենց մեկուսա-

<sup>302</sup> Юрыков А., ևշվ. աշխ., էջ 173-175:

<sup>303</sup> Նույն տեղում:

բանում<sup>384</sup> է։ Մամեդովի մահից հետո էլ հալածանքների են ենթարկվում նրա ընտանիքի անդամները այն բանի համար, որպեսզի չբարձրաձայնեն է։ Մամեդովի մահը և չղիմեն իրավապաշտպան կազմակերպություններին։

Նատարանում ձերբակալվածները չեն ընդունել իրենց մեղքը և հայտնել են իրենց նկատմամբ կիրառված ծեծի ու խոշտանգումների մասին։ Հատկանշական է, որ նույն խմբի անդամ ներկայացվող անձանց մի մասը մյուսներին մինչ ձերբակալվելը չի էլ ճանաչել։

Աղբյուրն ասում կա տարածված կարծիք, որ իրավապահ մարմինների աշխատակիցները կրոնական առումով մեղմ առանձնավորված են։ Նրանք երբեմն չզիսեն անզամ սուննիների ու շիաների տարբերությունը։ Եվ լինում են դեպքեր, որ ձերբակալվածին ներկայացվում է բացարձակ անհիմն ու տրամաբանությունից զուրկ մեղադրանք։ Այսպես, ՆԳՆ և Գլխավոր դատախազության համատեղ հայտարարության մեջ Նարդարանի մի խումբ բնակիչներ ներկայացվել են որպես վահաբիներ, մինչդեռ նրանք շիաներ են և սալաֆիների նկատմամբ տրամադրված են թշուսամբար։ Հայտնի կրոնական գործիչ Ջավիդ Մամեդովը 2012 թ. հոկտեմբերի ամսին ձերբակալվել է՝ իբր հավատացյալների մեջ իրանամետ տրամադրություններ քարոզելու և ի պաշտպանություն հիջաբ կրելու ցույց կազմակերպելու համար։ Մինչդեռ հայտնի է, որ Ջ. Մամեդովը բացասական վերաբերմունք ունի Խումեյնիի դոկտրինի վերաբերյալ, իսկ նրա աղջիկը դարոց է հաճախում առանց հիջաբի<sup>385</sup>։

Վերջին տարիների բազմաթիվ ձերբակալված կրոնական գործիչներից է նաև հայտնի աստվածաբան, մարդու իրավունքների պաշտպան, քաղաքացիական ակտիվիստ, «Իսլամական միասնություն» կազմակերպության ղեկավար հաջի Թալե Բադիբադե (նաև Թալե Բադիբով) է։ Վերջինս, փալոն կրթություն ստանալով Իրանում և վերադառնալով հայրենիք, չնայած

<sup>384</sup> Leyla Yunus: В следственном изоляторе МИБ Азербайджана применяются страшные пытки, <http://www.pasportama.am/ru/society/2013/12/17/l-yunus/> (հղումն արված է 11.12.2014 թ.):

<sup>385</sup> Юнусов А., նշվ. աշխ., էջ 176-177:

երիտասարդ տարիքին, կարճ ժամանակ անց հավատացալ-ներին շրջանում ձեռք է բերել մեծ հեղինակություն և հարգանք: Լա հատկապես շիա արմատականության կենտրոն համարվող Նարդարանում սոցիալ-քաղաքական, խաղասիրական թեմանե-րով ելույթներ էր ունենում, որոնք մեծ արձագանք էին գտնում հավատացյալների (և ոչ միայն նրանց) շրջանում: Իշխանութ-յուններին դա դուր չէկավ և դեռևս 2011 թ. մայիսին նրան ձերբա-կալեցին «խուլիգանության» համար: 2011 թ. դեկտեմբերին ևս դատապարտվեց կես տարվա ազատազրկման արդեն որպես հիջաբի արգելքի դեմ իրականացված ցույցի կազմակերպիչ: 2012 թ. նոյեմբերի 6-ին ևս վերադարձավ բանտից և սկսեց շա-րունակել հրապարակային ելույթները, որոնցում ևս սուր քննա-դատության էր ենթարկում իշխանությունների վարած քաղա-քականությունը: Եվ անհարձագանքը չուշացավ. 2013 թ. մար-տին Կրոնական կազմակերպությունների հետ տարվող աշխա-տանքների պետական հասանձեամբովը ընդունեց որոշում փակել այն մզկիթը, որտեղ ուրբաթօրյա աղաթների ժամանակ ելույթ էր ունենում Թ. Բադիրովը, իսկ մարտի վերջին էլ ուղ-ղակի ձերբակալեցին նրան անհիմն՝ թմրանյութ օգտագործելու մեղադրանքով<sup>306</sup>: Այդ առիթով Կովկասի մուսուլմանների վար-չության ներկայացուցիչը հայտարարեց, թե մզկիթը սաղրանք-ների վայր չէ, և իրենք ունեն վկայություններ, որ օտարերկրյա որոշ ուժեր փորձում են օգտագործել հավատացյալներին շահադիտական նպատակներով:

Թ. Բադիրովի ձերբակալությունը, ըստ աղբյուրների որոշ վերլուծաբանների, ուներ նաև քաղաքական ենթատեքստ: Քանի որ վերջինս հայտնի է իր իրանամետ դիրքորոշմամբ ու «մահ Ամերիկային», «մահ Իսրայելին» կարգախոսներով, վերլուծա-բանները գտնում են, որ աղբյուրներից հատուկ ծառայութ-

<sup>306</sup> Комиссия США по международной религиозной свободе, Ежегодный доклад - 2014: Азербайджан, <http://www.kavkaz-uzel.eu/articles/243080/> (նդումն արված է 03.10.2016 թ.):

յունեներն ու եւխագանի աշխատակազմը տեղի են տվել Արեւմուտքի ճնշումներին<sup>307</sup>:

2015 թ. ամռանը Թ. Բաղիրովն ազատ արձակվեց և ընդամենն ամիսներ անց կրկին ձերբակալվեց, երբ 2015 թ. օկտեմբերի 26-ին Ադրբեջանի իրավապահ մարմինները հատուկ գործողություն իրականացրին Բաքվից 26 կմ հեռավորության վրա գտնվող Նարդարան ավանում, որի ընթացքում սպանվեց 5 նարդարանցի և 2 ոստիկան<sup>308</sup>:

2017 թ. հունվարի Բաքվի ծանր հանցագործությունների դատարանը Թ. Բաղիրզադեին դատապարտեց 20 տարվա ազատազրկման մեղադրվելով Ադրբեջանի քրեական օրենսգրքի միանգամից տասից ավել հոդվածներով<sup>309</sup>:

ԱՄՆ պետքարտուղարությունը 2015 թ. տարեկան զեկույցի Ադրբեջանին վերաբերող մասում անդրադարձավ Թ. Բաղիրզադեի ձերբակալությանը և նմանատիպ այլ հակաօրինական ու ժողովրդավարության ձայնը ճնշող գործողությունների՝ նշելով, որ այդ Ադրբեջանում պաշտոնական անձինք սահմանափակում են այնպիսի հիմնարար ազատություններ, ինչպիսին հավաքների և արտահայտվելու ազատությունն է, և նեղացրել են քաղաքացիական հասարակության գործունեության համար տարածությունը<sup>310</sup>:

Ադրբեջանում կրոնական նպատակներով իրականացվող ձերբակալությունների վերաբերյալ հետաքրքիր մեկնություն է տվել հայտնի պատմաբան Աղիբ Խալիլը. «Այդ ինչպես է պա-

<sup>307</sup> Թուրանի վեբլուծական ծառայություն, Бетан «Надзорские органы», [http://www.contact.az/docs/2013/Analytica/040400033425ru.htm#\\_Va3bXz7G6Fc](http://www.contact.az/docs/2013/Analytica/040400033425ru.htm#_Va3bXz7G6Fc) (հղումն արված է 10.12.2016 թ.):

<sup>308</sup> Նարդարանի դեպքերի վերաբերյալ մանրամասն տե՛ս արտաբնօրին Ա. Փաշալսի և իրանագետ Ա. Տոնյանի հարցազրույցը [rasm.info](http://rasm.info) կայքում, Նարդարան Ադրբեջանի շիաների ըմբոստ տվանը մեկ տարի անց, Օկտեմբեր 25, 2016, <https://rasm.info/92210> (հղումն արված է 11.12.2016 թ.):

<sup>309</sup> Телек Багиров приговорен к 20, Фуад Гакбраманлы к 10 годам лишения свободы, 25 Января 2017, <http://ru.ara.az/novosti-azerbaydjana/proisshestvie-v-azerbaydjane/telek-bagirov-prigovoren-k-20-fuad-gakbramanly-k-10-godam-libheniya-svobody.html>, (հղումն արված է 23.02.2017 թ.):

<sup>310</sup> Azerbaijan 2015 international religious freedom report, <https://www.state.gov/documents/organization/256377.pdf> (հղումն արված է 22.10.2016 թ.):

տահում, որ բոլոր ձերբակալված հավատացյալները կամ թմրամոլ են, կամ խուլիգան, ... ուրեմն հատուկ ծառայության աշխատակիցներն իրենք են «զցում» թմրանյութը և ձերբակալում»<sup>341</sup>:

Կրոնական և էթնիկ դրդապատճառներով աղբրեջանական հատուկ ծառայությունների կողմից հաջողից հետապնդումն իրականացվեց մաթեմատիկական գիտությունների թեկնածու, «Толкунъ садо» թերթի գլխավոր խմբագիր և Թալիշական մշակույթի կենտրոնի ղեկավարի տեղակալ Հիլալ Մամեդովի նկատմամբ: Նրա ձերբակալությունը տեղի է ունեցել 2012 թ. հունիսի 21-ին: Սկզբում նրա զրպանից հանել են իրենց իսկ զցած թմրանյութը, իսկ հետո մեղադրել Իրանի օգտին լրտեսության մեջ՝ թեև հայտնի է, որ Հ. Մամեդովը սուեյի է և բազմիցս սուր քննադատության է ենթարկել Իրանի շիա ռեժիմը: Վերջինիս մեղադրանք է ներկայացվել Աղբրեջանի Հանրապետության «Քրեական օրենսգրքի» 274-րդ հոդվածի (պետական դավաճանություն) և 283.2.2 (ազգային և էթնիկական խտրականություն, ռասսայական, սոցիալական և կրոնական ատելություն, թշնամանք սերմանելը) հոդվածների հատկանիշներով: Աղբրեջանական և միջազգային ժողովրդավարական հաստատությունների համոզմամբ նա ձերբակալվել է քաղաքական մոտիվներով՝ իր քաղաքացիական դիրքորոշման և իրավապաշտպան ակտիվ գործունեության պատճառով<sup>342</sup>:

2012 թ. ամռանը Մոսկվայում Աղբրեջանի դեսպանատան առաջ երեք բողոքի ակցիաներ են անցկացվել, որոնցում պահանջել են վերջ տալ էթնոցիդին (տերմինն օգտագործել են ակցիայի մասնակիցները) և ազատ արձակել Մամեդովին: «Մարդու իրավունքների միջազգային հիմնադրամը» (FIDH) և «Ընդդեմ խոշտանգումների համաշխարհային կազմակերպությունը» (OMCT) «Իրավապաշտպանների պաշտպանության» ծրագրի շրջանակներում հանդես են եկել համատեղ հայտարարությամբ, որով Աղբրեջանի իշխանություններին կոչ է արվել անհապաղ և անվերապահորեն ազատ արձակել Մամեդովին,

<sup>341</sup> Юнусов А., նշվ. աշխ., էջ 180-181:

<sup>342</sup> Авторъ романа "Ты кто такой? Давай, до свидания" обвиняют в шпионаже в пользу Ирана, <https://regnum.ru/news/polit/1548105.html> (նդումն արված է 01.12.2014 թ.):

քանի որ նրա ձերբակալությունը միայն պատրվակ է նրան լուծ-  
նելու և խոչընդոտելու խոսել Ադրբեջանում ազգային փոքրա-  
մասնությունների իրավունքների խախտումների մասին<sup>365</sup>:

Հատկանշական է, որ «Голосомъ сядо» թերթի նախկին  
գլխավոր խմբագիր, պրոֆեսոր Լուկրուզալի Մամեդովը 2008 թ.  
ևս ձերբակալվել է Ադրբեջանի հատուկ ծառայությունների կող-  
մից և կրկին մեղադրվել պետական դավաճանության մեջ: 2009  
թ. նա մահացել է բանտում, քանի որ մերժել են բուժօգնություն  
տրամադրել: Նրա որդիները ևս տարօրինակ կերպով մահա-  
ցել են. մեկն ավտովթարի զոհ է դարձել, մյուսը մահացել ձեռվե-  
լով ու խոշտանգվելով<sup>366</sup>:

Բացի հասարակական-քաղաքական ակտիվ գործունեու-  
թյուն ծավալող անհատների նկատմամբ ուղղակի հետա-  
պնդումներ իրականացնելուց ադրբեջանական հատուկ ծառա-  
յությունները այլ տեսակի ճնշումներ ևս իրականացնում են էթ-  
նիկ փոքրամասնությունների նկատմամբ: Մանավորապես, վա-  
հաբականության, ծայրահեղական, ազգայնական այլ կազմա-  
կերպությունների դեմ պայքարի անվան տակ հատուկ նշանա-  
կության ստորաբաժանումները անսպասելի խուզարկություն-  
ներ ու ձերբակալություններ են իրականացնում հատկապես  
ազգային փոքրամասնություններով բնակեցված շրջաններում,  
ձերբակալում իշխանությունների համար անցանկալի անձանց,  
այդ թվում՝ լեզգիների, ավարների, թալիշների, ցախուրների  
վերջիններիս նեթարկելով անասելի կտտանքների: Ադրբեջանի  
հատուկ ծառայությունների կողմից պարբերաբար ձերբակալու-  
թյուններ են իրականացվել հատկապես լեզգիական տարբեր  
շարժումների, այդ թվում՝ «Մադվալ» կազմակերպության ակտի-

<sup>365</sup>AZERBAIJAN: The United Nations find the detention of Hilal Mammadov arbitrary; immediate release and compensation requested, 27/03/2014, <https://www.fidh.org/International-Federation-for-Human-Rights/eastern-europe-central-asia/azerbaijan/15034-azerbaijan-the-united-nations-find-the-detention-of-hilal-mammadov> (նդումն ար-  
ված է 10.01.2015 թ.):

<sup>366</sup> Азербайджанской спецназ проводит «чистки» в талышско-селенских районах, <http://www.panorama.am/ru/region/2012/09/22/azer-operation-talysh/> (նդումն ար-  
ված է 11.01.2015 թ.):

վիստեների շրջանում<sup>365</sup>: Էթնիկ փոքրամասնությունների նկատմամբ իրականացվում է հետևողական, թեկուզ դանդաղ ընթացող ցեղասպանության քաղաքականություն:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է փաստել, որ ադրբեջանական հատուկ ծառայություններին ու իրավապահ մարմիններին «իջեցված է» հրահանգ՝ ամեն կերպ վերահսկել էթնիկ ու կրոնադավանական փոքրամասնությունների հասկապես ակտիվ գանգվածի գործունեությունը, և իշխանությունների նկատմամբ բացասական տրամադրություններ ունեցողներին անմիջապես հայտնաբերել ու ամեն գնով, թեկուզ անեհիմն ու շինծու մեղադրանքներով, ձերբակալել՝ մեկուսացնելով հասարակությունից: Դա ունի երկու հիմնական նպատակ.

1. Թույլ չտալ էթնիկ և կրոնադավանական փոքրամասնություններին ինքնադրսևորվել, պահպանել ազգային ինքնությունը, լեզուն, մշակույթը, ազգային սովորույթներն ու ավանդույթները, ինչպես նաև չեզոքացնել աշխարհիկ Ադրբեջանի հնարավոր կրոնականացումը:

2. Թույլ չտալ պաշտոնական իսլամից դուրս գործող մուսուլման հոգևորական գործիչներին (սուենի, թե շիա) ակտիվ գործունեության ծավալել Ադրբեջանում: Ձսպման ու ճնշման քաղաքականությամբ Ադրբեջանի իշխանությունները փորձում են ինչպես լիովին վերահսկողության սահմանել ներքին կրոնական դաշտում, այնպես էլ արգելափակել իսլամական աշխարհից Ադրբեջան գաղափարախոսական ներթափանցումը:

### **3.5. Ադրբեջանի իշխանությունների և հատուկ ծառայությունների կողմից իրականացվող քաղաքական հետապնդումները**

<sup>365</sup> Фейсбук-Наргис, Лезгинское народное движение «Садвал». Становление, общественная деятельность и политические уроки, <https://www.proza.ru/2013/09/23/1017>, Репрессии против «Садвал» и убийство его активистов, март 20, 2012 <http://legizstan.tv/novosti/repressii-protiv-sadval-i-ubijstvo-ego-aktivistov/> (նշումների արված են 21.10.2016 թ.):

Ներկայումս Ադրբեջանի Հանրապետությունում տարեց-տարի աճում է քաղաքական անհանդուրժողականությունը: Թեև Ադրբեջանը հանդիսանում է Եվրոպայի խորհրդի ու ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի անդամ<sup>396</sup>, այն շարունակաբար ենթարկվում է քննադատության միջազգային տարբեր կազմակերպությունների կողմից, ինչպիսիք են «Amnesty International»-ը, «Freedom House»-ը, «Human Rights Watch»-ը, «Reporters Without Borders» և այլն: Բազմաթիվ անօրինակությունների թվում ադրբեջանցի պաշտոնյաները մեղադրվել են ինքնակամ ձերբակալություններ, անհիմն բանտարկություններ, ծայրագույն դաժան խոշտանգումներ, տանջանքներ իրականացնելու ու մարդկանց անհետ կորցնելու մեջ: Ոստիկանապես բուլդոզերանք, ուժեր քննադատում են իշխանություններին, ենթարկվում են տարասեսակ ճնշումների ու եվաստացումների: «Երկրում կան զգալի թվով քաղաքատարկյալներ, հավաքների անցկացման ազատությունը սահմանափակվում է, իսկ ՋՂՄ-ի իրավունքներն ու ազատությունները ոտնահարվում», - 2010 թ. ընտրություններից առաջ նշել էր Ադրբեջանի «Ազգային ճակատ» կուսակցության նախագահ Ալի Ֆերիմլիև<sup>397</sup>: «Ադրբեջանը տարիներ շարունակ թաքցնում է մարդու իրավունքների մտալ վիճակը», - նշված է ամերիկյան «Foreign Policy» ամսագրի խմբագրի օգնական Իյա Լոզովսկու հոդվածում<sup>398</sup>: Գերմանիայի Բունդեսթագը (խորհրդարանը) 2015 թ. հունիսի 12-ին ընդունել է բանաձև, որտեղ քննադատել է մարդու իրավունքների ոտնահարումներն Ադրբեջանում և պահանջել անհապաղ ազատ արձա-

<sup>396</sup> 2006 թ. մայիսի 9-ին Ադրբեջանն ընտրվել է ՄԱԿ-ի Մարդու իրավունքների նորաստեղծ խորհրդի անդամ, տե՛ս GENERAL ASSEMBLY ELECTS 47 MEMBERS OF NEW HUMAN RIGHTS COUNCIL; MARKS 'NEW BEGINNING' FOR HUMAN RIGHTS PROMOTION, PROTECTION, 9 MAY 2006, <https://www.un.org/press/en/2006/ga10459.doc.htm> (հղումն արված է 17.11.2014 թ.):

<sup>397</sup> Ֆերիմլի Ա., Անջնջանում քաղաքական իրավիճակն անբարենպաստ է ազատ և արդար ընտրություններ անցկացնելու համար, <http://www.pancoroma.am/en/politics/2010/08/20/ali-ferimli/> (հղումն արված է 18.11.2014 թ.):

<sup>398</sup> Lozovsky I., How Azerbaijan and Its Lobbyists Spin Congress, <http://foreignpolicy.com/2015/06/11/how-azerbaijan-and-its-lobbyists-spin-congress/> (հղումն արված է 18.11.2014 թ.):



կել քաղաքատարկյալներին<sup>396</sup>։ Ստրասբուրգում 2015 թ. հունիսի 23-ին Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգային կոմիտեի՝ «Աղբբեջանում դեմոկրատական ինստիտուտների գործողության մասին» զեկույցի հիման վրա ընդունված փաստաթղթում Աղբբեջանի իշխանությունների առաջ պահանջ է դրվել անհապաղ ազատ արձակել քաղաքական դրդապատճառներով բանտարկյալներին<sup>397</sup>։ Ըստ «Index of Censorship» իրավապաշտպան կազմակերպության տվյալների՝ Աղբբեջանում կա մոտ 100 քաղաքական բանտարկյալ։ Իրավապաշտպան միջազգային կազմակերպությունները բազմիցս արձանագրել են նաև, որ 1993 թ. Հ. Ալիևի իշխանության գալուց ի վեր, Աղբբեջանում չեն անցկացվել ազատ ու արդար ընտրություններ։ Ինչ վերաբերում է Ի. Ալիևին, ապա վերջինս նախագահ է դարձել Աղբբեջանում անձի պաշտամունքը մարմնավորող դարձած հորից իշխանությունը ժառանգելու միջոցով։

Աղբբեջանում քաղաքական նպատակներով իրականացվող հետապնդումներին գլխավորապես լծված են երկրի Պետական անվտանգության ծառայությունը (մինչև 2015 թ. դեկտեմբերը՝ Ազգային անվտանգության նախարարություն) և Ներքին գործերի նախարարությունը։

Հարկ է նշել, որ քաղաքական հետապնդումներն Աղբբեջանում առավել լայն թափ ստացան հատկապես Ի. Ալիևի իշխանության գալուց հետո, երբ հալածանքները սաստկացան ինչպես քաղաքական կուսակցությունների ու կազմակերպությունների, այնպես էլ ազգային ու կրոնադավանական փոքրամասնությունների ներկայացուցիչների նկատմամբ<sup>398</sup>։

Աղբբեջանում մեծ հեշտություն ստացած քաղաքական հետապնդումներինց մեկը կապված էր Պաշտպանության նախա-

<sup>396</sup> Bundestag verurteilt Situation in Aserbaidschan, [http://www.deutschlandfunk.de/europaspiele-bundestag-verurteilt-situation-in-aserbaidschan.890.de.html?drum:article\\_id=322520](http://www.deutschlandfunk.de/europaspiele-bundestag-verurteilt-situation-in-aserbaidschan.890.de.html?drum:article_id=322520) (նդումն արված է 23.11.2014 թ.)։

<sup>397</sup> Նմխվ.-ն Աղբբեջանի իշխանությունների առաջ պահանջ է դրել ազատել քաղաքատարկյալներին <http://artsakhpress.am/arm/news/21128/ekhkhhv-n-adrbejan-ishkhamutyunneri-arsj-pahanj-e-drel--azstel-qaxbantarkyalnerin.html> (նդումն արված է 22.11.2014 թ.)։

<sup>398</sup> Юзвсва А., նշվ. աշխ., էջ 161։

յարությունում կատարվող յուրացումների հետ: Ինչպես աղբբե-  
 ջանական Avrasiya.net գործակալությանը վերոնշյալ գործով  
 հայտնել է Աղբբեջանի ԱԱՆ նախկին քննիչ, Ֆրանսիայում  
 բնակվող քաղաքացիական վտարանդի Ռամին Լազիկը, բոլոր  
 նրանք, ովքեր փորձում են Աղբբեջանի ՊՆ համակարգում  
 բացահայտել հանցագործություններ, յուրացումներ, վատում-  
 ներ, կամ դառնում են ազգի թշնամիներ, կամ սպանվում են<sup>302</sup>: Ռ.  
 Լազիկը մանրամասնել է, որ ռազմական դատախազության հա-  
 տուկ կարևորության գործերով ավագ քննիչ Ակիֆ Մամեդ-զադե  
 Բազիֆ օլլին կաշառք ստանալու շինծու մեղադրանքով ձեր-  
 բակարկել և դատապարտվել է ութ տարվա ազատազրկման այն  
 բանից հետո, երբ փորձել է ապացուցել տարիներ առաջ տեղի  
 ունեցած 1 մլն ԱՄՆ դոլարի յուրացման փաստը: Մեկ այլ դեպ-  
 քում զենեքալ Վահիդ Մուսանը ՊՆ-ում կատարվող յուրացման  
 վերաբերյալ գլխավոր դատախազությանը հայտարարություն  
 տալուց հետո հեռացվել է պաշտոնից և ենթարկվել քրեական  
 հետապնդման՝ պաշտոնական դիրքի չարաշահման մեղադ-  
 րանքով և 1999 թ. սպանվել բանտում: Լախազահին կից հատուկ  
 վարչության նախկին ղեկավար զեդայետ Շամսի Ռազիմովը,  
 խորհրդարանի նախագահի տեղակալ Աֆիադդին Ջալիլովը,  
 խորհրդարանի պատգամավոր ակադեմիկոս Ջիյա Բունիաթովը  
 և սպանվել են նույն պատճառով (բոլորն զբաղվում էին ՊՆ-ում  
 միջոցների վատման բացահայտմամբ): Նրանց մահից հետո  
 առկա փաստաթղթերն անհետացել են: Ըստ աղբբեջանական  
 որոշ լրատվամիջոցների՝ սպանությունները չեն բացահայտվել,  
 քանի որ դրանց հետևում կանգնած է եղել իշխանությունը:  
 Հատկանշական է, որ երբ այդ մասին ուժային կառույցների գոր-  
 ծունեությունը համակարգող պաշտոնյաները զեկուցել են Ի.  
 Ալինին, նա զայրացած հայտնել է հետևյալը. «Որքան կարելի է  
 Ձեզ ասել, որ ես չեմ ուզում լսել ձեր քննադատությունները  
 Ռամիլ Ուսուբովի (ՆԳ նախարարը) մասին: Ռամիլը ինչպես  
 աշխատել է, այնպես էլ կշարունակի աշխատել նախարարի

<sup>302</sup> Бывший следователь МВД: В Азербайджане убивают всех, кто разоблачает хищения в системе Минобороны, <http://www.pasportama.am/ru/region/2013/01/12/azer-murders/> (նրումն արված է 20.11.2014 թ.):

պաշտոնում: Եթե ես մեկ անգամ էլ լսեմ որևէ քննադատություն ՆԳ նախարարի հասցեին, խիստ կալամածեմ հենց քննադատողին: Այն ամենը, ինչ անում է Ռ. Ուսուրովը, համարեք, որ նա դա անում է իմ հրահանգով»<sup>393</sup>:

2000 թ. նոյեմբերի 18-ին Ադրբեջանի իշխանություններն ու հատուկ ծառայություններն իրականացրին հերթական խոշոր քաղաքական հետապնդումը: Այդ օրը սոցիալական խեղդիները լուծելու պահանջով Շեքի քաղաքում իրականացված բողոքի ցույցի ժամանակ իշխանությունների ուղարկած սադրիչները հրահրել են անկարգություններ, որոնց հետևանքով հետապնդվել, ձերբակալվել ու դատապարտվել են ընդդիմադիր մի շարք գործիչներ (40 անձ), այդ թվում «Մուսավաթ» և «Ազգային ճակատ» կուսակցության անդամներ: Դեպքից ընդամենը օրեր անց իրավապահ մարմինները հետապնդումներ իրականացրին նաև ընդդիմադիր «Մուխալիֆաթ» («Ընդդիմություն») և «Յեեի Մուսավաթ» թերթերի խմբագրությունների աշխատակիցների նկատմամբ<sup>394</sup>:

Ադրբեջանում տարածված է այսպիսի համոզմունք, որ, եթե ընտանիքի անդամներից մեկը ընկնում է ադրբեջանական իշխանությունների կամ հատուկ ծառայությունների «սև ցուցակ», ապա ընտանիքի մյուս անդամները ևս ենթարկվելու են հալածանքների ու բռնաճնշումների<sup>395</sup>: Նման համոզմունքի համար հիմք է հանդիսացել 2009 թ. քաղաքական հալածանքների ալիքը «այլախոհների», հատկապես քաղաքագետների ու նրանց ընտանիքի անդամների նկատմամբ: Նման կերպ հետապնդվել են ադրբեջանցի քաղաքագետներ Հիքմետ Գաջիգադևն, Արաստուն Օրուջլին: Վերջինիս որդին՝ Թուրան Օրուջլին, կասելվել է ԱԱԸ՝ «Եվրոտեսիլ 2009»-ին Հայաստանի օգտին քվեարկելու համար: Ուշագրքավ փաստ է, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունները «Եվրոտեսիլ 2009»-ին Հայաստանի ներկայացուցչի օգ-

<sup>393</sup> Նույն տեղում:

<sup>394</sup> Политические и религиозные преследования в странах СНГ, Сводка новостей за декабрь 2000 года. № 10, Азербайджанская Республика, <http://www.memo.ru/hr/politpr/sng/9v10/9v10.htm> (նդումն արված է 25.11.2014 թ.):

<sup>395</sup> Исмаилов А., Рамез Мехтепек, Дювей, до свидания, <http://naqqin.az/news/4129> (նդումն արված է 25.11.2014 թ.):

տին քվեարկելու համար հարցաքննության են կանչել 43 հոգու<sup>366</sup>։ Այս առումով հատկանշական է «Freedom House» միջազգային իրավապաշտպան կազմակերպության գնահատականը Ադրբեջանի կառավարության կողմից համացանցը և բջջային կապը վերահսկելու վերաբերյալ։ «Թուրան» լրատվական գործակալության վաշինգտոնյան լրագրողին կազմակերպության փորձագետ Սառա Ֆենձորը հայտնել է. «Կառավարությունը (Ադրբեջանի) հազվադեպ է ուղղակիորեն արգելափակում համացանցը, հիմնականում օգտագործվում են հոգեբանական մեթոդներ։ Այսպես, անցանկալի օգտատերը կարող է ձերբակալվել, հրապարակայնորեն նվաստացվել պետական ՋԱՄ-ներով և այլն։ Այս քաղաքականությունն ունի զսպման ազդեցություն և դրա պատճառով ու նաև քաղաքական նկատառումներով շատ ադրբեջանցիներ հրաժարվում են օգտվել համացանցից։ Իսկ բջջային հեռախոսներ ներթափանցելու տեխնիկական հնարավորություններն ուղղակի բազմազան են։ Բջջային հեռախոսից օգտվող քաղաքացուն իշխանությունները կարող են հետևել ամենուր»,- նշել է Ֆենձորը օրինակ բերելով «Եվրոտեսիլ 2009»-ի քվեարկությունից հետո ադրբեջանցի քաղաքացիներին ԱԱՆ հրավիրելու փաստը<sup>367</sup>։

Ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից քաղաքագետներին, լրագրողներին հետապնդելիս նկատվում են նրանց բնակարաններում կամ գրպաններում թմրանյութեր, պայթուցիկ նյութեր, զենք-զինամթերք «հայտնաբերելու» փաստեր կամ էլ օտարերկրյա հատուկ ծառայությունների հետ համագործակցության ու պետական դավաճանության շինծու մեղադրանքներ։ Գործում է հետևյալ պարզունակ սխեման. հատուկ ծառայության աշխատակիցները խուզարկության նպատակով ներխուժում են անցանկալի անձ ճանաչվածի բնակարան իրենց հետ տանելով թմրանյութեր, պայթուցիկ նյութեր

<sup>366</sup> «Եվրոտեսիլ 2009». Բացան նախնականում է ժխտել, որ հայկական երգի համար քվեարկածները հարցաքննության են ենթարկվել, [http://www.kommag.blogspot.com/2009\\_08\\_01\\_archive.html](http://www.kommag.blogspot.com/2009_08_01_archive.html) (նորում արված է 20.11.2014 թ.):

<sup>367</sup> Эксперт: Вызов в МНБ Азербайджана голосовавших за Армению на «Евровидении» - яркий пример контроля власти над коммуникациями, <http://www.porotama.am/ru/society/2012/08/02/az-eurovision/> (նորում արված է 25.11.2014 թ.):

կամ զենք-զինամթերք, ինչը գաղտնի տեղադրում են բնակարանի մի անկյունում կամ եկուդում, կամ էլ աննկատ զցում հետապնդվողի գրպանը և հայտնաբերելով՝ իրականացնում ձեռքակալություններ: Այսպես, դեռևս 2007 թ. ձեռքակալված «Գյունդալիք Ազերբայջան» և «Ռեալնի Ազերբայջան» թերթերի խմբագիր, լրագրող Էլնուլլա Ֆաթուլլանը<sup>398</sup> հայտնել է, որ թմրանյութը, ինչի մեղադրանքով իրեն ձեռքակալել են, իր գրպանը զցել են ԱԱՆ աշխատակիցները: «Թուրան» գործակալության հաղորդագրության համաձայն է. Ֆաթուլլային նաև հայտնել է նախկին ԱԱՆ բարձրաստիճան պաշտոնյաներից մեկի՝ Ակիֆ Չովդարովի խոսքերը, թե իրենք 1000 պատճառ կգտնեն նրան բանտում պահելու համար: Լրագրողի խոսքերով Չովդարովը իրեն առաջարկել է տալ սուտ ցուցմունք մեկ այլ լրագրողի՝ Էլմար Գուսեյնովի սպանության գործով: Չովդարովը նաև հայտնել է, որ է. Ֆաթուլլային ձեռքակալել են ՆԳՆ նախարար Ռամիլ Ուսուբովի պատվերով<sup>399</sup>: Լրագրողի հայրը՝ Էմին Ֆաթուլլանն էլ «Ազադլըզ» («Ազատություն») ռադիոկայանին հայտնել է, որ հեռախոսով անհայտ մարդը սպանեացել է, որ ոչ ինքը, ոչ էլ որդին այլևս ոչինչ չիտեսն, այլապես իրենց ընտանիքի համար վատ կլինի բոլորին կսպանեն<sup>400</sup>: Նմանատիպ սպանություններ ստացել է նաև երիտասարդ ակտիվիստ, 2010 թ. խորհրդարանական ընտրությունների պատգամավորության թեկնածու Բախտիար Գաջինը: Ուչպես հայտնել է «Թուրան» գործակալությունը, նա ձեռքակալվել է 2011 թ. հունվարի 24-ին նրկրից դուրս գալու ժամանակ և մեղադրվել զինծառայությունից խուսափելու համար: Գաջինը հերքել է մեղադրանքը՝ հայտնելով, որ ինքն անցել է բժշկական հանձնաժողովը: Հայտնի է, որ նա աղբյուրանական հատուկ ծառայությունների տե-

<sup>398</sup> Այժմ հանդիսանում է աղբյուրանական «shaxpplis.az» էլեկտրոնային կայքի խմբագիրը և իրականացնում է իշխանամետ քարոզչություն:

<sup>399</sup> Фатуллаев обвинил МВБ Азербайджана в угрозах <http://www.ayyor.am/ru/news/2010/06/16/eyzul-fatullaev/163814> (նրումն արված է 25.11. 2014 թ.):

<sup>400</sup> Էլնուլլա Ֆաթուլլանի ընտանիքի անդամների մահվան սպանությունը նա արվել է [http://www.panorama.am/am/law/2010/03/18/fatullaev/www.mes.am/index.php?p=1&pobj\\_id=10602768&ppage=1&pdate=&preigion=/new](http://www.panorama.am/am/law/2010/03/18/fatullaev/www.mes.am/index.php?p=1&pobj_id=10602768&ppage=1&pdate=&preigion=/new) (նրումն արված է 10.12.2014 թ.):

սաղաշտում հայտնվել է դեռ վաղուց և առաջին անգամ չէր, որ ձերբակալվում էր: Իր եկատմամբ իրականացվող հետապնդումները Գաջինը կապում է Ադրբեջանի իշխանությունների հասցեին իր կողմից հեկեցրած մեղադրանքների հետ: Լա ԱԱԼ կողմից ձերբակալվել էր նաև 2008 թ., երբ կազմակերպել է բողոքի ցույց՝ ընդդեմ եախագահական ընտրություններում եղած կեղծարարության: Գաջինը հայտնել է, որ ժամանակին իրեն մի բարձրաստիճան պաշտոնյա հրավիրել է ռեստորան և առաջարկել ստեղծել ընդդիմադիր կուսակցություն՝ համաձայնեցնելով իշխանությունների հետ: Ձերբակալությունից օրեր առաջ էլ նա անձանոթ անձանցից ստացել է հեռախոսային զանգեր, որտեղ նրան սպառնացել են<sup>301</sup>:

Քաղաքական դրդապատճառներով Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից 2011-2012 թթ. ձերբակալվել և ազատագրվել են նաև լրագրողներ Ավագ Ջեյնալիև, Անար Բադեարլիև, Խաղիջա Իսմայիլովան, Իդրակ Աբբասովը<sup>302</sup>, Ասկերբեյլի գյուղի բնակիչ ակտիվիստ Իլհամ Ամիասլանովը, «Քուրա» քաղաքացիական հասարակության շտաբի կոորդինատոր Օգտայ Գյուլալիևան<sup>303</sup>, «Իսլամական» կուսակցության փոխնախագահ Արիֆ Գահինը: Վերջինս ձերբակալվել է 2011 թ. օգոստոսի 11-ին Սումգայիթում ԱԱԼ աշխատակիցների կողմից և դատապարտվել մեկուկես տարվա ազատազրկման՝ հաշիշ տեսակի թմրամիջոց և ավտոմեքենայում զենք, զինամթերք հայտնաբերելու համար: Նույն օրը ձերբակալվել է «Islamazeri.com» կայքի հիմնադիր Աբգյուլ Սուլեյմանովը: ԱԱԼ-ն պաշտոնական հաղորդագրության մեջ նշել է, որ նրանք ձերբակալվել են ընդդեմ Ադրբե-

<sup>301</sup> В Азербайджане арестовали еще одного оппозиционера Бахтияра Гаджиева, 25.01.2011, <http://www.pencetata.am/ru/politics/2011/01/25/gajiev/> (նղումն արված է 10.12.2014 թ.):

<sup>302</sup> Leyla Yunus: Докладчики ПАСЕ получили вахтон от властей Азербайджана и проинформировали многочисленное нарушение <http://www.pencetata.am/ru/region/2012/06/13/leyla-yunus/> (նղումն արված է 11.12.2014 թ.):

<sup>303</sup> В Азербайджане арестовали еще одного защитника прав пострадавших от наводнения 2010 года, <http://www.pencetata.am/ru/news/2012/06/08/sz-arest/>, Ի. Ամիասլանովը և Օ. Գյուլալիևան ձերբակալվել են 2010 թ. ջրհեղեղից սուժածների իրավունքները պաշտպանելու համար (նղումն արված է 10.12.2014 թ.):

ջանի քայքայիչ գործունեություն իրականացնելու, օտարերկրյա պետությանը և նրա ներկայացուցչին աջակցելու, ինչպես նաև անկարգություններ հրահրելու, հասարակական անվտանգությունը խախտելու և քաղաքացիական անհնազանդության համար: Իսկ Իլհամ Ամիասլանովը ձերբակալվել է տանը կից շինության մեջ ապօրինի զենք «պահելու» համար<sup>34</sup>:

Հատկանշական է, որ հատկապես քաղաքական մոտիվներով ձերբակալվածների նկատմամբ մեկուսարաններում կիրառվում են հետապետումներ, ծեծ ու խռտանգումներ: «Թուրան» լրատվական գործակալության հաղորդմամբ՝ Նախիջևանում 2011 թ. դեկտեմբերի 26-ին ձերբակալված, հաշմանդամության կարգ ունեցող Ջեյնալ Բադիրզադեն ձերբակալման առաջին իսկ օրերից մեկուսարանում ենթարկվել է ֆիզիկական և հոգեբանական ճնշման, ինչի հետևանքով առաջացել են սրտի և առողջության հետ կապված այլ խնդիրներ: Նա մեղադրվել է մեքենայնությունների, փաստաթղթերի կեղծման և այլ հողվածներով, սակայն հարազատների կարծիքով ձերբակալման իրական պատճառը այն է, որ զբաղվել է մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ, իսկ նրալքը՝ Յաշարը, քաղաքական գործունեությամբ՝ հանդիսանալով «Ադրբեջանի ազգային ճակատ» կուսակցության տարածքային մարմնի ղեկավար: Կայքը եղում է նաև, որ նույն թվականի օգոստոսի վերջերին Նախիջևանի ԱԱՆ-ում սպանվել է տեղաբնիկ Թուրաչ Ջեյնալովը: Նա և Նախիջևանի չորս բնակիչներ օգոստոսի 24-ին կանչվել են ԱԱՆ, որտեղ նրանց մեղադրել են Իրանի հատուկ ծառայությունների հետ համագործակցության և պետական դավաճանության մեջ: Օրեր անց Թ. Ջեյնալովի դիակը տեղափոխել են հիվանդանոց, որտեղից էլ փոխանցել հարազատներին: Այս առումով «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը հայտնել է, որ իրավիճակը ՆԻՀ-ում հիշեցնում է Հյուսիսային Վորեան: «Հանրապետությունում ազատամիտ մարդկանց

<sup>34</sup> В Азербайджане взамен выпущенного на свободу члена Исламской партии арестован еще один протестующий <http://www.pravobrama.am/ru/region/2012/06/08/arif-ganiyev/> (նույն արված է 12.12.2014 թ.):

եկատմամբ ճնշումները խելացեորության աստիճանի են», - եզրվում է իրավապաշտպանների հաշվետվության մեջ<sup>365</sup>:

Մինչ այդ էլ 2007 թ., ԱԱԼ մեկուսարանում դաժան ծեծից մահացել է Էմին Մամեդովը<sup>366</sup>:

2013-2015 թթ. Ադրբեջանում քաղաքական հետապնդումներն ավելի սաստկացան: Դա նախնառաջ կապված էր 2013 թ. նախագահական ընտրությունների հետ: Այսպես, ըստ «Azadliq.az» կայքի՝ նախագահական ընտրություններից առաջ տեղական իշխանությունների, միգրացիոն ծառայության, ՆԳ և ԱԱ նախարարությունների կողմից եռօրյա գործողության հետևանքով երկրից արտաքսվել է ավելի քան 1000 օտարերկրացի<sup>367</sup>, որի հիմնական պատճառը օտարերկրացիներին ընտրակեղծիքներից հեռու պահելն էր: Այսպես, միայն Նախիջևանում Ի. Ալինի օգտին ձայն է տվել բնակչության 90,3%-ը: Երբ դիտորդները փորձել են արձագրել կեղծիքները, ԱԱԼ-ի աշխատակիցների կողմից սպառնալիքներ են ստացել մինչև անգամ ընտանիքի անդամներին վնաս հասցնելը<sup>368</sup>: Ընտրություններից առաջ արձանագրվել են դեպքեր, երբ կիրեռհարձակման է ենթարկվել ընդդիմադիր կայքէջ, ինչը շատերը վերագրել են ադրբեջանական հատուկ ծառայություններին<sup>369</sup>: 2013 թ. փետրվարի 7-ին ԱԱԼ աշխատակիցների կողմից բերման են ենթարկվել քաղաքացիական «NIDA» շարժման երեք գործիչներ: Ադրբեջանի

<sup>365</sup> «Туран»: В Нахичеване из-за пыток в СИЗО частично парализован активист оппозиции, <http://www.panorama.am/ru/region/2012/01/13/azer-oppositiontorture/> (հղումն արված է 12.12.2014 թ.):

<sup>366</sup> Лейла Юнус: В следственном изоляторе МНБ Азербайджана применяются страшные пытки, <http://www.panorama.am/ru/society/2013/12/17/l-yunus/> (հղումն արված է 12.12.2014 թ.):

<sup>367</sup> Началась массовая депортация иностранцев из Азербайджана перед президентскими выборами, <http://www.panorama.am/ru/society/2013/07/27/azer-foreign/> (հղումն արված է 15.12.2014 թ.):

<sup>368</sup> В Нахичеване Ильяму Алиеву «нарисовали» 90% голосов на выборах, <http://www.ayazat.am/ru/news/2013/10/14/nakhchevan-aliiev-elections/684526> (հղումն արված է 12.12.2014 թ.):

<sup>369</sup> Спецслужбы Азербайджана не реагируют на случаи кибератак на оппозиционные сайты, <http://www.panorama.am/ru/society/2013/08/21/cyber-attack/> (հղումն արված է 12.12.2014 թ.):



ԱԱՆ-ն ու գլխավոր դատախազությունը հայտնել են, որ «NIDA» շարժման անդամներ Բախտիար Գուլիևի, Շահին Լավրուզուի և Մոհամմեդ Ազիզովի բնակարաններում հայտնաբերվել են «մոլոտովյան կոկտեյլ» («коктейли Молотова», դյուրավառ հեղուկով լի ապակյա տարա, որն օգտագործվում է հրկիզումներ, պայթյուններ իրականացնելու համար), թմրանյութեր և խոշոր չափի գումար: Ձերբակալվածների հարազատները հայտնել են, որ դրանք բնակարաններում դրվել են ԱԱՆ աշխատակիցների կողմից: «Որակտիկան ցույց է տալիս, որ քաղաքական ակտիվիստների մոտ թմրանյութեր հայտնաբերելը դարձել է աշխատանք և օրինաչափ երևույթ, որում սակայն ներդրվել է նորույթ՝ «մոլոտովի կոկտեյլ» կոչվող դյուրավառ հեղուկով շշերը», - հայտնել է «Թուրանը»<sup>300</sup>: Շարժման ակտիվիստները վստահ են, որ իրավապահ մարմինների կողմից իրականացվող նմանատիպ գործողությունները միանշանակ քաղաքական պատվերներ են, որ պետքի լռեցվեն իշխանության հասցեին հեշտ քննադատությունները և պայքարը ժողովրդավարական արժեհամակարգի համար: Ընտրություններից առաջ դա նաև ունի երկրում վախի մթնոլորտ ձևավորելու միտում: Մինևույն ժամանակ Գյանջայում ձերբակալվել է ընդդիմադիր «Մուսավաթ» կուսակցության անդամ Մախիբ Բայրամլին: Ձերբակալությունների համար առիթ է հանդիսացել այն հանգամանքը, որ ակտիվիստները կազմակերպել էին բողոքի ցույց ոչ մարտական պայմաններում զոհված զինծառայողների առիթով: Կազմակերպիչները սոցիալական ցանցերի միջոցով տեղեկացրել էին ավելի քան 150 հազար քաղաքացիների, որոնցից 30 հազարը հաստատել էր իր մասնակցությունը միջոցառմանը: Հատուկ ծառայություններն էլ որոշել էին ձերբակալել կազմակերպիչներին, որպեսզի ակցիան տապալվի<sup>301</sup>: «NIDA» շարժման ակտիվիստներից ձերբակալվել և 5 տարվա ազատազրկման է դատապարտվել նաև Էլսևար

<sup>300</sup> «Туран»: Работники МНБ Азербайджана подбросили активистам замеченной на 10 марта акция протеста шарлотки и «коктейли Молотова», <http://www.panorama.am/ru/society/2013/03/09/az-nida/> (նկումն արված է 12.12.2014 թ.):

<sup>301</sup> Լույս տեղում:

Մուրաալին՝ թմրանյութեր կրելու մեղադրանքով<sup>322</sup>: Հարկ է նշել, որ երիտասարդ ակտիվիստների (թվով 8 հոգի) նկատմամբ իրականացվել են խոշտանգումներ: Ե. Նուրուզլուն դատական նիստերի ժամանակ հայտնել է, որ ԱԱՆ-ում իրեն խոշտանգել են, ջարդել 4 ատամը, նաև սպառնացել ընտանիքին<sup>323</sup>, իսկ ընկերը կորցրել է լսողությունը<sup>324</sup>:

2013 թ. սեպտեմբերի 13-ին ԱԱՆ կողմից ձերբակալվել է «Bizim yol» («Մեր ուղին») անկախ պարբերականի աշխատակից, «Moderator.az» կայքի խմբագիր, Ազգային ճակատ կուսակցության գերագույն խորհրդի անդամ Փարվիզ Հաշիմլին, ում բնակարանում ԱԱՆ-ի աշխատակիցները «հայտնաբերել են» 30 կոնակ և ատրճանակ: Նրա կինը հայտնել է, որ զինամթերքը բերել էին հենց իրենք՝ ԱԱՆ-ի աշխատակիցները: Լրագրողը մեղքը չի ընդունել և հայտարարել է, որ իրեն ստիպում են տալ վկայություն իբր որոշ պաշտոնատար անձանց կողմից ֆինանսավորվել է ընդդիմությունը, նաև կեղծ վկայություն տալ «Ազգային ճակատ» կուսակցության ղեկավար Ալի Քարիմլիի դեմ: Դատավարության ընթացքում նա հայտնել է, որ ԱԱՆ-ում իր նկատմամբ իրականացվել են խոշտանգումներ: Փ. Հաշիմլիի պնդմամբ՝ ԱԱՆ-ի աշխատակիցները առաջարկել են 1 մլն դոլար, որպեսզի կեղծ վկայություն տա ԱԱՆ-ի նախկին փոխնախարար Ալի Նազիևի, նրա եղբոր՝ Գլխավոր դատախազության կոռուպցիայի դեմ պայքարի վարչության պետի տեղակալ Վալի Նազիևի և «Ազերիուսերվիզ» ընկերության ղեկավար Զավիդ Նուրբանովի դեմ<sup>325</sup>: Հաշիմլին, ի բողոք իր իրավունքների ոտնահարման, հացադուլ

<sup>322</sup> Consideration of the appeal of Elsever Mursalli, <http://en.sidhr.org/?p=590> (նդումն արված է 27.04.2015 թ.):

<sup>323</sup> На суде арестованной активист движения NIDA заявил о пытках в МНБ Азербайджана, <http://www.panorama.am/ru/law/2013/12/19/novruzlu/> (նդումն արված է 28.04.2015 թ.):

<sup>324</sup> Amnesty International: Руководство Советом Европы будет Азербайджан – страна, где практикуются произвольные аресты и пытки, <http://www.panorama.am/ru/politics/2014/04/09/amnesty-international-azerbaijan/> (նդումն արված է 28.04.2015 թ.):

<sup>325</sup> Сотрудник спецслужб Азербайджана предлагал арестованному журналисту \$1 млн. за показания против замглавы МНБ, <http://www.panorama.am/ru/law/2014/05/01/azerbaijan-gashimli/> (նդումն արված է 28.04.2015 թ.):

է հայտարարել, քանի որ նրան սնընդհատ ճնշել են, չեն թույլատրել տեսակցել կամ հեռախոսով խոսել հարազատների հետ: Միջազգային մի շարք իրավապաշտպան կազմակերպություններ դատապարտել են ադրբեջանական իշխանությունների նման վարքագիծը<sup>376</sup>: Հաշիմլիի հայրն ասել է, որ ԱԱՆ-ը փորձել է համագործակցել իր որդու հետ (ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից ընդդիմության շարքերում հավաքագրումներ իրականացնելու վերաբերյալ եղել են այլ հրապարակումներ ևս<sup>377</sup>), իսկ Ազգային ճակատի մամուլի քարտուղար Նաթիգ Աղիլովն էլ հայտնել է, որ նրա ձերբակալությունը քաղաքական պատվեր է: «Նա պրովակացիա է ոչ միայն նրա, այլ նաև Ազգային ճակատի ու նրա լիդեր՝ Ալի Քարիմլիի դեմ»<sup>378</sup>: Բռնաճնշումների ու ազատագրկման են ենթարկվել նաև կուսակցության ղեկավար խորհրդի անդամ ու մարդու իրավունքների պաշտպան Ասիֆ Յուսիֆբեյլին<sup>379</sup>, կուսակցության երիտթևի ներկայացուցիչ Էլվին Արդուլլանը<sup>380</sup>, կուսակցության ակտիվ անդամ Մուրադ Աղիլովը<sup>381</sup>: Հետապնդումներ են իրականացվել նաև ադրբեջանցի գրող, դրամատուրգ, սցենարիստ և թարգմանիչ, Ադրբեջանի ժողովրդական գրող, «Քարե երազներ» գրքի հեղինակ Աբրամ Այլիսլիի նկատմամբ: Այդ վեպի համար նրան Ադրբեջանում համարեցին դավաճան, քանի որ գրքում նա

<sup>376</sup> *Азербайджанский журналист начал голодовку в тюрьме в знак протеста против нарушения его прав* <http://www.panorama.am/ru/region/2014/04/15/az-journalist/> (նդումն արված է 28.04.2015 թ.):

<sup>377</sup> *Секретный «Список продажных оппозиционеров» Х. Исмаиловой передал экс-сотрудник МНБ Азербайджана*, <http://www.panorama.am/ru/world/2014/02/22/azerbaijan-opposition-ismaylova/> (նդումն արված է 28.04.2015 թ.):

<sup>378</sup> *Азербайджанские спецслужбы требуют у крестованного журналиста выступить против лидера оппозиционной партии*, <http://www.panorama.am/ru/society/2013/09/20/gasimlil/> (նդումն արված է 01.05.2015 թ.):

<sup>379</sup> *Two rights activists arrested in Azerbaijan*, <https://humanrightsz.wordpress.com/2014/11/26/two-rights-activists-arrested-in-azerbaijan/> (նդումն արված է 01.05.2015 թ.):

<sup>380</sup> *PPFA Activist Imprisoned in Solitary Confinement*, [http://www.contact.az/docs/2015/Politics/051100115619en.htm#.VaKq0F\\_tmkq](http://www.contact.az/docs/2015/Politics/051100115619en.htm#.VaKq0F_tmkq) (նդումն արված է 01.05.2015 թ.):

<sup>381</sup> *Murad Adilov sentenced to 6 years in prison*, <http://hrf.report/murad-adilov-sentenced-to-6-years-in-prison/> (նդումն արված է 08.05.2015 թ.):

հայերին դրական է բնութագրում, պատմում է հայերի ջարդերի մասին և միշտ հանդես է եկել երկու երկրներին հաշտեցնելու կոչով<sup>362</sup>: ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճանի պաշտոնյա Վիկտորյա Լույանդը և Բաքվում ԵԱՀԿ-ի գրասենյակը դատապարտել են Ա. Ալիալիի նկատմամբ իրականացվող հետապնդումները<sup>363</sup>:

Լույս ժամանակաշրջանում ձերբակալվել և հինգ տարվա ազատազրկման է դատապարտվել ադրբեջանցի 19-ամյա բրոզեր Օմար Մամեդովը: Լա ֆեյսբուքյան երկու էջերի հեղինակ էր, որտեղ ծաղրի էր ենթարկում Ադրբեջանի կառավարության քաղաքականությունը: Այդ էջերը շատ հայտնի էին և ունեին ամսական միլիոն կես միլիոն այցելու: «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը դատապարտել է նրա ազատազրկումը<sup>364</sup>:

Հետապնդումների են ենթարկվել նաև բրոզերներ՝ Աբդուլ Աբիլովը<sup>365</sup>, Ֆարաք և Սարաք Քարիմով եղբայրները<sup>366</sup>, լրագրողներ Արշադ Իբրահիմովը<sup>367</sup>, Արուֆատ Լամազովը<sup>368</sup>, դադա-

---

<sup>362</sup> Բաղդասարյան Յու., նշվ. աշխ., էջ 230, նաև՝ «Ազրամ Ալիալի. գեղարվեստական գործը որպես քաղաքական մասիֆեստ ևն քննարկում», <http://www.azovot.am/2013/02/12/196053/> (հղումն արված է 08.05.2015 թ.):

<sup>363</sup> ԱՄՆ-ը և ԵԱՀԿ-ն դատապարտել են Ադրբեջանի կողմից գրող Ալիալիի հետապնդումները, <http://www.aysor.am/am/news/2013/02/14/usa-osce-ayilisi/557695> (հղումն արված է 08.05.2015 թ.):

<sup>364</sup> Ադրբեջանում ձերբակալվել է իշխանության ներքակալ քննադատը, <http://ankakh.com/article/589/adrbyedjanum-dxyerbakalvyel-e-ishkhanuthyan-hyerthakan-qonadate> (հղումն արված է 08.05.2015 թ.):

<sup>365</sup> Azerbaijan Jails Opposition Blogger, <http://www.rferl.org/content/azerbaijan-jails-opposition-blogger/25400283.html> (հղումն արված է 01.05.2015 թ.):

<sup>366</sup> Crackdown on human rights in Azerbaijan, <http://www.balkaninsight.com/en/Regions-and-countries/Azerbaijan/Crackdown-on-human-rights-in-Azerbaijan-155040> (հղումն արված է 10.05.2015 թ.):

<sup>367</sup> Journalist Arshad Ibrahimov is arrested in the city of Ganja, <http://en.sidhr.org/?p=563> (հղումն արված է 10.05.2015 թ.):

<sup>368</sup> Сотруднику ИСБР Абылханы Назиеву запретили выезд из Азербайджана, <http://minval.az/news/61141/> (հղումն արված է 10.05.2015 թ.):

րեցվել է «Meydan-TV» անկախ հեռուստատեսության գործունեությունը<sup>395</sup>:

Թուրքիայի Հանրապետության նախագահ Ռ. Էրդողանի և թուրք հոգևոր գործիչ, ԱՄՆ-ում բնակվող Ֆ. Գյուլենի միջև առաջացած առճակատման ֆոնին Ադրբեջանում ևս սկսեցին հետապնդումներ «գյուլենականների» դեմ: Այսպես, 2014 թ. ապրիլի 15-ին Ադրբեջանի ՆԳՆ-ն և ԱՄՆ-ն իրականացրել են գործողություններ՝ ձերբակալելով անձանց, որոնք հնարավոր է լինեն Գյուլենի համայնոհ: Նրանց թվում են և՛ղել այն անձինք (հիմնականում երիտասարդներ), որոնք վերապատրաստում էին անցել Թուրքիայում և տեղավորվել ուժային կառույցներում, իշխանական մարմիններում: Հատկանշական է, որ հետապնդումները սկսվել են Թուրքիայի նախագահի՝ Ադրբեջան կատարած այցից անմիջապես հետո<sup>396</sup>:

Քաղաքական դրդապատճառներով դատապարտվել կամ հետապնդվել են նաև «Մուսավաթ» կուսակցության նախագահ Յադիգար Սադիգովը<sup>397</sup>, փոխնախագահներ Թոֆիգ Յագուբլուն<sup>398</sup>, Ֆարաջ Քերիմլին<sup>399</sup>, կուսակցության անդամներ Մեհդի Հուսեյնլին և Սակիթ Ջահիդովը (Միրզա Սակիթ), իրավապաշտպան Ինթիգամ Ալինը, որն իր գործունեության ընթացքում ընդդեմ Ադրբեջանի կառավարության պատրաստել է ավելի քան

<sup>395</sup> В Баку закрылось бюро независимого интернет-телевидения, [http://www.palmarian.net/rus/news/185843/?utm\\_source=dlvr.it&utm\\_medium=twitter](http://www.palmarian.net/rus/news/185843/?utm_source=dlvr.it&utm_medium=twitter) (հղումն արված է 17.05.2015 թ.):

<sup>396</sup> После визита премьера Турции в Азербайджане началась охота за нурсистами, <http://www.palorama.am/ru/politics/2014/04/16/erdogan-visit/> (հղումն արված է 18.05.2015 թ.):

<sup>397</sup> Resolution of Azeri National Platform condemning verdict against Yedigyar Sadigov, <http://eap-csl.eu/en/news-events/news/resolution-of-azeri-national-platform-condemning-verdict-against-yedigyar-sadigov/> (հղումն արված է 18.05.2015 թ.):

<sup>398</sup> Two Prominent Azerbaijani Oppositionists Sentenced On Fabricated Charges, <http://www.efecf.org/content/caucasus-report-azerbaijan-opposition-jailings/253062-24.html> (հղումն արված է 18.05.2015 թ.):

<sup>399</sup> Faraj Kerimli sentenced to 6.5 years in prison, <http://hrf.report/faraj-kerimli-sentenced-to-6-5-years-in-prison/> (հղումն արված է 20.05.2015 թ.):

200 գործ և ներկայացրել ՄԻԵԻՊ<sup>394</sup>, Ժողովրդական ճակատ կուսակցության երիտասարդ ներկայացուցիչ Էլվին Արդուլյանը (թմրանյութերի ապօրինի շրջանառություն շինծու մեղադրանքով), ով Ադրբեջանի նշված կուսակցության արդեն 8-րդ անձն է, որ ազատազրկվել է<sup>395</sup>, լրագրողներ ու իրավաբաններ Ռասուլ Ջաֆարովը, Անար Մամադյին, Բաշիր Սուլեյմանլին<sup>396</sup>, ադրբեջանական ANS հեռուստատեսիոնի նախկին սեփական թղթակից Սեիջ Օսմանգիզին<sup>397</sup>, քաղաքացիական ակտիվիստներ Իլգար Մամեդովը<sup>398</sup>, Հասան Հուսեյնլին<sup>399</sup>, Էմին Հուսեյնովը (անհետ կորել է)<sup>400</sup>, Ֆուադ Ամադյին<sup>401</sup>, իրավապաշտպան Իլգար Նասիրովը<sup>402</sup>, «Зеркало» թերթի խմբագիր Էլչին Շիխլըն<sup>403</sup>, «Ժողովրդավարության աջակցություն» ՀԿ անդամներ Թոֆիգ Հասի-

<sup>394</sup> Freedom House-ը տեսակետում է Աերբայձայված իրավապաշտպան Ինթիգամ Ալիևի կյանքը վտանգված է, <http://ankakh.com/article/18587/%E2%80%8B8B-Freedom-House-e-ahazangum-e--dzyerbakalvats-iravapshtpan-inthigam-aliyevikyanqe-vtangvats-e> (հղումն արված է 20.05.2015 թ.):

<sup>395</sup> Ադրբեջանում րեղիմադիր ակտիվիստը դատապարտվել է 6 տարվա ազատազրկման, <http://ankakh.com/article/18782/%E2%80%8B8Badrbyedjanum-endimidadir-aktiviste-datapartvyel-e-6-tarva-azatazrkman> (հղումն արված է 01.06.2015 թ.):

<sup>396</sup> Հուսեյնով է., Հերթական «ազգի դավաճանը», <http://armedia.am/arm/news/20031/emin-huseynov-ber-takan-azgi-davatchany.html> (հղումն արված է 01.06.2015 թ.):

<sup>397</sup> Ադրբեջանում նախկին հեռուստալրագրողին քաղաքական ղրղապատման ներով հետապնդում են <http://news.am/arm/news/247104.html> (հղումն արված է 21.10.2015 թ.):

<sup>398</sup> Եժ-ն կոչ է արել Ադրբեջանին ազատ արձակել Իլգար Մամեդովին, <http://armenpress.am/arm/news/788440/ekh-n-koch-e-arel-adrbejanin-azat-ardzakel-ilgarmamedovin.html> (հղումն արված է 10.10.2015 թ.):

<sup>399</sup> Six Years' Jail for Leading Azeri NGO Head, <https://wpr.net/global-voices/six-years-jail-leading-azeri-ngo-head> (հղումն արված է 01.06.2016 թ.):

<sup>400</sup> What is going on in Azerbaijan and its NGO sector now? <http://blog.novruzov.az/2014/08/what-is-going-on-in-azerbaijan-and-its.html> (հղումն արված է 22.11.2015 թ.):

<sup>401</sup> Statement by National Council of Democratic Forces on Fuad Ahmadli, [http://www.contact.az/docs/2015/Politics/050800115416en.htm#.ValCbl\\_tmk](http://www.contact.az/docs/2015/Politics/050800115416en.htm#.ValCbl_tmk) (հղումն արված է 08.06.2015 թ.):

<sup>402</sup> Azerbaijani Journalist, Rights Activist Severely Beaten, <http://www.rferl.org/content/azerbaijan-attack-rights-activist-nasibov/26545123.html> (հղումն արված է 05.06.2015 թ.):

<sup>403</sup> Следователи прокуратуры провели обыск в азербайджанской газете «Зеркало» и допросили политолога Зафара Гухиева, <http://www.panorama.am/ru/law/2014/05/01/z-guliyev/> (հղումն արված է 01.06.2015 թ.):

մովը և էմիլ Մամեդովը<sup>494</sup>, ԱՄՆ քաղաքացի իրավապաշտպան Սահիդ Լուրին<sup>495</sup>, ակտիվիստ Էլչին Լամազովը<sup>496</sup>, իրավապաշտպան Քալեհ Խասամամեդովը<sup>497</sup>, «Ազադլըզ» թերթի աշխատակից և «Ադրբեջանական ժամ» ինտերնետային ծրագրի հաղորդավար Մեյուր Հազին: Վերջինս հայտնել է, թե փաստորեն իրենք գտնվում են 1937 թ. համակարգում, որն ստեղծվել է ՊԱԿ-ի գններալ Հեյդար Ալիևի կողմից: Լրագրողը նաև նշել է, որ իր ձերբակալությունը պատվիրել է Իլհամ Ալիևն ու նրա աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեխթինը, քանի որ իր հաղորդման ընթացքում բացահայտել է նրանց հանցագործությունները<sup>498</sup>:

Վերջին տարիների թերևս ամենատղմկոտ քաղաքական հալածանքներից էին ադրբեջանցի հայտնի իրավապաշտպան, Խաղաղության և ժողովրդավարության ինստիտուտի տնօրեն Լեյլա Յունուսի և նրա ամուսնու՝ քաղաքագետ, պատմաբան, կոնֆլիկտաբան Արիֆ Յունուսի ձերբակալությունները<sup>499</sup>: Լրանց դեմ հալածանքները սաստկացան 2014 թ. ապրիլին այն բանից հետո, երբ Անկարայում ձերբակալվեց, ապա Ադրբեջանին հանձնվեց լրագրող Ռամիզ Միրկադիրովը: Ադրբեջանի հատուկ ծառայությունները նրան մեղադրեցին Հայաստանի օգտին լրտեսական գործունեություն ծավալելու մեջ: Այդ առիթով Ադրբեջանի դատախազությունն ու ԱՄՆ-ը հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ պնդելով, թե նա տարիներ շարունակ համագործակցել է հայկական հետախուզության հետ: Միրկադիրովը «Ջերկալու»-ի սևփական թղթակիցն էր Թուրքիա-

<sup>494</sup> Azərbaycanın politsiyaçılarının əksəriyyəti azadlıq istəyir, <http://haqqin.az/news/30832> (նյութն արված է 11.11.2015 թ.):

<sup>495</sup> U.S. Citizen Not Allowed To Leave Azerbaijan, <http://www.rferl.org/content/us-citizen-barred-from-leaving-azerbaijan-nuri/26566855.html> (նյութն արված է 13.08.2015 թ.):

<sup>496</sup> Two rights activists arrested in Azerbaijan, <https://humanrightssz.wordpress.com/2014/11/26/two-rights-activists-arrested-in-azerbaijan/> (նյութն արված է 08.12.2014 թ.):

<sup>497</sup> Human rights activist detained in Geychay region, [http://www.contact.az/docs/2015/Social/022400107821en.htm#.VaLBr1\\_tmikq](http://www.contact.az/docs/2015/Social/022400107821en.htm#.VaLBr1_tmikq) (նյութն արված է 08.11.2016 թ.):

<sup>498</sup> Իմ ձերբակալությունը պատվիրել է Իլհամ Ալիևը, <http://yerevannews.am/?p=33672&cat=im-dzerebakalutyuny-parvirel-e-ilham-alievyy> (նյութն արված է 08.08.2014 թ.):

<sup>499</sup> Leyla Yunus həbs edildi, 31.07.2014, <http://www.azadliq.info/siyast/49677-leyla-yunusu-yolda-ourladlar.html> (նյութն արված է 08.08.2014 թ.):

յում և ակտիվորեն գրում էր միջազգային թեմաներով՝ իր հող-վածներում բազմիցս կոշտ քննադատության ենթարկելով էրդո-դանի կառավարության քաղաքականությունը: «Թուրան» լրատ-վական գործակալության հետ զրույցում «Ջերկալո» թերթի խմբագիր Էլչի Շիկլին հայտնել է, որ Ռաուֆ Միրկադիրովի նկատմամբ ճնշումներն սկսվել են Թուրքիայի այն ժամանակվա վարչապետ էրդոդանի Բացու կատարած այցից հետո<sup>40</sup>: Մեջ վե-րաբերում է Լեյլա Յունուսին, ապա նա, ըստ աղբյուրանական հատուկ ծառայությունների, միջնորդի դեր է ստանձնել Միրկա-դիրովի և հայկական հատուկ ծառայությունների միջև կազմա-կերպելով նրա այցելությունները Հայաստան<sup>41</sup>: Վերջինիս ձեռ-բակալությունը մեծ արձագանք գտավ ինչպես աղբյուրանական, այնպես էլ միջազգային իրավապաշտպան բազմաթիվ կազմա-կերպությունների շրջանում: Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ը, Իրա-վապաշտպան կազմակերպությունների միջազգային ֆեդերա-ցիան, Շոդդեմ բնությունների կոմիտեն, Amnesty International, Human Rights Watch և Human Rights House միջազգային կազմա-կերպությունները, բազմաթիվ լրագրողներ, քաղաքագետներ, իրավաբաններ, թերթեր ու ամսագրեր դատապարտել են նրա ձեռքակալությունը՝ պահանջելով անհապաղ ազատ արձակել նրան: «Նմուկրատական ուժերի ազգային խորհուրդ» կազմա-կերպության ղեկավար Ջամիլյա Հասանլիի խոսքերով՝ այդ գործում առկա է 1937 թ. տրամաբանությունը<sup>42</sup>:

Աղբյուրանում քաղաքական հետապնդումների, մարդու իրավունքների ու ազատությունների ոտնահարման, խոսքի ազատության սահմանափակման զագաթնակետը հանդիսացավ «Ազատություն» ուղիովկայանի աղբյուրանական ծառայության փակումը, որի համար ելմբ էր 2014 թ. դեկտեմբերին աղբյու-րանական իշխանությունների կողմից ծառայության կասեցման

<sup>40</sup> Աղբյուրանի լրագրողը հետապնդվում է Բաքվի և Անկարայի կողմից, <http://www.azattyun.am/content/article/25356457.html> (նդումն արված է 01.08.2014 թ.):

<sup>41</sup> Բարվում ձևբանկովել է իրավապաշտպան Լեյլա Յունուսը, 30.07.2014, <http://www.azattyun.am/content/article/25475163.html> (նդումն արված է 02.08.2014 թ.):

<sup>42</sup> Международное сообщество продолжает выражать возмущение по поводу ареста азербайджанской правозащитницы Л. Юнус, <http://www.panorama.am/en/world/2014/08/01/azerbaijan-leyla-yunus-uk/> (նդումն արված է 10.10.2015 թ.):



որոշումը: Իշխանությունը ոչ միայն արգելափակեց ծառայությունը, այլև առգրավեց գույքը, տեխնիկական սարքավորումները, փաստաթղթերը, բերման ենթարկեց աշխատակիցներին, երանց զրկեց փաստաբանների հետ կապ պահպանելու հնարավորությունից, սպառնալիքներ հնչեցրեց աշխատակիցների և նրանց մտերիմների հասցեներին, արգելեց որոշ աշխատակիցների ազատ տեղաշարժը<sup>43</sup>: Այս համալուծարում 2014 թ. դեկտեմբերի 5-ին ձեռքբերվել էր ռադիոկայանի լրագրող Խաղիջա Բամայիլովան մեղադրվելով զրպարտության մեջ: Ադրբեջանի իշխանությունները հետապնդում էին լրագրողին Ի. Ալիևի ընտանիքի անուղի ունեցվածքի վերաբերյալ հողվածաշարը հրապարակելուց հետո<sup>44</sup>: Հատկանշական է, որ Խ. Բամայիլովային դատախազությունը հարցաքննել է նաև այն կասկածանքով, իբր նա ընդդիմադիր գործիչների, ինչպես նաև այլ հայտնի անձանց մասին փաստաթղթեր է փոխանցել ԱՄՆ-ի ներկայացուցիչներին, ովքեր հանդիսացել են ԱՄՆ-ի հետախուզության ծառայության աշխատակիցներ: Այսինքն Բամայիլովային մեղադրում են պետական գաղտնիքներ վաճառելու համար: Բացվում ԱՄՆ-ի դեսպանատունը, ինչպես նաև «Ազատություն ռադիոկայանի» տնօրեն Քելվին Քլոզեն այդ մեղադրանքներն անհեթեթ են համարել, իսկ ԵԱՀԿ ԱՄՆ հանձնաժողովի (Հելսինկիի հանձնաժողով) համառոտագահ սենատոր Բենջամին Վարդինը մեղադրանքները անվանել է «ակնհայտ շինծու և զրպարտիչ»<sup>45</sup>:

Ադրբեջանում քաղաքական հետապնդումներն ու քաղաքական ակտիվիստների նկատմամբ իրականացվող բռնաճնշումները 2015-2016 թթ. նս շարունակվել են, իսկ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպությունները:

<sup>43</sup> «Ազատությունը» պաշտոնազուգու փակել է ադրբեջանական ծառայության գրասենյակը, <http://www.azatutyun.am/archive/news/20150703/2031/2031.html?id=27032635> (նդումն արված է 18.09.2015 թ.):

<sup>44</sup> Կարոիր Թայի ներկայացուցիչներն այցելել են Խաղիջա Բամայիլովային, <http://www.azatutyun.am/content/news/26732045.html> (նդումն արված է 10.06.2015 թ.):

<sup>45</sup> «Լրագրողների պաշտպանության կոմիտեն» կոչ է անում Ադրբեջանի իշխանություններին վերջ տալ լրագրողի հանդեպ ճնշումներին, <http://www.panorama.am/am/world/2014/02/22/azerbaijan-opposition-ismaylova/?w> (նդումն արված է 18.11.2015 թ.):

յունները չեն կարողացել շարունակել իրենց գործունեությունը: ԵԱՀԿ-ի Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակը չեղյալ է հայտարարել իր դիտորդական առաքելությունը՝ կառավարության կողմից կիրառված սահմանափակումների պատճառով, իսկ Բաքվում ԵԱՀԿ ներկայացուցիչները 2015 թ. ամռանը՝ հուլիսի 4-ից, դադարեցրել են իրենց գործունեությունը<sup>46</sup>:

Բաքվի իշխանությունները այս գործողությունները մեկ նպատակ են հետապնդում, երկրում այլախոհության չեզոքացումն ու ոչնչացումը: Հատկանշական է, որ ադրբեջանական իշխանությունները չեն բավարարվում երկրի ներսում քաղաքական հետապնդումներ իրականացնելով և փորձում են այլ երկրներում ևս իրականացնել ապօրինի պատժիչ գործողություններ: Այսպես, 2017 թ. մայիսին Թբիլիսիում անհետացավ ադրբեջանցի ընդդիմադիր լրագրող, ընդհատակում գործող Աֆղան Մուխթարլըն, ով 2015 թվականից ընտանիքով բնակվում էր Թբիլիսիում: Միայն օրեր անց պարզվեց, որ նրան փողոցից առևանգել են և Վրաստանից անօրինական ճանապարհով անցկացրել Ադրբեջան, որտեղ էլ երկրի դատախազությունը բավարարել էր Ա. Մուխթարլըին եռամսյա կալանքի վերցնելու վերաբերյալ Ներքին գործերի նախարարության միջնորդությունը<sup>47</sup>:

Վերոնշյալ հակաժողովրդավարական ու անօրինական գործողությունը մեծ հարված հասցրեց ոչ միայն ադրբեջանական, այլ նաև վրացական իշխանությունների հեղինակությանը, քանի որ այն, առանց վրացական իշխանությունների կամ հատուկ ծառայությունների գիտության ու օժանդակության, ենարավոր չէր կազմակերպել:

Այս օրինակով աշխարհը համոզվեց, որ ադրբեջանական իշխանությունները ընդդիմադիր գործիչներին ու լրագրողներին ձերբակալելու նպատակով դիմում են ցանկացած քայլի, այդ թվում՝ այլ պետությունների ներքին գործերին միջամտելու, այլ

<sup>46</sup> OSCE Project Co-ordinator in Baku discontinues its operations in Azerbaijan, 4 July 2015, <http://www.osce.org/secretariat/170146> (նդումն արված է 10.06.2016 թ.):

<sup>47</sup> Ахметели Н., В Тбилиси возмущены исчезновением азербайджанского журналиста, Русская служба Би-Би-Си, Тбилиси, 31 мая 2017, <http://www.bbc.com/russian/features-40114190> (նդումն արված է 08.06.2017 թ.):

պետությունում բնակվող անձանց առևանգելու և Ադրբեջանի տարածք անօրինական անցկացնելու ու ձերբակալելու ստորացուցիչ քայլերի:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ Ադրբեջանի իշխանությունները երկրի հատուկ ծառայություններն առավելապես օգտագործում են քաղաքական խնդիրներ լուծելու՝ ընդդիմադիր դաշտը չեզոքացնելու, ազատ մամուլը լռեցնելու, խոսքի ազատությունը, մարդու իրավունքներն ու ազատությունները սահմանափակելու, էթնիկ փոքրամասնություններին կաշկանդելու նպատակով: Պատահական չէ, որ միջազգային մամուլն ու իրավապաշտպան կազմակերպությունները (բացառությամբ Բաքվի նավթադոլարներից սնվողների) պարբերաբար դատապարտում են Ադրբեջանում 100-ի հասնող քաղաքական բանտարկյալների ասկայության փաստը:

ԱՂՐԲԵՋԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱԿԱՀԱՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ4.1. Հայերի կոտորածներն Ադրբեջանում  
և այդ երկրի հատուկ ծառայությունների դերը  
դրանց իրականացման գործում (1988-1991 թթ.)

ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին, սկսած գորաչուվյան «վերակառուցման» քաղաքականության շրջանից, Ադրբեջանում և Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության էթնիկ գտումներն առավել լայն թափ ստացան:

1988 թ. փետրվարի 20-ին Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի Ժողովրդական պատգամավորների խորհրդի նիստում որոշվեց դիմել Ադրբեջանի և Հայաստանի ԽՍՀ-ների գերագույն խորհուրդներին՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանի կազմից Հայաստանի կազմ փոխանցելու խնդրով<sup>416</sup>: Արցախահայության սահմանադրական և իրավացի այս պահանջի պատասխանը եղավ սումգայիթյան եղեռնագործությունը, որն ի ցույց դրեց հայերի և ադրբեջանական ազգայնամոլական խաժամուժի միջև ի սկզբանե գոյություն ունեցող քաղաքակրթական ջրբաժանը: Սումգայիթի դաժան, հրեշավոր ջարդերը, որոնք մինչ օրս չեն արժանացել միջազգային հանրության պատշաճ գնահատականի, դարձան 1988-1991 թթ. ամբողջ Ադրբեջանում սանձազերծված հակահայկական արյունալի իրադարձությունների սկիզբը: Իսկ 1988 թվականի Արցախի հայության օրինական պայքարն ուղղված էր ադրբեջանական իշխանությունների հայահալած քաղաքականության դեմ, որի շարունակությունն անփութափեղիորեն հանգեցնելու էր Արցախի ամբողջական հայաթափմանը, ինչպես դա կատարվեց Նախիջևանում և Դաշուալին Ղարաբաղի բուն հայկական ու հայաբնակ բազմաթիվ տա-

<sup>416</sup> Барсегов Ю., Нагорный Карабах и международном праве и политике, Комментарий к документам, М. 2009., т. II, с. 240.

բաժնեբերում<sup>419</sup>։ Աղբրեջանի պատասխանը չուշացավ։ Սումգայի-  
թում 1988 թ. փետրվարի 26-ին սկսվեցին պետականորեն կազ-  
մակերպված հայերի կոտորածները, ինչի արդյունքում սպանվե-  
ցին կամ ողջակիզվեցին տասնյակ հայեր, իսկ խոշտանգվեց,  
վիրավորվեց ու բռնի տեղահանվեց ավելի քան 18 հազար մարդ։  
Խորհրդային գործերը Սումգայիթ մտան միայն փետրվարի 29-  
ին, երբ արդեն ոճրագործները կատարել էին իրենց սև գործը<sup>420</sup>։

Սումգայիթի կոտորածների առաջին օրը՝ փետրվարի 27-ին,  
քաղաքի Կոմկուսի քաղաքային կոմիտեի, քաղաքային գործկո-  
մի և ՊԱԿ-ի աշխատակիցներն անց են կացրել խորհրդակցույթ-  
յուն, սակայն որևէ կանխարգելիչ քայլ չեն ձեռնարկել<sup>421</sup>, ինչից էլ  
կարելի է նգրակացնել, որ ջարդերում առկա է նաև ՊԱԿ-ի մաս-  
նակցությունը։ Այդ մասին ծավալուն հոդված է հրատարակել,  
ֆիլմեր նկարահանել և իր հարցազրույցներում բազմիցս նշել  
«Սովորական ցեղասպանություն» նախագծի ղեկավար, լրագրող  
Մարինա Գրիգորյանը<sup>422</sup>։

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Աբրամ  
Աբրամյանը 1988 թ. դեկտեմբերի 22-ին ԽՍՀՄ Կոմկուսի կենտ-  
կոմի քաղցյուրո ուղղված իր դիմումում հռետորական հարց է  
բարձրացնում. ինչու էին իրավապահ մարմիններն ու հատուկ  
ծառայությունները անցել ընդհատակ Սումգայիթյան ոճրագոր-  
ծության օրերին, որպեսզի չխանգարեն սավրազուխներին  
իրենց պլանների իրականացման գործում<sup>423</sup>։ Նա նաև զրույց է, թե  
Աղբրեջանում հայ ժողովրդի նկատմամբ իրագործվող քայքայիչ

<sup>419</sup> Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանույան Կ., Ավվրջան Հ., Շադին Աղբրեջանի հայաստյաց քաղաքականության, 28 Դաշնակցության հրատարակություն, նր., 2007, էջ 19։

<sup>420</sup> Սումգայիթ 1988, Փետրվար 28 - Սովորական ցեղասպանություն, <https://www.youtube.com/watch?v=XvC9Qr8fBN4> (եղումն արված է 10.03. 2015 թ.)։

<sup>421</sup> Հաղորդագրություններ, հոդվածներ Սումգայիթի ջարդերի և դատավարության վերաբերյալ, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 6, գ. 10, թ. 9։

<sup>422</sup> Григорян М., «Сумгаит». Дело зверствджанского КГБ, Голос Армении, 26 мая 2015г., №4 (20688), с. 1, 5. Սումգայիթի դաժան ոճրի իրականացման մասին ՊԱԿ-ի՝ առնվազն տեղյակ լինելու վերաբերյալ տե՛ս նաև Բաղդասարյան Յու., նշվ. աշխ., էջ 181-182։

<sup>423</sup> Абрамян А., Политбюро ЦК КПСС в Президиум Верховного Совета СССР, ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 759, թ. 60։

գործունեության գաղափարական առաջնորդը հանդիսանում է Ադրբեջանական ԽՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, թուրքիայի պատվավոր ակադեմիկոս Ջ. Բունիաթովը<sup>64</sup>:

Հարկ է նշել, որ մինչ Սումգայիթի դեպքերը՝ փետրվարի 24-ին, Ասկերանում Ադրբեջանի հատուկ ծառայությունները կազմակերպեցին թերևս առաջին խոշոր սադրիչ գործողությունը: Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Ա. Մութալիբովը նախորդ օրը եղել էր Ադդամում և գաղտնի խորհրդակցության անցկացրել, որից հետո սպանվել էին 2 ադրբեջանցիներ: Դեպքի հաջորդ առավոտյան Ադդամից 2000 երիտասարդ ադրբեջանցիներ Ասկերանի շրջանում իրականացրին վայրագություններ, ավիրումներ, մոտ 50 հայեր ստացան տարբեր աստիճանի վնասվածքներ: Հենց այս սադրանքն էլ դարձավ ադրբեջանցիների՝ ազգամիջյան զանգվածային բռնությունների առաջին գործողությունն ընդդեմ Ղարաբաղի հայ բնակչության, և դրանից էլ Լեռնային Ղարաբաղն սկսեց դառնալ ԽՍՀՄ առաջին թեժ կետը<sup>65</sup>: Իսկ մինչ այդ, 1988 թ. փետրվարի կեսերին, Ադրբեջանի ազգայնամուլ ղեկավարները, ի դեմս՝ ԿԿ կենտկոմի քարտուղար Մեհթինի և վարչական բաժնի վարիչ Ասադովի, հայերի հասցեին հնչեցրին սպառնալիքներ ու վիրավորանքներ՝ մասսայական հաշվեհարդար տեսնելու, Ղարաբաղը հայոց գերեզման սարքելու, երեխաներին ոչնչացնելու և այլ նմանատիպ արտահայտություններով<sup>66</sup>:

Հայ խաղաղ բնակչության նկատմամբ ծրագրված նախճիրը Ադրբեջանում և Արցախում շարունակվեց հետագա ամիսներին ևս: 1988 թ. մայիսին Եուշիի ողջ հայ բնակչությունը բռնի տեղահանվեց: Լույն թվականի ամռանն ու աշնանը Հյուսիսային Արցախի տասնյակ բնակավայրերից ստիպողաբար լքեցին հազարավոր հայ բնակիչներ, իսկ այնուհետև ջարդերի ու բռնի տեղահանության այիքը տարածվեց ամբողջ Ադրբեջանով մեկ: Լույններին՝ մի քանի օրում (21-27) Կիրովաբադից (հայկական

<sup>64</sup> Լույն տեղում, թ. 61:

<sup>65</sup> Կրիվոպոլսկով Վ., Ռուսաստանյ Ղարաբաղ (մեջբերում Ռ. Քոչարյանի հետ ունեցած զրույցից), Եր., 2008, էջ 84-85:

<sup>66</sup> Ղարաբաղ, այսօր կամ երբեք, ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 92-94:

Գանձակ) վտարվեց 45 հազար հայ: 1988 թ. նոյեմբերի 21-ին Ադրբեջանի բոլոր հայաբնակ շրջաններում միաժամանակ սկսվեցին զանգվածային կոտորածներ ու բռնի տեղահանություններ: Դրանց պետականորեն կազմակերպված լինելու մասին է խոսում այն փաստը, որ բոլոր շրջաններում՝ Լախիջևանում, Շամխորում, Խանկարում, Մինգչաուրում, Դաշքեսանում, Գանձակում, Իմիշլիում, Շեքիում, Իսմայիլում, Ջաքաթալայում, Գետաբեկում, Ղազախում և 100-ավոր այլ բնակավայրերում այդ կոտորածներն սկսվեցին միևնույն օրը, միևնույն ժամին և իրագործվեցին համանման սցենարներով: Հաշված օրերի ընթացքում իրենց պատմական հայրենիքը լքեց ավելի քան 200 հազար հայ, շատերը զոհ գնացին բարբարոսություններին<sup>47</sup>:

Ադրբեջանի հայ խաղաղ բնակչության նկատմամբ պետական ահաբեկչական քաղաքականությունն ավարտվեց 1990 թ. հունվարին Բաքվում տեղի ունեցած ցեղասպանությամբ: Մինչ 1990 թ. արդեն տներում, աշխատավայրերում, փողոցներում սպանվել էին հայազգի ավելի քան 60 քաղաքացիներ, հարյուրավորները հաշմվել էին, տասնյակ հազարավորները՝ վտարվել: 1990 թ. հունվարին 230 հազար<sup>48</sup> հայերից Բաքվում մնացել էր ընդամենը 35 հազար մարդ՝ հիմնականում տարեցներ և հիվանդներ ու նրանց խնամող հարազատներ: Հունվարի 12-ին Ադրբեջանի Ազգային ճակատի արմատական թնի ներկայացուցիչներ, պանթյուրքիստ Լեյմաթ Փանախովը և Ռահիմ Գազինը<sup>49</sup> հանրահավաքում հակահայկական կոչեր հնչեցրին, որից հետո 50 հազար ցուցարարներ ցրվեցին քաղաքով մեկ՝

<sup>47</sup> Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանոյան Կ., Ավրեցյան Հ., նշվ. աշխ., էջ 20:

<sup>48</sup> Բաքվի հայ ազգաբնակչության թվաքանակի վերաբերյալ կան տարակարծություններ. որոշ հետազոտողներ նշում են Բաքվում բնակվող մինչև անգամ 400 հազար, իսկ ողջ Ադրբեջանի տարածքում՝ 800 հազար հայ բնակչության մասին. տե՛ս Բաղդասարյան Յու., նշվ. աշխ., էջ 246-247:

<sup>49</sup> Բացի Ն. Փանախովից և Ռ. Գազինից Ադրբեջանի Ժողովրդական ճակատի արմատական թնի առաջամարտիկներն էին նաև խորհրդարանի պատգամավորներ Էթիբար Մամադովը, Աբուլֆազ Ալինը (Ադրբեջանի հետագա նախագահ Աբուլֆազ Էլչիբեյը), տե՛ս Եաննազայյան Դ., Քաղաքական իրադրությունն Ադրբեջանում (1991 թ. մարտ-ապրիլ), Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 18 հունիս 1991 թ., թիվ 130 (193), էջ 2:

ձեռքներին հայկական բնակարանների հասցեներ, հայերով խիտ բնակեցված վայրերի նշումներով քարտեզներ և ուղեցույցներ<sup>40</sup>։ Հարկ է նշել, որ Ն.Փանախովը մինչ այդ եղել էր ձերբակալված ՊԱԿ-ի մեկուսարանում<sup>41</sup> և ազատ էր արձակվել Բաքվում հայոց ջարդերն ուղղորդելու նպատակով։ 1990 թ. հունվարի 12-13-ին հայկական ջարդերը Բաքվում կազմակերպված և զանգվածային բնույթ ստացան։ Անասնական բնազդով առաջնորդվող աղբրեջանական ամբոխը, տուն առ տուն անցնելով, ողջ քաղաքը «մաքրեց» հայերից։ Բաքվի դեպքերի հիմնական կազմակերպիչները Ազգային ճակատի ղեկավարներից Աբուլֆազ էլչիբեյն ու Էթիրար Ահմեդովը կապի մեջ են եղել աղբրեջանական ՊԱԿ-ի հետ։ Կոնկրետ էլչիբեյը հանդիպում էր ՊԱԿ-ի նախագահ Վազիֆ Հուսեյնովի հետ<sup>42</sup>։

1990 թ. հունվարի 17-ին Եվրախորհրդարանը բանաձև ընդունեց, որով ՆՄՀՄ կառավարությանը կոչ էր արվում պաշտպանել հայերին, անհապաղ օգնություն ցույց տալ Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին։ Հունվարի 18-ին ամերիկացի սենատորների մի խումբ նամակ հղեց Մ. Գորբաչովին, որտեղ իրենց մտահագուրթյունն էին հայտնում Բաքվում հայերի ջարդերի կապակցությամբ և կոչ էին անում Լեռնային Ղարաբաղը միացնել Հայաստանին<sup>43</sup>։

1988-1990 թթ. էթնիկական զտումների հետևանքով Աղբրեջանից տեղահանվեց ավելի քան 500 հազար հայ<sup>44</sup>, որոնց մի

<sup>40</sup> Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մամոյան Կ., Ավդիցյան Հ., Եշվ. աշխ., էջ 4։

<sup>41</sup> Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана, Ер., 1993, с. 180: Նեխրաթ Փանախովն ու Էթիրար Մամեդովը կասկածվել են ՊԱԿ-ի գործակալ լինելու մեջ, տե՛ս Հակոբյան Թ., Կանաչ և սև, արցախյան օրագիր, Եր., 2008, էջ 76։

<sup>42</sup> Կրիվոպուտևով Վ., Խոռվառույզ Ղարաբաղ, Եր., 2008, էջ 227։

<sup>43</sup> Երևանում տեղի ունեցավ «Բաքու 1990» հունվար. սովորական ցեղասպանություն» ֆիլմի շնորհանդեսը, 19.01.2010, <http://www.punarmenian.net/arm/news/41571/> (նդումն արված է 12.12.2015 թ.)։

<sup>44</sup> Որոշ հետազոտողներ եշում են անգամ 650-700 հազար բնիկ հայերի էթնիկական մաքրման մասին, տե՛ս Բաղդասարյան Հ., Հայերի էթնիկական մաքրում, բնազատը և ցեղասպանություն Աղբրեջանում 1988-1991 թթ., Եր., 2013, էջ 9։



մասը համալրեց Սփյուռքը, իսկ կեսից ավելին մշտական բնակություն հաստատեց Հայաստանում<sup>68</sup>:

Խորհրդային բանակը Բաքու մտավ մի ամբողջ շաբաթ «ուշացումով» (դրա ամբողջ պատասխանատվությունը եախնառաջ ընկնում է ԽՍՀՄ առաջին ու վերջին եախագահ Մ. Գորբաչովի վրա): Մակայն զորքը քաղաք մտավ ոչ թե կուտորածը կանխելու, այլ Ադրբեջանում իշխանությունը վերջնականապես Ազգային ճակատի ձեռքն անցնելը խանգարելու նպատակով:

Բաքվի ջարդերը կանխելու համար բավարար ուժ է հեարավորություն ունեին նաև խորհրդային բանակի Բաքվի կայագործի և Ադրբեջանի ԼԳՆ ներքին զորքերի ուժերը, որոնք ոչ միայն չէին միջամտում ահասարսուտ իրադարձություններին, այլև շատ դեպքերում արգելում էին կամավորներին օգնություն ցույց տալ տուժողներին: Բացի այդ էլ, կան վկայություններ, որ ջարդերն անմիջականորեն ուղղորդել են ադրբեջանական ՊԱԿ-ի աշխատակիցները: Ղարաբաղյան շարժման հենց սկզբնական փուլից Ադրբեջանի ՊԱԿ-ում ստեղծվել է վերլուծական հատուկ խումբ, որում ներգրավվել են ոչ միայն ՊԱԿ-ի աշխատակիցներ, այլ նաև Ադրբեջանի գիտությունների ազգային ակադեմիայի գիտաշխատողներ, որոնց տրամադյովել են «Ղարաբաղ կոմիտեի» վերաբերյալ փաստաթղթեր, կոմիտեի անդամների էլույթների սղագրությունները, այլ նյութեր, որոնք վերլուծվել և զեկուցվել են Ադրբեջանի ղեկավարությանը՝ շարժումը ճնշելու ուղղությամբ անհրաժեշտ հետևություններ անելու և «ճիշտ» որոշումներ կայացնելու նպատակով: 1988 թ. սկզբներին Բաքվից Ստեփանակերտ է ուղարկվել նաև հատուկ ծառայությունների ավելի քան 200 աշխատակից՝ տեղում իրավիճակը վերանսկելու, ինչպես նաև Արցախյան շարժումը որպես «ծայրահեղական-անջատողական» որակելու գործում ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանը «հիմնավոր» տեղեկատվություն ներկայացնելու նպատակով:

<sup>68</sup> Մովորական ցեղասպանություն. Բաքու 1990, հունվար. <http://www.karabekhrecords.info/gallery/umfoprական-ցեղասպանություն-բաքու-1990/> (իրումն արված է 15.12.2015 թ.):

Առկա փաստերը համադրելով՝ կարող ենք եզրակացնել, որ Ադրբեջանում տեղի ունեցած հայկական կոտորածները, հատկապես Սումգայիթի և Բաքվի նդեռնագործությունները ծրագրվել ու մանրակրկիտ մշակվել են հատուկ ծառայությունների ու ռազմականության աշխատասենյակներում: Ադրբեջանի ՊԱԿ-ի և ՆԳՆ օպերատիվ ստորաբաժանումների աշխատակիցների կողմից կամ երանց օժանդակությամբ առանձնացվել են հայերով բնակեցված թաղամասերի քարտեզները, դրանց վրա նշագրվել կոնկրետ հասցեները և բաժանվել նախապես հայատյացությամբ ներշնչված խաժամուժին: Ամբողջ Ադրբեջանում ակտիվ գործել է ազգայնական գործակալների ցանցը: Բաքու, Սումգայիթ, Կիրովաբադ և Միհեդչաուր քաղաքները բաժանվել են շրջանների՝ անպատիժ կերպով սադրանքներ, խոշտանգումներ և անկարգություններ կազմակերպելու համար: Հանրահավաքներում ելույթ էին ունենում հայերի՝ իբր հանցավոր արարքների մասին պատմող ու ամբոխը գոմբիացնող հատուկ պատրաստված սադրիչներ, ջարդերի ժամանակ անջատվում էր հոսանքը, ջարդարարների, ավազակախմբերի ներսում գործում էր հստակ համակարգ և կարգապահություն, դրանք հրահանգավորվում էին ռադիոկապով, հայերին խոբհուրդ էին տալիս դուրս չգալ աշխատանքի և նստել տանը, ոստիկանություն զանգահարելուց 10-15 րոպե չանցած բնակարանում հայտնվում էին ջարդարարները, բժիշկները հրաժարվում էին օգնություն ցուցաբերել վիրավորներին ու տուժողներին: Թե Սումգայիթում, թե Կիրովաբադում և այլ վայրերում սցենարը կրկնվել է նույնությամբ: Ամեն ինչ իրականացվել է նույն կերպ՝ բռնությունները, դաժանությունները, սպանությունների գազանային քնույթը<sup>66</sup>: Ղարաբաղյան շարժման հետև սկզբից Ադրբեջանի Կուսկենտկոմի վարչական մարմինների բաժնի պետի տեղակալ Ասադովը հրապարակեց մի գաղտնիք, թե Ղարաբաղի սահմաններում պատրաստ են և իրենց հրամանին են սպասում 100 հազար զին-

<sup>66</sup> Տեղեկություններ, պատմական տեղեկանք Ադրբեջանի շրջանից հայերի զանգվածային տեղահանությունների մասին (1920 մինչև 1988 թ.), Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի տեղեկագիր (հ.10), 3.12.1988 թ., ՀԱԱ, ֆ. 1159, ց. 2, գ. 6, թ. 4:

ված մուսուլմաններ<sup>607</sup>: Ա. Մուրթալիբովը խորհրդակցություններից մեկի ժամանակ իրավապահ մարմիններին՝ ՆԳԼ-ին, ՊԱԿ-ին, դատախազությանը, կոչ արեց (ավելի ճիշտ՝ հրահանգեց) տեղահանել ԼՂՄ-ի, Գետաշենի, Շահումյանի շրջանների բնակիչներին<sup>608</sup>: «Աղբբեջանում հայերի ջարդերը սաղրել է տեղի մաֆիան, որը կառավարվում էր Աղբբեջանի պետանվտանգության նախկին ղեկավար Հեյդար Ալիևի կողմից»<sup>609</sup>, - գրել է Ջորջ Մորտոնը 1989 թ. «Ջնանիյե» ամսագրում տպագրված հոդվածում: Իսկ լիբանանյան «Ազդակ» օրաթերթի գլխավոր խմբագիր Շահան Գանթահարյանը Մումգայիթի գոհերի հիշատակի հավաքին հայտարարեց. «Մումկայիթեան եղեռնագործությունը ուրիշ բան չէ, եթե ոչ Պաքուի համապատասխան ծառայություններու ծրագրած ցեղային մաքրագտման հակամարդկային ոճիր»<sup>610</sup>: Հայտնի վերլուծաբան Փոլ Գորլը ևս Մումգայիթի ոճրագործության կազմակերպման գործում տեսնում է ՊԱԿ-ի առանձնահատուկ դերակատարությունը. «Անմեղ մարդկանց հանդեպ իրագործված բռնությունն ու ոճիրը սարսափելի հանցանք է, այդուհանդերձ, Մումգայիթի ջարդերը Աղբբեջանի ժողովրդի իրագործած ոճիրը չէր հայ ժողովրդի նկատմամբ, սա ՊԱԿ-ի սաղրանքով մի խումբ աղբբեջանցի հանցագործների ոճիրն է», - «Ամերիկայի ձայն»-ի հայկական ծառայությանը տված հարցազրույցում նշել է նա<sup>611</sup>: Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Ռիչարդ Կիրոկոսյանը ևս փաստում է, որ Մումգայիթի ռդբեղությունը կազմակերպված էր Աղբբեջանի հատուկ ծառայու-

<sup>607</sup> Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը. սկզբից մինչև մեր օրերը, Եր., 1994, էջ 275:

<sup>608</sup> Նույն տեղում, էջ 318:

<sup>609</sup> Մումգայիթ 1988, Փետրվար 28 - Մուլտրական Տեղասպանություն, <http://www.youtube.com/watch?v=XvC9Qr8fBN4> (հղումն արված է 10.03.2015 թ.):

<sup>610</sup> Մումկայիթի եղեռնագործության գոհերու յիշատակի հուսաքին Շահան Գանտահարյանի արտասանած խօսքը, 25.02.2014, <http://www.aztagdaily.com/archives/175120> (հղումն արված է 14.03.2015 թ.):

<sup>611</sup> Մխիթարյան Ի., Ըստ Փոլ Գորլի՝ Մումգայիթի ջարդը ՊԱԿ-ի կազմակերպած ոճիրն էր, 27.02.2015թ., <http://www.azatutyun.am/content/article/26872078.html> (հղումն արված է 07.01.2016 թ.):

յունների կողմից<sup>442</sup>։ Իսկ Հայաստանի ազատագրության հայ գաղտնի բանակի՝ 20-ը ղեկավարների 1991 թ. հաղորդագրության մեջ նշված է. «Թուրքական հետախուզական սպասարկութեան Միթ-ը և ազրպեյճանական Քա.Կե.Պե-ն ձեռք ձեռքի կշարունակեն իրենց ցեղասպանական քաղաքականությունը հայ ժողովրդի և Հայաստանի դեմ մասնավորաբար երկայիս Հայկական Արցախի մեջ<sup>443</sup>» (այն, որ պանթյուրքիստական կազմակերպությունները ակտիվ մասնակցություն են ունեցել Ադրբեջանում հայերի նկատմամբ իրականացված կոտորածներին, միանշանակ է)։

Կան բազմաթիվ տեղեկություններ, որ ոստիկանները ոչ միայն չեն միջամտել ջարդերին, այլև քաղաքացիական հագուստներով ակտիվորեն մասնակցել են ծեծին ու բռնություններին<sup>444</sup>։ Մումգայիթում տեղի մրլիցիան տառացիորեն օժանդակել է վայրենաբարո ամբոխին<sup>445</sup>։

Մումգայիթի ողբերգության կրկնությունը Բաքվում բնավ պատահական չէր։ Բարբարոսական գործողություններն այստեղ ևս նախապես ծրագրված, սլանավորած և մանրամասնորեն մշակված էին։ Այդ մասին անձամբ հայտնել է Ադրբեջանի Կոմկուսի Մումգայիթի քաղաքային Կոմիտեի քարտուղար Մուսլիմ-գադեն։ Նա կան ընդունել է այն փաստը, որ զանգվածային անկարգություններ հրահրելու նպատակով Մումգայիթ են ուղարկվել քրեական տարրեր<sup>446</sup>։ Օրինակ, Մումգայիթի ջար-

<sup>442</sup> Կիրակոսյան Ռ., Մումգայիթի ողբերգությունը կազմակերպված էր Ադրբեջանի կաստակ ծառայությունների կողմից, 01.07.2010, <http://armactor.com/umugayithi-olberegoutyounler-kazmalkerap/> (հղումն արված է 12.03.2015 թ.)։

<sup>443</sup> Հայաստանի ազատագրութեան հայ գաղտնի բանակ, հաղորդագրություն, 20 ղեկավարների 1991թ., ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 3, գ. 36, թ. 3։

<sup>444</sup> Տեղեկություններ, պատմական տեղեկանք Ադրբեջանի շրջանից հայերի զանգվածային տեղահանությունների մասին (1920 մինչև 1988 թ.), Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի տեղեկագիր (ն. 10), 3.12.1988 թ., ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 2, գ. 6, թ. 4։ Տե՛ս նաև Բաղդասարյան Յու., նշվ. աշխ., էջ 239։

<sup>445</sup> Հովհաննիսյան Ա., ... որ վերջապես այս մոճավանքը, Երեկոյան Երևան, 27 հուլիտնիների 1988 թ., N 252 (9323), էջ 3-4, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 3, գ. 147, թ. 8։ Նաև՝ Օ կրոսաաաх собогтоах в азербайджанском городе Сумгаите, ՀԱԱ, Ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 10, 11։

<sup>446</sup> Кадомбенцов З., Оганезово Г., Азербайджан: уроки и решения, «Правда», 1988, 10 октября, N 284 (25636), с. 4.

դերը կազմակերպելու նպատակով բանտից ազատ է արձակվել նախկին ռուսիկան, 5000 ռուբլի կաշառք վերցնելու մեղադրանքով 10 տարվա ազատազրկման դատապարտված Արիֆ Լաթիֆ օղլի Հաջինը, որը, ջարդերին իր վրա դրված «պարտականությունները» գերազանց կատարելու համար վերականգնում է ռուսիկանի պաշտոնը, ստանում կապիտանի կոչում ու նշանակվում Ադդամի օդակայանի պարետի, հատուկ նշանակության ջոկատի հրամանատարի պաշտոնում: Ա. Հաջինը Ստեփանակերտի օդակաձև հրապարակում, շենքերից մեկի տակ տեղադրել էր նաև պայթուցիկ սարք, ինչը ռուսիկանները բացահայտել էին կանխելով պայթյունը<sup>40</sup>: Հատկանշական է ԽՍՀՄ ԼԳ եախարար Վ. Վ. Բակատինի ելույթը ԽՍՀՄ ԳՆ երկրորդ նստաշրջանի՝ 1990 թ. փետրվարի 19-ին կայացած 2 պալատների համատեղ լիազումար նիստում. «Ջարդերի (Ադրբեջանում սանձազերծված հայկական կոտորածների) բոլոր կազմակերպիչները գործնականում կալանքից ազատվեցին օրեր առաջ, որոնցից էր Փանախովը, ում հիմա բոլորով որոնում ենք: Ադրբեջանական ԼԳՆ աշխատակիցներից բնավ ոչ բոլորը կատարեցին իրենց պարտքը, և դատարանը կորոշի նրանց պատասխանատվության չափը: Դժվար է միայն միլիցիային դատապարտել, քանզի նրանք գործում են շրջգործկոմի հատուկ որոշումներով: Մարդկանց ձեռքն էին տվել մինչ այդ միլիցիայի կողմից բռնագրավված որսորդական հրացանները<sup>41</sup>»:

Իսկ ԼՂԻՄ-ում բնակչությունից զենք-զինամթերքի բռնագրավումն իրականացվել էր հետևյալ կերպ. 1990 թ. ԼՂԻՄ-ում անցկացվել են 160 «օպերատիվ-ռազմական գործողություններ», որոնց ընթացքում «զինաթափվել են» 156 հայկական գյուղեր (97 %), ուր գրեթե ոչինչ, բացի որսորդական հրացաններից, չեն հայտնաբերվել, և ընդամենը 4 (2,5 %) ադրբեջանական գյուղ, ուր հազարավոր գրոհայիններ, միլիցիոներներ և օմօնականներ բա-

<sup>40</sup> Վարապետյան Բ., Վտանկավոր հանցագործը օդակայանի պարետ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 15 յանուար 1991 թ., թիւ 10 (73), էջ 2:

<sup>41</sup> ԽՍՀՄ Լեքսիկոն գործերի միեխտոր Վ. Վ. Բակատինի ելույթը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի՝ 1990 թ. փետրվարի 19-ին կայացած երկու պալատների նստուղի դոկումենտ լիազումար նիստում, Օրինապահության դիրքերում, 27 մարտի 1990 թ., N 2, էջ 2, 6, ՀԱՄ, Ֆ. 1159, ց. 12, գ. 34, թ. 7 և շրջերես:

ցելիբաց շրջում էին՝ զինված նորագույն ավտոմատներով<sup>449</sup>։ Հրազենը հավաքել էին անգամ ԼՂՄ ՆԳ վարչության հայազգի աշխատակիցների ձեռքից, ինչի վերաբերյալ ԼՂՄ իրավապահ մարմինների աշխատակիցները դիմել են ԽՍՀՄ պրեզիդենտ Մ. Ս. Գորբաչովին, ԳԽ նախագահ Ա. Գ. Լուկյանին, փոխնախագահ Գ. Ի. Յանանին, ՊԱԿ-ի նախագահ Վ. Ա. Կրյուչկովին, ՆԳ նախարար Բ. Վ. Պուգոյին, Արդարադատության նախարար Մ. Գ. Լուշչիկովին, Գերագույն դատարանի նախագահ Ե. Ա. Սմոլենցևին։ «Աղյրբեջանի միլիցիայի հատուկ նշանակության ջոկատների անվան տակ մարզ են մուտք գործել զինված բանդիտական կազմավորումներ այն դեպքում, երբ ԼՂՄ-ի ՆԳ վարչության ոչ մի ստորաբաժանումում հրազեն չի թողնված։ Բացի այդ, Աղյրբեջանի ՆԳՆ վերջին հրամանով մարզին հատկացվել է միլիցիայի ազգությամբ աղյրբեջանցի աշխատողների լրացուցիչ 414 հաստիք։ Սա ոչ այլ ինչ է, եթե ոչ մարզային միլիցիայի բացահայտ աղյրբեջանացում<sup>450</sup>։

Աղյրբեջանում տեղի ունեցած հայկական կոտորածների և բռնի տեղահանության գործում այդ երկրի հատուկ ծառայությունների (ՊԱԿ-ի, հետազայում՝ ԱԱՆ-ի, ինչպես նաև ՆԳՆ և ՊՆ ստորաբաժանումների) մասնակցությունն ակնհայտ է։ Վկայություններ կան, որ հայերի բռնի տեղահանությանը մասնակցել են ՊԱԿ-ի աշխատակիցները, որոնք հեռացողներին ստիպում էին ստորագրել դիմումներ, իբր իրենց բնակավայրերից հեռանում են կամովին։ Այն անձինք, ովքեր չէին ստորագրում դիմումի տակ, ենթարկվում էին խոշտանգումների<sup>451</sup>։ Աղյրբեջանական ՊԱԿ-ը նաև վերահսկում էր ոստիկանության աշխատանքը՝ կապված հայերի նկատմամբ իրականացվող բռնությունների ու տեղահանության գործընթացի հետ, տալիս համապատասխան հանձնարարություններ<sup>452</sup>։

<sup>449</sup> Լուկինին Ա., Որտե՞ղ էիր ռուս մտավորականություն, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 5 ապրիլի 1991 թ., թիվ 77-78 (141), էջ 5, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 1, գ. 100, ք. 12։

<sup>450</sup> Տե՛ս ԼՂՄ իրավապահ մարմինների աշխատողների դիմումը, Ուրբաթ, 01.03.1991 թ., էջ 3, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 12, գ. 34, ք. 10-ի շքերես։

<sup>451</sup> Բաղդասարյան Հ., Եզվ. աշխ., էջ 49, 84-85։

<sup>452</sup> Լույս տեղում, էջ 109։

Եվ այսպես, 1918-20 թթ. Ադրբեջանում տեղի ունեցած հայկական կոտորածների պատմությունը կրկնվեց 1988-90 թթ.<sup>43</sup> որոշակի տարբերությամբ. Ադրբեջանի մուսավաթական իշխանության փոխարեն հանդես եկավ ԱԽՍՀ կոմունիստական իշխանությունը, թուրքական դիվիզիաների փոխարեն՝ ներքին զորքերն ու ՊԱԿ-ը, իսլամական բանակի փոխարեն՝ Ադրբեջանի՝ մինչև ատամները զինված ՕՍՕՆ-ական խաժամուժը<sup>44</sup>:

Կարող ենք փաստել, որ Մուսվաթիթում, Բաքվում ու Ադրբեջանի ողջ տարածքում իրականացված հայկական կոտորածների հետևում կար նաև թուրքական հետք: Սկսած 1980-ական թթ. վերջերից՝ Թուրքիայից գորք և մեծ քանակությամբ թուրքական արտադրության զենք է տեղափոխվել թե՛ Ադրբեջան, թե՛ Նախիջևան<sup>45</sup>: Փաստորեն, 70 տարի անց ադրբեջանական իշխանություններն ու հատուկ ծառայությունները, օգտվելով ԽՍՀՄ-ում ստեղծված խառը իրավիճակից և հրահանգավորվելով Թուրքիայի կողմից, սկսեցին հայ ժողովրդի նկատմամբ կիրառել նույն քաղաքականությունը, ինչն իրականացվում էր Ադրբեջանի Դեմակրատական Հանրապետության գոյության տարիներին:

#### 4.2. Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործողությունները Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ

1988-1991 թթ. Ադրբեջանի հակահայ քաղաքականության իրականացման ու Արցախյան շարժումը ճնշելու ռազմական ուղղությունը ստանձնեց ադրբեջանական ՕՍՕՆ-ը (Орząd мотлицики особоро назначения): Ու թեև Ադրբեջանում Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների ադրբեջանական ազգաբնակչության ներկայացուցիչներից զինված ջոկատների կազմավորումը սկսվել է 1990 թ. վերջերին, այնուհանդերձ դեռևս 1980-ական թթ. սկզբներին Արցախի և Նախիջևանի ադրբեջա-

<sup>43</sup> Чобанян С., Եզվ. աշխ., էջ 10:

<sup>44</sup> Демоян Г., Турция и Карабахский конфликт, <http://armenianhouse.org/demoyan/turkey/ch4.html>.

եական բնակչությունն սկսել էր մեծ քանակությամբ գեղք գնել (հիմնականում որսորդական)՝ անտեսելով դրանց բարձր գները: Անգամ Հայաստանում բնակվող այն աղյրեջանցիները, ովքեր հանդիսանում էին Որսորդմիության անդամներ և ունեին որսորդական հրացաններ, դրանք տարել էին Աղյրեջան<sup>66</sup>: 1986-87 թթ. Հայաստանին սահմանակից և Արցախի աղյրեջանական խոշոր բնակավայրերում արդեն կազմավորվել էին ՕՄՕՆ-ի ջոկատներ: Գրեթե յուրաքանչյուր գյուղում կար ՕՄՕՆ-ի ստորաբաժանում, իսկ շրջանային կենտրոններում տեղակայված էին զումարտակները՝ համապատասխան սպառազինությամբ ու մարտական տեխնիկայով<sup>66</sup>: Աղյրեջանական իշխանությունները փաստորեն վաղորոք ծրագրել էին գեղք կիրառել հայ բնակչության նկատմամբ և անգամ նախապատրաստվում էին ռազմական գործողությունների (պատմությունը ցույց է տվել, որ նման դեպքերում աղյրեջանական իշխանությունները մշտապես գործել են թուրքական իշխանությունների անմիջական կամ միջնորդավորված հրահանգներով: Դրա վառ ապացույցն այն փաստն է, որ 1990 թ. հունվարի 7-ին Աղյրեջանական ԽՍՀ նախարարների խորհրդի նախագահ Ա. Մուրալիբովը մեկնել է Թուրքիա և հանդիպում ունեցել Թուրքիայի նախագահ Թ. Օզալի հետ<sup>67</sup>, որից ընդամենը օրեր անց՝ հունվարի 12-ից 20-ը, տեղի ունեցան Բարվի հանրահայտ դեպքերը):

Դեռևս մինչև 1988 թ. Աղյրեջանի իշխանությունների ու հատուկ ծառայությունների կողմից սանձազերծված հայկական կոտորածները, Ստեփանակերտում և մարզի այլ շրջաններում կազմակերպվում էին գաղտնի հավաքույթներ՝ ազգայնամոլությամբ այքի ընկնող աղյրեջանցի պաշտոնյաների մասնակցությամբ, որտեղ քննարկում էին Արցախը հայաթափելու հարցեր: Մասնավորապես, «Զարթոնք» թերթը 1988 թ. մարտի 1-ի համարում գրեց, թե այդ հավաքույթներին մասնակցում են ԼՂԻՄ

<sup>66</sup> Տե՛ս «Քառուղի» Նարսարդա-աղյրեջանական պատերազմի մասին փաստավավերագրական ֆիլմը, [https://www.youtube.com/watch?v=FL7\\_k6L2WcQ4](https://www.youtube.com/watch?v=FL7_k6L2WcQ4) (հղումն արված է 29.02.2016 թ.):

<sup>66</sup> Սահակյան Ռ., Հիշողություն սկզբնիղների համար, «02 շաբաթաթերթ», 17 հունվարի 2014 թ., թիվ 1 (1150), էջ 15:

<sup>67</sup> Վոնտառ Շ., նշվ. աշխ., էջ 17:



գործկոմի նախագահի առաջին տեղակալ Հուսեյնովը, մանկավարժական ինստիտուտի պրոֆեսոր Գուլինը, մարզային դատախազի տեղակալ Մամեդովը, ՆԳ վարչության պետի տեղակալ Հաջինը, Մարզկոմի ազիտացիայի բաժնի պետի տեղակալ Իսմայիլովը, Մարտունու շրջգործկոմի նախագահի տեղակալ Ազիզովը, մարզի գլխավոր բժշկի տեղակալ Աբասովը և ուրիշներ<sup>498</sup>։ Պաշտոնների այս շարքը նայելով՝ կարող ենք փաստել, որ ադրբեջանական ՊԱԿ-ը չէր կարող անմասն մնալ նման ներկայացուցչական պաշտոնատար անձանց մասնակցությամբ տեղի ունեցող հավաքների կազմակերպմանը։

Այսպես, Արցախյան շարժումը ճնշելու գործն սկզբում ղեկավարեցին Ադրբեջանական ԽՍՀ ՆԳՆ և ՊԱԿ-ի բարձրատիճան պաշտոնյաներ<sup>499</sup>, այնուհետև Ադրբեջանի Հանրապետության ուժային կառույցների ղեկավարները։

«Ադրբեջանի ժողովրդական (ազգային) ճակատի» ավագակախմբերի բազայի հիման վրա ստեղծվեցին միլիցիային առընթեր հասարակական կարգի պահպանության ժողովրդական միլիցիայի ռազմականացված ջոկատներ, որոնք ևս իրենց զազանային կերպարը ցույց տվին Արցախում՝ Շահումյանի շրջանում, Գետաշենում, Ասկերանում և այլ վայրերում<sup>500</sup>։

1991 թ. հունվարի 22-ին մինչ այդ ասյորինաբար կազմավորված Շուշիի հեռուստակայանը հեռարձակեց քաղաքում անցկացված ցույցի կադրեր, որտեղ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի գործադիր կոմիտեի նախագահը ներկաներին կոչ էր անում երդվել, թե կանեն ամեն ինչ, որ Լեո-

<sup>498</sup> Ղարաբաղցիներու կոչը դարաբաղցիներուն, Տարթթեք, 01 մարտի 1988 թ., թիվ 118 (15, 145), էջ 2, ՀԱԱ, ֆ. 1159, ց. 12, գ. 15, թ. 14։

<sup>499</sup> Վոճանտ Շ., նշվ. աշխ., էջ 36-44։

<sup>500</sup> Ղազարյան Ա., Կցանկանալի հարցնել... (մի հրապարակման առթիվ), ՀԱԱ, ֆ. 1159, ց. 3, գ. 114, թ. 42։ Գիտաշենում և Մարտունուշենում ՕՍՕՆ-ականների վայրագությունների մասին տե՛ս նաև Խորհրդային Ղարաբաղ, 7 մայիսի 1991 թ., թիվ 83, էջ 3։ Մարտոյան Լ., ռուսական զինի, ՕՍՕՆ-ի և Գետաշենի ենթասամարտի մասին, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 15, թիվ 107 (170), էջ 2-3։ Մանուկյան Ա., Ալանատեսի վկայություններ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 3, թիվ 99 (162), էջ 1։ ՕՍՕՆ. Սպանություններ, խոշտանգումներ, ավազակություն, բռնազաղթ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., հունիսի 28, թիվ 138 (201), էջ 4 և այլն։

նային Ղարաբաղում ոչ մի հայ չմնա: Յույցի մասնակիցներից մի քանի հազար մարդ պատրաստակամությամբ երդվեց, և սկսվեց զինված ջոկատների հավաքագրումը, որոնց կազմավորումը սկզբնական շրջանում օրինականացվեց Ադրբեջանական ԽՍՀ ԼԳՆ-ի և ՕՍՕՆ-ի հաստիքացուցակի ընդլայնմամբ: 1991 թ. սկզբին Ադրբեջանի ՕՍՕՆ-ի թվակազմը Լեռնային Ղարաբաղում կտրուկ աճեց: Ադրբեջանի ԼԳ նախարար Մ. Ասադովը փետրվարի 3-ին հանրապետական հեռուստատեսությամբ պաշտոնապես հայտարարեց, որ «Լեռնային Ղարաբաղի ողջ տարածքով տեղակայված են Ադրբեջանի ԼԳՆ ՕՍՕՆ-ի 10 հազար զինծառայողներ: Օրերս այդ թիվը կաճի ևս 600 մարդով... Մենք ծրագրում ենք նրանց թիվը ԼՂԻՄ-ի ադրբեջանական գյուղերում հասցնել մինչև 5000 և ավելի... Մտնել Ղարաբաղ և գրավել այն՝ գուտ տեխնիկական խնդիր է...»<sup>40</sup>:

Մի բան հստակ է. Ադրբեջանում և Ղարաբաղում հայության նկատմամբ իրականացված անաբեկչությունները, սպանությունները, տեղահանությունները ունեին քաղաքական, ազգայնամուլական բնույթ և Ղարաբաղը Լախիջևանի օրինակով հայերից մաքրելու հայաստաց քաղաքականության շղթայի շարունակությունն էին, ինչը լայն առումով տեղավորվում է Հայոց ցեղասպանության շարունակության համատեքստում:

Հատկանշական է ԽՍՀՄ ՊԱԿ-ին, ՊՆ-ին և ԼԳՆ-ին Հայաստանի ԼԳՆ-ից և ՊԱԿ-ից 1991 թ. ապրիլի 5-ին ուղղված դիմումը. «Ստացված տվյալները վկայում են, որ Հայաստանին սահմանակից Ադրբեջանի և Լախիջևանի շրջաններում կուտակվում են ադրբեջանցիների զինված գրոհայիններ՝ հաճախ միլիցիայի՝ համազգեստով՝ կատարելով ելուզակային հարձակումներ: Հայաստանի ՊԱԿ-ը և ԼԳՆ-ն իրավիճակը քննարկելու նպատակով պարբերաբար հանդիպում են Ադրբեջանի ՊԱԿ-ի և ԼԳՆ-ի աշխատակիցների հետ, սակայն իրավիճակը չի փոխվում, հակառակը Ադրբեջանի ծայրահեղական ուժերը նպատա-

<sup>40</sup> Աղաբաղյան Մ., Ասադյան Է., Մինասյան Ս., Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի. Ազրեխիայի իրավաքաղաքական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Եր., 2007, էջ 126:

կային կերպով սրում են իրավիճակը: Մեր տվյալներով Լաչինի շրջանի Մայրեղ գյուղում տեղակայված հետախուզական գումարտակը գրեթե 80 տոկոսով բաղկացած է ադրբեջանցիներից: Ադրբեջանի ՆԳՆ հատուկ ջոկատայինների կողմից սպանվում են միանգամայն անմեղ հայ քաղաքացիներ, ըստ որում, սպանություններն ուղեկցվում են գոհերի ծաղրոճանակով ու հարածուն դաժանությամբ: Գետաշենի և Մարտունաշենի հայկական գյուղերը ևս պաշարված են հատուկ ջոկատայինների կողմից...<sup>60</sup>»:

ՊԱԿ-ի ԼՂԻՄ բաժնի ղեկավարներից մեկը՝ խորհրդային սահմանադրական կարգի պահպանության ստորաբաժանման պետ Էդուարդ Շալյանը ևս նամակ էր հղել ԽՍՀՄ ՊԱԿ-ի նախագահ Վ. Ա. Կրյուչկովին, որում ևս մերկացնում էր Ադրբեջանի ղեկավարության քաղաքականության ազգայնամոլ բնույթը, ինչն ուղղված էր ԼՂԻՄ-ի՝ որպես հայկական ինքնուրույն կազմավորման վերացմանը: Նամակի պատճառով էդ. Շալյանին Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահի հրամանով հեռացրել են աշխատանքից, քանզի ևս «ապակողմնորոշիչ տեղեկություններ է տվել ԼՂԻՄ-ում տեղի ունեցող իրադարձությունների էության վերաբերյալ, վիրավորել է Ադրբեջանի ղեկավարությանը՝ դրանով իսկ վարկաբեկել հանրապետության շեկիստի բարձր կոչումը»<sup>61</sup>: «Իսկ այն, որ Ադրբեջանի քաջարի «շեկիստները» ոչինչ չարիև Մումգալիթի, Բարվի, Կիրովաբադի ողբերգությունները կանխելու համար, այլ հակառակը, ՊԱԿ-ի որոշ պատասխանատու աշխատակիցներ կոչ էին անում պաշտպանել Ղարաբաղը հայ ծայրահեղականներից, դա նորմալ էր», - մի առիթով նշել է էդ. Շալյանը և շարունակել. «Ինձ հարտարարեցին, թե հայամետ հայացքներ ունեցող մարդը չի կարող աշխատել ԼՂԻՄ ՊԱԿ-ում և հուսալիորեն պաշտպանել Ադրբեջանի ինքնիշխանությունը»<sup>62</sup>:

<sup>60</sup> ԽՍՀՄ ՊԱԿ-ին, ՊՆ-ին և ՆԳՆ-ին Հայաստանի ՆԳՆ-ից և ՊԱԿ-ից ուղղված դիմումը, Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 1991թ., ապրիլ 5, թիւ 77-78 (141), էջ 1-2, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 1, գ. 100, ք. 11:

<sup>61</sup> Գրիգորյան Ա., Հեռացրել են ճշմարտության համար, Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 1991 թ., յանուար 18, թիւ 13-14 (77), էջ 6, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 1, գ. 100, ք. 13,14:

<sup>62</sup> Լույս տեղում:

Աղյրբեջանը բոլոր ճիգերը գործադրում էր նաև ԼՂՄ-ի հայությանը արտաքին աշխարհից լրիվ կտրելու համար: 1990 թ. հոկտեմբերի 17-ին աղյրբեջանական հատուկ ջոկատայինները գրավեցին Ստեփանակերտի օդանավակայանը՝ մարզի համար կենսական նշանակություն ունեցող տրանսպորտային այս գարկերակի վերահսկողությունը վերցնելով իրենց ձեռքը<sup>406</sup>:

Օդանավակայանի գրավումից հետո հատուկ ջոկատայիններն սկսեցին անմարդկային գործողություններ իրականացնել ուղևորների նկատմամբ: Այս առումով հատկանշական են Ստեփանակերտ այցելած ՌՆՖՍՂ-ի ժողովրդական մի խումբ պատգամավորների նկատմամբ կիրառված անօրինականությունները, որոնց վերաբերյալ նրանք դիմում են հղել ՌՆՖՍՂ ԳՆ նախագահությանը. «Ի՞նչ նորմատիվ ակտերով են սահմանվում Աղյրբեջանական ՌՍՂ ԼԳՆ մրլիցիայի հատուկ ջոկատների մարտիկների լիազորությունները՝ ուղևորների ստուգման ու անձնական խուզարկության, անձնական նամակագրության և տպագիր մամուլի գրաքննության առումով: Կարելի է պատկերացնել, թե ինչ է վիճակվում շարքային քաղաքացիներին, եթե կամայականությունից ու գոեկությունից գերծ չեն ՌՆՖՍՂ ԳՆ նախագահության անդամները: Ավտոմատավորները ուղևորների վրա ազդում են ոչ միայն ֆիզիկապես, այլ նաև հոգեբանորեն՝ բացականջություններով ու հայիտյանքներով»<sup>406</sup>: Ստեփանակերտի օդանավակայանը օմօնականները դարձրել էին սաղորիչ գործողությունների կենտրոն, քանի որ Նարաբաղը Հայաստանին կապող միակ օդակը մնացել էր հենց այդ օդանավակայանը: Պարետ Շենյովը, ով փոխարինել էր Սաֆնոնովին, հայտարարել էր, թե չի կարող երաշխավորել ոչ անձնակազմի, ոչ էլ թոփյքների անվտանգությունը, քանի որ «այդ օմօնականները խուլիգաններ են և չեն ենթարկվում իրեն: Անգամ ԼԳ նախարար

<sup>406</sup> Գրիգորյան Ա., Ստեփանակերտ. 17-ը նոյեմբերի 1990 թ., Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1990 թ., նոյեմբերի 18, թիվ 31, էջ 4:

<sup>406</sup> ՌՆՖՍՂ-ի ժողպատգամավորների դիմումը, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., յանուար 26, թիվ 20 (83), էջ 1, ՀԱԱ, ֆ. 1159, ց. 1, գ. 100, թ. 7:

Բակատինն է հրամայել օմսեականներին դուրս բերել օդանավակայանից, սակայն նրանք չեն ենթարկվել<sup>467</sup>:

Բացի ուղեորներին ահաբեկելուց՝ Ստեփանակերտի օդանավակայանում հատուկ ջոկատայինները նաև հրահանգ ունեին հետևել փոստային առաքումներին: Նրանք Հայաստանից ստացվող թերթերը գողանում էին, բացում ծանրոցները, ապահովագրական պարկերը, ոչնչացնում նամակները<sup>468</sup>: 1991 թ. մարտի 12-ին Ստեփանակերտի օդանավակայանում Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատայինները փորձել են առևանգել Գանձասարի վանքապատկան ավտոմեքենան՝ կողոպտելով վարորդին (Արցախում, ըստ Ադրբեջանի նախարարների խորհրդի որոշման, եկեղեցիները գործում էին անօրինական<sup>469</sup>): Ստեփանակերտից հայ բնակչության վտարման գործին ներգրավված էր ոչ միայն ՕՄՕՆ-ը, այլ նաև ՊԱԿ-ը: Հայերին ստիպում էին գրել, իբր իրենց կամքով ցանկանում են տեղափոխվել Հայաստան: 1991 թ. մայիսի 6-ին հեռուստալրագրող Վ. Հովհաննիսյանին Ստեփանակերտում ձերբակալում են և տեղափոխում Կիրովաբադ, որտեղ նրան հայտնում են, թե ինքն անհետ կորածների մեջ է: Ադրբեջանական ՊԱԿ-ի մի աշխատակից Վ. Հովհաննիսյանից պահանջում է ստորագրել մի թուղթ, որ նա կհամագործակցի իրենց հետ: Նրան առաջարկում են նաև հանդես գալ հեռուստատեսությամբ, քննադատել հայ ֆիդայիներին, ասել, որ իր հետ լավ են վարվում: Մինչդեռ, ըստ Վ. Հովհաննիսյանի, նրան մշտապես ծեծել են ու ենթարկել կտտանքների<sup>470</sup>:

1991 թ. փետրվարի 24-ին Ստեփանակերտում տեղի ունեցած մի պայթյունի վայրում պատահաբար հայտնված դայրոցականներ Նվեր Առաքելյանին, եղբորը՝ Ջոնին և Կարեն Չիրկովին հատուկ ջոկատայինները բռնում են, դաժանորեն ծեծի ենթար-

<sup>467</sup> Նույն տեղում:

<sup>468</sup> Գրիգորյան Ա., Մովսեսյան ազգայնամոլություն, Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 1991 թ., փետրվարի 6, թիվ 28 (91), էջ 1:

<sup>469</sup> ՆՅՆ տեղեկատու կենտրոն, Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատների հերթական ձեռնարկումը, Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 15 մարտ 1991 թ., թիվ 58 (121), էջ 1:

<sup>470</sup> Հակոբյան Տ., Օրինապահության կայսերական ձևով, Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 4 յանուար 1991 թ., թիվ 2 (65), էջ 1:

կում և տանում Շուշիի բանտ: Հատուկ ջոկատայինների գործողություններից տուժում են նաև տարբեր հաստատությունների, կուրբինատների, ֆաբրիկաների աշխատակիցներ: Հատուկ ջոկատայինները ներխուժում են այդ արտադրամասեր, ջարդուփշուր անում ամեն ինչ, իրականացնում անմարդկային գործողություններ<sup>61</sup>: Հարկ է նշել, որ հատուկ ջոկատայինների շարքերում գտնվող ռուս զինվորականությունը շատ դեպքերում չէր ցանկանում մասնակից դառնալ աղբրեջանցիների վայրագություններին: Այսպես, 1991 թ. փետրվարի 8-ի լույս 9-ի զիշերը Ստեփանակերտում խորհրդային բանակի 150 զինծառայողներ ցույց են անում՝ «Վերադարձրեք մեզ տուն» և «Կորչեն Աղբրեջանի հատուկ ջոկատները» կարգախոսներով: Ցույցի մասնակիցներին կանգնեցրել են աղբրեջանական հատուկ ջոկատայինները և ռետինե մահակներով ու նախազգուշական կրակոցներով ստիպել վերադառնալ գորանոց<sup>62</sup>: Փաստերը վկայում են, որ Աղբրեջանը, առանց ՄՍՀՄ ՆԳՆ հետ համաձայնեցնելու, ստեղծել էր ռազմականացված խմբավորումներ, որոնք էլ ուղարկվել էին ԼՂՄՄ՝ իբր հասարակական կարգը պաշտպանելու ու բնակչության անվտանգությունն ապահովելու նպատակով: Նույն պատրվակով կազմավորվել էին նաև ՆԳՆ ՕՍՕՆ-ի արտահաստիքային ստորաբաժանումներ, որոնց անձնակազմը հավաքագրվում էր բացառապես աղբրեջանցիներից<sup>63</sup>:

Արցախը հայաթափելու համար գործի է դրվել էնվերի ու Թալեաթի փորձը. բանակի ու աղբրեջանական ՕՍՕՆ-ի համատեղ ուժերով հայկական գյուղերից նախ կալանավորում էին 17-50 տարեկան տղամարդկանց, հետո մնացած բնակչությանը դուրս քշում բնակավայրերից<sup>64</sup>: Այսպես, անձնագրային ռեժիմի ստուգման պատրվակով 1991 թ. մայիսի 15-ի առավոտյան Աղբրեջանի անվտանգության մարմինների և ՆԳՆ նախաձեռնու-

<sup>61</sup> Գրիգորյան Ա., Արցախյան զինվորականների (կտի գործողությունները, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 7 մարտ 1991 թ., թիվ 50 (113), էջ 1:

<sup>62</sup> Ձինծառայողների ցույց Ստեփանակերտում, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 13 փետրվար 1991 թ., թիվ 33 (96), էջ 1:

<sup>63</sup> Կրիվոպուտով Վ., Խուլվահույզ Ղարաբաղ, էք., 2008, էջ 178:

<sup>64</sup> Հակոբջանյան Ա., Գորբաչովը պետք է դատվի, Արցախական, 1991 թ. սեպտեմբեր, թիվ 14, էջ 3, ՀԱԱ, Ֆ. 1159, ց. 12, գ. 50, թ. 15-ի շրջերես:

թյամբ շրջափակվել են Քերդաձորի ենթաշրջանը, Ասկերանի շրջանի մի շարք հայկական գյուղեր և 16-ից 50 տարեկան բոլոր տղամարդկանց ավտորուսով հանել են մարզի տարածքից<sup>65</sup>: Հատկանշական է Ադրբեջանի ՊԱԿ-ի՝ ԼՂԻՄ գործուղված ազգությամբ ռուս աշխատակցի խոսքերը. «Ե՛վ բանակը, և՛ ՊԱԿ-ը, և՛ ՆԳՆ-ն Արցախում գտնվում են օրինականության ու կարգուկանոնի պահպանման համար: Այլ հարց է, որ և՛ օրինականությունը, և՛ կարգուկանոնը հաստատվում են Բաքվի տեսանկյունից, իսկ դա նշանակում է, որ հայերը կանխավ արդեն արդարացի չեն»<sup>66</sup>: Եվ ԼՂԻՄ-ը «ծայրահեղականներից» ու «գրոհայիններից» մաքրելու համար ադրբեջանական իշխանությունները ծրագրել էին մարզ ուղարկել թվով 1000 ադրբեջանցի հատուկ ջոկատայիններ, որոնք ենթարկվելու էին անմիջապես ՆԳ նախարար Ասադովին<sup>67</sup>:

1991 թ. սկզբներին Բաքվի «Էլմ» հրատարակչությունը վերահրատարակեց «Կովկասյան ռուսական գործը և միջցեղային հարցերը» գիրքը, որը հայերի նկատմամբ ատելությամբ լցված զազրելի անեկդոտների, ասեկոսների և մեջբերումների մի հավաքածու էր, ինչը ատելություն, թշնամանք էր սերմանում հայերի նկատմամբ ու քարոզում բռնություն: Պատահական չէ, որ այն ստացավ «Ջարդերի ձեռնարկ» խորհրդանշական անվանումը<sup>68</sup>:

Օսոնականները վայրագություններ իրականացրին Ղարաբաղի գրեթե բոլոր բնակավայրերում, այդ թվում՝ Հադրուսում<sup>69</sup>: 1991 թ. սկզբներից նրանք սկսեցին հարձակումներ իրականացնել նաև Հայաստանի սահմանային ինչպես Տավուշի,

<sup>65</sup> Լույս սցենարով, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 16, թիւ 108 (171), էջ 1:

<sup>66</sup> Արեւիքյան Ք., Մանկավարժությունը պետական քաղաքական մակարդակի վրա է, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 3, թիւ 99 (162), էջ 2:

<sup>67</sup> Լույս սցենարով, նույն հոդվածը:

<sup>68</sup> Մենդելիչ Է., Ջարդերի ձեռնարկ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 13 փետրվար 1991 թ., թիւ 33 (96), էջ 3:

<sup>69</sup> Դավթյան Գ., Բռնագողք, հաղորդյալ տարբերակ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 31, թիւ 118 (181), էջ 2:

այնպես էլ Լախիջեանի հարակից շրջանների վրա<sup>400</sup>: Ահա թե ինչ է նշված Ա. Մախարովի հիշատակին նվիրված՝ «Նաղաղություն, առաջընթաց, մարդու իրավունքներ» առաջին միջազգային գիտաժողովի փորձագետների խմբի հաշվետվության մեջ 1991 թ. մայիսի 25-ից 29-ը հայ-աղբեջանական սահմանային գոտի այցելած ուղևորությունների մասին. «... օմնեական ջոկատները սպանում, խոշտանգում և ահաբեկում էին հայերին, ապօրինաբար բռնագրավում նրանց տները, ավտոմեքենաները, անասուններն ու անձնական ունեցվածքը: Անկախ աղբյուրներից ստացված տեղեկությունները հաստատում են, որ այդ գործողություններին ներկա էին լինում և ցուցումներ էին տալիս Աղբեջանի ՆԳ նախարարի առաջին տեղակալ Մամեդովը, շրջգործկոմի նախագահը, շրջանային ՆԳ բաժնի պետը և ՊԱԿ-ի նախագահը»<sup>401</sup>:

1992 թ. ապրիլի 10-ին աղբեջանական ՕՍՕՆ-ը կոտորածներ իրականացրեց Արցախի Մարաղա (մինչև 1954 թ. Մարգուշեան, այնուհետև՝ Լեհինավան) գյուղում: Առավոտյան ժամը 5 անց կեսից տարբեր տեսակի զենքերից, գրաղներից, ծանր հրետանուց, տանկերից կրակելով հարձակվեցին գյուղի վրա, գրավեցին և իրականացրին կոտորած<sup>402</sup>:

Աղբեջանական ՊԱԿ-ն ու ՆԳՆ-ն հանձնարարություն ունեին ամեն կերպ կանխել Արցախյան շարժումը, չեզոքացնել շարժման առաջնորդներին և ակտիվիստներին<sup>403</sup>: «Օղակ» գործողությունը կամ Շահումյանի շրջանի հայերին բռնագաղթեցնելու գաղտնի պլանը ևս մշակվել է Աղբեջանի ՆԳՆ կողմից<sup>404</sup>: 1990 թ. նոյեմբերին ԽՄԶՄ ՆԳՆ հետաքննչական-օպերատիվ խմբի ձեռքն էին ընկել Գետաշենի ու Մարտունաշենի գյուղերից

<sup>400</sup> Ով է շահագրգռված կոնֆլիկտի բարբոցմամբ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., ապրիլի 13, թիվ 85-86 (149), էջ 1:

<sup>401</sup> ՕՍՕՆ, Սպանություններ, խոշտանգումներ, ավազակություն, բռնագաղթ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., հունիսի 28, թիվ 138 (201), էջ 4:

<sup>402</sup> Բաղդաս Կ., Տեսադաշտ. 1988-1994 (Ղարաբաղյան ազատամարտ), Ստեփանակերտ, 2011, էջ 127-129:

<sup>403</sup> Աբրահամյան Է., Մարտնչող Արցախ, 1917-2000, Գիրք Գ., 1985-2000, Ստեփանակերտ, 2007, էջ 30:

<sup>404</sup> Լույս տեղում, էջ 267:



ու Շահումյանի շրջանից ողջ հայ բնակչության տեղահանման Ադրբեջանի ԼԳՆ մշակած պլանի գաղտնի փաստաթղթերը<sup>465</sup>:

1991 թ. ապրիլի 16-ին Մութալիբովի մոտ հանրապետության ՊԱԿ-ի և իրավապահ մարմինների մասնակցությամբ տեղի է ունեցել խորհրդակցություն, որի ժամանակ նա պահանջ է դրել Շահումյանի շրջանից, Գետաշենից և Մարտունաշենից հանել ներքին գործերը և նրանց փոխարինել հատուկ նշանակության ջոկատներով՝ կազմված ադրբեջանցի սպաներով: Հայաստանի հետ սահմանի հսկողությունը նա կարգադրել է իրականացնել 23-րդ դիվիզիայի 4-րդ բաժնակի ուժերով, որի ավելի քան 60 տոկոսը ևս համալրված էր ադրբեջանցի զինծառայողներով<sup>466</sup>:

1991 թ. կեսերին Ադրբեջանում արդեն զգալի քանակությամբ զենք-զինամթերք կար ի հաշիվ խորհրդային զորամասերից, ՊԱԿ-ից, ԼԳՆ-ից հափշտակած կամ կաշառքով վերցրած հսկայական օստմամթերքի<sup>467</sup>, և մոտ 20 հազար զինված գրոհային, որոնց շուրջ 10 հազարը Լաչինում էր, մնացած 10 հազարը՝ հյուսիսում՝ Շահումյանի շրջանի մատույցներում և այլ վայրերում<sup>468</sup>:

1991 թ. նոյեմբերի 1-ից, երբ ադրբեջանական նախկին ՊԱԿ-ի հիման վրա ստեղծվեց Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարությունը և նախարար նշանակվեց Հուսեյնով Իլիուսեյին Փիրհուսեյն օղլին, Արցախյան շարժումը ճշշելու ուղղությամբ այդ երկրի հատուկ ծառայությունների հետախուզական-քայքայիչ և այլ գործողություններն ու ահաբեկչական ակտերը նոր թափ ստացան (ԱԱՆ-ն թե՛ կառուցվածքային, թե՛ կադրային ու գործառութային լուրջ փոփոխությունների են-

<sup>465</sup> Կրիվոպուսկով Վ., նշվ. աշխ., էջ 209:

<sup>466</sup> Խորհրդակցություն Բաքվում, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 30 ապրիլի 1991, թիվ 96 (19), էջ 2:

<sup>467</sup> Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Ս., Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի՝ ազրեխայի իրավաքաղաքական հետնանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Եր., 2007, էջ 94-107:

<sup>468</sup> Շահնազարյան Դ., Քաղաքական իրադրությունն Ադրբեջանում (1991 թ. մարտ-ապրիլ), Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 18 հունիս 1991 թ., թիվ 130 (193), էջ 2:

թարկվեց հատկապես սկսած 1993 թ., երբ երկրի ղեկավարումն անցավ Հեյդար Ալիևին<sup>469</sup>։ ռազմական հակահետախուզական ծառայությունը ՊՆ կազմից տեղափոխվեց ԱԱՆ, Սահմանապահ գլխավոր վարչությունը (Սահմանապահ զորքերը) առանձնացվեցին ԱԱՆ-ից և տեղծվեց նոր մարմին՝ Պետական սահմանապահ ծառայությունը)։

Իրենց առջև դրված խնդիրներն իրականացնելու նպատակով ադրբեջանական հատուկ ծառայություններն սկսեցին իրականացնել հավաքագրումներ։ Ընդ որում, հավաքագրումներն իրականացնում էին գործունեության ամենադաժան ու ոճրագործին բնորոշ ձևերով ու մեթոդներով։ Օրինակ, հայ ռազմագերիներին ստիպում էին, որ գնդակահարի մեկ այլ հայ ռազմագերու, ինչը չկատարելու դեպքում մահապատժի էին ենթարկում, իսկ կատարելու դեպքում՝ նկարահանում և դա օգտագործում որպես վարկաբեկիչ նյութ նրան հավաքագրելու համար<sup>470</sup>։ Մեկ այլ դեպքում եվրոպական երկրներից մեկում հյուրախաղերով գտնվող երաժշտի եղբորը, որը արցախյան պատերազմի նվիրյալներից էր, փոխզնդապետ, և մեկնել էր կարճատև հանգստի, կազմակերպում են աղջիկների հետ հանդիպում և կիսամերկ լուսանկարելով նրանց փոխզնդապետի հետ՝ կրկին հավաքագրում են նրան սպառնալով լուսանկարներն ուղարկել կնոջն ու մորը<sup>471</sup>։

ՀՀ քաղաքացիներ Ն. Ծիլինյան, Է. Ֆիլկովը, Բ. Ֆիլկովան, Ա. Գասպարյանը, Ա. Մազիևը ևս տարաբնույթ մեթոդներով ու վարկաբեկիչ նյութերով հավաքագրվել և օգտագործվել են Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից։ Ն. Ծիլինյան առաջադրանք է ունեցել Հայաստանի և Արցախի ռազմական ներուժի

<sup>469</sup> Azərbaycan xüsusi xidmət orqanlarının tarixi, <http://www.dtx.gov.az/tarix1.php> (հղումն արված է 07.08.2017 թ.)։

<sup>470</sup> Ամրիկյան Ա. (Մանուկյան Ա.), Դոկտոր, դոց և հետախույժ էջ («Հավաստում եմ»), Եր., 2000, էջ 41։

<sup>471</sup> Ամրիկյան Ա., Եզվ. աշխ., («Վավաճանություն»), Եր., 2000, էջ 44-60։

վերաբերյալ տեղեկատվություն հավաքելուն զուգահեռ՝ 1993 թ. պայթեցում իրականացնել «Էրեբունի» հյուրանոցում<sup>402</sup>:

Աղբբեջանի հատուկ ծառայություններն արգելախնայան ազատամարտի տարիներին նաև այլ տեսակի քայքայիչ գործունեություն են իրականացրել: Այսպես, Աղբբեջանի ռազմական հետախուզության նախկին աշխատակից Ալեքսեյ Զեդարյուզյան Բամայիլովը, որը մեծ ներդրում է ունեցել Լ. Շիլինային և նրա հանցախմբին հավաքագրելու գործում, 1991-1995 թթ. անձամբ կազմակերպել և իրականացրել է մի շարք ահաբեկչական գործողություններ ինչպես Հայաստանի տարածքում, այնպես էլ Վրաստանում և ՌԴ Ստավրոպոլի ու Կրասնոդարի երկրամասերում: Մասնավորապես, նա մշակել և իրագործել է Վրաստանից Հայաստան մուտք գործող զազամուղի պարբերական պայթեցումները (ընդհանուր թվով՝ 13), 1993 թ. կազմակերպել 30 կգ տրոտիլ տեսակի պայթուցիկ նյութի Երևան տեղափոխելու և այն «Էրեբունի» հյուրանոցում տեղադրելու գործողությունը, 1992 թ. ՌԴ Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերում հակահայկական սադրիչ բնույթի թուուցիկների օգտագործմամբ ձեռնարկել է «դիվերսիոն հատուկ միջոցառումներ»՝ ՌԴ հարավային այդ շրջաններում բնակվող հայերի ու կազակների միջև ազգամիջյան թշնամանք սերմանելու, այդ հողի վրա բախումներ հրահրելու նպատակով: Կուրանում և Ստավրոպոլի երկրամասում Բամայիլովը կազակների անունից կազմակերպել է հայկական երկու զրասենյակների, իսկ հետագայում՝ ԱՄԱԱ-ի անունից՝ հակահայկական դիրքորոշում ունեցող «Կուրանսկին կուրիեր» թերթի խմբագրության պայթեցման գործողությունները: Նրա խոստովանությամբ, 1994 թ. Աղբբեջանի հատուկ ծառայությունները ծրագրել էին նաև պայթեցնել Երևանի կառավարական շենքերի համալիրը և մտադրություն են ունեցել օգտագործել հատուկ այդ նպատակի համար պատրաստված երկուսկ հատակ ունեցող բենզատար, որում տեղադրվել է 3 տոննա տրոտիլ: 1992 թ. սեպտեմբերի 10-ին ՌԴ Կրասնոդարի երկրամասի Կրոպոտկինո քաղաքի Կավ-

<sup>402</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, Երևանի Կենտրոն և Լոռք-Մարաշ համայնքների աստղին ասոյանի դատարանի, Գործ N 1-19, 2004 թ.: Տե՛ս նաև՝ Թումոյան Ա., նշվ. աշխ., էջ 42-44:

կազմակայա երկաթուղային կայարանի ՆԳ տրանսպորտային միլիցիայի աշխատակիցների կողմից անցկացված ստուգումների արդյունքում Բաբու-Մոսկվա գնացքի թիվ 12 վագոնի ուղեկցորդ Նիզամի Բսկանդերոլյու Ալիևի մոտ հայտնաբերվել և առգրավվել էին 13 հազար մեքենազիր ու ձեռագիր անանուխ հակահայկական բովանդակությամբ սադրիչ բնույթի թուղիկներ: Ադրբեջանի հատուկ ծառայություններն ահաբեկչական գործողությունների թատերաբեմ են դարձրել Վրաստանի և ՌԴ տարածքները, ուր այդ տարիներին պարբերական բնույթ էին կրում գնացքների, ավտոտրանսպորտային միջոցների, երկաթուղային գծերի, կամուրջների գազախողովակաշարերի պայթեցումները, ազգամիջյան թշնամանքի բորբոքումը, ինչպես նաև հայազգի քաղաքացիական անձանց առևանգումներն ու սպանությունները<sup>605</sup>:

Վրաստանում Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրականացրած ահաբեկչական գործողությունների մասին հայտնել է նաև դրանց կազմակերպիչներից մեկը՝ ադրբեջանական եախկին օմօնական Ռոզդայ Վարանը<sup>606</sup>:

1992 թ. փետրվարի 8-ին տեղի ունեցած Ադրբեջանի ազգային անվտանգության խորհրդի նիստում ընդունվեց գաղտնի որոշում, որով հստակ հանձնարարություններ տրվեցին պաշտպանության նախարար Թ. Մեհտինին, ներքին գործերի նախարար Թ. Քերիմովին, ազգային անվտանգության նախարար Ի. Հուսեյնովին, ՊՆ գլխավոր շտաբի պետ Շ. Մուսանին և այլ պետական պաշտոնյաների<sup>607</sup>: Նույն թվականին ադրբեջանական հատուկ ծառայություններն ու կառավարական ուժերը հայ-

<sup>605</sup> Սեֆրոնյան Վ., Ադրբեջանի ահաբեկչական պետությունն է, <http://armenpress.am/arm/print/418188>, <http://armworld.am/detail.php?paperid=183&pageid=6621&lang=> (նղումներն արված են 01.11.2015 թ.):

<sup>606</sup> В 1993 г. Азербайджанская разведка с целью заблокировать Армению совершила теракты в Грузии и Осетии. Интервью с Р. Караевым, 19.12.2012., <http://www.ranovostsna.am/ru/news/2012/12/19/karajev-azer-terror/619480> (նղումն արված է 20.10.2015 թ.):

<sup>607</sup> Мелик-Шахназарян Л., Агрессия Азербайджанской Республики открыла границы Республики Ариях, Ер., 2014, с.51-53.

աղբբեջանական հակամարտությանը սկսեցին մասնակից դարձնել վարձկանների (այդ թվում՝ աֆղան մոջահիդների ու չեչեն գրոհայիսների)<sup>696</sup>։

Արցախյան շարժումը ճնշելու ուղղությամբ աղբբեջանական իշխանություններին և հատուկ ծառայություններին տարատեսակ օժանդակություն է ցույց տվել Թուրքիան, որը լուրջ ներդրում ունեցավ Աղբբեջանի ռազմականացման հարցում ակտիվորեն մասնակցելով Աղբբեջանի ռազմական դոկտրինայի ստեղծման, զինված ուժերի ու հատուկ ծառայությունների ձևավորման գործընթացին<sup>697</sup>։ Ձեռքի ու հանդերձանքի մատակարարմանը զուգահեռ՝ թուրքական կողմը Թուրքիայի և Աղբբեջանի տարածքներում գործող ռազմական ուսումնարաններում նախաձեռնեց աղբբեջանական սպաների և հատուկ ջոկատայիսների ուսուցման կազմակերպումը։ Արդեն 1992 թ. հունվարին Աղբբեջանի նախագահ Ա.Մութալիբովի՝ Թուրքիա կատարած պաշտոնական այցի ժամանակ պայմանավորվածություն ձեռք բերվեց թուրքական ռազմական ուսումնարաններում աղբբեջանական սպաների վերապատրաստման վերաբերյալ<sup>698</sup>։ Նույն թվականի մարտին Աղբբեջանի վարչապետ Հ. Հասանովը պաշտոնական ուղերձով դիմել է Թուրքիայի նախագահ Թ. Օզալին և վարչապետ Ս. Դեմիրելին՝ «ակնկալելով կղբբայրների և բարեկամների կողմից անհետաձգելի օգնութ-

<sup>696</sup> Նարաբաղա-աղբբեջանական պատերազմին վարձկանների, պանթուրքիստական կազմակերպությունների և Թուրքիայի ներգրավվածության մասին մանրամասն տե՛ս Դեմոսի Դ., *Внеэтническая политика Турции и карабахский конфликт*, Եր., 2013, с. 135, 239-298, Ավադյան Ա., Թուրք ազգայնամուլների գործունեությունն Աղբբեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», 3 (49), Եր., 2006, էջ 53, Աղաջանյան Ս., Ասատրյան Է., Մինասյան Ս., Եզվ, աշխ, էջ 118-126, Չոբանյան Գ., Բալամական վարձկանները դարաբաղյան պատերազմում, Վեմ համահայկական հանդես, 2013 թ. հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ 163-173, Բաղդյան Վ., Եզվ, աշխ., 165-166, Բալասանյան Վ., Նարաբաղյան պատերազմում չեչեններին տված դասը, 21 նոյեմբերի 2013, <http://www.yerkir.am/news/view/58587.html> (նդումն արված է 23.09.2015 թ.) և այլն։

<sup>697</sup> Հովսեփյան Ա., Թուրքիայի Հարավկովկասյան քաղաքականության արդի դրսևորումները, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2014, N 1 (142), էջ 59։

<sup>698</sup> Դեմոսի Դ., *Турция и Карабахский конфликт*, <http://armenianhouse.org/demoyan/turkey/ch4.html> (նդումն արված է 02.12.2015 թ.)։

յուն»<sup>499</sup>։ Մինևույն ժամանակ, Ադրբեջանում Գաբալայի ռադիոլուկացիոն բազայի տարածքում թուրքական ռազմական հրահանգիչները սկսել էին 450 ադրբեջանցի զորակոչիկների ուսուցումը։ Ղարաբաղյան ճակատներում թուրքական առանձին ջոկատների անմիջական մասնակցությունից բացի, թուրքական բանակի շուրջ 150 բարձրաստիճան սպաներ, այդ թվում՝ պահեստի 10 զեներալներ, 1992 թ. սկզբին մասնակցել են ռազմական գործողությունների մշակմանը և ադրբեջանական բանակի գրոհային ու դիվերսիոն ստորաբաժանումների ուսուցմանը։ Ա. Էլչիրեյի ռազմական խորհրդական դարձավ թուրք զեներալ Յաշար Դեմիրբուլաքը, որը հետագայում ընդգրկվեց Ադրբեջանի անվտանգության խորհրդի կազմի մեջ<sup>500</sup>։

Իր գործունեությունը բավականին ակտիվացրեց նաև Թուրքիայի հիմնական հատուկ ծառայություններից մեկը՝ Ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT), որը սերտորեն համագործակցում էր «Գորշ գայլեր» թուրքական ծայրահեղ ազգայնական կազմակերպության ադրբեջանական բաժանմունքի հետ։ «Գորշ գայլերն» Ադրբեջանում ունեին օրինական կարգավիճակ։ Այստեղ կազմակերպության անդամակցում էր շուրջ 15 հազար մարդ, ընդ որում՝ նրանք բոլորը զենք ունեին՝ ծառայելով ինչպես բանակում և ՆԳՆ-ում, այնպես էլ զինված անկախ կազմավորումներում<sup>501</sup>։ Հօգուտ Ադրբեջանի հետախուզություն իրականացնելուց բացի, MIT-ը Բաքվի մերձակայքում գտնվող «Նաստնայա» ռազմական օդակայանում ուսումնական կենտրոն («Գարահեյբաթ») է տեղեցրել ադրբեջանական դիվերսիոն-հետախուզական ջոկատներ պատրաստելու համար։ Բացի այդ, Թուրքիայի հետախուզական ծառայության նախկին գործակալ, Ադրբեջանի ՊԱԿ-ի նախկին աշխատակից Ներուզ Հասանօլլուի առաջարկով կրկին Բաքվի մերձակայքում հիմնվում է մեկ այլ ռազմական ճամբար՝ «Ռուզգար» (քամի) անվամբ, որտեղ, բացի զինավարժություններից, դասավանդում էին նաև դիվերսիայի տակտիկա։ Ն. Հասանօլլուն դեռևս ադրբեջանական

<sup>499</sup> Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Մ., նշվ. աշխ., էջ 131։

<sup>500</sup> Նույն տեղում, էջ 132։

<sup>501</sup> Демоян Г., նշվ. հոդված։

ՊԱԿ-ում աշխատելու տարիներից աչքի է ընկել պանթյուրքական հայացքներով: 1988-1989 թթ. Թուրքիայից և այլ երկրներից եկած կամավորներից ստեղծել է «Բոզորթ» (Գորշ գայլեր) կոչվող զինված հրոսակախումբը, որն ակտիվորեն մասնակցել է Բաքվում տեղի ունեցած հայկական կոտորածներին<sup>302</sup>: Կան տեղեկություններ, որ թուրքական ազգայնական, պանթյուրքիստական կազմակերպությունները Ադրբեջանում գործունեություն էին ծավալում Ազգային ճակատ կուսակցության և տեղի հատուկ ծառայությունների հետ համագործակցած<sup>303</sup>:

Բացի վերոնշյալից, ադրբեջանական հատուկ ծառայություններն սկսեցին իրականացնել ապատեղեկատվական ակցիաներ<sup>304</sup> Հայաստանը ներկայացնելով որպես ահաբեկչական երկիր: Ադրբեջանի նախկին ազգային անվտանգության նախարարության (այժմ Պետական անվտանգության ծառայության) կայքէջը ողողված էր «հայկական ահաբեկչության» մասին սահմուկեցուցիչ ու մտացածին նյութերով: Օրինակ, 1988 թ. դեկտեմբերի 12-ին իբր Ադրբեջանից Սպիտակի երկրաշարժից տուժածներին օգնություն ցուցաբերելու նպատակով մեկնող ԻԼ-72 ինքնաթիռը, որը տեղափոխում էր ադրբեջանցի 77 կամավորների, Սպիտակի շրջանի Գուգարք քաղաքի մոտակայքում խփվել է հայ զրոհայինների կողմից «ստինգեր» տեսակի զենքով: Կենդանի է մնացել մեկ մարդ: Նույն օրը խփվել է նաև Հարավսև-Վիայից ժամանող ԱՆ-12 ինքնաթիռը, որը հայ ահաբեկիչները իբր շփոթել են ադրբեջանականի հետ<sup>305</sup>: Մեկ այլ հաղորդագրության համաձայն՝ 1992 թ. հունվարի 8-ին հայ ահաբեկիչների

<sup>302</sup> Ավագյան Ա., Թուրք ազգայնամոլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», 3 (49), Եր., 2006, էջ 53:

<sup>303</sup> Об отношении радикальных кругов Турции к событиям в Закавказье, ЦК КП Армении, Комитет по Госбезопасности Армянской ССР В. Г. Бадамян, 21 апреля 1990 года, ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 47, ք. 38, 39, 40:

<sup>304</sup> Ապատեղեկատվական ակցիան կամ ապատեղեկացումը տեղեկատվական-հոգեբանական ներգործության ձև է, որի նպատակը հակառակորդին ապակողմնորոշելն է կամ հակառակորդի մասին կեղծ լուրեր տարածելը միջազգային հանրության, սեփական կամ հակառակորդ երկրի բնակչության շրջանում:

<sup>305</sup> Ermeni terrorcularinin Azerbaycana ve onun milki ehalisine qarşı törətdikləri terrorçuluq aksiyaları, <http://www.dtx.gov.az/kitabxana1.php> (հղումն արված է 13.04.2017 թ.):

կողմից պայթեցվել է «Մովեստանյա Կալմիկիա» լաստանավը, որն ուղևորներ էր տեղափոխում Կրասնովոդսկից Բացու: Ձեռնվել են 25, վիրավորվել 88 մարդ<sup>306</sup>: Հակահայկական քարոզչության և ԽՍՀՄ-ում ու միջազգային հանրության շրջանում Հայաստանը վարկաբեկելու, որպես ահաբեկչական երկիր ներկայացնելու նպատակով աղբրեջանական կողմը Հայկական ԽՍՀ ՊԱԿ-ին ուղարկում էր շինծու քրեական գործեր՝ իբր Հայաստանում գործող ահաբեկչական կազմակերպությունների վերաբերյալ, որոնք Հայաստանում կարճվում էին<sup>307</sup>: Բացահայտվել են նաև աղբրեջանցիների կողմից Հայաստանի տարածքում պայթյուններ իրականացնելու փորձեր, դրանց համար նախատեսված պայթուցիկ նյութեր ու սարքեր<sup>308</sup>, սադրիչ բնույթի տարատեսակ ակտեր: Մասնավորապես, երևանում 1988 թ. մարտի 14-ին հայտնաբերվել են հետևյալ բովանդակությամբ սադրիչ թուղթիկներ. «Կեցցե մուսուլմանությունը միակ կրոնը, որը կփրկի հայերին վերջնական բնաջնումից, կորչի Մոսկվան, կորչեն ռուսները, լավ մտածեք հայեր»<sup>309</sup>:

Հայաստանի տարածքում հայ-աղբրեջանական հարաբերությունների սրման և ազգամիջյան թշնամանք սերմանելու գործում նս անկա է աղբրեջանցիների մեղսակցությունը: Այն շրջաններում, որտեղ շրջգործկումի նախագահի կամ այլ պաշտոն զբաղեցնում էին ազգությամբ աղբրեջանցիներ, վերջիններս

<sup>306</sup> Լույն տեղում:

<sup>307</sup> ЦК КП Армения, секретно, Представитель КГБ Армянской ССР В. Г. Бадамянц, ЗУУ, № 1, с. 87, қ. 16, № 235:

<sup>308</sup> О принятии уголовного дела к производству, ЦК КП Армения, Комитета Госбезопасности Армянской ССР В. Г. Бадамянц, 19 января 1990 года, ЗУУ, № 1, с. 87, қ. 47, № 9:

<sup>309</sup> ՀԽՍՀ ՊԱԿ-ի նախագահի գեկույցը Հայաստանի ԿԿ Կենտկոմ, ЗУУ, № 1, с. 87, қ. 12, № 130, 131: Ձեխմուկ և Մասիս քաղաքներում աղբրեջանցիների կողմից կազմակերպած սադրիչ գործողությունների մասին: Լեւոն Վարդանյան Վ. (ՀԿԿ Ազխրեկուվի շրջկոմի քարտուղար), Տեղեկանք՝ ՄՄԿԿ անդամներ էելեր Գյանջիմախիի և Թելման Մաֆար Ալիիի մասին, ՀԿԿ Կենտկոմ, 12 ապրիլի 1988 թ., ЗУУ, № 1, с. 87, қ. 13, № 19, 20, 21, նաև՝ ЦК КП Армения, Комитета Госбезопасности Армянской ССР председатель М.А.Юсбаниян, ЗУУ, № 1, с. 87, қ. 13, № 42:



միտումնավոր սրում էին հարաբերությունները 2 ժողովուրդների միջև<sup>310</sup>:

Աղբրեջանական հատուկ ծառայություններն սկսեցին եան տարատեսակ ՋԼՄ-ների միջոցով տարածել սադրիչ բնույթի տեղեկություններ Արցախի ճակատի հարավային հատվածի՝ Իրանին սահմանակից մասի վերաբերյալ՝ փորձելով ինչպես Իրանին, այնպես էլ Թուրքիային ներքաշել պատերազմի մեջ<sup>311</sup>: Եվ եթե Իրանը լուրջ չընդունեց աղբրեջանական սադրանքները, ապա այլ էր Թուրքիայի վերաբերմունքը: Երկրի վարչապետ Թ. Չիլլերը հայտարարեց, որ եթե Նախիջևանի թեկուզ մի կտորի ձեռք տան, ինքը կգնա խորհրդարան՝ պատերազմ սկսելու թույլտվություն ստանալու<sup>312</sup>: 1993 թ. օգոստոսին Թուրքիայի «Մայր հայրենիք» կուսակցության պատգամավորները կառավարությունից պահանջեցին ռազմական միջամտություն: «Հուրիյեթ» թերթը գրեց, որ հայկական սահմանի մոտ տեղակայվել են 50 հազար թուրքական զորքեր: «Ռոյթերը» և «Մինետան» հաղորդեցին, որ թուրքական զինված ուժերը զգաստ դրության մեջ են և պատրաստ են նետվել մարտի, իսկ թուրքական ինքնաթիռները հետախուզական թփփքներ են կատարում Հայաստանի սահմանների մոտակայքում<sup>313</sup>:

Վերլուծելով 1991-1994 թթ. աղբրեջանական հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը՝ կարող ենք եզրահանգել, որ դրանց գործողությունները հիմնականում շաղկապվում էին ստեղծված պատերազմական իրավիճակով և ներառում էին հետևյալ ուղղությունները.

<sup>310</sup> Հեռագիր, Կենտկոմի I քարտուղար ընկ. Հայրությունյանին Վարդենիսի շրջանի մի խումբ բնակիչներից. 05.09.1988 թ., ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 650, թ. 133 և շրջերևա: Տն և եան Մեծ Մազրա գյուղի հայ բնակչության համակը 2ԳԳ Կենտկոմի I քարտուղար ընկ. Գ. Մ. Հայրությունյանին. ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 650, թ. 151-152:

<sup>311</sup> Տալաևուզյան Մ., 1993 թվական. զարգացումներն Արցախում և տարածաշրջանում, Իրանը մտնում է խաղի մեջ, 24.08.2012, <http://razm.info/7805> (հղումն արված է 02.02.2016 թ.):

<sup>312</sup> Turkish Troops Ready to Defend Ally From Attack, Gainesville Sun, Sep. 7, 1993:

<sup>313</sup> Հակոբյան Թ., Թուրքիան սպասում է Հայաստան ներխուժելու հարմար պահի, հատված «Հայերը և թուրքերը» գրքից., <http://www.aniarc.am/2015/10/12/turkey-armenia-invade-1993/> (հղումն արված է 12.02.2016 թ.):

- իրականացնել տարատեսակ գործողություններ՝ տապալելու, խոչընդոտելու, խափանելու արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացումը.

- ստանալ հետախուզական բնույթի տեղեկատվություն հայկական կողմի ռազմական ներուժի, մասնավորապես զորամասերի տեղակայման վայրերի, սպառազինության, մարտունակության վերաբերյալ.

- դիվերսիոն-հետախուզական և ահաբեկչական գործունեության իրականացում ինչպես ՀՀ-ում, այնպես էլ Վրաստանում, Ռուսաստանում՝ վնաս հասցնելով ՀՀ կենսական անհրաժեշտության օբյեկտներին, ինչպես նաև վերցնելով պատանդներ ու գերիներ:

Այսպիսով ակնհայտ է, որ ադրբեջանական իշխանությունների ուղղորդմամբ երկրի հատուկ ծառայություններն Արցախյան շարժումը ճնշելու նպատակով իրականացնում էին այնպիսի քայլեր ու գործողություններ, որոնք արգելված են միջազգային տարատեսակ կազմակերպությունների կոնվենցիաներով ու պայմանագրերով, միջազգային իրավունքով: Խոսքը վերաբերում է ռազմագերիների նկատմամբ կիրառված անմարդկային վերաբերմունքին, խաղաղ բնակչության նկատմամբ իրականացված բռնություններին, ահաբեկչական ակտերին, դիվերսիոն-հետախուզական գործողություններին, բնակչության կենսապահովման նշանակության օբյեկտների պայթեցումներին, էթնիկ զտումներին, կոտորածներին, որոնք իրականացվեցին հայ ժողովրդի նկատմամբ 1988-1994 թթ. ժամանակահատվածում և տարբեր ձևերով շարունակվեցին հետագա տարիներին:

#### **4.3. Հայաստանի և Արցախի դեմ Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետախուզական-քայքայիչ գործունեությունը**

Հայաստանի և Արցախի դեմ Ադրբեջանի հատուկ ծառայությունների հետախուզական-քայքայիչ գործունեությունը նե-

քառում է տարաբնույթ քայքայիչ գործողություններ, հետախուզական, այդ թվում՝ Հայաստանի և Արցախի վերաբերյալ քաղաքական, ռազմական, տնտեսական բնույթի տեղեկատվության հայթայթում, հայ-ադրբեջանական սահմանի և դարաբաղաադրբեջանական շփման գծի երկայնքով դիվերսիոն-հետախուզական գործողությունների իրականացում, դիվերսիոն-ահաբեկչական ակտերի պլանավորում: Եվ այդ գործողություններն ու քայքայիչ ակցիաներն իրականացնելու նպատակով ադրբեջանական հատուկ ծառայությունների առջև դրված հիմնական խնդիր հանդիսացավ Հայաստանի, Արցախի կամ օտարերկրյա այնպիսի քաղաքացիների հավաքագրումը, որոնք իրենց անձնական հատկանիշներով և գործնական հնարավորություններով կարող էին կատարել ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից տրված առաջադրանքներն ու հանձնարարությունները:

1993-2015 թթ. ընկած ժամանակաշրջանում ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից ձեռքարկվել են Ադրբեջանի ու Թուրքիայի հատուկ ծառայությունների կողմից հավաքագրված 15 գործակալներ<sup>14</sup>, որոնցից 14-ը համագործակցել են ադրբեջանական հատուկ ծառայությունների հետ և, հետախուզական բնույթի տարատեսակ տեղեկատվություն հայթայթելուն զուգահեռ, հանձնարարություն են ունեցել նաև իրականացնել ահաբեկչական գործողություններ:

Տեղեկատվական անվտանգության ապահովումը ժամանակակից աշխարհում պետությունների ու ազգերի գոյապահպանման և արդյունավետ կենսագործունեության ապահովման կարևորագույն երաշխիքներից է: Ադրբեջանի հատուկ ծառայությունները Հայաստանի և Արցախի դեմ լծվել է նաև տեղեկատ-

<sup>14</sup> ՀՀ ԱԱԾ մարմինների աշխատակցի օրվա առթիվ ՀՀ ԱԱԾ տնօրեն Գ. Գ. Հակոբյանի ելույթը, 18.12.2015 թ., <http://www.ans.am/index.php/am/news/296-18122015> (նղումն արված է 22.12.2015 թ.): Հարկ է նշել, որ ՀՀ ԱԱԾ նախկին տնօրենի ելույթից հետո մինչ օրս ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից ձեռքարկվել են պետական դավաճանության մեջ մեղադրվող ևս 4 անձինք, տե՛ս Մեղադրանքը պետական դավաճանություն. սկսվել է պետական դավաճանության մեղադրվող ամբաստանյալների գործի դատաքննությունը, <http://www.armeniatv.am/hy/55262-1453733067>(նղումն արված է 20.03.2016 թ.):

վական պատերազմի՝ փորձելով իրականացնել հետախուզական-տեղեկատվական քայքայիչ գործունեություն: Այն հախնառաջ հետախուզական բնույթի տեղեկատվության ձեռքբերումն է հակառակորդ պետության արտաքին ու ներքին քաղաքականության, ռազմական ներուժի, տնտեսության, գիտատեխնիկական բնագավառի վերաբերյալ: Արցախյան պատերազմից ի վեր ադրբեջանական հատուկ ծառայություններն ամեն ինչ անում են Հայաստանի և Արցախի հատկապես զինված ուժերի վերաբերյալ գոնե չնչին տեղեկություններ հայթայթելու համար: Այս թեզը հավաստելու համար անդրադառնանք ՀՀ ջրեական օրենսգրքի «Պետական դավաճանություն» (299) և «Լրտեսություն» (302) հոդվածներով դատապարտված անձանց կողմից ՀՀ դեմ իրականացրած հետախուզական-քայքայիչ գործունեությանը:

Այսպես, ՀՀ քաղաքացի, Ադրբեջանում ծնված Լինա Շիլինան, որը Ադրբեջանի Սումգայիթ քաղաքում գտնվող իր բնակարանի փոխանակման արդյունքում 1988 թ. մշտական բնակություն էր հաստատել ՀՀ Ջերմուկ քաղաքում, 1993 թ. փետրվարին ՌԴ-ում բնակվող իր որդուն այցելելու նպատակով մեկնել է ՎՀ Թրիլիսի քաղաք, սակայն Ռուսաստան զննցքներ չմեկնելու պատճառով մնացել է երկաթուղային կայարանում, ընկել Ադրբեջանի հատուկ ծառայությունների գործակալների տեսադաշտ: Վերջիններս նրան համոզել են ՌԴ մեկնել Բաքու քաղաքով, որտեղ հանդիպել է Ադրբեջանի ԼԳՆ-ի այսպես կոչված «Հայկական տեռորիզմի դեմ պայքարի»<sup>515</sup> բաժնի աշխատակիցներին, հավաքագրվել նրանց կողմից և ստացել Հայաստանում դիվերսիոն և հետախուզական գործունեություն ծավալելու հանձնարարություն: Համագործակցությունը ամրապնդելու և որպես գործակալի նրա հուսալիությունը բարձրացնելու նպատակով Ադրբեջանի ԼԳՆ աշխատակիցները Շիլինային առաջարկել են Բաքու բերել նաև որդուն՝ խոստանալով լուծել ուսման հարցը, որի հետ Շիլինան համաձայնել է: Հետագայում նրա որդին ընդունվել է Բաքվի բարձրագույն ռազմածովային ուսում-

<sup>515</sup> Ադրբեջանի ԼԳՆ-ի այսպես կոչված «Հայկական տեռորիզմի դեմ պայքարի» բաժնի գոյության մասին կան առկա վկայություններ ևս, սակայն դրա գործունեության վերաբերյալ փաստեր չկան:

եարան<sup>316</sup>: Ադրբեջանի հասուն կ ծառայությունների բաժնի աշխատակցից ստանալով Երևանի «Էրեբունի» կամ այլ հյուրանոցում դիվերսիա կատարելու առաջադրանքը 1993 թ. Բաքվից «Ռաֆիկ» անունով գործակալի հետ մեկնել է Թբիլիսի, այնուհետև՝ Երևան՝ իր հետ բերելով գործարանային պայմաններում փակված, թուրքական արտադրության մարգարիների երկու արկղ, որոնց մեջ տեղադրված է եղել գործարանային արտադրության «տրոտիլ» տեսակի պայթուցիկ կոմբ<sup>317</sup>: Պայթուցիկ մեխանիզմը գործի էր դրվելու պայթուցիկ սարքն այլ մեխանիզմներին լարելով միացնելու միջոցով, սակայն նրանց կամքից անկախ պատճառներով, պայթյունը տեղի չի ունեցել<sup>318</sup>:

Դրանից հետո Ն. Ծիլինան ստացել է Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի վերաբերյալ տեղեկություններ հավաքելու հանձնարարություն, իսկ 1995 թ. հավաքագրվել արդեն Ադրբեջանի պաշտպանության նախարարության հետախուզական վարչության աշխատակիցների կողմից և որոշակի գումարի դիմաց ստացել Հայաստանի և Արցախի տարածքում ռազմական և այլ բնույթի տեղեկություններ հավաքելու հանձնարարություն, այդ թվում՝ Հայաստանում և Արցախում տեղաբաշխված զորամասերի տեղակայման վայրերի, համարների, դրանց հրամանատարների, սպայական կազմի, տեխնիկայի և սպառազինության, ռուսական զորամասերի, հայ-ադրբեջանական սահմանի և դարաբաղա-ադրբեջանական շփման գծի երկայնքով տեղակայված մի շարք զորամասերի, Երևանի «Էրեբունի» օդանավակայանից Ստեփանակերտ կա-

<sup>316</sup> Մանուկյան Ա., Անվտանգության մարմինների ձևավորումն ու գործունեությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում, Ազգային անվտանգության հիմնահարցերը համաշխարհայինացման պայմաններում (միջխոսակցությանի տեսանկյուններ) հանրապետական գիտաժողովի կոմբեր. 4-5 ելույթների 2014 թ., Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, ՀՀ կրթության և գիտության նախարարության Գիտության պետական կոմիտե, Եր., 2015, էջ 222-223, <http://www.science.ru.am/uploads/blocks/0/6/695/files/Natbez.pdf>

<sup>317</sup> Թումոյան Ա., Հայաստանի անվտանգության մարմինների պատմության ուրվագծեր, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն, Եր., 2009, էջ 42-44:

<sup>318</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, Երևանի Կենտրոն և Լոռու-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանի, Գործ N 1-19, 2004 թ.:

տարվող թոփքների, ՀՀ-ում տիրող սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակի, վառելիքի գների, ԻԻՀ-ից ՀՀ ներմուծվող ապրանքների մասին: Եվ ստացված հանձնարարությունները կատարելու նպատակով Ն. Շիլինան ստեղծում է գործակալական ցանց, որում ներգրավվում են ՀՀ ՊՆ գործամասերից մեկի թիկունքի կոմունալ-շինարարության ծառայության գործավար, ՀՀ քաղաքացի Իվետա Ֆիլկովան, վերջինիս բարեկամ, Եղեղնաձոր քաղաքի բնակիչ Էդգար Ֆիլկովը<sup>319</sup> և նրա եղբայրը Ալեքսանդր Գասպարյանը, ՀՀ ՊՆ ԳԵ օպերատիվ վարչության նախկին ավագ սպա Արթուր Օգանեսովը: Այդբեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ հանդիպման յուրաքանչյուր դեպքով Ն. Շիլինան, որպես վարձատրություն, ստացել է 150-300 ԱՄՆ դոլար, Ի. Ֆիլկովան՝ 50-150 ԱՄՆ դոլար, Ա. Գասպարյանը նրանց հետ համագործակցելու ստորագրություն տալու համար՝ 150 ԱՄՆ դոլար: Ն. Շիլինան և հանցախմբի մյուս անդամները ձերբակալվել են 2002 թ. օգոստոս ամսին, դատապարտվել 2004 թ. հունվարի 26-ին. Ն. Շիլինան դատապարտվել է ազատազրկման 15 տարի ժամկետով, Ի. Ֆիլկովան՝ 10 տարի ժամկետով, Է. Ֆիլկովը՝ 13 տարի ժամկետով, Ա. Գասպարյանը՝ 10 տարի ժամկետով, Ա. Օգանեսովը՝ 1 տարի 6 ամիս ժամկետով<sup>320</sup>:

Հարկ է նշել, որ պետական դավաճանություն գործած վերոնշյալ անձանց մի մասը, ուղղակի ընկնելով Ն. Շիլինայի ծուղակը, խաբվել և սկզբնական շրջանում ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ համագործակցել են վարկաբեկիչ նյութերի առկայության պայմաններում: Եվ եթե նրանք հավաքագրվելուց հետո մեղայականով ներկայանային ՀՀ ազգային անվտանգության մարմիններ և պատմեին որջ եղելությունը, ապա նախ կազատվեին պատասխանատվութ-

<sup>319</sup> Հատկանշական է, որ ադրբեջանական հատուկ ծառայության աշխատակիցների հրահանգով Ն. Շիլինան մտերմացել և ամուսնացել էր Է. Ֆիլկովի հետ, սև ս կույն տեղում:

<sup>320</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, Երևանի Կենտրոն և Լոբ-Մարաշ համայնքների առաջին աստիճանի դատարանի, ՊՊԾ N 1-19, 2004 թ.:

յունից, պատժից ու հայրենիքի դավաճանի պիտակից, բացի այդ էլ մեծ վնաս չէին հասցնի ՀՀ ազգային անվտանգությանը:

Նմանատիպ հանձնարարություններ է ստացել և հակահայ գործունեություն ծավալել նաև ՀՀ քաղաքացի Անդրեյ Մազինը, որը 1999 թ. հավաքագրվել է Ադրբեջանի ազգային անվտանգության նախարարության աշխատակիցների կողմից, սովել համագործակցության մասին ստորագրություն: Հանձնարարությունները Ա. Մազինը ստացել է հիմնականում Ադրբեջանի ԱԱՆ Ղազախի բաժնի պետի տեղակալ Ֆայիկ Շամիլիի կողմից<sup>31</sup>: Դրանք բաժանված են եղել 4 խմբի.

- ուսումնասիրել և ներկայացնել Հայաստանի ներքաղաքական վիճակը՝ Հայաստանում գործող հիմնական քաղաքական կուսակցությունների, նրանց ֆինանսավորման աղբյուրների, կառավարման եղանակի, ընդդիմության վերաբերյալ, կուսակցությունների ղեկավարների և նրանց շրջապատի վերաբերյալ բնութագրեր, «նրանց կողմից հովանավորվող սովետային քիզնեսի» բնագավառների վերաբերյալ տեղեկություններ,

- տրամադրել ռազմական և պաշտպանական բնույթի տվյալներ՝ Հայաստանում տեղակայված զորամասերի գտնվելու վայրի, ինչպես նաև ՀՀ ՋՈՒ սպաների նյութական և կենցաղային վիճակի, զինծառայողների բարոյական ոգու վերաբերյալ,

- տնտեսական բնույթի հարցեր՝ ԽՍՀՄ փլուզումից հետո վերականգնված և աշխատող արդյունաբերական ձեռնարկությունների, դրանց համար ներդրում կատարած անձանց, ՀՀ տնտեսությունում հայ համայնքների ներդրումների, ՀՀ-ում աշխատող արտասահմանյան ձեռնարկությունների, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, իշխանության տնտեսական քաղաքականության վերաբերյալ,

- Արցախի վերաբերյալ տվյալներ. հասարակական-քաղաքական իրավիճակի, Արցախի Հանրապետության ղեկավարների վերաբերյալ բնութագրեր, հասարակության կողմից նրանց նկատմամբ ունեցած վերաբերմունքի, «ղեկավարների կողմից

<sup>31</sup> Հայաստանի քաղաքացի Անդրբեջանի օգտին լրտեսության համար դատապարտվեց 12 տարվա ազատազրկման, 28.06.2005, <http://www.asotutyun.am/coesent/article/1577499.html> (նյումն առված է 15.03.2016 թ.):

հովանավորվող ստվերային բիզնեսի», «կլանային տնտեսության», «թմրակյութերի արտադրության», «օկուպացված» տարածքներում հայերի վերաբեակեցման, զինվորական մասերի տեղակայման, ռուսական զորքերի առկայության, արդյունաբերատնտեսական ներուժի, արտասահմանյան ընկերությունների առկայության, բնակչության սոցիալ-տնտեսական վիճակի, վերաբեակեցվող բնակչությանը տրամադրվող արտոնությունների, Արցախ մուտք գործող ՀՀ և արտասահմանյան քաղաքացիների անցագրային ռեժիմի վերաբերյալ<sup>522</sup>:

Ա. Մազիկին տրվել են նաև հանձնարարություններ պատրաստել ֆոտովիաստաթղթեր «էրեբունի» օդանավակայանի վերաբերյալ, ինչպես նաև լուսանկարել «Զվարթնոց» օդանավակայանի թռիչքազիծը, ինքնաթիռների կայանման վայրերը, հարակից շենքերը: Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցներին առանձնապես հետաքրքրել է ՀՀ նախագահի օդանավակայանից մնկնելու և ժամանելու գործընթացը՝ ինչպես է ՀՀ նախագահը բարձրանում օդանավ և իջնում շարժական աստիճաններով, ինչպես ս և ի նչ ուժերով է ապահովվում նախագահի օդանավը թռիչքի և վայրէջքի ժամանակ, օդանավակայանով ՀՀ նախագահի շարժակազմի ընթացքը, ինչպես նաև նախագահի նստավայրը և բնակավայրը, շարժակազմը, ավտոմեքենան, որում գտնվում է նախագահը, բնակության շենքում և հարակից տարածքում հրաձիգ-դիպուկահարների տեղակայման հատվածները և այլն<sup>523</sup>: Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցները չեն էլ թաքցրել Հայաստանի հասարակական անվտանգությունը խախտելու, բնակչությանն ահաբեկելու նպատակով ՀՀ նախագահի դեմ ահաբեկչական գործողություններ կազմակերպելու իրենց ծրագիրը և պարզ հասկացնել են տվել, որ լուսանկարները և մանրամասն տեղեկությունները հարկավոր են

<sup>522</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Մալաթիա-Մեդատիա համալսելի առօրին առջանի դատարանի, 28 հունիսի 2005 թ., թիվ 1-84:

<sup>523</sup> Լույս տեղում:



ՀՀ նախագահի դեմ անհարեկչական գործողություններ կազմակերպելու ծրագիրն իրականացնելու համար<sup>924</sup>:

Հետագայում Ա. Մազինին տրվել է հանձնարարություն պատրաստել ֆոտոնյութեր արտասահմանյան դեսպանատների վերաբերյալ, որոնք տեղակայված են Երևանի տարածքում, Հայաստանի պետական համարանիշներով ավտոմեքենաների, տարածաշրջաններով և գերատեսչություններով դրանց բաշխման, հիմնական քաղաքական կուսակցությունների շտաբ-բնակարանների վերաբերյալ: Հանձնարարություններից մեկն էլ եղել է՝ լուսանկարել խոշոր հյուրանոցները, որտեղ պետք է բնակվեին ՀՀ-ում քրիստոնեության 1700-ամյակին նվիրված տոնակատարությանը մասնակցելու համար ժամանած հյուրերը:

Հատկանշական է, որ Հայաստանի ներքին հասարակական-քաղաքական իրավիճակի առավել խորացված ուսումնասիրություն կատարելու համար Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցների հանձնարարությամբ Ա. Մազինը անդամագրվել է ՀՀ Կոմունիստական կուսակցությանը<sup>925</sup>:

Ա. Մազինը Ադրբեջանի ԱԱՆ աշխատակիցներից ստացել է նաև հանձնարարություն՝ տեղեկություններ հավաքել Հայաստանի ատոմակայանի վերաբերյալ: Սկզբնական շրջանում նրանք հետաքրքրվել են, թե ի՞նչ հանգամանքներում է փակվել ատոմակայանը, ու մ նախաձեռնությամբ, որքան ժամանակ է այն եղել կոնսերվացված վիճակում, երբ և ու՞մ կողմից է կոնսերվացվել: Ա. Մազինը հարցադրումներին պատասխանելիս օգտագործել է ՋԼՄ-ներում եղած տեղեկատվությունը: Այնուհետև Ադրբեջանի ԱԱՆ աշխատակիցների կողմից հստակ առաջադրանք է տրվել, որ Մազինը հետևի միջուկային վառելիքը ՀԱԷԿ ներկրման ողջ գործընթացին. այն է՝ ի՞նչ տրանսպորտով է միջուկային վառելիքը բերվում ՌԴ-ից, Հայաստանի տարածքում ի՞նչ երթուղով է անցնում մինչև ՀԱԷԿ, ինչպե՞ս է

<sup>924</sup> Լույս տեղում, նաև՝ Հայաստանի քաղաքացին Ադրբեջանի օգտին լուսնություն համար դատապարտվեց 12 տարվա ազատազրկման, <http://www.azattyun.am/content/article/1577499.html> (եղումն արված է 15.03.2016 թ.):

<sup>925</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Մալաթիա-Մերաստիա համայնքի ամսյան առյանի դատարանի, 28 հունիսի 2005 թ., թիվ 1-84:

իրականացվում միջուկային վառելիքը տեղափոխող տրանսպորտային միջոցի պահպանությունը և այլն: Հանձնարարվել է այդ ամենը լուսանկարել: ՀԱԷԿ-ի վերաբերյալ տեղեկատվությունը աղբրեջանական հատուկ ծառայություններին հետաքրքրել է դրա տարածքում հնարավոր դիվերսիոն գործողություններ կազմակերպելու նպատակով օգտագործելու համար: Ընդհանուր առմամբ, Ա. Մազինը աղբրեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ հանդիպել է 17 անգամ՝ այդ ընթացքում ստանալով մոտ 2500 ԱՄՆ դոլար վարձատրություն: Բոլոր հանդիպումները կայացել են Ղազախի ԱԱ վարչական շենքում<sup>526</sup>:

Ա. Մազինը ՀՀ ԱԱ մարմինների կողմից ձերբակալվել է 2005 թ. փետրվարի 3-ին և նույն թվականի հունիսի 28-ին ՀՀ Մալաթիա-Սերաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի վճռով դատապարտվել ազատազրկման 12 տարի ժամկետով<sup>527</sup>:

Պետք է փաստենք, որ սա բացահայտված առաջին դեպքն է աղբրեջանական հատուկ ծառայությունների կողմից ՀՀ նախագահի և Հայաստանի ատոմային էլեկտրոկայանի տարածքում նախապատրաստվող անհրեկչությունների վերաբերյալ, թեև մինչ այդ էլ՝ սկսած 1988 թվականից, այդպիսի սպառնալիքներ հնչեցվել են աղբրեջանական բարձրատիճան տարբեր պաշտոնյաների ու զինվորականների կողմից:

ՌԴ քաղաքացի, ազգությամբ թաթար Ռուստեմ Վալիախմետովը նա հավաքագրվել է Աղբրեջանի հատուկ ծառայությունների աշխատակիցների կողմից և 2005 թ. առաջարկություն ստացել Հայաստանում հավաքել տարաբնույթ տեղեկություններ, մասնավորապես՝ լուսանկարել Հայաստանի տարածքում տեղակայված պետական հիմնարկների շենքերը, փողոցները, կամուրջները, դրանց հիմքերը, Երևանի մետրոպոլիտենը, գո-

<sup>526</sup> Հարստության քաղաքացին Աղբրեջանի օգոթին լրտեսության համար դատապարտվեց 12 տարվա ազատազրկման, 28.06.2005, <http://www.azatacyun.am/content/article/1577499.html> (այդուհանդերձ 15.03.2016 թ.):

<sup>527</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Մալաթիա-Սերաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի, 28 հունիսի 2005 թ., թիվ 1-84:

քամասերը և այն ամենը, ինչը կարող էր հետաքրքրություն ներկայացնել հետախուզության համար<sup>526</sup>:

Ռ. Վալիախանտովը 1992-1994 թթ. ընթացքում կամավորական հիմունքներով մասնակցել է արցախյան ազատամարտին: Մարտական գործողությունների ավարտից հետո մշտական բնակության է տեղափոխվել Մոսկվա, որտեղ ծանոթացել է ադրբեջանցի Օլեգ Կոիլովի հետ, որից էլ նա առաջարկություն է ստացել համագործակցել Ադրբեջանի հատուկ ծառայություններին հետ: Օգտվելով այն հանգամանքից, որ արցախյան ազատամարտին մասնակցության արդյունքում Հայաստանում մի շարք անձանց շրջանում վայելում է հարգանք և հեղինակություն՝ որոշել է օգտագործել այդ գործոնը՝ հույս ունենալով հանցավոր գործողություններն իրականացնել առանց կասկածներ առաջացնելու<sup>528</sup>:

Ձեռնամուխ լինելով առաջադրանքի կատարմանը՝ Ռ. Վալիախանտովը այցելել է Հայաստանի տարբեր շրջաններ: Հայաստանի մասին գիրք գրելու և Մոսկվայում ֆոտոցուցահանդես կազմակերպելու քողի տակ հավաքել է ռազմական նշանակության, կենսապահովման ոլորտի օբյեկտների և Հայաստանի ներքաղաքական վիճակի վերաբերյալ տեղեկություններ: Կատարել է 4700-ից ավելի ֆոտոնկարահանումներ, այդ թվում՝ հայ-ադրբեջանական սահմանամերձ գոտում տեղակայված զորամասերից մեկի տարածքից դեպի Վարդենիս-Նարինամու-Ազիզու երթուղին և ճանապարհների ողջ երկայնքը: Տարբեր կրիչների վրա հավաքած տեղեկությունները չի կարողացել փոխանցել Ադրբեջանի հետախուզական ծառայություններին՝ իր կամքից անկախ պատճառներով<sup>530</sup>:

Ռ. Վալիախանտովը 2006 թ. ձերբակալվել է և դատապարտվել ազատազրկման 11 տարի 6 ամիս ժամկետով<sup>531</sup>:

<sup>526</sup> Մանուկյան Ա., նշվ. հոդված, էջ 225-226, նաև՝ Դատապարտվել է 9 գործակալ, 22 ցլխավոր դատախազության հաղորդագրությունը, 29.11.2010, <http://prosecutor.am/am/news/4983/> (հղումն արված է 03.03.2016 թ.):

<sup>528</sup> Դատապարտվել է 9 գործակալ, նույն հաղորդագրությունը:

<sup>530</sup> Մանուկյան Ա., նշվ. հոդված, էջ 225-226:

<sup>531</sup> Դատապարտվել է 9 գործակալ, նույն հաղորդագրությունը:

Վերոնշյալ դեպքը նախադեպ դարձնելով՝ ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները սկսեցին գործու-  
նեություն ծավալել արցախյան ազատամարտում աչքի ընկած  
անձանց շրջանում՝ փորձելով հավաքագրման համար գտնել  
հավանական թեկնածու, քանի որ այդ անձինք նախ արդեն իսկ  
ունեին իրենց հետաքրքրող որոշակի տեղեկատվություն, բացի  
այդ էլ ունեին հարգանք թե՛ ՀՀ ՊՆ բարձրաստիճան ղեկավարու-  
թյան, թե՛ բնակչության շրջանում և կարող էին անարգել հասնել  
իրենց հետաքրքրող փակ տեղեկություններին. այդ մարդկանց  
առանձնապես ոչ ոք չէր կասկածի պետական դավաճանության  
մեջ:

Այսպես, Արցախի ազատամարտի մասնակից Գևորգ  
Հայրապետյանը, մինչև 2007 թ. սեպտեմբեր ամիսը ծառայելով  
ՀՀ ՊՆ համակարգում, զբաղեցնելով տարբեր պաշտոններ, ընկել  
է Ադրբեջանի հատուկ ծառայությունների տեսադաշտ և 2009 թ.  
ապրիլին ՎՀ Թրիվիսի քաղաքում հավաքագրվել նրանց կողմից՝  
ստանալով առաջադրանք՝ օտարերկրյա հատուկ ծառայությա-  
նը տրամադրելու նպատակով հավաքել տարաբնույթ տեղեկու-  
թյուններ<sup>32</sup>:

Վերադառնալով Հայաստան՝ այդ նպատակով նա սկսել է  
հավաքել տեղեկատվություն, այն է՝ գաղտնի համարվող առան-  
ձին մտոռեհաձգային զեղի մարտական գործողությունների  
տեղեկատվության մասյանը, տեսանյութեր, որոնք կարող էին  
օգտագործվել հակահայկական քարոզչության նպատակով, ինչ-  
պես տան՝ ՀՀ ՊՆ մարտական հենակետերի, մարտական դիրքե-  
րի մասին, զորամասերի մարտական պատրաստակաևությունը  
գնահատող նկարահանումներ պարունակող տեսանյութերով  
սկսվածակներ: Միաժամանակ Գ. Հայրապետյանը պահել է  
գաղտնի տեղեկատվություն համարվող՝ Արցախի պաշտպա-

<sup>32</sup> Դասավորու. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Ավան և  
Լոր-Լորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, 25  
հոկտեմբերի 2010 թ., թիվ ԵԱՆ/ԵՕ128/Օ1/09:

նության բանակի Քարվաճառի շրջանի գորամիավորումների տեղակայման վերաբերյալ քարտեզ<sup>532</sup>:

Գ. Հայրապետյանը 2009 թ. հունիսի 16-ին, Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակցի առաջարկով, հերթական հանդիպման համար մեկնել է Ոսկրահնայի Կին քաղաք, որտեղ պայմանավորվածություն է ձեռք բերել համապատասխան վարձատրության դիմաց նրան փոխանցել իր տրամադրության տակ եղած նյութերը, այդ թվում՝ կազմած քարտեզի վրա նշագծել ականապատված վայրերն ու հնարավորության դեպքում նաև ականագերծել դրանք, որի համար էլ ձեռք է բերել ականորսիչ սարք: Գ. Հայրապետյանը, իրեն հանձնարարված առաջադրանքները կատարելու համար, ադրբեջանական հատուկ ծառայության աշխատակիցներից պահանջել է ընդհանուր առմամբ 60 հազար ԱՄՆ դոլար գումար, իսկ Քարվաճառում տեղադրված ականների տեղակայման վայրերը հայտնելու համար՝ յուրաքանչյուր ականի դիմաց 1.000 ԱՄՆ դոլար գումար: 60 հազար ԱՄՆ դոլարի դիմաց Գ. Հայրապետյանը պետք է Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցներին տրամադրեր սահմանային քարտեզներ, տեղեկություններ պաշտպանական որոշ հենակետերի մասին և սկավառակներ, որոնցում նկարահանված կադրերը միջազգային հանրության շրջանում կարող էին օգտագործվել ՀՀ դեմ և վարկաբեկել ՀՀ հեղինակությունը<sup>534</sup>: Գ. Հայրապետյանին առաջարկել են տրամադրվելիք տեղեկությունների և սկավառակների համար պայմանավորված գումարից որպես կանխավճար հատկացնել 15 հազար ԱՄՆ դոլար, սակայն նա գումարը պահանջել է ամբողջությամբ և որոշվել է, որ ԻԻՀ-ից Հայաստան կգա «իրենց մարդը», որը կվճարի գումարը և կվերցնի սկավառակներն ու տեղեկությունները<sup>535</sup>:

<sup>532</sup> Լրտեսությունները Ադրբեջանի հատուկ ծառայությունների առաջադրանքով և պահանջով, ՀՀ գլխավոր դատախազության հաղորդագրությունը, 29.11.2010, <http://prosecutor.am/am/news/4983/> (հղումն արված է 03.03.2016 թ.):

<sup>534</sup> Դասավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Ավան և Լոր-Լորը վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, 25 հոկտեմբերի 2010թ., թիվ ԵԱՆ/ԿՕ128/Օ1/09:

<sup>535</sup> Լույն տեղում:

2009 թ. սեպտեմբերի 1-ին Իրանից Հայաստան է ժամանել այդ երկրի քաղաքացի, ազգությամբ ազերի Բեհնամ Բաղերին: Նա, աղբրեջանական հատուկ ծառայության ներկայացուցչի և Գ. Հայրապետյանի միջև եղած նախնական պայմանավորվածության համաձայն, ներկայացրել է նշանաբանը, այն է՝ բջջային հեռախոսը, որում առկա է նդել իր և աղբրեջանական հատուկ ծառայության աշխատակցի համատեղ լուսանկարը<sup>596</sup>: Այնուհետև նյութը նկատվել է Հայրապետյանի բնակարանում և նրան հանձնել աղբրեջանական հատուկ ծառայություններից ստացած հերթական առաջադրանքներով ծրարը, օտարերկրյա հետախուզական ծառայություններին հետաքրքրող հարցերի շուրջ պարզաբանման ենթակա հատուկ հարցաթերթիկը, որոնց վերաբերյալ ակնկալվող ճշգրիտ պատասխանները պարունակել են պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ<sup>597</sup>: Հայրապետյանն, իր հերթին կատարելով աղբրեջանական հետախուզության առաջադրանքը, վերջինիս փոխանցելու համար Բաղերիին է հանձնել վերը հիշատակած տեսանկարառակը: 2009 թ. սեպտեմբերի 3-ին Մեղրիի «Կարճևան» սահմանային անցակետում Բաղերին փորձել է անցկացնել վերոհիշյալ լազերային սկավառակը, սակայն ՀՀ ազգային անվտանգության ծառայության աշխատակիցների կողմից կատարված ստուգման ժամանակ այն հայտնաբերվել է նրա պայուսակի ստորին մասում հարմարեցված գաղտնաբանում<sup>598</sup>:

Փորձաքննությամբ հաստատվել է, որ Գ. Հայրապետյանի կողմից աղբրեջանական հատուկ ծառայություններին փոխանցվելիք քարտեզների, սկավառակների և այլ նյութերի օգտագործումը թույլ կտար հակառակորդին իրականացնելու դիվերսիոն-հետախուզական խմբերի գործողությունների պլանավորում և իրականացում, ՀՀ միջազգային հեղինակության վարկաբեկում:

<sup>596</sup> Լրտեսությունները Աղբրեջանի հատուկ ծառայությունների առաջադրանքով և պահանջով, ՀՀ գլխավոր դատախազության հաղորդագրությունը, 29.11.2010, <http://prosecutor.am/am/news/4983/> (նդումն արված է 03.03.2016 թ.):

<sup>597</sup> Դատավճիռ. շահույն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, 25 հոկտեմբերի 2010 թ., թիվ ԵԱՆ/ՎՊ128/01/09:

<sup>598</sup> Լրտեսությունները ..., նույն հաղորդագրությունը:

Բացի այդ, աղբրեջանական հետախուզությանը հայտնի կդառնային հայ-աղբրեջանական սահմանի երկայնքով տեղակայված որոշ գորամասերի օպերատիվ ծավալման, դրանց մարտակառքերի, ղեկավարման կետերի, հակաօդային պաշտպանության, հրետանու, մարտական ապահովման, ինժեներասակրավորային ուժերի մարտական խնդրի և շրջանի, գորամիավորման պաշտպանության գոտու առաջնագծի վերաբերյալ այն ժամանակվա համար «հույժ գաղտնի» տեղեկություններ:

Փետրվարի 29-ին Հայրապետյանը դատապարտվել է ՀՀ քրեական օրենսգրքի 299-րդ հոդվածի 1-ին մասով և 235-րդ հոդվածի 1-ին մասով՝ 12 տարի, իսկ Բենեամ Բաղդերին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 302 հոդվածով՝ ազատազրկման 10 տարի ժամկետով<sup>398</sup>:

Վերոնշյալ դատավճիռն ուսումնասիրելով՝ հարկ է արձանագրել մի կարևոր հանգամանք. Փետրվարի 29-ին Հայրապետյանը աղբրեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ սկզբում հանդիպել է ՎՀ Թրիլիսի քաղաքում (որտեղ հավաքագրվել է նրանց կողմից), այնուհետև նա մեկնել է Ուկրաինա և Կիևում հանդիպել նրանց աշխատակիցների հետ, իսկ դրանից հետո ԻԻՀ-ից ՀՀ է ժամանել աղբրեջանական հատուկ ծառայությունների հետ կապի մեջ գտնվող ԻԻՀ քաղաքացի, որը հանդիպել է Գ. Հայրապետյանի հետ, նրան փոխանցել նոր առաջադրանքը և վերցրել լազերային սկավառակը: Այսպիսով կարող ենք փաստել, որ աղբրեջանական հատուկ ծառայությունները Հայաստանի և Արցախի դեմ գործունեություն են ծավալում ոչ միայն Աղբրեջանի և Թուրքիայի, այլ նաև Վրաստանի, Ուկրաինայի, Իրանի տարածքներից:

Մկսած XXI դարի սկզբներից՝ համացանցի լայնորեն տարածման պայմաններում, աղբրեջանական հատուկ ծառայություններն իրենց հետախուզական-տեղեկատվական գործունեության մեջ սկսեցին լայնորեն կիրառել նաև համացանցը՝ այն օգտագործելով որպես տեղեկատվության փոխանցման միջոց: Այսպես, 2011 թ. հուլիսի 23-ին ձեռքարկված Կարեն Մեհրաբ-

<sup>398</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Նրեան, Ավան և Նոր-Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, 25 հոկտեմբերի 2010 թ., թիվ ԵԱԼ/ԻՕ128/Օ1/09:

յանը, որպես տեղեկատվության փոխանցման միջոց, օգտագործում էլ «agent.mail.ru» սոցիալական կայքը<sup>340</sup>:

2011 թ. սկզբներին գտնվելով Թուրքիայում՝ Կարեն Մեհրաբյանն ընկել է այդ երկրում գործունեություն ծավալած Ադրբեջանի հետախուզական ծառայությունների տեսադաշտ և այդ ծառայությունների աշխատակցի կողմից ստացել առաջարկ համապատասխան վարձատրության դիմաց համագործակցել նրանց հետ<sup>341</sup>: Հավաքագրվելով հետախուզական ծառայությունների աշխատակից հանդիսացող, Տիգրան և Կարդան անուններով ներկայացած անձնավորությունների կողմից, Կարեն Մեհրաբյանը ստացել է կոնկրետ գրավոր առաջադրանքներ Արցախի ՊԲ վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելու ուղղությամբ, այդ թվում՝ ՊԲ անձնակազմի, զենքի, զինամթերքի և զինտեխնիկայի քանակի և տեսակի, զորամասերի և դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներական կառույցների, սարքերի և սարքավորումների վերաբերյալ: Կ. Մեհրաբյանը գաղտնի տեղեկատվության հավաքման գործընթացում փորձել է ներգրավել Արցախի բնակիչների և ՀՀ ՊՆ զինծառայողների<sup>342</sup>:

Վերադառնալով Հայաստան՝ ձեռնամուխ է եղել այդպիսի տեղեկություններ հավաքելուն, փորձել է ծանոթություններ հաստատել իրավասու անձանց հետ և գործընթացին ներգրավել ՀՀ ՊՆ աշխատակիցների ու Արցախի քաղաքացիների և հավաքած տեղեկատվությունը 2011 թ. հուլիսի 23-ին փորձել տանել Թուրքիա՝ մի մասն էլ փոխանցել համացանցով, սակայն ձերբակալվել է ՀՀ ԱԱԾ մարմինների կողմից:

Հատկանշական է, որ ԹՀ Ստամբուլ քաղաքում գործունեություն ծավալած ադրբեջանական հատուկ ծառայության

<sup>340</sup> <http://www.sns.am/index.php/am/news/173-23072011>, ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքէջը (նոյամն արված է 21.12.2015 թ.):

<sup>341</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Կենտրոն և Լոռ-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության ստացին ատյանի դատարանի, 06 ապրիլի 2012 թ., թիվ ԵԿԴ-0224/01/11/:

<sup>342</sup> Կ. Մեհրաբյանի ձերբակալման վերաբերյալ ՀՀ ԱԱԾ մամուլի հաղորդագրությունը, 23.07.2011 թ., <http://www.sns.am/index.php/am/news/173-23072011> (նոյամն արված է 10.03.2016 թ.):



աշխատակիցների հետ Կ. Մեհրաբյանին ծանոթացրել է ՀՀ քաղաքացի Ռուինկ Մաթևոսյանը, որը նս. հավաքագրված լինելով այդ ծառայության աշխատակիցների կողմից, ունեցել է առաջադրանք՝ աշխատելու նպատակով Թուրքիա ժամանած ՀՀ քաղաքացիների միջից գտնել հավաքագրման համար հավանական անձանց, ծանոթացնել նրանց աղբյուրանական հետախուզության աշխատակիցների հետ, փորձել հայթայթել հետաքրքրող տեղեկություններ նրանց փոխանցելու նպատակով<sup>343</sup>:

Կ. Մեհրաբյանն աղբյուրանական հետախուզական ծառայությունների աշխատակիցների կողմից ստացել է առաջադրանքներ նաև հավաքել և իրենց փոխանցել Հայաստանի և Արցախի արտաքին անվտանգության, զինված ուժերի, սպառազինության մասին տեղեկություններ, այդ թվում՝ քանակի անձնակազմի, զենքի, զինամթերքի, զինտեխնիկայի քանակի և տեսակի, գործամասերի և դրանց հրամանատարական կազմի, պաշտպանական շրջանների, ինժեներատեխնիկական կառույցների և սարքավորումների վերաբերյալ<sup>344</sup>:

2011 թ. հուլիսի 23-ին Կ. Մեհրաբյանը վերոնշյալ տեղեկություններով «գաղտնի», «հույժ գաղտնի» գաղտնագրերով փաստաթղթերը և էլեկտրոնային կրիչները փորձել է անցկացնել հայ-վրացական սահմանը, սակայն ձերբակալվել է ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից: Ձերբակալվել են նաև Ռ. Մաթևոսյանն ու ՀՀ մեկ այլ քաղաքացի՝ Աշոտ Զթրկյանը, որը տեղյակ է եղել Կ. Մեհրաբյանի գործունեությանը և լրտեսական գործունեության մեջ տարատեսակ օժանդակություն է ցուցաբերել նրան:

Կ. Մեհրաբյանը դատապարտվել է 14 տարի, Ռ. Մաթևոսյանը՝ 10 տարի, Ա. Զթրկյանը՝ 10 տարի ժամկետներով ազատազրկման<sup>345</sup>:

<sup>343</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Կենտրոն և Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի, 06 ապրիլի 2012 թ., թիվ ԵՊԴ-0224/01/11/:

<sup>344</sup> Լույն տեղում:

<sup>345</sup> Լույն տեղում:

Հարկ է նշել, որ Կ. Մեհրաբյանը մինչ ձերբակալվելը իր հայրենադավ ծրագրերի մասին հայտնել է առնվազն 4-5 հոգու, որոնց խնդրել է օգնել իրեն իր գործունեության մեջ, գտնել մարդ, որը գումարի դիմաց իրեն կտրամադրի ռազմական բնույթի տեղեկություններ: Վերջիններս, սակայն, ըստ իրենց ցուցմունքների, լուրջ չեն ընդունել Կ. Մեհրաբյանի ասածները և չեն օգնել նրան: Սակայն այդ մասին նրանք չեն հայտնել իրավապահ մարմիններին, ինչի համար էլ նրանք նա դատապարտվել են:

Պետական դավաճանությունը որևէ կերպ ներելի արարք չէ, անկախ նրանից, թե տվյալ անձը ինչ հանգամանքներում է հավաքագրվել թշնամու կողմից: Սակայն առավել դատապարտելի և աններելի է, երբ պետությունն ու հայրենիքը դավաճանում են սեփական նախաձեռնությամբ:

Այսպես, ՀՀ քաղաքացի Խաչիկ Մարտիրոսյանը, ֆինանսական խեղդիքների լուծման ակնկալիքով, 2013 թ. օգոստոսի 6-ին մեկնել է ՎՀ Թբիլիսի քաղաք, որտեղ սեփական նախաձեռնությամբ Վրաստանում Ադրբեջանի դեսպանության վարչական շենքի վրա փակցված պաշտոնական հեռախոսահամարով կապ է հաստատել դեսպանության աշխատակից ոմն Ալեքսանդր Իվանովիչի հետ առաջարկելով իր ծառայությունները: Վերջինիս միջնորդությամբ, արդեն 2013 թ. սեպտեմբերի 19-ին Թբիլիսիում հանդիպել է Ադրբեջանից ժամանած Մախմուդ անունով ներկայացած անձնավորության հետ, որը հանդիսացել է Ադրբեջանի հատուկ ծառայությունների աշխատակից: Խ. Մարտիրոսյանը նրանից ստացել է 500 ԱՄՆ դոլար գումար և առաջադրանք՝ հավաքել տվյալներ ՀՀ ՊՆ պատասխանատու պաշտոն զբաղեցնող մի անձնավորության վերաբերյալ, ինչպես նաև տվյալներ նրա անձնական կյանքի, հավանական սիրուհու, վերջինիս կենտրոնիչ տվյալների ու բնակության հասցեի վերաբերյալ<sup>56</sup>:

<sup>56</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Ծրնակ, Կենտրոն և Լոբր-Մարաշ շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, 11 օգոստոսի 2014 թ., Գործ թիվ Ե՛ԳՂ/0069/01/14:

2013 թ. հոկտեմբերի 20-ին, N. Մարտիրոսյանը Թբիլիսի քաղաքում Մախնուդին և փոխանցել իրականությանը չհամապատասխանող տվյալներ՝ բջջային հեռախոսի միջոցով կատարված այդ անձանց լուսանկարներ, անձնական բնույթի տվյալներ՝ դրանք ներկայացնելով որպես հանձնարարված անձի վերաբերյալ տվյալներ: Փոխանցված լուսանկարներն ու տվյալները աղբրեջանական հատուկ ծառայությունների կողմից օգտագործվել են ՀՀ ՊՆ Բարձրաստիճան պաշտոնային, ինչպես նաև ՀՀ հետախուզության դեմ հրապարակայնորեն համացանցի միջոցով վարկաբեկելու և աղբրեջանական հատուկ ծառայությունների իրր գերիշխող դիրքը ցուցադրելու նպատակով<sup>547</sup>: Նույն թվականի հոկտեմբերի 26-ին աղբրեջանական ինտերնետային միջադր լրատվական կայքերում հրապարակվել են այդ տվյալները «Азербайджанская разведка в Ереване»<sup>548</sup> վերնագրով հոդվածում, որտեղ դրանք ներկայացվել են որպես իրականություն: Այդ տվյալների փոխանցման ժամանակ N. Մարտիրոսյանն ստացել է երկրորդ առաջադրանքը. ճշտել ՀՀ ՊՆ սննդամթերքի, հագուստեղենի, գենք-գինամթերքի, դեղորայքների պահեստների տեղակայման վայրերն ու հասցեները, կատարել նկարահանումներ, ինչպես նաև հավաքել տեղեկություններ Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղակայված ՌԷ զինվորական բազայի վերաբերյալ:

N. Մարտիրոսյանը ձերբակալվել է 2014 թ. հունվարի 31-ին և դատապարտվել ազատազրկման 11 տարի ժամկետով<sup>549</sup>:

Հարկ է նշել, որ աղբրեջանական հատուկ ծառայությունները N. Մարտիրոսյանի վերաբերյալ ՋԼՄ-ներով տարածեցին տեղեկատվություն, թե այդ անձը իրենց հայտնի չէ: Մինչդեռ դատարանի վճռով հաստատված է վերջինիս և աղբրեջանական հատուկ ծառայությունների ունեցած կապը, ինչը խոստովանել է անձամբ N. Մարտիրոսյանը:

<sup>547</sup>Նույն տեղում:

<sup>548</sup> Азербайджанская разведка в Ереване, <http://ru.faktzeber.com/> (նդումն արված է 21.02.2016 թ.):

<sup>549</sup> Նույն տեղում:

Հաջորդ քրեական գործում ներգրավված են ՀՀ քաղաքացիներ Ռաֆիկ Պապոյանը, նրա որդին՝ Սերգեյ Պապոյանը, Կարինե Ղուսաշյանը և Դիանա Գորոյանը<sup>596</sup>։ Համաձայն մեղադրական եզրակացության, Ռ. Պապոյանը, բնակվելով Թուրքիայում, հավաքագրվել է այդ երկրի տարածքում գործունեություն ծավալած Ադրբեջանի հետախուզական ծառայությունների աշխատակիցը հանդիսացող Սեյրան անունով ներկայացած անձի կողմից և կատարել այդ հետախուզական ծառայության առաջադրանքները՝ Հայաստանից Թուրքիա ժամանած ՀՀ քաղաքացիների միջից ընտրել Ադրբեջանի հետախուզական ծառայությունների համար հետաքրքրություն ներկայացնող անձանց ու հավաքագրման նպատակով ծանոթացնել նրա հետ։ Կարինե Ղուսաշյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, բնակվելով Թուրքիայում, ընկել է այդ երկրի տարածքում գործունեություն ծավալած Ադրբեջանի հետախուզական ծառայությունների տեսադաշտը և 2013 թ. հավաքագրվել այդ ծառայությունների աշխատակիցը հանդիսացող Արման անունով ներկայացած անձնավորության կողմից, որոշ հանձնարարություններ կատարելու նպատակով ստացել վարձատրություն՝ ընդհանուր մոտ 1500 ԱՄՆ դոլլար գումարի չափով<sup>597</sup>։ Ս. Պապոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա Թուրքիայում բնակվող հոր՝ Ռ. Պապոյանի ուղղորդմամբ, Վրաստանի Թբիլիսի քաղաքում հանդիպել է Ադրբեջանի հետախուզական ծառայությունների աշխատակիցը հանդիսացող, Սեյրան անունով ներկայացած անձի հետ և հավաքագրվել վերջինիս կողմից՝ տրամադրելով տեղեկություն Արցախի Մարտունու շրջանում որպես հետախույզ ժամկետային զինծառայության ընթացքում տիրապետած տեղեկությունների վերաբերյալ։ Վճարելով 750 ԱՄՆ դոլլար գումար՝ վերոհիշյալ Սեյրանը սովել է առաջադրանք՝ ընդունվել պայմանագրային ծառայության

<sup>596</sup> Մեղադրանքը՝ պետական դավաճանություն, ակտիվ է պետական դավաճանության մեղադրվող ամբաստանյալների գործի դատաքննությունը, <http://www.armeniatv.am/hy/55262-1453733067> (հղումն աքված է 20.03.2016 թ.):

<sup>597</sup> Լույս տեղում, նաև՝ <http://iravabn.net/114343.html#ad-image-0>, <http://www.aravot.am/2016/03/02/663408/>, <http://news.am/arm/news/310889.html> (հղումներն աքված են 20.03.2016 թ.):

Մատադիսի գործամասերից մեկում և տեղեկություններ հայտնել այդ գործամասի մասին համացանցի «Սկայպ» ծրագրի կամ «Օդնոկլասնիկի» սոցիալական ցանցի միջոցով: Դ. Գորոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա իմացել է նախապատրաստվող պետական դավաճանության մասին, սակայն այդ մասին չի հայտնել իրավապահ մարմիններին<sup>352</sup>:

Անհրաժեշտ է փաստել, որ Կ. Ղումաշյանը աղբրեջանական հետախուզության աշխատակիցներին հետաքրքրել է քանի որ նրա որդին հանդիսանում էր Արցախի պաշտպանության բանակի սպա: Եվ, փաստորեն, Կ. Ղումաշյանը, համագործակցելով աղբրեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների հետ և հավաքագրվելով նրանց կողմից, փորձել է դավաճանության դրդել սեփական որդուն:

Հարկ է նշել, որ ՀՀ քրեական օրենսգիրքը նախատեսում է պատիժ ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստման և իրականացման մասին տեղեկություններ ունեցած և իրավապահ մարմիններին այդ մասին չհաղորդած անձանց նկատմամբ<sup>353</sup>: Միաժամանակ օրենսգիրքը պատժից և պատասխանատվությունից ազատում է, եթե, օրինակ, ինչ-ինչ հանգամանքներից ելնելով, անձը հավաքագրվել է օտարերկրյա հատուկ ծառայությունների մարմինների աշխատակիցների կողմից, սակայն որևէ հակասօրինական քայլ չի կատարել և ինքնակամ ներկայացել ու այդ մասին հայտնել է ՀՀ իրավապահ մարմիններին<sup>354</sup>:

Հատկանշանական է, որ լրտեսության հիմնական շարժառիթը վերը նշված բոլոր գործերով եղել է կյուբական շահը, և դա բնորոշ է գրեթե բոլոր երկրներում այդ բնույթի հանցագործություն կատարած անձանց: Հետախուզության և հակահետախուզության գործակալները, ինչպես նաև բացառություն չկազմող վերը նշված բոլոր գործերով լրտեսություն կատարած անձինք

<sup>352</sup> Նույն տեղում:

<sup>353</sup> Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք, հոդված 335, կետ 1, <http://www.parliament.am/legislation.php?sel-show&ID=1349#4> (նշումն արված է 25.03.2016 թ.):

<sup>354</sup> Նույն տեղում, հոդված 72:

ունեցել են նախապես հորինված, ինչպես հետախուզության գործակալներն են ասում, «լեզենդ» և իրենց բուն գործունեությունը փորձել են քողարկել կոմերցիոն, լրագրողական կամ այլ գործունեությամբ՝ օգտագործելով իրենց կենսագրությունը, մասնագիտությունը, նախկինում ունեցած արժանիքները»<sup>595</sup>:

Եւէնք նաև, որ ժամանակակից Ադրբեջանում արգելված է ազգությամբ հայ այցելուների մուտքն այդ երկիր, ինչն այլատյացության դասական դրսևորում է (զավեշտն այն է, որ եթե այցելուն կրում է «յան», երբեմն «իան» վերջավորությամբ ազգանուն, ապա նրա մուտքն Ադրբեջան փակվում է, անկախ նրանից՝ վերջինս իրականում ազգությամբ հայ է, թե՛ ոչ): Լինում են նաև դեպքեր, երբ Ադրբեջանի հատուկ ծառայությունները հենց օդանավակայանից ձերբակալում են ազգությամբ հայերին և կազմակերպում ծիծաղելի դատավարություն՝ շինծու մեղադրանքներով: Այսպես, 2016 թ. հունիսի 9-ին Բաքվի օդանավակայանում ձերբակալեցին ՌԴ քաղաքացի, ազգությամբ հայ Մարատ Ուելդանովին (իսկական ազգանունը Գալուստյան): Ձերբակալության մասին հայտնի է դարձել միայն այն բանից հետո, երբ ադրբեջանական կողմը 2016 թ. հունիսի 23-ին Ռուսաստանի ԱԳՆ-ին իրազեկել է, թե Ուելդանովը կասկածվում է անօրինական ճանապարհով ու վաճառքի մտադրությամբ մեծ քանակությամբ թմրանյութ ձեռք բերելու կամ պահելու մեջ: Մակայն, ինչպես պետում է Ուելդանովի քույրը՝ Մարիաննա Միրզոյանը, եղբոր ձերբակալության պատճառը նրա ազգային պատկանելիությունն է, և նրան ի սկզբանե ձերբակալել են Հայաստանի օդտին լրտեսության կասկածանքով<sup>596</sup>:

ՀՀ քաղաքացիների՝ սխալմամբ կամ պատահաբար Ադրբեջանում հայտնվելը ևս ունենում է ծանր հետևանքներ, ինչպես եղել է այն անձանց պարագայում, ովքեր հայ-ադրբեջանական սահմանի երկայնքով տեղակայված բնակավայրերում ոչ ճիշտ

<sup>595</sup> Մանուկյան Ա., եջվ. հոդված, էջ 228:

<sup>596</sup> Гражданка России Марата Уелданова задержана в Баку из-за его армянского происхождения, 26 июля 2016, <http://www.paparmenian.net/rus/news/217689/>, տե՛ս նաև Ադրբեջանում ազգությամբ հայ է ձերբակալվել նրան կասկածում են լրտեսության մեջ, <http://armtimes.com/hy/article/90413> (հղումներն արված են 20.08.2016 թ.):

կողմնորոշման կամ տեսանկյունության վառ պայմանների հետևանքով հայտնվել են Աղբրեջանի տարածքում: Այսպես, 77-ամյա Մամիկոն Խոջոյանին աղբրեջանական իշխանություններն ու հատուկ ծառայությունները ներկայացրին որպես դիվերսանտ և այնպիսի խոշտանգումների ու կտտանքների ենթարկեցին, որ ՀՀ վերադարձվելուց որոշ ժամանակ անց մահացավ<sup>597</sup>, 1993 թ. ծնված Արսեն Խոջոյանի մոտ գերությունից վերադառնալուց հետո առաջացան մի շարք վտանգավոր ու վարակիչ հիվանդություններ<sup>598</sup>, 31-ամյա Կարեն Պետրոսյանին ևս բացարձակ անհիմն ներկայացրին որպես դիվերսանտ և դաժանաբար սպանեցին գերի ընկնելու հաջորդ օրը<sup>599</sup>, իսկ Տավուշի մարզի Հաղարծին գյուղի բնակիչ Արթուր Բաղայանին աղբրեջանական հատուկ ծառայությունները մոտ երկու տարի պահել են քաղցած, ցուրտ ու խոնավ խցում, ենթարկել խոշտանգումների, հոգեբանական տարատեսակ ճնշումների (ընդ որում վերջինիս գերեվարվելու փաստը աղբրեջանական կողմը ավելի քան մեկուկես տարի գաղտնի էր պահել)<sup>600</sup>:

Բացի վերոնշյալից, 2015 թ. աղբրեջանական հատուկ ծառայությունները, հրահանգավորվելով թուրքական հատուկ ծառայությունների կողմից, արտասահմանյան մի շարք երկրներում Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների անցկացմանը խոչընդոտելու նպատակով իրա-

<sup>597</sup> Մահացել է աղբրեջանական գերությունում գտնված Մամիկոն Խոջոյանը, <http://armenpress.am/arm/news/762616/mahacel-e-adrbejanakan-gerutyunum-gtnvats-mamikon-khojoyany.html> (հղումն արված է 01.12.2015 թ.):

<sup>598</sup> Արսեն Խոջոյանի բժշկական փորձաքննության արդյունքները պատրաստ են, 03.06.2014 թ., <http://hayell.am/article/489727> (հղումն արված է 01.12.2015 թ.):

<sup>599</sup> Բեքարյան Կ., Ալինայա Է, որ Կարեն Պետրոսյանին սպանել են, 08.08.2014 թ., <http://armenpress.am/arm/news/772022/its-obvious-that-karen-petrosyan-was-killed-analyst.html> (հղումն արված է 13.12.2015 թ.):

<sup>600</sup> Աղբրեջանական գերությունից վերադարձած Արթուր Բաղայանի բողոքն ուղարկվել է Եվրոպական դատարան, 11.08.2011 թ., <http://news.am/arm/news/70702.html> (հղումն արված է 15.12.2015 թ.):

կանացրել են տարատեսակ գործողություններ՝ ներգրավելով տեղական համայնքային կառույցներ<sup>561</sup>:

Միաժամանակ արձանագրեք, որ պետական դավաճանության և լրտեսության հողվածներով դատապարտված անձինք հիմնականում հավաքագրվել են Թուրքիայի Հանրապետությունում գործունեություն ծավալած աղբրեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցների կողմից: Այս առումով Աղբրեջանն ու Թուրքիան ունեն բավական սերտ համագործակցություն: Դեռևս արցախյան ազատամարտի տարիներին բավականին ակտիվացավ Թուրքիայի հիմնական հատուկ ծառայություններից մեկը՝ Ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT): Հօգուտ Աղբրեջանի հետախուզություն իրականացնելուց բացի, MIT-ը ուսումնական կենտրոններ էր ստեղծել աղբրեջանական դիվերսիոն-հետախուզական ջոկատներ պատրաստելու համար:

Հատուկ ծառայությունների միջև համագործակցության վերաբերյալ պայմանագիր ստորագրվեց 2003 թ. մարտի 3-ին Անկարայում՝ «Աղբրեջանի ՊՆ և Թուրքիայի ԳՇ միջև ռազմական հետախուզության բնագավառում փոխադարձ համագործակցության մասին»<sup>562</sup>: 2007 թ. սեպտեմբերին Բաքու այցելեց թուրքական ռազմական պատվիրակությունը՝ Գլխավոր շտաբի հետախուզության վարչության պետ զեներալ Մ. Էրթենի գլխավորությամբ: Արդյունքում ևս պայմանավորվածություն ձևեց բերվեց ռազմական հետախուզության համագործակցության վերաբերյալ:

Նույն թվականի հոկտեմբերին Աղբրեջան այցելեց MIT-ի ղեկավար Էմրե Թաները, որը Աղբրեջանի ազգային անվտանգության նախարարի հետ քննարկեց երկու երկրների հատուկ ծառայությունների բարձր մակարդակի հարաբերությունները,

<sup>561</sup> ՀՀ ԱԱԾ մարմինների աշխատակցի օրվա առթիվ ՀՀ ԱԱԾ տնօրեն Գ. Գ. Հակոբյանի կուլյոր, 18.12.2015 թ., <http://www.ans.am/index.php/am/news/296-18122015> (հղումն արված է 18.02.2016 թ.):

<sup>562</sup> Озсепян Л., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Ер., 2010, с. 65.



դրանց հետագա զարգացումը և համատեղ գործունեությունը այդ բնագավառում:

2008 թ. ապրիլին Ադրբեջան ժամանեց պատվիրակություն թուրքիայի ՁՈւ և անվտանգության մարմինների բարձրաստիճան պաշտոնյաների ու զինվորականների գլխավորությամբ: Այցի նպատակը Ադրբեջանի ուժային համակարգի խնդիրներին ավելի մոտիկից ծանոթանալն ու համագործակցության, թուրքական կոդաի օժանդակության ուղղությունները որոշելն էր: Նույն ժամանակահատվածում Ադրբեջան այցելեց նաև թուրքիայի մեկ այլ ռազմական պատվիրակություն Մովստիկյա պահպանության ծառայության ղեկավար Ղ. էրեսոլլուի գլխավորությամբ: Քննարկման թեման համատեղ հետաքրքրություններն ու հետագա ռազմավարական համագործակցությունն էր<sup>562</sup>:

ՈՂ անվտանգության մարմինների պետամար՝ թուրքական հետախուզությունը տարածաշրջանում իրականացնում է նաև թյուրքալեզու տարրերի ինտեգրմանն ուղղված գործողություններ<sup>563</sup>: Դրան է միտված նաև թյուրքալեզու երկրների հետախուզական ծառայությունների համագործակցությունը: Ձևավորվել է խորհուրդ, և մինչ օրս այդ երկրների հատուկ ծառայությունների ղեկավարների մասնակցությամբ իրականացվել են 19 կոնֆերանսներ, որոնց ընթացքում քննարկվել են ինչպես հետախուզական տեղեկատվության փոխանակման, այնպես էլ ահաբեկչության դեմ պայքարի և այլ հարցերի շուրջ համագործակցության հեռանկարները<sup>564</sup>:

Հարկ է նշել, որ ադրբեջանական հատուկ ծառայությունները համագործակցում են նաև Բարայելի հատուկ ծառայությունների հետ. իրականացվում է ինչպես տեղեկատվության փոխանակում, այնպես էլ Բարայելում Ադրբեջանի հատուկ ծա-

<sup>562</sup> Նույն տեղում:

<sup>563</sup> Հովսեփյան Լ., Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, Դրոշակ, Նոյեմբեր, 2010, թիվ 11:

<sup>564</sup> Beynəlxalq əməkdaşlıq, <http://www.dtx.gov.az/articles1.php>, տե՛ս նաև Bakıda Türkdilli Dövlətlərin Xüsusi Xidmət Orqanlarının Konfransı keçirilib, Oktyabr 08, 2015, [https://www.azeritaninsesi.org/az/turkdilli\\_tehhukesizlik/2997229.html](https://www.azeritaninsesi.org/az/turkdilli_tehhukesizlik/2997229.html) (նրում-նրին արված են 18.03.2017 թ.):

ռայությունների աշխատակիցների վերապատրաստում<sup>566</sup>։ Այս համագործակցությամբ անհանգստացած են նաև Իրանի Իսլամական Հանրապետությունում, քանի որ այն ուղղված է ոչ միայն Հայաստանի, այլ նաև Իրանի դեմ։ Մամուլում հաճախակի հայտնվում է տեղեկատվություն այն մասին, որ Իսրայելի հատուկ ծառայություններն Ադրբեջանի տարածքն օգտագործում են Իրանի վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու համար, հատկապես, որ Իսրայելը իրանա-ադրբեջանական սահմանի երկայնքով տեղակայել է ռադիոէլեկտրոնային հետախուզության կայաններ (ELINT)<sup>567</sup>։

Իրանը Ադրբեջանին մեղադրում է նաև իրանցի միջուկային ֆիզիկոսների սպանությունների (Իրանում 2010-2012 թթ. ընթացքում սպանվել են առնվազն չորս միջուկային ֆիզիկոսներ կամ ատոմագետներ) իրականացման գործում իսրայելական հատուկ ծառայություններին օժանդակելու մեջ<sup>568</sup>։

Ադրբեջանի և Թուրքիայի հատուկ ծառայությունների համագործակցությունը Հայաստանի դեմ տարվող հետախուզական-քայքայիչ գործունեության շրջանակներում ևս սերտ քնույթ ունի։ Երկու երկրների հատուկ ծառայությունների ղեկավարեն-

<sup>566</sup> Alexander Murinson, *The Ties Between Israel and Azerbaijan, Mideast Security and Policy Studies No. 110*, p. 21, <https://besacenter.org/wp-content/uploads/2014/10/MSPS110-web.pdf> (հղումն արված է 20.02.2017 թ.)։

<sup>567</sup> Նույն տեղում, էջ 22։ Հատկանշական է, որ Իսրայելն ու Ադրբեջանը սերտ համագործակցում են հատկապես ռազմական (ռազմաարդյունաբերություն) ոլորտում։ Իսրայելն Ադրբեջանին մատակարարում է տարբեր տեսակի սպառազինություն անօդային թռչող սարքեր (հետախուզական, «կամիկաձե», որոնք օգտագործվելիս ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ), ինքնաթիռներ, հակաօդային պաշտպանության համակարգեր, տարատեսակ հրթիռներ, տնականներ, զրահագնացներ և այլն։ Հաս Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի՝ ադրբեջանական և իսրայելական ընկերությունների միջև կնքված պաշտպանական սպառազինությունների ձեռքբերման հետ կապված գործարքների արժեքը կազմում է մոտ 5 մլրդ (ամիլի տոտյզ՝ 4 մլրդ 850 մլն) ԱՄՆ դոլար, տե՛ս Ilham Əliyev və Bəq nazir Bənyamin Netanyahu mətbuata bəyənətlərlə çıxış edənlər, 13 dekabr 2016, <http://www.president.az/articles/22035> (հղումն արված է 18.10.2017 թ.)։

<sup>568</sup> Վարդանյան Ժ., «Արցիև 12 տարիներից Իրանում տեղի ունեցած խոշոր սնահրկությունները, ժամանակագրություն, հունիս 8, 2017, <http://razm.info/104028> (հղումն արված է 22.08.2017 թ.)։

ըր պարբերաբար հանդիպումներ են ունենում և քննարկում համագործակցության հարցերի լայն շրջանակ<sup>300</sup>:

Ուսումնասիրելով ՀՀ-ում և Արցախում պետական դավաճանության և լրտեսության մեղադրանքներով դատապարտված անձանց մեղադրական եզրակացությունները և դատավճիռները՝ հստակ ուրվագծվում է, որ Թուրքիայի տարածքում, տեղի հատուկ ծառայությունների հովանու ներքո Ադրբեջանի հատուկ ծառայությունները գործում են այնպես, ինչպես սեփական երկրի տարածքում:

Միաժամանակ նկատվում է, որ թուրքական հետախուզությունն ուղղակի կամ միջնորդավորված, Թուրքիայի քաղաքական և հասարակական կազմակերպությունների միջոցով լայն կապեր է հաստատել Ադրբեջանի քաղաքական կուսակցությունների և հասարակական կազմակերպությունների հետ: Թուրքիան էական ֆինանսական և կազմակերպչական աջակցություն է ցուցաբերում գրեթե բոլոր կուսակցություններին և կազմակերպություններին, ինչպես նաև անհատ քաղաքական գործիչներին ու մտավորականության ներկայացուցիչներին: Թուրքական կողմն աշխատում է շատ պրագմատիկ՝ կենտրոնանալով իր ռազմավարական շահերին առավել համահունչ հայացքներ դալանող կուսակցությունների և կլանների հետ համագործակցության վրա: Այս առումով՝ Թուրքիան ստեղծել և զարգացրել է հատուկ հարաբերություններ իշխող քաղաքական կլանի հետ:

Թուրքիայի նախագահ Էրդողանը բացեիբաց հայտարարում է, թե Թուրքիան միայն իր հողերի և իր քաղաքացիների համար չէ պատասխանատու: Եւ նշել է, որ եթե 1990-ական թթ. սկզբին Թուրքիան «այսօրվա հզոր պետությունը լիներ», «եղ-

<sup>300</sup> Обсуждены вопросы расширения сотрудничества между спецслужбами Азербайджана и Турции, 07.03.2007, [https://azertag.az/ru/xeber/OBSUZHDENY\\_VOPROSY\\_RASSHIRENIYA\\_SOTRUDNICHESTVA\\_MEZHDU\\_SPECSLUZHBAMI\\_AZEBAYDZHANA\\_I\\_TURCIJ-660720](https://azertag.az/ru/xeber/OBSUZHDENY_VOPROSY_RASSHIRENIYA_SOTRUDNICHESTVA_MEZHDU_SPECSLUZHBAMI_AZEBAYDZHANA_I_TURCIJ-660720). Спецслужбы Азербайджана и Турции обсудили перспективы сотрудничества, 07.02.2011, <http://armtoday.info/default.asp?Lang=RU&NewsID=38597>. Глава МІТ совершил визит в Азербайджан, 08.10.2015, <http://anadolujaman.gov.tr/ru/xeber/ylava-mit-soverшил-vizit-v-azerbaydzhan/436608> (ընդունելի արված են 04.07.2017 թ.):

բայրներին օգնելու համար ավելի շատ բան կկարողանար անել: Լա էշել է, որ 1990-ականներին, այսօրվա հզորությունն ունենալու դեպքում, չէր լինի Ղարաբաղյան հարցը:

Բազմաթիվ փաստեր կան նաև այն մասին, որ Թուրքիան Ադրբեջանին տարբեր միջազգային հարթակներում օգտագործել է Հայոց ցեղասպանության վերաբերյալ քննարկվող հարցերում:

Վերոգրյալը վառ ասպացույցն է այն բանի, որ Ադրբեջանը մշտապես օգտագործվել և օգտագործվում է Թուրքիայի կողմից՝ իր արտաքին-քաղաքական խնդիրները նաև եղբայրակից այդ պետության միջոցով լուծելու նպատակով՝ միաժամանակ շատ հարցերում, այդ թվում՝ հատուկ ծառայությունների գործունեության ոլորտում, Թուրքիան սերտորեն համագործակցում է Ադրբեջանի համապատասխան կառույցների հետ:

Այսպիսով, կարելի է փաստել, որ Ադրբեջանի հատուկ ծառայությունների հատկապես հետախուզական ու դիվերսիոն-հետախուզական ստորաբաժանումները հրահանգավորված են Հայաստանի և Արցախի դեմ իրականացնել տարատեսակ քայքայիչ գործողություններ, հետախուզա-տեղեկատվական, դիվերսիոն-հետախուզական և Հայաստանի ու Արցախի անվտանգությանը վնասող այլ քայքայիչ գործունեություն: Եվ էթե Հայաստանի ու Արցախի ազգային անվտանգության մարմիններն ու զինված ուժերը թուլացնեն զգոնությունն ու չբացահայտեն, չկանխեն ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից նախապատրաստվող ու պլանավորվող քայքայիչ ակցիաները, սադրիչ գործողություններն ու դիվերսիաները, ապա խստորեն կվտանգվի հայ ժողովրդի անվտանգությունը, ինչպես վտանգվեց, երբ, հետախուզական գործունեությամբ ձեռք բերված հավաստի և ոչ հավաստի տեղեկատվությունը փորձելով օգտագործել, ադրբեջանական բանակը 2016 թ. ապրիլի 2-ից 5-ը բացահայտ պատերազմական ու ահաբեկչական գործողություններ իրականացրեց Արցախի դեմ:

#### 4.4. Աղբրեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների կողմից համացանցի միջոցով Հայաստանի և Արցախի դեմ իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեության որոշ առանձնահատկությունների շուրջ

Ներկայումս աշխարհում ընթացող զարգացումները գալիս են վկայելու տեղեկատվական պատերազմի կարևոր նշանակության մասին՝ այն դարձնելով արտաքին քաղաքականության կարևորագույն բաղադրիչներից մեկը: Համացանցը հնարավորությունների և մարտահրավերների ունիվերսալ համակարգ է, որը մեր օրերում դարձել է քարոզչական և հակաքարոզչական աշխատանքների իրականացման, հետախուզական-քայքայիչ գործունեության ծավալման կարևորագույն միջոց: Հատկանշական է, որ այդ խնդրով դեռևս XX դարի վերջերից զբաղվում է ԱՄՆ պաշտպանության ազգային ինտիտուտը, որի կողմից 1995 թ. հրատարակած «Ինչ է տեղեկատվական պատերազմը» աշխատության մեջ խոսվում է տեղեկատվական պատերազմների յոթ տարատեսակների մասին: Դրանք են.

1. հրամանատարական-կառավարչական,
2. հետախուզական,
3. հոգեբանական,
4. հակերային,
5. տնտեսական,
6. էլեկտրոնային,
7. կիրևոպատերազմ<sup>506</sup>:

XXI դարի սկզբներին համացանցի լայնորեն տարածման պայմաններում աշխարհի առաջատար հատուկ ծառայություններն իրենց հետախուզական գործունեության մեջ սկսեցին լայնորեն կիրառել հենց համացանցը: Մասնավորապես, ռուսաստանյան մամուլում 2005 թ. եղան հրապարակումներ, որ բրիտանական հետախուզությունը սկսել է հավաքագրումներ իրա-

<sup>506</sup> Դենոյան Հ., Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, [http://www.noravank.am/upload/pdf/76\\_am.pdf](http://www.noravank.am/upload/pdf/76_am.pdf) (նդումն արված է 18.02.2015 թ.):

կանացել համացանցի միջոցով<sup>571</sup>: Լման տիպի հավաքագրումները լայնորեն տարածված են հատկապես ծայրահեղականների շրջանում, որոնք հիմնականում հավաքագրում են մահապարտ-մարտիկների: Այսօր աշխարհի տարբեր ծայրերում նմանատիպ հավաքագրումներ իրականացվում են «Իսլամական պետության» կողմից: ՌԴ Ազգային հակաահաբեկչական կոմիտեի ներկայացուցիչ Անդրեյ Պրժեզդոմսկին հայտարարել է, որ համացանցն ահաբեկչական խմբավորումների անդամների հավաքագրման միջոց է դարձել<sup>572</sup>: Ամերիկյան հատուկ ծառայությունները ակտիվորեն գործում են Facebook, Twitter, MySpace, LinkedIn սոցիալական ցանցերում<sup>573</sup>: ԱՄՆ-Չինաստան «հետախուզական մրցավազքի» պայմաններում ներկայումս մեծ դերակատարում ունի ոչ միայն մարդը, այլ նաև համակարգիչը: Հաճախակի փոխադարձ ձեռքակալություններ են տեղի ունենում ԱՄՆ-ում և Չինաստանում՝ միմյանց մեղադրելով սոցիալական ցանցերում հավաքագրումներ իրականացնելու մեջ: Համացանցում գրանցված 15 % օգտատերերը համացանցը օգտագործում են լրտեսության համար (հատուկ ծառայությունները արդեն վաղուց են նման գործունեություն ծավալում, բացի այդ տարաբնույթ շատ խմբավորումներ համացանցի միջոցով հավաքագրում են մարդկանց):

Արժարժվող թեմատիկան ուսումնասիրել են քավական թվով հետազոտողներ, որոնց թվում են ռուս հայտնի ծրագրավորող, հակավիրուսային անվտանգության մասնագետ, «Կասպերսկի լաբորատորիայի» հիմնադիր Եվգենի Կասպերսկին, ամերիկացի հայտնի համակարգչային մասնագետ Ջոել Մակնամարան (վերջինիս հայտնի աշխատություններից են «Համակարգչային լրտեսության գաղտնիքները», «Համակար-

<sup>571</sup> Бусигин А., Британская разведка теперь вербует через Интернет, <http://www.utro.ru/articles/2005/10/13/485702.shtml> (նղումն արված է 18.02.2015 թ.):

<sup>572</sup> Համացանցը՝ ահաբեկիչների հավաքագրման միջոց, <http://operativ.am/?p=104104&l=am/hamacency%D5%9D+ahabekichneri+havagagrgan+mijoc+> (նղումն արված է 19.02.2015 թ.):

<sup>573</sup> Ամերիկյան հատուկ ծառայությունները ակտիվորեն գործում են սոցիալական ցանցերում, <http://news.am/arm/news/16998.html> (նղումն արված է 20.02.2015 թ.):

գիշերը և ծրագրեր», «Համակարգչային գրականություն» և այլն), իսկ «ղարաբառյան հիմնախնդրի» մասով ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Աթանեսյանը<sup>574</sup>, «Լորավանք» գիտակրթական հիմնադրամը<sup>575</sup>, տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը<sup>576</sup> (հեղինակ է տասնյակ հոդվածների):

Ժամանակակից տեխնիկական զարգացած դարաշրջանում տեղեկատվություն ստանալն ու տարածելն բավական հեշտացել է: Եթե ընդամենը տարիներ առաջ հատուկ մարտավարություն, հստակ և հատուկ գիտելիքներ էին հարկավոր հակառակորդի մասին կարևոր ու փակ տեղեկություններ հայթայթելու համար, ապա այսօր համացանցը հնարավորություն է տալիս նոր մեթոդներով ու ձևերով, անգամ վիրտուալ, իրականացնել ինչպես հավաքագրումներ, այնպես էլ անհրաժեշտ տեղեկատվության ձեռքբերում: Միայն «Վիկիլիքսի» հիմնադիր Ջուլիան Ասանժը, տարբեր գնահատականներով, բացահայտել է ԱՄՆ պետդեպարտամենտի ավելի քան 250.000 գաղտնի փաստաթուղթ (2015 թ. դրությամբ)<sup>577</sup>: Ռուսաստանյան «Կասպերսկի» տեղեկատվական անվտանգության կազմակերպությունը պարզել է, որ եվրոպական այն երեք երկրների հյուրանոցներում, որտեղ «Միջուկային ծրագրի շուրջ» բարձր մակարդակի բանակցություններ են անցկացվել Իրանի հետ, համակարգչային

<sup>574</sup> Աթանեսյան Ա., Համացանցը որպես ԼՂՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ, Լորավանք ԳՎՀ, 21-րդ դար, Եր., 2013, թիվ 6 (52), էջ 35-61:

<sup>575</sup> Աղբրեցանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Լորավանք ԳՎՀ, Եր., 2009:

<sup>576</sup> Մարտիրոսյան Ս., Անձևական կիրքանվտանգության հիմունքներ, Եր., Լորավանք ԳՎՀ, 2016, 62 էջ: Աղբրեցանական հարկերնրը թիրախավորում են հայ օգտատերերին, 29.03.2017, [http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT\\_ID=15580](http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=15580) և այլն:

<sup>577</sup> Энгдаль Уитлам Ф., Wikileaks - опасное злоупотребление доверием, <http://www.warandpeace.ru/ru/exclusive/view/53593/>(նդումն արված է 18.02.2015 թ.):

ցանցում (ներառյալ WiFi կայք) ներդրված է եղել հետախուզական լրտեսող ծրագիր<sup>598</sup>:

Հայաստանի և Արցախի դեմ այս տիպի տեղեկատվական պատերազմի են լծվել ներկայիս Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունները փորձելով իրականացնել հետախուզական-քայքայիչ գործունեություն:

Ինչպես փորձել ենք ցույց տալ աշխատության այս ենթազիխում, Ադրբեջանի հատուկ ծառայությունները, տիրապետելով հետախուզության ընդամենը պարզ ու հասարակ մեթոդներին, իրենց հետախուզական-քայքայիչ գործունեության համար որպես միջոց օգտագործում են հիմնականում համացանցը: Այս թեզը հավաստելու համար բերենք մի քանի օրինակներ:

ՀՀ ԱԱԾ կողմից բացահայտված առաջին դեպքը, որտեղ Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից օգտագործվել է համացանցը, եղել է 2011 թ. հունիսի 23-ին ձերբակալված Կարեն Մևիրաբյանի վերաբերյալ քրեական գործը<sup>599</sup>: Վերջինս օգտագործում էր «agent.mail.ru» սոցիալական կայքը:

Հաջորդ քրեական գործը վերաբերում է Մանե Մովսիսյանին, որը, հանդիսանալով ՀՀ ՊՆ զորամասերից մեկի աշխատակից, համացանցի միջոցով ոչ միայն ռազմական բնույթի գաղտնի տեղեկություններ է փոխանցել պատվիրատուներին, այլև ներքաշվել համագործակցության մեջ<sup>600</sup>:

Այսպես, ըստ ՀՀ Մյունիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի վճռի, 2012 թ. հունվարի 8-ին Կապան քաղաքի 31-ամյա բնակչուհի Մանե Մովսիսյանը «odnoklassniki.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով «Տիգրան Դերվիշյան» տվյալներով օգտատիրոջ հետ, նրան է փոխանցել իրեն հասանելի տեղեկությունները, որոնք կարող էին օգտագործվել Հայաստանի Հանրապետությունն ու ՀՀ Ձինված ուժերը վարկաբեկելու նպատակով: Ջորամասում աշխատելու ընթացքում Մ.

<sup>598</sup> Իսլայելը լրտեսել է այն կորուսանցների համակարգչային ցանցերը, որոնցում բառակցել են Իրանի հետ, <http://razm.info/65670> (հղումն արված է 20.02.2015 թ.):

<sup>599</sup> <http://www.ana.am/index.php/am/news/173-23072011>, ՀՀ ԱԱԾ պաշտոնական կայքէջը (հղումն արված է 22.02.2015 թ.):

<sup>600</sup> Հայաստանի ԱԱԾ-ն լրտեսության համար ձերբակալել է կին զինծառայողի, <http://news.am/arm/news/159626.html> (հղումն արված է 08.03.2015 թ.):



Մովսիսյանը համացանցի միջոցով Ադրբեջանի հատուկ ծառայության աշխատակիցներին է փոխանցել նաև ծառայության բերմամբ իրեն հայտնի դարձած տեղեկությունները, որոնք հանդիսացել են ռազմական բնագավառի պետական գաղտնիք<sup>581</sup> և դրանց օգտագործումը կարող էր ծանր հետևանքներ ունենալ ՀՀ անվտանգության համար<sup>582</sup>:

Մ. Մովսիսյանը դատապարտվել է 6 տարի 6 ամիս ժամկետով ազատազրկման<sup>583</sup>:

Նույն 2012 թ. հուլիսին, կրկին «odnoklassniki.ru» սոցիալական ցանցի միջոցով ծանոթանալով Թուրքիայի Մտամբուլ քաղաքում բնակվող, սփյուռքահայ կազմակերպության անդամներ կայացած ունի Մամվել Ազատյանի հետ, Արցախի քաղաքացիներ, ՊԲ պայմանագրային զինծառայող Ռաֆայել Ավագյանն ու «Արցախագագ» ընկերության հսկիչ Դավիթ Բաբսեդյանը համագործակցել են ադրբեջանական հետախուզության աշխատակիցներին հետ և համապատասխան գումարների ու նվերների դիմաց Արցախի տարածքում հավաքել երանց հետաքրքրող պետական գաղտնիք հանդիսացող բազմաբնույթ տեղեկություններ, լուսանկարներ, որոնց մի մասը «Skype» տեսաձայնագրի միջոցով փոխանցել են «պատմիրատուներին»:

Համացանցային գիտելիքի պակասի պատճառով այսօր սոցիալական ցանցերի սովորական օգտատերը, որն ընկնում է օտարերկրյա հատուկ ծառայությունների տեսադաշտ և ակամա դառնում թիրախ, սկզբնական շրջանում չի էլ պատկերացնում, թե հնարավոր է իր զրուցակիցը հանդիսանում է հատուկ ծառայության աշխատակից, իսկ սովորական ու առօրյա թվացող խոսակցությունը կարող է վերաճել պետական դավաճանության: Այսպես, ադրբեջանական հետախուզության աշխատակիցը

<sup>581</sup> Սարգստայն, Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից համացանցի միջոցով իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեության վերաբերյալ փաստավավերագրական ֆիլմը, <https://www.youtube.com/watch?v=DRn2J2TUAHM> (հղումն այսօրված է 10.06.2015 թ.):

<sup>582</sup> Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Կասպան, Մյունխենի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, 29 նոյեմբերի 2013 թ., թիվ ՄՆ/0202/01/13/:

<sup>583</sup> Նույն տեղում:

հայազգի օգտատիրոջ անուն-ազգանունով, ՀՀ ազգային հերոսների նկարներով զարդարված սոցիալական կայքով մուտք է գործում Հայաստանի և Արցախի տարբեր գործառնական անվանումներով բացված ինտերնետային խմբերի մեջ կամ զինվորական համագեղատվ պատկերված անձանց էջ և ժարգոնային հայերենով սկսում խոսակցությունը՝ փորձելով տեղեկություններ ստանալ ծառայության վայրի, դիրքերի, զենքերի, հրամանատարների վերաբերյալ<sup>584</sup>:

Ու նմանատիպ բովանդակությամբ գրույց վարվում է բազմաթիվ օգտատերերի հետ, որոնց մի մասը, հասկանալով խոսքը ինչի մասին է, հետ է կանգնում, մի մասը, չհասկանալով, շարունակում է պատմել իր գործառնական վերաբերյալ ինչ հիշում է, մի փոքր հատվածն էլ, ովքեր պատրաստ են գումարի դիմաց վաճառել հայրենիքը, արդեն հասկանալով և ստանալով ֆինանսական մեծ աջակցության առաջարկ՝ ներքաշվում են պետական դավաճանության մեջ:

Վերոգրյալի հավաստիությունը փաստելու համար հղում կատարենք ՀՀ ԱԱԾ մամուլի տարածած հաղորդագրություններին, համաձայն որոնց, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները «odnoklassniki. ru» սոցիալական ցանցում գրանցում են հայկական տվյալներով կեղծ էջեր, ներկայանում որպես Հայաստանի կամ Արցախի զինված ուժերի զինծառայողներ՝ փորձելով ՀՀ քաղաքացիների հետ նամակագրական կապեր հաստատելով կորզել տեղեկատվություն: Մասնավորապես, ՀՀ ԱԱԾ կողմից բացահայտվել են «odnoklassniki. ru» սոցիալական ցանցում ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից գործադրված հետևյալ հետախույզ-օգտատերերով կեղծ էջերը. «Seyran Dervishyan», «S Dr», «Tigran Dervishyan», «Seyran Derv», «S.S.», «Vazgen Kirakosyan» «Samvel Samvel», «U U», «Арте́м Ару́тюков», «Albert Mnacakanyan», «A M», «Ruben Hayrapetyan», «Gevorg Saroyan», «Alik Mesropyan», «Sergey Karapetyan»<sup>585</sup>,

<sup>584</sup> Սարգոստայն. ... նույն ֆիլմը:

<sup>585</sup> ՀՀ ԱԱԾ-ի ադրբեջանցի նկատառումների է բացահայտել Odnoklassniki.ru կայքի միջոցով, [http://telecom.arka.am/am/news/internet/betaxuyner\\_odnoklassniki\\_ru/](http://telecom.arka.am/am/news/internet/betaxuyner_odnoklassniki_ru/) (հղումն արված է 25.03.2015 թ.):

«Hovik Margaryan», «Edgar Minasyan», «Rafik Tovmasyan», «Norik Barsegyan», «Norik Margaryan» և այլն<sup>366</sup>:

2015 թ. դեկտեմբերի 4-ին ձերբակալվել է նաև ՀՀ քաղաքացի, Արմավիրի մարզի բնակիչ, պահեստագործի մայր Գարիկ Մարությանը, որը, երկար տարիներ զբաղեցնելով ՀՀ ՊՆ տարրեր գործաձևների հետախուզության պետի պաշտոններ, նույն սոցիալական կայքերի միջոցով կապ է հաստատել Թուրքիայում գործող ադրբեջանական հատուկ ծառայությունների հետ և վարձատրության դիմաց նրանց փոխանցել ծառայության բերումով իրեն հայտնի դարձած, այդ թվում՝ պետական գաղտնիք պարունակող տվյալներ<sup>367</sup>: Գ. Մարությանը 2015 թ. հուլիս ամսի սկզբներից համացանցի «odnoklassniki.ru» սոցիալական ցանցում հանդես գալով «M.G.X» կայքէջով, ծանոթացել է «Vazgen Kirakosyan» տվյալներով հանդես եկող և Թուրքիայում գործունեություն ծավալած Ադրբեջանի հետախուզական ծառայությունների աշխատակցի հետ և 700 ԱՄՆ դոլար գումարի ու մեկ հեծանիվի դիմաց նրան փոխանցել իրեն հասանելի տեղեկություններ, որոնք կարող էին օգտագործվել Հայաստանի Հանրապետությունն ու զինված ուժերը վարկաբեկելու նպատակով<sup>368</sup>:

Մտացվում է, որ ադրբեջանական հատուկ ծառայությունները փորձում են Հայաստանի և Արցախի զինված ուժերի վերաբերյալ հավաքել նաև վարկաբեկիչ նյութեր, որոնք հավանաբար օգտագործում են ներքին և արտաքին լսարանի համար, այսպես կոչված, ի ցույց դնելու ՀՀ զինված ուժերում «առկա» արատավոր երևույթները:

Համացանցի միջոցով ադրբեջանական հատուկ ծառայությունների կողմից հետախուզական-քայքայիչ այլ գործունեության փորձեր նս իրականացվում են: Մասնավորապես, ադրբեջանական հաքերները, հիմնականում Ադրբեջանի կամ Հայաս-

<sup>366</sup> ԱԱԾ-ն բացահայտել է Օդեսկասիկի կայքում գրանցված ադրբեջանական հատուկ ծառայությունների օգտատերերին, <http://mick.am/2015/05/տած-ն-բացահայտել-է-օդեսկասիկի-կայք/> (նդումն արված է 28.03.2015 թ.):

<sup>367</sup> ՀՀ ԱԱԾ մամուլի կենտրոնի հաղորդագրությունը, 09.12.2015 թ., <http://www.ans.am/index.php/am/news/295-09122015> (նդումն արված է 22.12.2015 թ.):

<sup>368</sup> Պետական դավաճանություն՝ 700 ԱՄՆ դոլարի և հեծանիվի դիմաց, <http://www.postinfo.am/hy/node/93034> (նդումն արված է 27.03.2016 թ.):

տանի ու Արցախի տոների, հիշատակի օրերի նախօրյակին փորձում են կոտրել պետական հիմնարկների, տարբեր գերատեսչությունների, մասնավոր ընկերությունների կամ ուղղակի հասարակ օգտատերերի կայքեր, սոցիալական էջեր<sup>99</sup>։ Աղբրեջանական հատուկ ծառայություններն իրենց ղեկավարության տակ են վերցրել զանազան հաքերային խմբեր, որոնք գտնվում են ինչպես Աղբրեջանում, այնպես էլ այդ երկրի սահմաններից դուրս։ Որպես նման համակարգի ստեղծման սկիզբ կարելի է ընդունել 2005 թ. գարունը, երբ հարձակումները հայկական կայքերի վրա սկսեցին նկատելիորեն ուժեղանալ<sup>99</sup>։

Այսպես, միայն 2014 թ. ընթացքում Աղբրեջանի և Թուրքիայի տարածքներից իրականացվել է նմանատիպ 1 մլն հաքերային հարձակում, ՀՀ պետական մարմինների համացանցային համակարգ վիրուսային, վնասաբեր ծրագրերի ներդրման 115 փորձ։ Աղբրեջանական տարբեր կառույցների պատվերով նման խտրամարար հարձակումներ իրականացվել են նաև այլ երկրների տարածքներից<sup>99</sup>։ Կիրևանվտանգության ոլորտում, բացի Թուրքիայից, Աղբրեջանը համագործակցում է նաև Իսրայելի հետ<sup>99</sup>։

Բացի վերագրյալից, աղբրեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները կամ նրանց գործակալները, ցանկանալով հեղինակագրկել հայազգի այս կամ այն հասարակական-քաղաքական գործչին, կամ հայտնի քաղաքագետի, պատմաբանի, ով հեղինակություն է վայելում համաշխարհային գիտական ասպարեզում և զբաղվում է աղբրեջանական կեղծ քառզույթյան բացահայտումներով, համացանցով վերջինիս վե-

<sup>99</sup> Մարտիրոսյան Ս., Կիրևրևոյի հարումներ Հայաստանի և Աղբրեջանի միջև իրավիճակի զարգացման դինամիկան, <http://theanalyticon.com/?p=4580> (նդումն արված է 25.06.2015 թ.):

<sup>99</sup> Աղբրեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Լոբավանի ԳԳՀ, եր., 2009, էջ 83:

<sup>99</sup> ՀՀ ԱԱԾ մարմինների աշխատակցի օրվա առթիվ ՀՀ ԱԱԾ տնօրեն Գ. Գ. Հակոբյանի ելույթը, 18.12.2015 թ., <http://www.sns.am/index.php/am/news/296-181-22015> (նդումն արված է 18.02.2016 թ.):

<sup>99</sup> Alexander Marinson, The Ties Between Israel and Azerbaijan, Mideast Security and Policy Studies No. 110, p. 26, <https://basscenter.org/wp-content/uploads/2014/10/MSPS-110-web.pdf> (նդումն արված է 20.02.2017 թ.):

քաբերյալ տարածում են կեղծ տեղեկատվություն՝ նրան մեղադրելով ՀՀ հատուկ ծառայությունների հետ համագործակցության և ՀՀ հատուկ ծառայությունների գործակալ լինելու մեջ:

«Առանց Բաքվի թույլտվության» Արցախի Հանրապետություն այցելող անձանց համար հատուկ մշակած «սև ցուցակը»<sup>393</sup> ևս վարում են Ադրբեջանի հատուկ ծառայությունները համագործակցելով ԱԳՆ հետ<sup>394</sup>:

«Համացանցային լրտեսությունը» այսօր օգտագործվում է գրեթե բոլոր, հատկապես հակամարտության մեջ գտնվող կամ «մրցակից» (конкурент) երկրների հատուկ ծառայությունների կողմից: Ադրբեջանական հատուկ ծառայությունները ևս մեծ ջանքեր են գործադրում Հայաստանի և Արցախի դեմ համացանցային լրտեսություն կամ հետախուզություն իրականացնելու նպատակով, ինչը ընդհանուր հաշվով տեղավորվում է Ադրբեջանի ռազմաքաղաքական դեկավարության սպակառուցողական, «Ղարաբաղյան հիմնախնդիրը» ուժի կիրառմամբ լուծելու սին պատրանքների շրջանակում:

Ադրբեջանի Հանրապետության հատուկ ծառայությունների ողջ համակարգը ներկայումս հայկական երկու հանրապետությունների դեմ լծված է թշնամական՝ դիվերսիոն-հետախուզական ու այլ քայքայիչ գործունեությանը, ինչն իրականացվում է բոլոր ուղղություններով՝ սկսած տեղեկատվական-հոգեբանական գրոհներից, վերջացրած հայ-ադրբեջանական գործերի շփման

<sup>393</sup> «Բաքվի սև ցուցակ» անվանումն ստացած ցանկում հայտնվում են այն մարդիկ, ովքեր սկսած 2005 թ.-ից Արցախ ևն այցելել «առանց Բաքվի թույլտվության»: Ադրբեջան մուտք գործելն արգելող պերտոնա ևս զրատա ցուցակում ընդգրկված են տարբեր երկրների խոհրդագրանների անդամներ, գործարարներ, լրագրողներ, արվեստագետներ և այլ հանրածանոթ մարդիկ: Նրանք մեղադրվում են Ադրբեջանի տահանները խախտելու և երկրի «ազգային ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը» չհարգելու մեջ: Իրականում այս գործելաոճը մեծ վնաս է հասցնում ոչ թե Արցախին, այլ հենց Ադրբեջանին, որի վատ ավացույցը զրտաշրջիկների, լրագրողների, բլոգերների, տարբիք քաղաքական գործիչների ու գործարարների այցելի տարեցտարի ավելացումն է Արցախի Հանրապետության տարածք:

<sup>394</sup> В Азербайджане «черный список» иностранных журналистов бюджет курирует МНС, 02.11.2015, <http://www.yerkranas.org/article/97349/v-azerbajdzhane-chernyy-spisok-inostrannyx-zhurnalistov-budet-kurirovat-mnb> (նրումս արված է 28.02.2016 թ.):

գծում դիվերսիոն-հետախուզական ակցիաներով ու Հայաստանի, Արցախի վերաբերյալ ռազմական, քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական բնույթի տեղեկություններ հավաքելով:

#### 4.5 Հայաստանի և Արցախի դեմ Ադրբեջանի դիվերսիոն-հետախուզական գործունեության որոշ դրվագներ

Դիվերսիան<sup>998</sup> օտարերկրյա հատուկ ծառայությունների կամ այլ զինված խմբավորումների քայքայիչ գործունեության ամենավտանգավոր ձևերից է, որի նպատակն է թուլացնել հակառակորդ երկիրը, քայքայել նրա քաղաքական, տնտեսական, գիտատեխնիկական կամ ռազմական բնագավառները, ինչպես նաև բացասական հոգեբանական ազդեցություն ունենալ հասարակության վրա: Դիվերսիոն-հետախուզական կազմավորումների (ՂՀԿ) թիրախ կարող են հանդիսանալ ռազմական և տնտեսական կարևորագույն օբյեկտները՝ ԱԿԿ-եր, ՀԷԿ-եր, գործարաններ, թունելներ, կամուրջներ, ամբարտակներ, ավտոտրանսպորտային, երկաթուղային, ավիացիոն և կապի հանգույցներ, էներգայաններ, բարձր լարման գծեր և այլն: Առանձնապես վտանգավոր են քիմիական, կենսաբանական, ճառագայ-

<sup>998</sup> «Դիվերսիա» եզրն ունի երկու հիմնական բացատրություն. 1. Ռազմական կողմնակի գործողություն թշնամու ուշադրությունը գլխավոր հարվածի ռազմաբեմից հեռացնելու նպատակով, 2. Ռազմական և արդյունաբերական կարևոր օբյեկտների պայթեցում, հրկիզում, ավերում և այլն ներքին թշնամիների կամ ուրիշ պետությունների գործակալների կողմից, նաև խափանարարություն, տե՛ս Աղայան Էդ., Արդի հայերեն բացատրական բառարան, Եր., 1976, հատոր 1, էջ 301: Իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 303-րդ հոդվածով դիվերսիան սանտանովում է հետևյալ կերպ. «Պետությունը թուլացնելու նպատակով պայթյուններ, հրկիզումներ կամ այլ գործողություններ կատարելը ուղղված մարդկանց զանգվածային ոչնչացմանը, նրանց առողջությանը վնաս պատճառելուն, կազմակերպությունների, կառույցների, հաղորդակցության ճանապարհների կամ միջոցների, կապի միջոցների կամ այլ գույքի ավերմանը կամ վնասմանը, կամ զանգվածային թունալուրմաներին կամ համաճարակների կամ անասնա-համաճարակների տարածմանը», Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքը, հոդված 303, <http://www.parliament.am/legislation.php?sel-show&ID=134994> (հղումն արված է 25.03.2016 թ.):

թային և միջուկային նշանակություն ունեցող օբյեկտների նկատմամբ իրականացնող դիվերսիոն գործողությունները:

Դիվերսիան երբեմն նույնացվում է ահաբեկչության հետ, քանի որ այն ևս ուղղված է հակառակորդի առավելագույն զգացմունքային ճնշմանը, երա մտ վախի և սարսափի զգացողության, խուճապային տրամադրությունների առաջացմանը, առանձին անձանց մտ ինքնափրկության, ինքնապաշտպանական բնագոյի առաջացմանը և որպես հետևանք, երանց կողմից ասոցիալական վարքի դրսևորմանը՝ գերի հանձնվելուն, մարտական դիրքերը լքելուն և այլն<sup>306</sup>:

Գիտության և տեխնիկայի զարգացմանը զուգընթաց ի հայտ են գալիս նոր ուղորտներ, որտեղ դիվերսիան կարող է վնասել հավանական հակառակորդին, մասնավորապես խաթարել տեղեկատվական ցանցերի, տեղեկատվության մշակման կենտրոնների, գորքերի մեքենայացված կառավարման, ֆինանսական համակարգերը և այլն:

Պատերազմական վիճակում գտնվող կամ հակամարտություն կողմ հանդիսացող երկրների համար ՂՀԿ-ների գործունեության հիմնական խնդիրն է կաթվածահար անել բանակի, պետական կառավարման մարմինների գործունեությունը, բարոյալքել հասարակությանը:

Ռազմական գործողությունների գոտում հարձակման թիրախ կարող են լինել գորքերի կառավարման և ապահովման կենտրոնները (շտաբներ, կապի հանգույցներ և վերահաղորդող կետեր), օդանավակայանները և թոխյքա-վայրեցքային ուղիները, կամուրջները, երկաթգծի տեղամասերը և հանգույցները, տրանսպորտային միջոցները, թիկունքային ապահովման բազաները: Հետախուզման տեսանկյունից ՂՀԿ-ների գործունեության օբյեկտներ կարող են հանդիսանալ նաև գորքերի կառուցվածքը, պաշտպանական շրջանները, տեղաշարժը և այլն:

Դիվերսիոն-հետախուզական գործողության նպատակներն ու խնդիրները կարելի է դասակարգել հետևյալ կերպ.

- հետախուզում,

<sup>306</sup> Պեղոսյան Ի., Հոգեբանական պատերազմ. հիմնական գործոնները, Եր., Ջանգակ-97, 2009, էջ 169:

- դիվերսիայի իրագործում,
- ահաբեկչական ակտերի իրականացում,
- ապստամբական ելույթների կազմակերպում,
- գերության մեջ գտնվող զինծառայողներին աջակցում,
- հատուկ օպերացիաների և առանձին միջոցառումների իրագործում (պետական, քաղաքական, հասարակական գործիչների, զինվորական ղեկավար անձանց, զիտնականների առևանգում, վնասում, սպանություն և այլն),
- մարտական գործողությունների գոտում սեփական ուժերին աջակցում,

- օդադեսանտային օպերացիաների ապահովման՝ հետախուզական տեղեկությունների հավաքում, դեսանտավորման շրջանի մեկուսացում, դեսանտային ջոկատների ընդունում:

ՂՀԿ-ների գործունեության մեջ կարելի է առանձնացնել չորս փուլ.

1. նախապատրաստում,
2. անցում էլակետային բազավորման շրջանից հակառակորդի թիկունք կամ ՂՀԿ-ի գործողությունների իրականացման շրջան,
3. դիվերսիոն-հետախուզական գործողության իրականացում,
4. վերադարձ էլակետային շրջան<sup>397</sup>:

ՂՀԿ-ների մարտավարության հիմքը կազմում են ծպտյալ և բացահայտ գործողությունները:

Բացահայտ գործողությունների շարքին են դասվում մարտարշավները, դարանակալումները, սահմանափակ զրոհները, պաշտպանությունը, դիվերսիոն և ահաբեկչական բնույթի գործողությունները, զինված թալանը, սադրիչ (պրովակացիոն) գործողությունները, բռնարարքները, պատանդներ վերցնելը, հրկիզումները և այլն:

Ծպտյալ գործողությունները բնութագրվում են օպերացիաների գաղտնի իրագործմամբ՝ լրտեսություն, թշնամական, քարոզչության իրականացում և կեղծ լուրերի տարածում, քի-

<sup>397</sup> Теория специальных операций, Содержание «Военная Литература», [http://militera.lib.ru/science/kvachkov\\_vv/03.html](http://militera.lib.ru/science/kvachkov_vv/03.html) (նդումն աքված է 13.09. 2016 թ.):



միական թունավոր նյութերի և մանրէաբանական միջոցների օգտագործում, փաստաթղթերի գողություն և կեղծում, ահաբեկչության թիրախների հայտնաբերում և պարզաբանում<sup>996</sup>:

Աղբբեջանական հատուկ ծառայությունները, դրանց կողմից ստեղծված ԴՀԿ-ները Հայաստանի և Արցախի դեմ իրականացրել և ներկայումս էլ փորձում են իրականացնել դիվերսիոն-հետախուզական գործունեության գրեթե բոլոր ձևերն ու տեսակները: Ըստ այդ ձևերի ու տեսակների՝ «Լարաբադյան հիմնախնդիրը» կարելի է պայմանականորեն բաժանել փուլերի: Այսպես, ռազմական գործողությունների սկզբնական փուլում (1992-1994 թթ.) աղբբեջանական դիվերսիոն-հետախուզական խմբերի բաղկացուցիչ մասը կազմված էր վարձկաններից աֆղանական մոջահեդներից, չեչեն գրոհայիններից, ուկրաինական ազգայնականներից և այլն: 1993 թ. օգոստոս-սեպտեմբեր ամիսներին դարաբադյան ճակատի բոլոր տեղամասերում ռազմական գործողություններին արդեն մասնակցում էին 1500 մոջահեդներ, որոնց հատուկ օգտագործում էին հետախուզական-դիվերսիոն գործողություններում, առաջապահ գրոհային ստորաբաժանումներում, ինչպես նաև աղբբեջանական բանակի թիկունքում արգելափակիչ ջոկատներ ձևավորելու նպատակով: Աֆղան վարձկանները մինչ ռազմական դիրքեր ուղարկվելը հավաքվում էին Գերան և Էրզի բնակավայրերի ուսումնական կենտրոններում: Աղբբեջանի ՋՈՒ կազմում նրանք հաշվառված էին որպես «հատուկ համակազմ» («հատուկ կոնտինգենտ»), իսկ ռազմական ստորաբաժանումներում գրանցված էին «A ջոկատ» անվան տակ: Աֆղան վարձկանների ընդհանուր հրամանատարությունը իրականացնում էր ծագումով տաջիկ «գեներալ» Սամուելը: Մյուս հրամանատարներից էին Վահադուլլան, Ախիջերին, Վազերին, Խոջա-Մալիքը:

1994 թ. զինադադարի կնքումից հետո օգոստոս-սեպտեմբեր ամիսներին աֆղանական վարձկանները Իրանով դուրս բերվեցին Աղբբեջանից<sup>996</sup>:

<sup>996</sup> Լույն տեղում:

<sup>997</sup> Աղաջանյան Մ., Առատրյան Է., Մինարյան Ս., Եզվ. աշխ., էջ 124, և այլն:

Կան դարաբաղյան ռազմաճակատում աֆղանցի վարձկանների մասնակցությունը հաստատող բազմաթիվ փաստեր ու իրեր են ապացույցներ նկարներ, Աֆղանստանի պաշտոնական լեզուներով թերթեր, գրականություն, քարտեզներ, նոթատետրեր: Պահպանված է նաև Ադրբեջանի ՊՆ դարաբաղյան ռազմաճակատի շտաբի պետի՝ 1993 թ. օգոստոսի 15-ի գրությունը՝ ուղղված թիվ 160 զորամասի հրամանատարին 522 հոգուց կազմված «աֆղանցիներին» ընդունելու վերաբերյալ, ինչպես նաև 1994 թ. ապրիլի 22-ին Հ. Ալիևի և ճակատի հրամանատարներից մեկի միջև տեղի ունեցած ռադիոգրույցի վերձանման քաղվածքը, որտեղ վերջինս հայտնում է, թե խնդիր է ունեցել աֆղանցիների, մասնավորապես նրանց հրամանատար Կահադուլլահի հետ<sup>600</sup>: Աֆղան վարձկանների շարքերում եղել են նաև «վահաբի-մարտիկներ»<sup>601</sup>:

Ամերիկյան լրագրող Թոմաս Գուլցի խոսքերով՝ աֆղան վարձկաններին Ադրբեջան տեղափոխելու գործընթացին մասնակցել են ամերիկյան զինծառայողներ, որոնք նախկինում հաշվառված են եղել ԱՄՆ հատուկ նշանակության զորամիավորումներում և ներգրավված են եղել «Իրան-Կոնտրաս» հայտնի սկանդալում<sup>602</sup>: 1994 թ. աֆղան մոջահեդների բրիգադը հայկական զինված ուժերի դեմ մարտերում կրեց պարտություն՝ տալով բազմաթիվ մարդկային կորուստներ: Ողջ մնացած աֆղան-մոջահեդները ադրբեջանցիների կողմից հրահանգավորվեցին և ուղարկվեցին ՀՀ դեմ դիվերսիոն-քայքայիչ և անհարեկչական գործունեություն ծավալելու:

<sup>600</sup> Կուրթերը պահպանվում են ՀՀ անվտանգության մարմինների պառոմության թանգարանում: Աֆղան վարձկանների մասին տե՛ս նաև Փաշայան Ա., Մոջահիդները դարաբաղյան պատերազմում, 06.04.2009 թ., [http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT\\_ID=468](http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT_ID=468), Սարգսյան Ա., Արցախյան գոյամարտը և կրոնը, 2012 թ. օգոստոս, <http://theanalyticon.com/?p=2265> (նդումներն արված են 20.03.2016 թ.):

<sup>601</sup> Гусейн-заде Р., Религия и политика: Возникновение на Азербайджанском фоне, «Центральная Азия и Кавказ», журнал социально-политических исследований, Швеция, 2004, 3 (33), с.158:

<sup>602</sup> Демоян Г., Внешняя политика Турции и Карабахский конфликт, Ереван, 2013., с. 275-280.

«ԼՂ հիմնախնդրի» հաջորդ փուլում՝ 1994-2014 թթ.՝ ակտիվ մարտական գործողությունների և պատերազմի դադարեցման համաձայնագրի հաստատումից հետո, ադրբեջանական զինված ուժերի կազմում ստեղծվեցին հատուկ նշանակության ստորաբաժանումներ, որոնց խնդիրն էր հետախուզության և դիվերսիոն գործունեության իրականացումը: Նշված ստորաբաժանումներում ծառայում էին (այժմ էլ ծառայում են) պայմանագրային զին-ծառայողներ, որոնք հատուկ պատրաստություն են անցնում թե Ադրբեջանի տարածքում տեղակայված ուսումնական տարրեր կենտրոններում, թե արտասահմանյան որոշ երկրներում:

«Նարաբադյան հիմնահարցի» հաջորդ փուլում՝ 2014 թ. մինչ օրս, ադրբեջանական ՂՀԿ-ները հայ-ադրբեջանական շփման գծի ողջ երկայնքով սկսեցին հրահրել սահմանային, տեղային սադրանքներ և ներթափանցման փորձեր, որոնք ոչ միայն նպատակ էին հետապնդում Հայաստանի և Արցախի սահմանա-յին տարածքներ ներթափանցելու, սպանություններ ու անհրկ-չական գործողություններ իրականացնելու, այլ նաև հայկական դիրքերի առանձին հենակետերն ուսումնասիրելու, հարկ եղած դեպքում՝ դրանց վրա գրոհելու համար:

Այս փուլում՝ հատկապես 2014 թ. օգոստոսից սկսած, Ադրբեջանի ՊՆ ռազմական հետախուզության հատուկ նշանա-կության ստորաբաժանումների կողմից Հայաստանի և Արցախի նկատմամբ իրականացվող դիվերսիոն-հետախուզական գործո-ղությունները հաճախակիացան և լայն թափ ստացան: Դրանք ըստ էության հետապնդում էին մի քանի նպատակ. ազակայու-նացնել իրավիճակը, ցույց տալ, որ ադրբեջանական կողմը չի հաշտվել իրողության հետ և պատրաստվում է ռազմական ճա-նապարհով փորձ անել լուծել հիմնախնդիրը, և երկրորդ, որը բխում է առաջին նպատակից, դիվերսիոն գործողությունների միջոցով իրականացնել հետախուզություն՝ հասկանալու, թե հայկական կողմը որքանով է պատրաստ դիմակայել հար-ձակումներին:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարարության մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի՝ ադրբեջանական կողմը 2014-2016 թթ. ընթացքում իրականացրել է ավելի քան 150 դի-

վերսիոն ներթափանցման փորձ<sup>603</sup>:

22. պաշտպանության նախարարությունը և Արցախի պաշտպանության բանակը հաճախակի տարածում էին տեղեկություն Ադրբեջանի կողմից հերթական հետախուզա-դիվերսիոն խմբի ներթափանցման վերաբերյալ: Ճիշտ է այդ բոլոր ներթափանցման փորձերը կանխվել են, և հակառակորդը բազմաթիվ անգամներ զոհեր տալով հետ է շարտվել, սակայն ակնհայտ է, որ այդ ընթացքում հակառակորդի ռազմական հետախուզության գրոհայիները, իսկ ավելի ճիշտ՝ դիվերսանտ-անհարկիչները, հասնելով մեր առաջնագիծ, փաստորեն իրենց աչքով տեսել են շփման գծի երկայնքով տեղակայված հայկական զորքերի դասավորվածությունը, պաշտպանական համակարգը, զինատեսակները, որոնք առկա են մեր զինանոցում, առաջնագծի կահավորվածությունը:

Դիվերսիոն-հետախուզական գործողությունները ևս իրականացվում են ադրբեջանական հետախուզական տարատեսակ ստորաբաժանումների, դիվերսիոն-հետախուզական խմբերի կամ կազմավորումների կողմից:

Հետախուզա-դիվերսիոն բնույթի բազմաթիվ գործողություններից անդրադառնանք 2014 թ. կեսերին Քարվաճառ ներթափանցած խմբի գործունեության որոշ դրվագներին:

2014 թ. հուլիսի 10-ին անհազանգ ստացվեց, որ Քարվաճառում հայտնվել են քաղաքացիական հագուստով զինված ադրբեջանցիներ, որոնցից երկուսը հաջորդած օրերին ձերբակալվեցին Արցախի իրավապահ մարմինների կողմից, իսկ մեկը սպանվեց: Ադրբեջանական խմբի գործունեության հետևանքով հայկական կողմն ունեցավ կորուստներ: Հուլիսի 11-ին գրանցված միջադեպի փոխհրաձգության հետևանքով զոհվեց հայ սպա՝ 1972 թ. ծնված մայր Մարգիս Աբրահամյանը, վիրավորվեց 1977 թ. ծնված Կարինն Դավթյանը<sup>604</sup>:

<sup>603</sup> Հովհաննիսյան Ա., Ապրիլյան չորսօրյա պատերազմի վերլուծություն, <https://news.am/arm/news/322349.html>.

<sup>604</sup> Մելիքսեթյան Հ., Հրապարակվել է Քարվաճառում ձերբակալված ադրբեջանցիների դատավճիռը, 29 դեկտեմբերի 2014 թ., <http://razm.info/58078> (նդումն արված է 12.11.2015 թ.):

Իսկ մինչ այդ աղբբեջանցի դիվերսանտների կողմից առևանգվել և սպանվել էր Լոր Էրքեջ գյուղի 17-ամյա բնակիչ Սմբատ Յակալյանը<sup>605</sup>:

Որոշ ուսումնասիրությունների համաձայն խմբի անդամներից երկուսը Շահբազ Գուլին ու Դիլիամ Ասկերովը, նախկինում կատարած տարբեր հանցագործությունների համար ժամանակին ձերբակալված ու պատիժ կրած անձինք էին, ովքեր, տեղանքը լավ իմանալով, միաժամանակ օրենքի առջև լինելով խոցելի, Աղբբեջանի իշխանությունների ու հատուկ ծառայությունների կողմից ներգրավվել են դիվերսիոն-հետախուզական գործունեության մեջ: Իսկ խմբի անդամներից երրորդը՝ սպանված Հասան Հասանովը, եղել է կադրային հետախույզ<sup>606</sup>:

Արցախի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը 2014 թ. դեկտեմբերի 29-ին հրապարակեց դիվերսիոն խմբի անդամների վերաբերյալ դատավճիռը, որով Դ. Ասկերովը դատապարտվեց ցմահ, իսկ Ե. Գուլինը՝ 22 տարվա ազատազրկման<sup>607</sup>:

Հատկանշական է, որ աղբբեջանական իշխանություններն ամեն կերպ փորձում էին դիվերսանտներին ներկայացնել որպես խաղաղ բնակիչներ և հայկական կողմից մինչ օրս պահանջում են հետ վերադարձնել նրանց:

---

<sup>605</sup> Արցախի դատախազություն, 17-ամյա Սմբատ Յակալյանին առևանգել և սպանել են աղբբեջանցի դիվերսանտները, 18 հուլիսի 2014 թ., [<sup>606</sup> Միջայեյան Դ., Ովքեր են խաջնաբաժի «սրտահագուտտով» դիվերսանտները, 27.09.2014, \[http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20140927\\\_23&flag=am\]\(http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20140927\_23&flag=am\), Մախարյան Ս., Երջադա ըմ Քալվաճաճի դիվերսանտների գործում, 12.12.2014, <http://hetq.am/arm/news/57756/shrjadardz-qarvatchari-diversantneri-gortsam.html>, Դիվերսանտի դիմագիծ. Հասան Հասանով-1, 17 դեկտեմբերի 2014 թ., <http://hetq.am/arm/news/57820/diversanti-dimagits-hasan-hasanov-1.html>, Դիվերսանտի դիմանկար. Հասան Հասանով-2, 20.12.2014, <http://hetq.am/arm/news/57874/diversanti-dimankar-hasan-hasanov-2.html> \(իդումներն արված են 13.11.2015 թ.\):](http://www.paranmenian.net/arm/news/180680/իդումն արված է 13.11.2015 թ.:</a></p></div><div data-bbox=)

<sup>607</sup> Դատարանը հրապարակեց ամբաստանյալներ Գուլինի և Ասկերովի գործով դատավճիռը, 29 դեկտեմբերի 2014թ., <http://artsakhpress.am/arm/news/10096/datarany-hraparakec-ambastanyalner-gulievi-ev-askerovi-gortsov-datavitchiry.html> (իդումն արված է 23.11.2015 թ.):

2014-2016 թթ. ընթացքում իրականացնելով մոտ 150 հետախուզա-դիվերսիոն ներթափանցման փորձ և հավաքելով որոշակի տեղեկատվություն (հավաստի և ոչ հավաստի, աղբրեջանական հետախուզությանը տրվել է նաև մեծաքանակ ապատեղեկատվություն) Արցախի պաշտպանության բանակի ստորաբաժանումների տեղակայման վայրերի, բնագծերի, առաջնագծի կահավորվածության, զինծառայողների պատրաստվածության, սպառազինության վերաբերյալ, կատարելով որոշակի վերլուծություն, Աղբրեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը 2016 թ. ապրիլի 2-ին սանձազերծեց բացահայտ ռազմական գործողություններ Արցախի սահմանի ողջ երկայնքով:

Ակնհայտ դարձավ, որ աղբրեջանական կողմը, վերջին երկու տարվա ընթացքում իր ունեցած բոլոր դիվերսիոն-հետախուզական խմբերը, ականային, հրետանային և այլ միջոցները գործի դնելով ու ոչնչի չհասնելով, փորձեց լայնամասշտաբ մարտական գործողություններ սկսել: Մասնագետների մի մասը քառօրյա պատերազմը բնորոշում է որպես «հետախուզություն մարտով», իսկ մյուս մասը, համաձայնելով այդ բնորոշման հետ, ավելացնում է, որ դա ոչ միայն «հետախուզություն էր մարտով», այլև բացահայտ ռազմական ագրեսիա:

Այսպես, 2016 թ. ապրիլի 1-2-ի զիշերը աղբրեջանական դիվերսիոն խմբերը առաջնագծի տարբեր հատվածներով ներթափանցեցին Արցախի տարածք, փորձեցին գրավել բնագծեր, իսկ զորքը փորձեց նրանց հետևից հարձակում գործել Արցախի գրեթե ողջ սահմանի երկայնքով<sup>608</sup>:

Հենց աղբրեջանական տվյալների համաձայն՝ յուրաքանչյուր հատվածում գործի են դրվել 1-ին էշելոնի մեկական բրիգադի ուժերն ու միջոցները, որոնք ուժեղացված են եղել հասուն կշանակության ուժերով՝ ընդհանուր մինչև երկու բրիգադ հասուն դիվերսիոն խմբերով, լեռնահրաձգային ստորաբաժանումներով, տանկային և հրետանային այլ ուժերով: Հարվածող խմբավորումների առաջին շարակազմում կիրառվել են միայն

<sup>608</sup> Հակոբյան Թ., Ապրիլյան 4-օրյա պատերազմ, արդյունքներ, դասեր, առապելներ, 01.06.2016թ., <http://www.civilnet.am/news/2016/06/01/voices-tatul-hakobyan-37/294160> (նդամն արված է 10.10.2016 թ.):

հատուկ նշանակության ուժեր և միաժամանակ փորձ արվել օդային դեսանտ իջեցնել մարտավարական խորքում: Հատուկ նշանակության ուժերը խնդիր ունեին գրավել առաջին բնագիծը կամ բացվածքներ ապահովել այդ բնագծում և միաժամանակ թիկունքից հարված հասցնել զումարտակային խորությանն ու խուճապ առաջացնել: Սակայն դիվերսիոն խմբերի գործողությունները տապալվել են և հիմնական հարվածային ուժերը իրենց խնդիրը չեն կարողացել կատարել (չնայած նրան, որ Թալիշ գյուղում և որոշ դիրքերի թիկունքում դիվերսանտներ թափանցել են): Միայն մի ուղղությամբ, շրջափակման մեջ, ոչնչացվել է ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի առնվազն 30 զինվոր:

Լույս սցենարը գրեթե կրկնվել է երկու ճակատում:

Ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանն Արցախի նկատմամբ ակտիվորեն օգտագործեց իր հատուկ նշանակության ուժերը, որոնց խնդիրն էր վնաս հասցնել ՊԲ առաջավոր ստորաբաժանումներին և ապահովել իր ուժերի առաջխաղացումը շփման գծում:

Չորսօրյա մարտական գործողությունները փաստեցին, որ ադրբեջանական ՋՈւ-ն, բրիգադային ուժնդացված գորախմբերով, հատուկ նշանակության ստորաբաժանումներով, ներառյալ՝ վերադասի կողմից տրված ուժերն ու միջոցները, հարձակում ձեռնարկելով ըստ էության վաշտային հենակետի վրա՝ հրնթացս չի կարողացել գրավել այն, անգամ դուրս չի եկել վաշտի պաշտպանության հենակետի ամբողջ խորքը:

Ըստ ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Ա. Հովհաննիսյանի՝ ապրիլյան քառօրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանի զոհերի 60-70 տոկոսը եղել են լեռնաերաձգային և հատուկ նշանակության զորքերի ծառայողներ: «... Ադրբեջանը գնում է իր հատուկ նշանակության ստորաբաժանումները ոչնչացնելու ճանապարհով», - ելել է նա<sup>609</sup>:

<sup>609</sup> Հովհաննիսյան Ա. Ադրբեջանը շարժվում է իր հատուկ նշանակության ստորաբաժանումները ոչնչացնելու ճանապարհով, <https://armenpress.am/arm/print/845010/adrbejany-aharzhvum-e-ir-hatak-nshanakutyen-storabazhanumneri.html> (նդումն արված է 12.03.2017 թ.):

Հայտնի է, որ դիվերսիոն-հետախուզական գործողությունները կազմակերպվում և իրականացվում են Ադրբեջանի ռազմական հետախուզական մարմինների, մասնավորապես 062-րդ հատուկ նշանակության բրիգադի կողմից, որի զինծառայողները հաճախ հատուկ պատրաստություն են անցնում նաև Թուրքիայում<sup>616</sup>:

Հարկ է նաև նշել, որ դիվերսիոն-հետախուզական ներքափանցումների ժամանակ սպանված դիվերսանտների թվում երբեմն լինում են թուրք հատուկ ջոկատայիններ, ինչը վառ ապացույցն է այն բանի, որ Թուրքիան չի դադարում սատարել ադրբեջանական կողմին Հայաստանի և Արցախի դեմ իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեության մեջ: Օրինակ, Թուրքիայի ներգրավվածությունն Ադրբեջանի գործողություններում 2016 թ. ապրիլյան քառօրյա պատերազմում դրսևորվեց ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի ձևով: Թուրքական իշխանությունները բուրբ հնարավոր մակարդակներով իրենց անվերապահ աջակցությունը հայտնեցին «եղբայրական Ադրբեջանին»: Թուրքիայի նախագահ Թ. Էրդոդանը, վարչապետ Ա. Ղալուբօղլուն, արտգործնախարար Մ. Չավուշօղլուն և այլ գործիչներ ջանք չխնայեցին Ադրբեջանին փստահեցնելու համար, որ «Թուրքիան մինչև վերջ ուս ուսի կանգնած է Ադրբեջանի կողքին»: Ավելին, Թուրքիան ամեն ջանք գործադրում է՝ ոգևորելու Ադրբեջանին շարունակել զինված ոտնձգությունները: «Մինչև չազատագրվեն օկուպացիայի տակ գտնվող ադրբեջանական հողերը, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղը, մենք շարունակելու ենք կանգնած մնալ Ադրբեջանի կողքին: Հայաստանը պետք է անհապաղ դուրս բերի զորքերը գրավյալ տարածքներից»<sup>617</sup>, - բացահայտ հայտարարում է Թուրքիայի նախագահը: «Ադրբեջանի ուրախությունը մեր ուրախությունն է, Ադրբեջանի վիշտը մեր վիշտն է». խոսքեր, որ Աթաթուրքն ասել է գրեթե մեկ

<sup>616</sup> Մեջբերում ԼՂՀ ՊՔ հրամանատար զենքաչ-լեյտենանտ Մ. Հակոբյանի հարցազրույցից, 19.02.2015 թ., ժամը լրատվական:

<sup>617</sup> Մեջբերում Թ2 նախագահ Ռ. Էրդոդանի հարցազրույցից, 26.11.2016 թ., Cumhuriyetkan: "Ermenistan İlgal Ettiği Dağlık Karabağ'dan Çıkmalı", <https://www.youtube.com/watch?v=yT46lFQpVOM> (նդումն արված է 25.12.2016 թ.):



ղար առաջ, և կրկնվեցին Թուրքիայի արտգործնախարար Չավուշօղլուի կողմից Ադրբեջան կատարած այցերից մեկի շրջանակներում<sup>612</sup>:

Թյուրքագետ Լ. Հովսեփյանն Ադրբեջանի ագրեսիվությունը պայմանավորում է նաև Անկարայի քաղաքական աջակցության հետ, որով Թուրքիան խրախուսում է Բաքվի գործողությունները: Իսկ ապրիլյան քառօրյա պատերազմի ժամանակ, թյուրքագետի կարծիքով, Անկարան, բացի հայտարարություններից, նաև որոշակիորեն այլ ներգրավվածություն ուներ<sup>613</sup>:

Խոսքը վերաբերվում է Թուրքիայի կողմից Ադրբեջանին տրամադրվող ուղղակի աջակցությանը: Գաղտնիք չէ, որ Անկարան Բաքվին օգնում է ինչպես կադրեր տրամադրելով, այնպես էլ զինտեխնիկա մատակարարելով: Ադրբեջանական ուժերի կազմում առկա են թուրքական բանակի սպաներ, հրահանգիչներ: Կան որոշ տեղեկություններ թուրքական ազգայնական «Գորշ գայլեր» կազմակերպության զինյալների մասնակցության մասին<sup>614</sup>: Որոշ հետազոտողներ անգամ համոզված են, որ թուրք սպաներն անմիջական մասնակցություն են ունեցել քառօրյա պատերազմի պլանավորմանը<sup>615</sup>: Վետերան-հետախույզ Վովա Վարսանյանն էլ կարծում է, որ այն կազմակերպվել էր Թուրքիայի և Ադրբեջանի կողմից համատեղ<sup>616</sup>:

<sup>612</sup> Բարսեղյան Ա., Թուրք-ադրբեջանական դուռնի 2015 թ.-ի հակահայկական օրակարգը, <http://politics.am/?p=160&l=am/turq-adrbejanakan+dueti+2015t-i+hak-haykakan+orakargy+>

<sup>613</sup> Հովսեփյան Լ., Տարածաշրջանում Թուրքիան ստանձնել է կոնֆլիկտանիս դերակատարություն, 12 ապրիլի, 2016 թ., <https://armenpress.am/arm/news/843187/taratsashrjanum-turqlan-standznel-e-konfliktansin-derakatarutyun.html>, Թուրքիան հանդես է գալիս բացահայտ ստորիչ և հրահրող դիրքերից, 28.04.2016., <https://www.panoorama.am/am/news/2016/04/28/Lenb-Zhovsephyan/1571002> (նդումներն արված են 02.05.2016 թ.):

<sup>614</sup> Հովսեփյան Ա., Ղարաբաղյան քառօրյա պատերազմն ու թուրքական հաշվարկները, 11.04.2016, <http://armedia.am/arm/news/32516/xarabaxyan-qarorya-peterazmn-u-turqakan-hashvarknery.html> (նդումն արված է 10.05.2016 թ.):

<sup>615</sup> Լշտնյան Մ., Քառօրյա պատերազմի «սցենարի հեղինակները», 19.04.2016 թ., <http://www.chi.am/index.cfm?objectid=95EB28B0-064B-11E6-9A470EB7C0D21663> (նդումն արված է 20.03.2017 թ.):

<sup>616</sup> Վ. Վարսանյանի հարցազրույցի տեսագրությունը, <http://www.rajfilm.in/video/NNZnm1Z5qxY> (նդումն արված է 21.05.2017 թ.):

2016 թ. ապրիլյան քառորդի պատերազմի ընթացքում աղբբեջանական կողմի իրականացրած բարբարոսությունները թալիշ գյուղի ծեր բնակիչների սպանություններն ու մարմինների խոշտագումը, զինվորներին զլխատելն ու մարմիններն անարգելը, այդ և այլ վայրագությունները տեսանկարահանելն ու սոցիալական ցանցերում տեղադրելը ամբողջությամբ հիշեցնում է «Բսլամական պետություն» ահաբեկչական խմբավորման ձեռագիրը: Բացի այդ, նման գործողությունները հանդիսանում են ռազմական հանցագործություններ, այն էլ՝ պետության մակարդակով խրախուսվող, քանի որ դրանք կատարողները պարգևատրվեցին անձամբ Աղբբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից:

#### **4.6. «Հայաստանի և Աղբբեջանի միջև խաղաղության հարթակ»-ը որպես Աղբբեջանի հատուկ ծառայությունների նախագիծ**

Աղբբեջանի Հանրապետության իշխանությունների և հատուկ ծառայությունների հակահայ քաղաքականության հերթական դրսևորումը հանդիսացավ «Հայաստանի և Աղբբեջանի միջև խաղաղության հարթակ» կոչված քարոզչական կառույցի ստեղծումը:

Աղբբեջանական իշխանությունների կողմից Հայաստանի Հանրապետության և Արցախի նկատմամբ սանձազերծված տեղեկատվական պատերազմը թշնամական քաղաքականության ուղղություններից է, որը խաղաղ ժամանակ կոչված է պարարտ տեղեկատվահոգեբանական պայմաններ ապահովել հնարավոր ռազմական գործողությունների համար, իսկ պատերազմի դեպքում՝ քայքայիչ ազդեցություն ունենալ հայկական կողմի տեղեկատվահոգեբանական անվտանգության համակարգի վրա՝ ապահովելով ռազմական գործողությունների արդյունավետությունը:

Այս իմաստով բացառություն չէր նաև 2016 թ. ապրիլյան պատերազմը. աղբբեջանական իշխանությունների ուղղակի կամ միջնորդավորված մասնակցությամբ աշխարհով մեկ տա-

րեկան հարյուրավոր քարոզչական, կեղծ, ապատեղեկատվական նյութերի հրապարակումն ու տարածումը վկայում է, որ հարևան երկրի ռազմաքաղաքական դեկավարությունը մտադիր չէ գնալու «Ղարաբաղյան հիմնահարցը» բացառապես խաղաղ ճանապարհով լուծելու ուղով:

Ադրբեջանական քարոզչամեթոդական հետևողականորեն փորձում է սեփական ժողովրդի և միջազգային հանրության շրջանում ձևավորել հայի՝ որպես ագրեսորի, եկվոր ժողովրդի, բնիկ ադրբեջանական հողերը, պատմությունը և մշակույթը յուրացնողի կերպարը:

Այդ ամենը վկայում է այն մասին, որ ադրբեջանական իշխանություններն ու դրանց կողմից հրահանգավորվող հատուկ ծառայություններն իրենց ավանտյուրիստական պլանները կյանքի կոչելու համար, հատկապես օրեցօր վատթարացող ներքին սոցիալ-տնտեսական իրավիճակի ֆոնին, կանգ չեն առնելու ամենաստոր միջոցների ու մեթոդների ընտրության առաջ:

Այս համատեքստում պատահական չէ, որ, ի թիվս տեղեկատվական պատերազմի վերը նշված դրսևորումների, այսպես կոչված «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հարթակի» ստեղծման ուղղությամբ աշխատանքների սկիզբը նախորդեց 2016 թ. ապրիլյան պատերազմին:

«Հարթակի» գործունեությունն անհնար է դիտարկել հայ-ադրբեջանական տեղեկատվական պատերազմի շրջանակից դուրս: Այդ իմաստով «հարթակն» ադրբեջանական իշխանությունների կողմից օգտագործվող տեղեկատվական-հոգեբանական ներգործության պարզագույն գործիք էր:

Դավաճանության և դավաճանների հիմնահարցը համաշխարհային պատմությանը քաջ հայտնի, տարբեր գիտությունների կողմից ուսումնասիրվող, գրական-գեղարվեստական բազմաթիվ երկերի նյութ հանդիսացող թեմաներից է: Քնականաբար, ինչպես աշխարհի բոլոր ժողովուրդները, այնպես էլ հայ ժողովուրդը չէր կարող զերծ մնալ այդ չարիքից, հատկապես որ դարերով եղել է պետականագուրկ, անցել է դժվարին ու երկարատև պատերազմների, ազգային-ազատագրական պայքարի ուղի, ենթարկվել Ցեղասպանության ու հայրենագրկվել:

1991 թվականից մինչ օրս ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից բացահայտվել և ՀՀ քրեական օրենսդրությամբ պետական դավաճանության ու լրտեսության մեղադրանքներով պատասխանատվության են ենթարկվել հայազգի ավելի քան երկու տասնյակ պետական դավաճաններ, որոնք համագործակցել են Ադրբեջանի և Թուրքիայի հատուկ ծառայությունների հետ՝ գաղտնի տեղեկություններ փոխանցելով վերջիններին:

Եղել են մի շարք դեպքեր, երբ ազգությամբ հայ ՀՀ քաղաքացին կամ Ադրբեջանից բռնագաղթած անձը միայնակ կամ ընտանիքով անցել է Ադրբեջանի տարածք և ապաստան խնդրել ՀՀ և Արցախի դեմ փաստացի պատերազմական վիճակում գտնվող այդ պետության ղեկավարությունից: Մա ես, կարծում ենք, թեև ոչ քրեաիրավական, բայց դավաճանության տեսակ է, հասկապես, եթե հաշվի առնենք, որ տվյալ անձը կամ անձինք Ադրբեջանում մասնակից են դարձվել հակահայ քարոզչությանը, հայոց պետականության վարկաբեկմանը, ՀՀ միջազգային հեղինակությանը վնասելու փորձերին:

Իսկ ադրբեջանական իշխանությունները և հատուկ ծառայությունները մշտապես փորձել են ՀՀ-ի և Արցախի դեմ տեղեկատվահոգեբանական և քարոզչական աշխատանքում օգտագործել ազգությամբ հայ առանձին անձանց, որոնք այս կամ այն պատճառով և հանգամանքներում հայտնվել են իրենց վերահսկողության ներքո՝ հայկական պետությունը որպես ոչ ժողովրդավար և ոչ խաղաղասեր ներկայացնելու և ձգտելով «միավորներ շահել» սեփական բնակչության և միջազգային հանրության աչքերում:

Այդ է պատճառը, որ, երբ նրանց մոտ հայտնվեց Վանան Մարտիրոսյանը, որն իրեն ներկայացնում էր որպես «Ներազգային ազատագրական շարժում» նախաձեռնության ղեկավար, և որն էականորեն տարբերվում է նախորդ «ուրացողներից»<sup>67</sup> որպես քարոզչական ավելի վառ պերսոնաժ, ադրբեջանական կողմն անցավ ակտիվ գործողությունների:

<sup>67</sup> Ուրացող կամ ազգուրաց՝ ոռւսերեն՝ отступник, перебежчик, անգլերեն՝ defector, turncoat (բանացի՝ ճամբարափոխ):

Այսպես կոչված «Ներազգային ազատագրական շարժում» նախաձեռնության ղեկավար Վ. Մարտիրոսյանն Ադրբեջան մեկնեց իր ընտանիքով՝ կնոջ և երեխայի հետ:

2015 թ. սեպտեմբերի 17-ին, երբ Վ. Մարտիրոսյանը ՀՀ-ում երկու քրեական գործի շրջանակներում ներգրավված էր որպես վկա և կասկածյալ, և վերոնշյալ գործերի նախաքննությունը դեռ շարունակվում էր, ադրբեջանական «Ապա» գործակալությունը հայտնեց, որ «Ներազգային ազատագրական շարժում» նախաձեռնության ղեկավար Վահան Մարտիրոսյանն Ադրբեջանից քաղաքական ապաստան է խնդրել: «Բևտերֆաքս»-ի ադրբեջանական ծառայության հաղորդմամբ՝ Մարտիրոսյանը և նրա կինն արդեն Ադրբեջանում էին, իշխանությունները նրանց ապաստան են տվել: Ադրբեջանի «Կանանց իրավունքների պաշտպանության հասարակություն» հասարակական կազմակերպության ղեկավար, իրավապաշտպան Նովելլա Ջաֆարովուն հայտնեց, որ վրացի իր գործընկերները դիմել են իրեն և փոխանցել Մարտիրոսյանի դիմումը, որտեղ նշվել է նրա նկատմամբ իրականացված հալածանքների մասին: Իրավապաշտպանը հարցը ներկայացրել է Ադրբեջանի իշխանություններին, որոնք էլ բավարարել են Վ. Մարտիրոսյանի դիմումը և նրան տրամադրել ապաստան: Ադրբեջանական ադյուրները հավելել են, որ Վ. Մարտիրոսյանը Հայաստանի պատկան մարմինների կողմից ճնշումների է ենթարկվել իր գործունեության պատճառով, իսկ Ադրբեջան իր փախուստը նա պատճառաբանել է ընտանիքին սպառնացող վտանգով<sup>68</sup>:

Հաջորդ օրը՝ 2015 թ. սեպտեմբերի 18-ին, Բաքվում տեղի ունեցավ Վ. Մարտիրոսյանի առուլիսը, որին ներկա էր նաև նրա կինը՝ գրկում իրենց երկու տարեկան որդին: Առուլիսի վարողը հայտնեց, որ քաղաքական ընդդիմադիր հայացքների համար Վ. Մարտիրոսյանը և կինը, որը եղել է հղի, ՀՀ իշխանության ներկայացուցչի կողմից ենթարկվել են դաժան ծեծի, ինչի հետևանքով կինը կորցրել է երեխային, և նրանք դիմել են Ադրբե-

<sup>68</sup> Վահան Մարտիրոսյանն Ադրբեջանից քաղաքական ապաստան է խնդրել, 17/09/15, <http://yerkirmedia.am/?act=news&lan=by&se=Վահան4620Մարտիրոսյան&id=28854> (նշումն արված է 20.09.2015 թ.):

ջանի իշխանություններին՝ խնդրելով քաղաքական ապաստան տրամադրել իրենց: Աղբրեջանի իշխանությունները, անսալով վերջիններին խնդրանքին, նրանց տրամադրել են քաղաքական ապաստան, ինչը մեկ անգամ ևս վկայում է Աղբրեջանի Հանրապետության «հանդուրժողականության» մասին<sup>698</sup>:

Ասուլիսի ժամանակ Վ. Մարտիրոսյանը հայտնեց, թե ինքն իբր ՀՀ իշխանությունների դաժան քննադատն է, և որ նրան ստիպել են ենթարկվել Հայաստանում տիրող ուժի մի պարտադրանքներին, այդ իսկ պատճառով նա ինքնակամ որոշել է ընտանիքով հեռանալ:

Ըստ աղբրեջանական մամուլի՝ Վ. Մարտիրոսյանը եղել է նաև, որ Հայաստանը պատերազմ չի ուզում և պատրաստ չէ նաև պատերազմի: «Հայկական բանակն ի վիճակի չէ հակահարված հասցնել անգամ մի աֆրիկյան պետության», - ասել է նա<sup>699</sup>:

Ասուլիսի ընթացքում Վ. Մարտիրոսյանը սուր քննադատության է ենթարկել ՀՀ իշխանություններին<sup>700</sup>:

Ասուլիսից պարզ դարձավ, որ, հաշվի առելով Վ. Մարտիրոսյանի անձի արկածախնդիր բնութագիրը, նրա համեմատաբար «ցիվիլ» արտաքին տեսքը, լեզուներին տիրապետելու հանգամանքը և, ամենակարևորը, ՀՀ-ից ընտանիքով փախչելու հնչեցվող «դրդապատճառները», աղբրեջանական հատուկ ծառայությունները փորձելու են ուռճացնել նրա «պատմությունը»՝ դրան հաղորդելով ավելի լայն միջազգային հնչելություն:

Ասուլիսից օրեր անց «Ժամանակ» օրաթերթը տարածեց հաղորդագրություն, ըստ որի՝ օրաթերթի տրամադրության տակ է հայտնվել մի փաստաթուղթ, որից պարզ է դառնում, որ Վ. Մարտիրոսյանը դեռևս տասը տարի առաջ՝ 2005 թ. մարտի 28-ից հաշվառված է ՀՀ առողջապահության նախարարության «Ավան» հոգնական առողջության կենտրոն ՓԲԸ-ում՝ «անձի հիստորիկ խանգարում» ախտորոշմամբ: Թերթը նաև գրում էր, թե

<sup>698</sup> Բուքվում Վահոն Մարտիրոսյանի մամուլի ասուլիսի տեսագրությունը, <https://www.youtube.com/watch?v=8OjfignCGMU>, նաև՝ <http://armbar.am/418615> (նղումներն արված են 20.09.2015 թ.):

<sup>699</sup> Նույն տեղում:

<sup>700</sup> Նույն տեղում:

սա այն միակ դեպքն է, երբ «ժողովուրդ» օրաթերթը, առանց տվյալ անձի համաձայնության, հրապարակում է նրա անձնական կյանքին վերաբերող փաստական տվյալ: «Մակայե այս դեպքում գործ ունենք մի անձի հետ, ով որոշել է ապաստանել Հայաստանի թշնամի երկրում և այդ երկրի իշխանությունների ձեռքում գործիք դառնալ՝ իր հայրենիքի դեմ օգտագործվելու համար: Ուստի, կարծում ենք, որ ՀՀ քաղաքացիներն իրավունք ունեն համոզվելու, որ նման արարք իրեն կարող է թույլ տալ միայն հոգեկան հիվանդ մարդը», - գրել է թերթը<sup>622</sup>:

Հստակ ուրվագծվում էր, որ աղբյուրական իշխանությունները և հատուկ ծառայությունները պատրաստվում են ակտիվորեն օգտագործել Վ. Մարտիրոսյանին հակահայ գործունեության մեջ և մշակում են պլաններ՝ առավել «արդյունավետ» միջոցառումներ իրականացնելու ուղղությամբ:

Եվ ահա, 2016 թ. նոյեմբերի 8-ին աղբյուրական ՋԼՄ-ները տեղեկացրին Բաքվում երեք հայի (իրենց բնորոշմամբ՝ հայտնի իրավապաշտպանների)՝ Վահան Մարտիրոսյանի, Սյուզան Ջաղինյանի և Վահե Ավետյանի մասնակցությամբ տեղի ունեցած «Հայ-աղբյուրական դարաբաղյան հակամարտություն, հիմնական խոչընդոտներ և հետանկարներ. հայացք Հայաստանից և Աղբյուրականից» խորագրով կոնֆերանսի մասին, որի սվարտին մասնակիցներն ընդունեցին «քաղաքացիական ակտիվիստների համատեղ հայտարարություն»՝ ուղղված Հայաստանի և Աղբյուրանի նախագահներին և ժողովուրդներին<sup>623</sup>:

Լույս օրը հայտարարվեց նաև դեկտեմբեր ամսին Հայաստանի և Աղբյուրանի միջև խաղաղություն հաստատելուն ուղղված հարթակ ձևավորելու նախաձեռնության մասին:

Այսպիսով պարզ դարձավ, որ աղբյուրական իշխանություններն ու հատուկ ծառայությունները, ի դեմս վերոնշյալ երեք «ուրացողների», գտան իրենց հակահայկական քարոզչությանը

<sup>622</sup> «ժողովուրդ». Աղբյուրան փախած Վահան Մարտիրոսյանը վաղուց հաշվառված է Երևանի հոգեբուժարանում՝ «անձի հիստորիկ խանգարում» ախտորոշմամբ, սեպտեմբեր 26, 2016, <http://araratnews.am/zhoghbovurd-adrbejan-phaotc-vahan-martirosoyaneb-vaghuac-hashivarvatc-e-yerevani-hogebuzharanum%D5%8D-andzihiseric-xangarum-axtoroshnamab/#tshash.v5xhrciLdpuf> (նրան արված է 27.09.2016 թ.):

<sup>623</sup> <http://arm-azpeace.com/news.php?id=1088&lang=ru> (նրան արված է 30.09.2016 թ.):

հագուրդ տալու ետք «գործիքներ», որոնք, լինելով ազգությամբ հայ, ետք շուեչ կտային հակահայ քարոզչությանը, և սեփական ժողովրդի ու միջազգային հանրության մոտ աղբրեջանական կողմը կփորձեր տպավորություն ստեղծել, թե իրենք խաղաղաբար են, Աղբրեջանի իշխանություններն ու Հայաստանի «քաղաքացիական ակտիվիստները» (Վ. Մարտիրոսյանը, Վ. Ավետյանն ու Ս. Ջաղիսյանը հանդես էին գալիս որպես ՀՀ քաղաքացիական ակտիվիստներ) և Հայաստանի խաղաղ բնակչությունն ամեն ինչ անում են խաղաղության հաստատման համար, և միայն Հայաստանի «կոռումպացված ու անօրինական» իշխանություններն են, որ «ցանկություն և կամք չունեն լուծել դարաբաղյան հակամարտությունը»:

2016 թ. դեկտեմբերի 6-ին «քաղաքացիական նախաձեռնության» քողի տակ Բաքվում Աղբրեջանի իշխանությունների կողմից կազմակերպված «Հայաստանի և Աղբրեջանի միջև խաղաղության համար հարթակի ստեղծման մասին հռչակագրի ստորագրում» սլայմանական անունով բեմականացումը ալիսյան քարոզչամեթոդայի հերթական փորձն էր «ժողովրդական դիվանագիտության» անվան տակ միջազգային հանրության մոտ ստեղծելու պատրանք, որ «Ղարաբաղյան հիմնահարցը» չի կարող լուծվել այլ կերպ, քան այդ երկրի իշխանությունների պատկերացրած տարբերակով: Այդ է ապացուցում «հռչակագրի» բովանդակությունը, որը թեև ներկայացված է որպես «երկու երկրների իրավապաշտպանների նախաձեռնության» արդյունք, սակայն փաստացի վերարտադրում է դարաբաղյան «կարգավորման» վերաբերյալ Աղբրեջանի իշխանությունների տեսլականը (Արցախի ինքնավարություն Աղբրեջանի կազմում)<sup>64</sup>:

Փաստաթուղթն աղբրեջանական կողմից ստորագրել են. «Լեռնային Ղարաբաղի աղբրեջանական համայնքի խորհրդի նախագահ», Աղբրեջանի միլլի մեջլիսի պատգամավոր Ռուվան Ռզանը, Բաքվի պետական համալսարանի պրոֆեսոր Քամիլ Մալիմովը, «Հասարակության հետ կապերի զարգացման

<sup>64</sup> Заглавление о создании «Платформы для Мира между Арменией и Азербайджаном», 06.12.2016, <http://arm-azpeace.com/news.php?id=974&lang=ru> (նդումն արված է 12.12.2016 թ.):



աջակցություն հասարակական միավորման» նախագահ Շալալյա Հասանովան, «հայկական կողմից» Եվեդիայում քեակվող «իրավապաշտպան» Վահե Ավետյանը, «Ներազգային ազատագրական շարժում» հասարակական կազմակերպության նախագահ Վահան Մարտիրոսյանը, լրագրող, «իրավապաշտպան» Սյուզան Ջադիկյանը:

Հարկ է նշել, որ Վ. Մարտիրոսյանն ու Ս. Ջադիկյանը, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, աշխատում էին haqqin.az ադրբեջանական էլեկտրոնային կայքի խմբագրությունում և զբաղվում Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների «լուսաբանմամբ», սակայն ակնհայտ էր, որ վերջիններիս միջոցով իրականացվում էր թիրախային հակահայկական քարոզչություն:

Ըստ համացանցում առկա տվյալների՝ «Հայաստան-Ադրբեջան խաղաղության հարթակը» («խաղաղության հարթակ», «հարթակ») բաց է քաղաքացիական, հասարակական ինստիտուտների, ոչ կառավարական կազմակերպությունների, փորձագետների, գիտնականների, ինչպես նաև Հայաստանի, Ադրբեջանի և այլ երկրների քաղաքացիների համար: Այն իբր մշտական համագործակցություն պետք է հաստատի երկու երկրների հասարակությունների ներկայացուցիչների հետ, զբաղվի ժողովրդական դիվանագիտությամբ: Սակայն, «հարթակի» իրական նպատակները մատնում է թեկուզ այն փաստը, որ դեռևս նշված ուղղություններով որևէ քայլ չկատարելով, «խաղաղության հարթակը» Հայաստանի իշխանություններին կոչ է անում ձեռնարկել համալիր միջոցառումներ՝ «ԼՂ հարակից 7 շրջաններից հայկական զորքերի դուրսբերման, ինչպես նաև ԼՂ-ից բռնի տեղահանված ադրբեջանցիներին՝ իրենց տներ վերադարձի համար»: Կոչ է արվում նաև ճանաչել Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ապահովել Ադրբեջանի՝ «Լեռնային Ղարաբաղի» մարզի անվտանգությունը, ինչպես նաև ընդգծվում է ԼՂ վերջնական կարգավիճակի որոշման կարևորությունը՝ Ադրբեջանի տարածքային ամբողջականության կազմում որպես առանձին ինքնավար մարզ միաժամանակ համագործակցելով ԵԱՀԿ Մինսկի խմբի և այլ միջազգային կառույց-

ների հետ՝ «Ղարաբաղյան հիմնահարցի» առկա ստատուս-քվոն փոխելու նպատակով:

«Ֆտաղադության հարթակը», որը ներկայացվում է որպես «քաղաքացիական նախաձեռնություն», Ադրբեջանի իշխանությունների կողմից գովազդվում է որպես «ժողովրդական դիվանագիտության ձև»: Մինչդեռ այդ երկրում տիրող վիճակին քիչ թե շատ ծանոթ մարդկանց համար ակնհայտ է, որ դա ընդամենն էժանագին հևարք է: Ժողովրդական դիվանագիտությունը կարող է ծավալվել միայն ժողովրդավարական երկրներում, որտեղ լսելի է ժողովրդի ձայնը, այլ ոչ թե կոռումպացված իշխանություն, հարյուրավոր քաղրանտարկյալներ, իշխանությունը հորից ժառանգած և կնոջը երկրի փոխնախագահի պաշտոնում նշանակած «սուպերնախագահ» ունեցող երկրում, որտեղ ոտնահարվում են մարդու և քաղաքացու տարրական իրավունքներն ու ազատությունները, անտեսվում և ստորադասվում են ազգային փոքրամասնությունների իրավունքները, որտեղ իշխանությունները ճնշումների և հետապնդումների են ենթարկում ժողովրդավարացմանն ուղղված ցանկացած դրսևորում:

Վերոգրյալի հիման վրա կարելի է եզրակացնել, որ Բաքվի «Ֆտաղադության հարթակի» ստեղծումը Հայաստանի և Արցախի դեմ տեղեկատվական պատերազմի հերթական դրսևորումներից է, որի գլխավոր նպատակն է «Ղարաբաղյան հիմնախնդրի» կարգավորումը հագուտ Ադրբեջանի տարածքային ամբողջականության լուծելու և Արցախի ինքնորոշման քաղաքական հարցի տապալմանն ուղղությամբ բաղձալի հաջողության հասնելու գործում համապատասխան տեղեկատվական ֆոնի ստեղծումը միաժամանակ փորձելով միջազգային հանրությունից ձեռք բերել ռեաբիլիտացիայի որոշում՝ 2016 թ. ապրիլի 2-ից 5-ը Արցախի դեմ սանձազերծված ռազմական ագրեսիայի հետևանքով անկում ապրած սեփական միջազգային վարկն ինչ-որ չափով վերականգնելու համար:

Թյուրքագետ Լևոն Հովսեփյանի կարծիքով, «հարթակի» գործունեության նպատակն ու թիրախներն են.

1. արտաքին քարոզչությունը՝ խաղադության քողի ներքո.
2. հայկական միջավայրում դիսկուրսի առաջացումը.

3. միջազգային ինստիտուցիոնալացումը.

4. միջազգային կառույցներին ուղղված միջնորդություններն ու նախաձեռնությունները:

«Հարթակի» ստեղծմամբ Ադրբեջանի իշխանությունները փորձում են նաև ցույց տալ միջազգային հանրությանը, որ Ադրբեջանը ցանկանում է «Ղարաբաղյան հիմնահարցը» կարգավորել խաղաղ ճանապարհով, ուստի այն խաղաղությանը միտված «գործնական քայլ է»: «Հարթակի» ստեղծումը ծառայեցվում է միջազգային հանրության այքներում Ադրբեջանի դրական վարքագծի իմիտացիա և ընկալում ապահովելու նպատակով: Ազգությամբ հայերին ներգրավելով այս նախաձեռնության մեջ՝ Ադրբեջանը փորձում է կեղծ տպավորություն ստեղծել, թե ունի հայ համախոհներ, և Ադրբեջանը պատերազմում է ոչ թե հայ ժողովրդի, այլ Հայաստանի իշխանությունների դեմ: Ադրբեջանական իշխանությունները նաև փորձում են ցույց տալ, որ հայ հասարակության մի հատվածն ամենևին չի կիսում արցախյան հիմնախնդրի հարցում Հայաստանի իշխանությունների դիրքորոշումը<sup>625</sup>:

Լրագրող, «Ղարաբաղյան հիմնախնդրի» փորձագետ Թաթուլ Հակոբյանի կարծիքով՝ փաստն այն է, որ Ադրբեջանը երբեք չի ցանկացել երկխոսության և խաղաղարար առաքելության նպատակով իրականում ձևավորել նման հարթակ և փորձել հաշտեցնել երկու ժողովուրդներին կամ ժողովուրդների մեջ ձևավորել վստահության մթնոլորտ: Դա առավել ցայտուն դրսևորվեց հատկապես 2016 թ. ասպրիլյան պատերազմի սանձազերծմամբ և դրանից հետո ձեռնարկված քարոզչական գործողություններով: «Այնինչ այդ նույն ռազմատենչ ու հայատյաց քաղաքականության համատեքստում ստեղծեցին կեղծ պլատֆորմ, դրանում ներառեցին Հայաստանում ձախողված, չկայացած անձանց, և արդեն ուզում են միջազգային դոկտրինների առաջ դնել պայման, որ, եթե գալիս եք Ադրբեջան, ապա պետք է հան-

<sup>625</sup> Հեղինակի հարցազրույցը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Լևոն Հովսեփյանի հետ, 08.12.2016 թ.:

դիպեք նրանց հետ: Մա շատ վտանգավոր է և ամենամեծ հարվածն է խաղաղությանը», - նշել է Թ. Հակոբյանը<sup>696</sup>:

Իսլամագետ Արաքս Փաշայանի կարծիքով՝ «խաղաղության հարթակի» ստեղծումն ունի զուտ քարոզչական, առավելապես հակահայ քարոզչական նպատակ, որն իրականացվում է պարզունակ թուրքական ոճով: Իրականում խաղաղություն բոլորն են ուզում, սակայն այս «հարթակը» այն տեղը կամ միջոցը չէ, որը կարող է նպաստ բերել խաղաղությանը: Մրա նպատակը մարդկանց խաբելով, կաշառելով հավաքագրելն է և նախաձեռնության մեջ առավել մեծ թվով անձանց ներքաշելն ու հակահայ քարոզչություն իրականացնելն է<sup>697</sup>:

«Հարթակի» «համահիմնադիրներին»՝ Վ. Մարտիրոսյանը, ուղղորդվելով Ադրբեջանի հասուկ ծառայությունների կողմից (հետագայում սա հաստատեց հենց ինքը՝ Վ. Մարտիրոսյանը<sup>698</sup>) և հանդիսանալով հոգգո.az ադրբեջանական կայքի թղթակիցը, համացանցի, մասնավորապես «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով ակտիվ քարոզչություն իրականացրեց Հայաստանում և արտասահմանում բնակվող ՀՀ և ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների շրջանում՝ «հարթակին» միանալու նրանց համաձայնությունը ստանալու նպատակով<sup>699</sup>:

Հարկ է նշել, որ «հարթակին» միացած անձանցից շատերը, լիարժեք չպատկերացնելով, թե խոսքն ինչի մասին է, առանց խորանալու մանրամասների մեջ, տալիս էին միանալու համաձայնություն, քանի որ «հարթակի» հոչակած գաղափարները ձևակերպված են խաղաղասիրական ոճով, և հազիվ թե գտնվի

<sup>696</sup> Մեջբերում Թրիվիսիի «ԱՆԻՔ մեդիա» տեղեկատվական հարթակի հիմնադիր Արսեն Խատասյանի և լրագրող Թաթուլ Հակոբյանի հարցազրույցից, 21 մարտի 2017 թ., <http://www.anixc.am/2017/03/21/tatul-hakobyan-siq-media-interview-armenian-azeri/> (նդումն արված է 27.03.2017 թ.):

<sup>697</sup> Հեղինակի հարցազրույցը ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի արաբական երկրների բաժնի առաջատար գիտաշխատող, պ.գ.թ., դոցենտ Արաքս Փաշայանի հետ, 10.12.2016 թ.:

<sup>698</sup> Վահան Մարտիրոսյանիև Բարվում «քցել են». ևս տեսաուղերձով դիմում է հայ ժողովրդին և մեղադրում Ալիևին, <https://168.am/2017/05/28/800793.html> (նդումն արված է 01.06.2017 թ.):

<sup>699</sup> Լույսն տեղում:

մեկը, ով չի ցանկանում խաղաղություն: Եվ այն անձը, ում հետ կապ էր հաստատում Վ. Մարտիրոսյանը, լսելով թեևուզ միայն «հարթակի» անվանումը՝ «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հարթակ», անմիջապես, առանց խորամուխ լինելու դրա կողմից հետապնդվող իրական նպատակների մեջ, հայտնում էր իր համաձայնությունը և հավանություն տալիս նախաձեռնությանը, ինչը հետագայում մեկնաբանվում էր որպես միացում: Այդ ամենը Վ. Մարտիրոսյանի և նրա թիմի կողմից տեսաձայնագրվում էր և անմիջապես, մոնտաժվելուց ու զրույցի անցանկալի հատվածների հեռացումից հետո տեղադրվում համացանցում կամ էթեր տրվում ադրբեջանական հեռուստատեսությամբ: Իսկ երբ տվյալ անձը հասկանում էր, որ խոսքը գնում է բացառապես ադրբեջանամետ քարոզչության ու «Ղարաբաղյան հիմնախնդրի» կարգավորման ադրբեջանական կողմի մոտեցումների մասին, անմիջապես հանդես էր գալիս նախաձեռնությանն իր մասնակցությունը դադարեցնելու մասին հայտարարությամբ: Այդ դեպքում Վ. Մարտիրոսյանը հայտարարում էր, թե Հայաստանի հատուկ ծառայությունների միջամտության և սպանալիքների պատճառով «հարթակին» միացած անձը ստիպված է եղել հանդես գալ հերքող հայտարարությամբ:

Այսպիսով, կարճ ժամանակում բոլորին, այդ թվում՝ միջազգային հանրության ներկայացուցիչներին պարզ դարձավ, որ Բաքվի նախաձեռնած «խաղաղության պլատֆորմը», որտեղ, իբր պետք է շփվելին հայ և ադրբեջանցի փորձագետները, ակտիվիստները՝ խաղաղության հասնելու համար, իրականում մարդկանց հավաքագրելու, սադրանքների ու ապատեղեկատվության հարթակ է<sup>60</sup>:

«Հարթակի» «սպասարկման» համար հավաքագրվում էին նաև հայազգի տարբեր անհատներ՝ անկախ նրանից, թե նրանք իրականում ինչ կարծիք ունեն հռչակված դրույթների մասին: Կարևորը մեծաթիվ հայկական ազգանունների առկայությունն էր ցուցակում: Ըստ «հարթակի» պաշտոնական կայքէջի տվյալ-

<sup>60</sup> Բաքվի պլատֆորմը պայթեց. <http://www.iraqir.am/index/arm/0/politics/view/144992> (նրումն ստված է 10.08.2017 թ.):

երի՝ 2016 թ. մարտի կեսերի դրությամբ «հարթակին» միացել էր 55 մարդ, իսկ 2017 թ. հունիսի դրությամբ՝ ևս 31-ը<sup>601</sup>:

2016 թ. դեկտեմբերից սկսած՝ ադրբեջանական ՁԼՄ-ները, մասնավորապես, haqqin.az կայքը, պարբերաբար հայտարարում էին տարբեր երկրներում բնակվող հայերի՝ իրենց շարքերն իբր համալրելու պատրաստակամության մասին: Մակայն, մի դեպքում պարզվում է, որ «պլատֆորմի» անդամ դարձած անձնավորությունը հայ չէ, մյուս դեպքում խաբուսիյան հերթական զոհը շտապում է տեսախոլովակ տեղադրել, որտեղ հերքում է իր հասցեին ադրբեջանցիների կողմից հեշեցված բոլոր մեղադրանքները, քանի որ իրապես անտեղյակ է եղել «հարթակի» բուն նպատակից:

Բաքվի կտրուկ «խաղաղարար» քարոզչական շրջադարձի մյուս առանձնահատկությունն այն էր, որ դա ընթանում էր ադրբեջանական (զլխավորապես իշխանական թևի) մամուլում տեղեկության ակտիվ շրջանառությամբ: Մասնավորապես Ադրբեջանի նախագահի աշխատակազմի ղեկավար 79-ամյա Ռամիզ Մեհթիևն իր ծավալուն (27 էջանոց) հոդվածում նշում էր, թե որքան կարևոր են չկարգավորված հակամարտության պարագայում ժողովուրդների ներկայացուցիչների միջև հանրային քննարկումները: Մեհթիևը նաև զգուշացնում էր Հայաստանի նախագահին, որ, եթե նա չանոսա իր հասարակության ներկայացուցիչների (նկատի ունենալով «հարթակում» ընդգրված ազգությամբ հայերին) ցանկություններին, այն է՝ ադրբեջանցիների հետ նրանց պայմաններով խաղաղություն կնքելուն, ապա շատ վատ կլինի հայերի և Հայաստանի համար: Ըստ նրա՝ ադրբեջանական ժողովուրդն այնքան բարի է, որ ժամանակին հայերին է զիջել անգամ էրիվանի խանությունը<sup>602</sup>:

Առկա նյութերի վերլուծությունը հիմք է տալիս ենթադրելու, որ «հարթակի» ստեղծման գաղափարախոսը հենց Ռամիզ Մեհթիևն էր, իսկ աշխատանքների համակարգողը՝ Թելման

<sup>601</sup> arm-azpeace.com/desek.php?cat=113&lang=az (նորմալ արված է 11.07.2017 թ.):

<sup>602</sup> Армяно-азербайджанский Нагорно-Карабахский конфликт в контексте гражданского общества Армении, <http://www.1news.az/authors/open/20161130124721754.html> (նորմալ արված է 02.08.2017 թ.):

Այի Գասինովը, որն «APA» գործակալության հայերեն տարբերակի գլխավոր խմբագիրն է Իսկ «հարթակի» քարոզչության տեղեկատվական սպասիովմանը լծված ՋԱՄ-ների շարքում առաջին ջութակի դերը ստանձնել էր աղբբեջանական հագգin.az լրատվական կայքը:

Շամանակին հենց այս կայքն էր առաջնորդում Սումգայիթում և Բաքվում 90-ականների սկզբներին հայերի քարոզերի թեմայով վեպի հեղինակ Աքրամ Այլիսլիի դեմ քարոզչական հարձակումները և հիմնավորում նրա դեմ ծավալված բռնաճնշումների, հոգեբանական շանտաժի դրդապատճառները:

Ուշագրավ է, որ 2014-2016 թթ. Բաքվի իշխանություններն արշավ իրականացրին աղբբեջանական այն հասարակական կազմակերպությունների դեմ, որոնք միտված էին դեպի ժողովրդավարությունը, բարձրաձայնում էին մարդու իրավունքների ոտնահարման բազմաթիվ փաստեր: Հայտնի իրավապաշտպան և հայկական ՀԿ-ների հետ համատեղ ծրագրեր իրականացնող Լեյլա Յունուսի և նրա ամուսնու՝ կոնֆլիկտաբան և պատմաբան Արիֆ Յունուսի դեմ բռնարարների փուլում (2014-2015 թթ.) հենց հագգin.az-ն էր հանդես գալիս խմբագրական մեղադրականներով՝ «բացահայտելով» նրանց դավաճանական քայլերը: Օրինակ, կայքը հրապարակել էր Արիֆ Յունուսի ձեռքների ամուսնության վկայականի պատճենը, որն ապացուցում էր, որ նրա մայրն ազգությամբ հայուհի է, իսկ հայրը, թեև աղբբեջանցի է, բայց հանգամանքների բերումով մեծացել և դաստիարակվել էր Աղբբեջանում բնակվող հայ ընտանիքում<sup>600</sup>: Կայքի տրամաբանությամբ՝ այս հանգամանքը պետք է հիմնավոր բացատրություն դառնար աղբբեջանական հասարակության համար, թե ինչու են իշխանություններն ամուսինների նկատմամբ առանձնահատուկ դաժանությունի ցուցաբերել:

Հարկ է նշել նաև, որ աղբբեջանական իշխանությունների կողմից «հարթակն» օգտագործվում էր նաև ՀՀ պաշտոնատար անձանց կողմից հնչող տեսակետներին արձագանքելու և դրանց հակադարձելու համար: Այդ հնարքով արհեստականորեն փորձ

<sup>600</sup> Секретное досье Лейлы и Арифа Юнусовых (фотофакты). Часть первая, <http://haggin.az/news/21826>. (նշումն արված է 12.08.2017 թ.):

է արվում կարևորություն հաղորդել «Խարթակին», ներկայացնել այն որպես հայ-աղբրեջանական հարաբերություններում տեղի ունեցող գործընթացների մասնակից:

Այսպես, ՀՀ եսխագահի՝ «Ֆրանս-Պրես» գործակալությանը տված հարցազրույցի վերաբերյալ «Խարթակը» տարածեց հետևյալ հաղորդագրությունը.

«Հայաստանի Հանրապետության Եսխագահի՝ «Ֆրանս-Պրես» գործակալությանը տված հարցազրույցում հայտարարության մեջ արտացոլված ռազմական ճարտասանությունը հող է ստեղծում ողջ Հարավային Կովկասի կայունության և անվտանգության խախտման համար: Պետության ղեկավարի մակարդակով նման ձևաչափով այդպիսի հայտարարությունները հաստատում են բանակցային գործընթացում Հայաստանի շահագրգռվածության բացակայության փաստը: «Ֆաղաղության հարթակը» անընդունելի է համարում պետության ղեկավարի այնպիսի հայտարարությունները, ինչպիսիք են պատերազմի կոչերը և գտնում է, որ նման ղեկավարները, անկախ եպատակից, կարող են հարևան ժողովուրդների միջև ատելության և թշնամության ավելացման պատճառ դառնալ: .. Ելնելով իրավիճակի ըմբռնումից և դրա լուրջ գնահատումից, ինչպես նաև այն պատասխանատվությունից, որը մենք վերցրել ենք մեզ վրա՝ անհրաժեշտ ենք համարում երկու պետությունների ղեկավարների և մյուս պաշտոնական անձանց կոչ անել՝ հրաժարվել ռազմական իրավիճակը սրող հայտարարություններից, ինչպես նաև Հայաստանի և Աղբրեջանի միջև բանակցային գործընթացի փաստացի միջնորդ ԵԱՀԿ Մինսկի խմբին կոչ ենք անում ջանքերն ուղղել բանակցությունների գործընթացի շուտափույթ վերականգնմանը: Դրա հետ մեկտեղ մենք ԵԱՀԿ Մինսկի խմբին կոչ ենք անում, իր մանդատին համապատասխան կանխարգելիչ միջոցներ ձեռնարկել Հայաստանի և Աղբրեջանի միջև Լեռնային Ղարաբաղի շուրջ գործերի շփման գծում ցանկացած



ռազմական էսկալացիան կանխելու համար»<sup>64</sup>, - նշված էր հայտարարության մեջ:

Բացի այդ, «հարթակի» առջև դրված է խնդիր՝ կազմակերպել, ինչպես նաև մասնակցել տարբեր կազմակերպությունների կողմից «Ղարաբաղյան հիմնահարցի» թեմայով կազմակերպվող կոնֆերանսներին, հանդիպումներին:

Այսպես, Բաքվում 2017 թ. մարտի 14-ին անցկացվեց «Կովկասի պատմության կենտրոն» հասարակական կազմակերպության կողմից կազմակերպված «Ղարաբաղյան հիմնախնդիր. սկզբնավորումը, խաղաղապահություն և քաղաքացիական հասարակության դերը» թեմայով գիտագործնական կոնֆերանսը: Պաշտոնապես այն նվիրված էր պատմության հարցերին, միջազգային երկխոսության ընդլայնմանը, խաղաղասիրական նախաձեռնություններին, ինչպես նաև «Ղարաբաղյան հիմնահարցի» կարգավորման ուղիները գտնելու նպատակով հայաղյուրեջանական երկխոսությանը: Միջոցառմանը մասնակցել են Ադրբեջանից, Վրաստանից, Ռուսաստանից, Թուրքիայից, Ղազախստանից, Կանադայից, Ուկրաինայից, Շվեդիայից, Ուզբեկստանից «գլխնականներ», «քաղաքագետներ» և «հասարակական գործիչներ», այդ թվում՝ նաև «հայ գործիչներ և հետազոտողներ», ընդհանուր առմամբ, տարբեր երկրներից ավելի քան 40 մարդ: Կոնֆերանսին մասնակցել է նաև ԶԼՄ-ների, Ադրբեջանի պետական կառույցների, Բաքվում հավատարմագրված դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Կոնֆերանսին մասնակից է եղել նաև ազգությամբ հայ, այսպես կոչված, «Ալբանական ինքնակառավարվող եկեղեցու և թուրք քրիստոնյաների ժառանգության վերականգնման համար» շարժման նախագահ Արթուր Աղաջանովը: Հակահայկական կոչեր հնչեցնելուն զուգահեռ նա նաև Ղարաբաղի հայերին կոչ է արել միանալ Ռուստովում ապրող «հետազոտող» էդուարդ Վարդանովի հետ համատեղ նախաձեռնած ալբանական հոգևոր, մշակութային,

<sup>64</sup> «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հարթակը» պետությունների պաշտոնական անձանց կոչ է արել դադարեցնել ռազմական ճարտասանությունը, <http://armenia.az/articles/57322/> (նշումն արված է 13.08.2017 թ.):

պատմական և ճարտարապետական ժառանգության ծվենները «հայկականացումից» փրկելու խնդրագրին<sup>68</sup>:

Իրականում, ինչպես վերոգրյալն է ապացուցում, «խաղաղության հարթակը» ստեղծվեց որպես Հայաստանի և Արցախի դեմ տեղեկատվական պատերազմ վարելու հերթական գործիք, որտեղ գլխավոր սուբյեկտ հանդիսացան Ադրբեջանի իշխանություններն ու հատուկ ծառայությունները: Տեղեկատվական պատերազմի օբյեկտը հայ հասարակությունն է և Հայաստանի ու Արցախի իշխանությունները, ինչպես նաև ադրբեջանական հասարակությունը, միջազգային հանրությունը, հատկապես եվրոպական կառույցները և, ձևականորեն, նաև Ադրբեջանի իշխանությունները, որոնք, իբր որպես իրենց ժողովրդի բարի կամքի դրսևորում, պետք է ընդունեն անմեղ կյանքեր խլող ռազմական գործողությունները խաղաղ դիվանագիտական ձեռնարկումներով փոխարինելու գործընթացը:

Սակայն, վերլուծությունը ցույց է տալիս, որ «հարթակ» ունի երեք նպատակային լսարան՝

- 1) հայ հասարակությունը.
- 2) ադրբեջանական հասարակությունը.

3) միջազգային հանրությունը, հատկապես եվրոպական կառույցները:

Ադրբեջանական իշխանությունների պատկերացմամբ՝ տեղեկատվական պատերազմում այս գործիքի կիրառման նպատակը և ակնկալվող արդյունքը պետք է լիներ Հայաստանի և Արցախի իշխանությունների հանդեպ հայ հանրության հավատի կորուստը, նրանց վարած քաղաքական կուրսի նկատմամբ անվստահությունը և խոր եհասթափությունը, պարտավորական տրամադրությունների սերմանումը, իսկ միջազգային հանրության աչքերում՝ Ադրբեջանի ղեկավարության «խաղաղասեր» բնութագրի ձևավորումը ու վստահելիության ամրապնդումը:

Դժվար չէր նկատել, որ ադրբեջանական կողմն ամեն ինչ անում էր «հարթակին» արհեստականորեն «զաղափարական բովանդակություն» հաղորդելու համար: Միաժամանակ նշմար-

<sup>68</sup> Ղարաբաղցի հայր 27 տարվա ընթացքում առաջին անգամ ժամանել է Բաքու, <http://armenia.as/articler/57401/> (նորմալ արվան է 15.08.2017 թ.):

վում էր «հարթակի» ստեղծման ձեռագիրը, որն անմիջականորեն հիմք էր տալիս զուգահեռներ անցկացնել Թուրքիայի կողմից «1915 թ. իրադարձություններն ուսումնասիրող պատմաբանների հանձնաժողով» ստեղծելու տխրահռչակ փորձերի հետ:

Աղբրեջանը սկսեց նաև քայլեր ձեռնարկել «հարթակի» գործունեության համար միջազգային կառույցներից դրամաշնորհներ ստանալու ուղղությամբ՝ հաշվի առնելով կառույցի ֆինանսական խնդիրները:

Սակայն աղբրեջանական կողմի վերոնշյալ քայլերը կարծես մեկ վայրկյանում հողս ցնդեցին, երբ 2017 թ. մայիսի 28-ին հրապարակվեց դրա «համահիմնադիր» Վահան Մարտիրոսյանի տեսաուղերձը ուղղված հայ ժողովրդին: Այն իր ֆեյսբուքյան էջում տեղադրեց քաղաքագետ, տարածաշրջանային անվտանգության հարցերով փորձագետ Հրանտ Մելիք-Շահնազարյանը՝ նշելով, թե ինքը չէր էլ կասկածում, որ այսպես կոչված «խաղաղության պլատֆորմը» աղբրեջանական հատուկ ծառայությունների նախաձեռնությունն էր<sup>66</sup>:

Տեսանյութում Վահան Մարտիրոսյանը հայտնում է, թե եկել է ժամանակը՝ բացահայտելու աղբրեջանական քարոզչամեքենայի և այլևայն ռեժիմի հերթական կեղծիքը: Այդ կեղծիքի շնորհիվ պաշտոնական Բաքուն մեկ անգամ ևս փորձ է անում թող փչել համաշխարհային հանրության, հայերի և սեփական ժողովրդի աչքերին՝ կոծկելով իրականում իր ազդեսորի և Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ ատելություն սերմանողի բուն էությունը: «Հայաստանի և Աղբրեջանի միջև խաղաղության պլատֆորմի» նպատակը հանդիսացել է Աղբրեջանի բռնատիրական և ազդեսոր իրական դեմքը կոծկելը: Ըստ Վ. Մարտիրոսյանի, «խաղաղության պլատֆորմը» ոչ մի կարգ չունի Աղբրեջանի ժողովրդի և հասարակության հետ: Այն հենց սկզբից ստեղծվել է և ղեկավարվում է Աղբրեջանի բարձրագույն իշխանությունների և նրանց հատուկ ծառայությունների կողմից: Այնտեղ ներգրավված աղբրեջանական որոշ լրագրողներ, հասարակական գործիչներ և իրավապաշտպաններ լուր դրածուներ են և

<sup>66</sup> <https://www.facebook.com/HrantBek/?ref=es>, 28 մայիս 2017, (տրամս արված է 27.06.2017 թ.):

կատարում են նույն իշխանությունների և հատուկ ծառայությունների պատվերը: Ինչ վերաբերում է եվրոպացի այսպես կոչված խաղաղության յոթ դեսպաններին, ապա նրանք, ըստ Վ. Մարտիրոսյանի, գտնվում են ադրբեջանական իշխանությունների հետ սերտ, նյութական հարաբերությունների մեջ<sup>607</sup>:

Վ. Մարտիրոսյանի տեսաուղերձին ադրբեջանական մամուլն արձագանքեց միայն օրվա երկրորդ կեսին: Նախ հազգin.az կայքը հրապարակեց Վահե Ավետյանի ֆեյսբուք սոցիալական ցանցում տեղադրած խոսքերը. «Խաղաղության պլատֆորմի նախկին անդամ, Ուկրաինայում թաքնվող Վ. Մարտիրոսյանը գործել է Հայաստանի հատուկ ծառայությունների հրահանգով և կատարել նրանց պատվերը»<sup>608</sup>: Այնուհետև հազգin.az-ը հրապարակեց «խաղաղության հարթակին» միացած «Արամ Կարապետյանի» և «Անահիտ Սիևանյանի»<sup>609</sup> հարցազրույցները, որտեղ վերջիններս ևս Վ. Մարտիրոսյանի քայլը կապում են ՀՀ հատուկ ծառայությունների հետ: Հոդվածի վերնագիրը ևս մատնանշում է այդ հանգամանքը. «Հայկական հատուկ ծառայությունները և Մարգարյանը խաղաղություն չեն ուզում, այլ ապես ինչու գնեցին Մարտիրոսյանին»<sup>610</sup>:

Ադրբեջանական համացանցային տիրույթում գրեթե բոլորը հարձակվեցին Վ. Մարտիրոսյանի վրա և երևիվա «խաղաղարար ու մարդասեր հայր» մեկ ակնթարթում դարձավ Ադրբեջանի թշնամին, ով «կատարել է Հայաստանի հատուկ ծառայությունների պատվերը և կարողացել է ներթափանցել իրենց թիկունք մեծ վնաս պատճառելով Ադրբեջանին»:

<sup>607</sup> [https://www.facebook.com/HrazBek?fref=af&page\\_ref=story](https://www.facebook.com/HrazBek?fref=af&page_ref=story) (իդրամն արված է 27.06.2017 թ.):

<sup>608</sup> Вахе Аветян: По заданию армянских спецслужб Ваан Мартиросян..., <https://haqqin.az/news/101270> (իդրամն արված է 05.09.2017 թ.):

<sup>609</sup> Օրեք անց Վ. Մարտիրոսյանը բացահայտեց, որ վերոնշյալ «Արամ Կարապետյանը» և «Անահիտ Սիևանյանի» իրականում հայեր չեն, առաջինը Էլզենի Ռազալիբ անուն-ազգանունով ուկրաինացի է իսկ երկրորդը՝ ադրբեջանուհի Այոնա Աբդուլանան, որոնք հազգin.az կայքի խմբագրի մտերիմներն են, <https://www.youtube.com/watch?v=K3DfGhYN28> (իդրամն արված է 15.09.2017 թ.):

<sup>610</sup> Арам Карапетян и Апант Сишмян: Армянские спецслужбы и Саргсян не хотят мира. Иначе зачем они купили Мартиросяна?, <https://haqqin.az/news/101278> (իդրամն արված է 16.09.2017 թ.):

Ինչ վերաբերում է հայկական համացանցային տիրույթում ծավալված քննարկումներին, ապա կարող ենք փաստել, որ ավելի շատ կարծում են, թե Վ. Մարտիրոսյանին «քցել են», խարել կամ դարձրել «օգտագործման համար ոչ պիտանի», ինչի արդյունքում էլ նա որոշել է դավաճանել նաև ադրեջանական կողմին<sup>602</sup>:

Այդ կարծիքն է արտահայտել նաև քաղաքագետ Գագիկ Համբարյանը նշելով, թե Վ. Մարտիրոսյանի «տերերը» ադրբեջանցիները, հասկացել են, որ Վահանից օգուտ տտանալ էլ հնարավոր չէ և դադարեցրել են ֆինանսավորումը: Դրան ի պատասխան նա սկսել է բացահայտել կեղծիքը<sup>603</sup>:

Կան նաև կարծիքներ, որ Վ. Մարտիրոսյանին պետք չէ հավատալ, քանի որ նա երկակի խաղ է խաղում և հեարավոր է սա նա մեկ ծուղակ է<sup>604</sup>:

Հարկ է նշել մեկ հանգամանք. 2017 թ. մայիսի 3-ին Ադրբեջանի գլխավոր դատախազությունը տարածեց հաղորդագրություն այն մասին, որ Ադրբեջանի ՊՆ-ի և պետական անվտանգության ծառայության կողմից ձերբակալվել են մի խումբ զինծառայողներ և քաղաքացիական անձինք<sup>605</sup>, որոնք երկար տարիներ համագործակցել են Հայաստանի հատուկ ծառայությունների հետ, նրանց փոխանցել պետական գաղտնիք հանդիսացող տեղեկություններ, ինչպես նաև փորձել են կազմակերպել

<sup>602</sup> Վահան Մարտիրոսյանին Բաքվում «քցել են», նա տեսաուղերձով դիմում է հայ ժողովրդին և մեղադրում Ալիևին, <https://168.am/2017/05/28/800793.html>, Ադրբեջանում «մանթրամ» են Վահան Մարտիրոսյանը եմինս էլ դավաճանել է Ադրբեջանին, <http://www.inagir.am/index/arm/0/country/view/154396> (նղումներն արված են 17.09.2017 թ.):

<sup>603</sup> Համբարյան Գ., Ալիևյան վարչակարգը բոլոր առումներով օգտագործեց Վահան Մարտիրոսյանին և նետեց աղբարկղ, <http://mamul.am/am/news/105897/> (նղումն արված է 12.09.2017 թ.):

<sup>604</sup> Ադրբեջանից ազատության խնդրած Վահան Մարտիրոսյանի տեսաուղերձը քննարկումների առիթ է դարձել, <http://armtimes.com/hy/article/113236> (նղումն արված է 17.09.2017 թ.):

<sup>605</sup> Նշվում է մինչև 40-50 անձի մասին, որոնցից մոտ մեկ տասնյակին ըստ արևերկրում գտնվող ադրբեջանական ընդդիմության որոշ ներկայացուցիչների, ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցները դաժանաբար սպանել են:

ահաբեկչական ու դիվերսիոն գործողություններ Բաքվում և Ադրբեջանի այլ քաղաքներում: Ընդ որում, վերոգրյալը, ինչպես նաև Վ. Մարտիրոսյանի տեսաուղերձն ու Ադրբեջանին դավաճանելը կապում են ՀՀ հատուկ ծառայությունների հետ՝ համարելով նրանց հաջող գործունեության արդյունք:

Ստացվում է, որ մեկ ամսվա ընթացքում արդեն երկրորդ դեպքն է, որ ադրբեջանական տիրույթում տարածվում են ՀՀ հատուկ ծառայությունների հաջող գործողության կամ օպերացիայի մասին տեղեկություններ. առաջինը՝ 40-50 զինծառայողների ու քաղաքացիական անձանց հավաքագրված լինելն ու նրանց միջոցով տարիներ շարունակ տեղեկություններ ստանալն է իսկ երկրորդը՝ Վ. Մարտիրոսյանին «հաջողությամբ» Բաքու ուղարկելը, այնտեղ «խաղաղության հարթակ» ձևավորելը, այնուհետև նրա միջոցով նույն «հարթակն» ու ադրբեջանական իշխանություններին վարկաբեկելը:

Հատկանշական է, որ նույնաբովանդակ տեսաուղերձով, սակայն արդեն ռուսերեն, Վ. Մարտիրոսյանը հանդես եկավ նաև օրեր անց՝ 2017 թ. հունիսի 1-ին խոսքն ուղղելով միջազգային, այդ թվում՝ եվրոպական կազմակերպությունների ներկայացուցիչներին, իրավապաշտպաններին, լրագրողներին, որոնց հետ ինքը նախկինում գրուցել է «խաղաղության հարթակի» գործունեության շուրջ կամ ովքեր տեղյակ են այդ կառույցի գործունեությանից: Տեսաուղերձում նա հայտնում է, որ հայկական կողմից ինքը որևէ ճնշման չի ենթարկվել, հակառակը, իրեն ճնշել են հենց Ադրբեջանի հատուկ ծառայությունները: Նա հերքում է ադրբեջանական մամուլի հրապարակումները, իբր ինքը ՀՀ հատուկ ծառայությունների գործակալ է Վ. Մարտիրոսյանը նաև հայտնում է, որ «հարթակը» ստեղծել և ղեկավարում են Ադրբեջանի նախագահի աշխատակազմի և Պետական անվտանգության ծառայության աշխատակիցները<sup>66</sup>:

Վերջում Վ. Մարտիրոսյանը հայտնում է իր կարծիքը, ըստ որի, Ադրբեջանում գոյություն չունի ազատ քաղաքացիական

<sup>66</sup> Վ. Մարտիրոսյանի տեսաուղերձը, <https://www.youtube.com/watch?v=K3DfGchYN28> (նորմալ արված է 27.09.2017 թ.):

հասարակություն, իսկ հայատյացությունն այնտեղ ամենաբարձր մակարդակի վրա է<sup>66</sup>:

Տեսաուղերձի հրապարակումից երեք օր անց՝ հունիսի 4-ին, Վ. Մարտիրոսյանը հրապարակեց «խաղաղության հարթակին» միացած Սերգեյ Ջուլիանյանի (բնակվում է ԹՀ Ստամբուլ քաղաքում) տեսաուղերձը, որում վերջինս հայտնում է, թե, անկեղծորեն հավատալով Բաքվի «խաղաղության հարթակի» կողմից առաջարկվող գաղափարներին՝ իրր երկու ժողովուրդների միջև խաղաղություն հաստատելու մղումներին, միացել է դրան, այնուհետև աղբրեջանական կողմի հրավերով երկու շաբաթով մեկնել Բաքու: Մակայն այնտեղ, տեսնելով կեղծիքների մի ամբողջ շարան և թե ինչպես են աղբրեջանական հատուկ ծառայությունները վերահսկում «հարթակի» գործունեությունը և նրա անդամներին, թե տարատեսակ խաբեությունների ու բառախաղերի միջոցով ինչպիսի նվաստացուցիչ պայմաններ են թելադրում ստորագրվող փաստաթղթերում, մի կերպ դուրս է եկել այնտեղից, կապվել Վ. Մարտիրոսյանի հետ, ով նա, մեղմ ասած, արդեն չէր հավատում աղբրեջանեցիներին և համաձայնության են եկել ու կցվել Հայաստանի և Արցախի համար լարված հերթական թակարդը չեզոքացնելու խնդրին: Վերջում Ս. Ջուլիանյանը հորդորում է ոչ մի պարագայում չգայթակղվել ալիևյան ռեժիմի և աղբրեջանական քարոզչամեքենայի խաղաղասիրության մղումներով, այդ թվում՝ «խաղաղության հարթակով»:

Այսպիսով, վերլուծելով Վ. Մարտիրոսյանի կողմից 2017 թ. մայիսի 28-ին հրապարակած տեսաուղերձից հետո ծավալված իրադարձությունները, կարելի է եզրակացնել, որ «խաղաղության հարթակ» կոչված նախաձեռնությունը տապալվում է, և կազմակերպիչներն անխմաստ ջանքեր են գործադրում՝ փրկելու ստի, կեղծիքի ու խաբեության հիման վրա ստեղծված հարթակի հեղինակությունն ու հետագա գործունեությունը: Դրան էր ուղղված նաև «հարթակի» «համահեղինակ» Վահե Ավետյանի հարցազրույցը՝ հրապարակված կառույցի կայքէջում, որտեղ վերջինս հանդես է գալիս այն վերակազմակերպելու, նոր մտանցումներ, նոր նախաձեռնություններ ու ակտիվ քայլեր իրակա-

<sup>66</sup> Նույն տեսաուղերձը:

եացնելու օգտին՝ նշելով, թե ինքը պատրաստ է ստանձնել դրա ղեկավարումն ու նոր ծրագրեր կյանքի կոչելը: Նա նաև հայտնում է, թե «հարթակի» ղեկավարումն իրեն վստահելու դեպքում պատրաստ է այցելել Հայաստան, Երևանում նա նախաձեռնել և ստեղծել նմանատիպ կառույց, բացի այդ, նամակներ հղել ՀՀ նախագահին և ԱԳ նախարարին<sup>60</sup>:

Այսպիսով, վերլուծելով Ադրբեջանի կողմից Հայաստանի և Արցախի դեմ իրականացվող տեղեկատվահոգեբանական պատերազմի համատեքստում «Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հարթակի» գործունեությունը, ինչպես նաև համադրելով այն Ադրբեջանի ներքաղաքական և արտաքին քաղաքական իրավիճակի արդի իրողությունների հետ, կարելի է եզրակացնել, որ.

1. Բարձր «խաղաղության հարթակի» ստեղծման նախաձեռնողի դերում չէր կարող հանդես գալ ադրբեջանական քաղաքացիական հասարակությունը, քանի որ այդ երկրում 2014-2016 թթ. հասարակական կազմակերպությունների նկատմամբ իրականացված «ջարդից» հետո ոչ ոք չէր կարող հանդգնել բարձրաձայնել գաղափարներ, որոնք թեկուզ արտաքինապես պաշտոնական մոտեցումների հակոտնյան են: Հետևաբար, «հարթակը» նախաձեռնել և ֆինանսավորում են Ադրբեջանի իշխանությունները, և այն կոչված է սպասարկելու վերջիններիս արտաքին քաղաքականությունը՝ դառնալով հակահայ քարոզչության գործիքներից մեկը: Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ ժողովրդական դիվանագիտության պարզ նմանակում, պատրանք:

Հաշվի առնելով ադրբեջանական իշխանությունների կողմից «հարթակին» տրվող նշանակությունը, դրա գործունեության ակտիվության ուղղությամբ գործադրվող ջանքերի բնույթը՝ կարելի է եզրակացնել, որ այն անմիջականորեն վերահսկվում է Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից:

«Հարթակի» միջոցով Ադրբեջանի իշխանությունները ՀՀ և Արցախի դեմ վարում էին բացառապես տեղեկատվական պատերազմ հնարավորինս համադրելով այդպիսի պատերազմ

<sup>60</sup> Вехе Аветян: «Мне надо поговорить с Баку», 5 Июня 2017, <http://arm-azpeace.com/news.php?id=1736&lang=ru> (նղումն արված է 10.08.2017 թ.):



վարելու ձևերն ու մեթոդները հոգեբանական ներգործության կոնկրետ մեխանիզմների հետ: «Հարթակի» միջոցով տեղեկատվական պատերազմը տարվում էր համաժողովների և այլ հրապարակային ներկայացուցչական միջոցառումների ձևով՝ աղբյուրաբանական կողմի մոտեցումներին քողարկված ձևով հեշտոնություն հաղորդելու, տեղեկության գործնական փոխանակումն ապահովելու նպատակով:

2. «Հարթակի» հայազգի անդամների ազգադավ սուբյեկտիվ մոտեցումը «Ղարաբաղյան հիմնահարցի» կարգավորման տեսանկյունից միջոց կամ գործիք էր այնպիսի սկզբունքների, նպատակների իրագործման համար, որոնք հիմնված չեն ներկա իրողությունների օբյեկտիվ ճանաչողության վրա: Իրականում, քողարկվելով Աղբյուրաբանի դեկավարության, ինչպես նաև հատուկ ծառայությունների կողմից նախօրոք մշակված, ըստ էության՝ տեղեկատվական պատերազմի մեթոդաբանությամբ և պլանավորված գործողությունների ծրագրով, «հարթակը», ուղղորդվելով և դեկավարվելով վերջինների կողմից, ժողովրդավարական ձեռնարկումների անվան տակ փորձում էր զանգվածների (հայաստանյան և աղբյուրաբանական հասարակությունների) գիտակցության մեջ կատարել պակտայացիֆիատական ուղղվածության հեղաշրջում՝ «ԼՂ հիմնախնդրի» կարգավորման հիմնահարցում Աղբյուրաբանի ամբողջատիրական-րոնատիրական քաղաքական կուրսի իրագործումն ապահովելու նպատակով:

3. Հասարակական մակարդակով հայ-աղբյուրաբանական շփումների գաղափարը, անկողմնակալ իրագործման դեպքում, կարող է կրել դրական երանգներ, առավել ևս, երբ իրական հարթակում հանդիպեն և մտքեր փոխանակեն հայ և աղբյուրաբանական հասարակությունները ներկայացնող իսկապես ճանաչված ու հարգանք վայելող գործիչներ: Մակայն դրա համար անհրաժեշտ են նպաստավոր պայմաններ: Հաշվի առնելով «ԼՂ հիմնախնդրի» կարգավորման գործընթացի ներկայիս վիճակը, հակասակորդ կողմի տրամադրվածությունը՝ նման հանդիպումների կազմակերպումն իրատեսական չէ: Իսկ Ի. Ալիևի կտրուկ հայտարարությունները տարածաշրջանում երկրորդ հայկական պետության ստեղծման անթույլատրելիության մա-

սին, ի չիք են դարձնում ժողովրդական դիվանագիտության ներդրումը հիմնախնդրի կարգավորման գործում: Եվ, վերջապես, ժողովրդական դիվանագիտությունը չի կարող գործել, եթե նախնառաջ չկան հրադադարի կայուն պայմաններ:

4. Ուսումնասիրելով «հարթակին» միացած անձանց ցուցակը, ինչպես նաև աղբրեջանական իշխանությունների կողմից միջազգային տարբեր կառույցների ներկայացուցիչներին կաշառելու դեպքերը՝ լուրջ հիմքեր են առաջանում ենթադրելու, որ նրանք ինչ-որ ձևով կյուրական կախվածություն ունեն Աղբրեջանից:

5. Աղբրեջանում պատերազմի մասին խոսակցությունները մշտապես շրջանառվում են հանրային մակարդակում. դա եղել և մնում է պաշտոնական քարոզչության առանցքային դրույթներից մեկը, և «հարթակը» ծառայում էր նաև դրան: Իրական խաղաղության նպատակ հետապնդող հարթակը նախապայմաններ չէր առաջադրի, ուստի այն Հայաստանի և Արցախի դեմ ուղղված սադրանք էր, տեղեկատվական պատերազմ վարելու գործիք: Իսկ քանի որ Աղբրեջանն ամեն կերպ խափանում է շփման գծի երկայնքով խաղաղության ու կայունության ամրապնդման հետաքննող մեխանիզմներ ստեղծելու առաջարկությունները, ինչը կարող է բերել պատերազմի վերսկսման, «հարթակը» կարող է աղբրեջանական իշխանությունների համար ծառայել նաև որպես գործիք՝ միջազգային հանրության մոտ ապագա հնարավոր պատերազմական գործողություններն արդարացնելու համար:

6. Հայ հանրության մեջ չկա տարակարծություն «հարթակի» գործունեության շուրջ. ինչպես նշել է բրիտանացի լրագրող Թոմաս Դե Վաայը, հայության միայն մեկ տոկոսից էլ քիչ մասը կարող է ողջունել այս նախաձեռնությունը: Այսինքն, հայ ժողովրդի 99 տոկոսից ավելին վստահ է, որ նախաձեռնությունը սպասարկում է Աղբրեջանի իշխանությունների շահերը, իսկ «հարթակին» միացած հայերը միանշանակ ազգի դավաճաններ են:

Այսրկովկասյան տարածաշրջանում Ադրբեջանի Հանրապետությունն ունի բավական լուրջ քաղաքական, տնտեսական, տրանսպորտային, կոմունիկացիոն դերակատարություն: Մրաժամանակ, Հայաստանի և Արցախի հանրապետությունների հետ գտնվելով հակամարտության մեջ, այդ երկրի ռազմաքաղաքական ղեկավարությունը փորձում է ամեն ինչ անել հայկական պետությունները շրջափակման մեջ պահելու, ինչպես նաև խոչընդոտելու տարածաշրջանային տարրեր նախաձեռնություններում որևէ դերակատարում ունենալու հնարավորությունից: Այդ, ինչպես նաև «Ղարաբաղյան հիմնախնդիրը» իր օգտին լուծելու և հակահայ գործունեություն իրականացնելու նպատակադրմամբ՝ Ադրբեջանի ղեկավարությունը երկրի հատուկ ծառայություններին վերապահել է բացառիկ դերակատարություն:

Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը, 1994 թ. ստորագրելով կրակի դադարեցման վերաբերյալ Քիշքեթյան եռակողմ (Ադրբեջան, Հայաստան, Արցախ) համաձայնագիրը, միաժամանակ իր առջև խնդիր դրեց ռազմական գերակայություն ստանալու և աշխարհաքաղաքական բարենպաստ պայմաններ ստեղծվելու դեպքում ռազմական ճանապարհով լուծել Ղարաբաղի հարցը: Հետագա, հստակապես վերջին մի քանի տարիների զարգացումները, Ադրբեջանի աննախադեպ ծավալի հասնող ռազմականացումը, այդ երկրում պետական մակարդակով հայատյացության խորացումը, իշխանությունների ու հատուկ ծառայությունների կողմից Հայաստանի, Արցախի դեմ հետախուզական, դիվերսիոն-հետախուզական, պատերազմական և այլ քայքայիչ գործունեության ծավալումը, Թուրքիայի կողմից Ադրբեջանին բացառապես սատարելը վկայում են այն մասին, որ Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը կարծես չունի հիմնախնդիրը խաղաղ ճանապարհով լուծելու իրական ստադրություն և կամք:

Ուստի, ամփոփելով աշխատանքը, կարող ենք եզրահանգել, որ Ադրբեջանի հստակ ծառայությունների մարմինները մշտապես փորձելու են Հայաստանի և Արցախի դեմ իրակա-

նացնել տարատեսակ քայքայիչ գործողություններ, անհաբեկյա-  
կան ակտեր, ծավալել դիվերսիոն-հետախուզական գործունե-  
ություն՝ նպատակ ունենալով հնարավորինս թուլացնել Հայաս-  
տանը, ազդել ժողովրդի բարոյահոգեբանական վիճակի վրա՝  
ապականելով լայնամասշտաբ պատերազմի վերսկսմամբ:

Այսպիսով, հետազոտելով աղբյրեջանական հատուկ ծա-  
ռայությունների գարգացման հիմնական օրինաչափությունները  
և դրանց հակահայ գործունեությունը, հանգել ենք հետևյալ  
եզրակացություններին.

1. Ստեղծման օրվանից սկսած՝ 1919 թ. մարտի 28-ից,  
աղբյրեջանական հատուկ ծառայությունները նպատակադրված  
են եղել իրականացնել հակահայ գործողություններ հետևյալ  
հիմնական ուղղություններով.

- հետախուզական տեղեկատվության հայթայթում,

- Հայաստանի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարե-  
լավման խոչընդոտում,

- Հայաստանի տարածքում բնակվող մուսուլման բնակչու-  
թյանը Հայաստանի իշխանությունների նկատմամբ ապստամ-  
բական ու քաղաքացիական պատերազմական գործողություն-  
ների հրահրում, այդ նպատակով նրանց ֆինանսավորում, լրտն-  
սական գործունեության ծավալում:

2. 1919-1920 թթ. ԱՂՁ-ում ստեղծված և գործունեություն  
ծավալած հատուկ ծառայության մարմինները, տիրապետելով  
հետախուզական և հակահետախուզական գործունեության  
որոշ մեթոդների և ձևերի (ինչպես օրինակ՝ դիվանագիտական  
քողի տակ հանդես գալը, գործակալներ հավաքագրելը, գաղտ-  
նագրերից օգտվելը և այլն), այնուհանդերձ Հայաստանի ան-  
վտանգության դեմ ծավալած գործունեության մեջ շոշափելի  
արդյունքների չեն հասել, քանի որ, համադրելով հայկական և  
աղբյրեջանական աղբյուրներում տեղ գտած պատմական փաս-  
տերը, նկատելի է դառնում, որ աղբյրեջանական հատուկ ծառա-  
յություններն իրենց հակահայ գործունեության մեջ հիմնակա-  
նում ունեցել են ձախողումներ: Հայաստանի առաջին հանրա-  
պետության անվտանգության մարմինների աշխատակիցների  
նպատակադրված ու անձևուրաց աշխատանքի շնորհիվ հնա-

րավոր է եղել խափանել աղբբեջանական հատուկ ծառայությունների քայքայիչ գործունեությունը:

Հատկաբեջական է, սակայն, որ մուտ երկամյա գոյության ընթացքում ԱՊՀ-ն ստեղծել էր պետական անվտանգության համակարգում կարևորագույն դերակատարում ունեցող հատուկ ծառայություններ, որոնք հստակ սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի ազգային անվտանգությանը:

3. Աղբբեջանի խորհրդայնացումից հետո այդ երկրի հատուկ ծառայությունները, ՌՍՖՍՀ-ի պետականվտանգության համակարգի մաս կազմելով, ենթարկվեցին բոլոր այն փոփոխություններին, որոնք նշան ողջ ՌՍՖՍՀ-ում:

Այնուհանդերձ, խորհրդային տարիներին ևս այդ երկրի հատուկ ծառայությունների գործունեության մեջ նկատելի էր հակահայ ուղղվածությունը: ԱՌՍՀ հատուկ ծառայությունները տարբեր մեթոդներով ու ձևերով իրականացնում էին ազգային խտրականության, անհաբնկչության, էթնիկ գտումների քաղաքականություն: Դա առավել ցայտուն դրսևորվեց հատկապես Հ Այինի կողմից Բարձր պաշտոններ ստանալուց հետո, ինչպես նաև Գորբաչովյան վերակառացման և երկրում «ժողովրդավարության» որոշակի տարրեր նշմարվելու շրջանում: Վերոնշյալ և մի շարք այլ գործոններ նպաստեցին պանթյուրքական կազմակերպությունների ու ազգայնական տարրերի Աղբբեջան ներթափանցմանը, որոնց հետ էլ, համագործակցելով աղբբեջանական հատուկ ծառայություններին, իրականացրին հակահայ հերթական արշավը թե՛ Աղբբեջանում, թե՛ բովանդակ Արցախում:

4. 1988 թ. արցախահայության արդարացի պահանջը՝ դուրս գալ ԱՌՍՀ կազմից և մտնել ՀՌՍՀ կազմի մեջ, է՛լ ավելի սրեց Աղբբեջանի իշխանությունների հակահայ տրամադրվածությունը և հատուկ ծառայություններին ու ազգայնական տարրերին հրահանգ իջեցվեց իրականացնել կոտորածներ Աղբբեջանի հայաշատ բնակավայրերում: Արդյունքում աղբբեջանական ծայրահեղականները, օգտվելով Աղբբեջանի իրավապահ մարմինների ու հատուկ ծառայությունների թողսվությունից, շատ դեպքերում՝ գաղտնի կամ բացահայտ օժանդակությունից, Սուս-

գայիք, Կիրովաբադ, Բաքու քաղաքներում և այլ բնակավայրերում իրականացրին տեղի հայության կոտորածներ, ինչի հետևանքով փաստացի հայաթափվեց ոչ միայն ողջ Ադրբեջանը, այլ նաև Արցախի շատ բնակավայրեր. Ադրբեջանը լրեց ավելի քան 500 հազար հայերով:

5. Արցախյան շարժման սկզբնավորմանը զուգընթաց ադրբեջանական իշխանությունները հատուկ ծառայություններին հրահանգավորեցին ամեն գնով ճնշել շարժումը: Այդ նպատակով բանտերից ազատ արձակվեցին հանցագործներ, հավաքագրվեցին կամավորներ, բաժանվեց գեւք-զինամթերք: Հակահայ քաղաքականությանը լծվեց նաև ՆԳՆ կազմում ստեղծված ՕՍՕՆ-ը, որը ադրբեջանական իշխանությունները համալրեցին ադրբեջանցի ազգայնամուլներով, հանցագործներով:

6. Ադրբեջանում և Արցախում հայ էթնիկ զտումների ու կոտորածների իրականացման գործում մշտապես ակնհայտ է Թուրքիայի մասնակցությունը: Թե՛ 1918-1920, թե՛ 1988-1990 թթ. Թուրքիան տարատեսակ օժանդակություն է ցուցաբերել Ադրբեջանին: 1918-1920 թթ. թուրքական բանակն անմիջական մասնակցություն ունեցավ ոչ միայն «Ադրբեջան» կոչված պետության ստեղծմանը, այլ նաև այնտեղ հայկական կոտորածների իրականացմանը: Հետագայում Թուրքիան լուրջ ներդրում ունեցավ ինչպես Ադրբեջանի ռազմականացման գործում ակտիվորեն մասնակցելով իր դաշնակցի ռազմական դոկտրինայի ստեղծմանը, այնպես էլ զինված ուժերի և հատուկ ծառայությունների ձևավորման գործընթացին:

7. Նարաբաղա-ադրբեջանական պատերազմի տարիներին ադրբեջանական հատուկ ծառայությունները փոխեցին հակահայ գործունեության մեթոդները և որդեգրեցին դիվերսիոն-հետախուզական, անաբեկչական գործողություններ պլանավորելու և իրականացնելու քաղաքականություն: Պատերազմում հաղթանակի նժարը դեպի իրենց թեքելու նպատակով ադրբեջանական իշխանություններն ու հատուկ ծառայությունները նաև սկսեցին հավաքագրել օտարերկրյա վարձկանների, որոնց օգտագործեցին հետախուզական, դիվերսիոն գործողություններ

իրականացնելու նպատակով:

8. Ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի և հետագա տարիներին ադրբեջանական հատուկ ծառայությունները կազմակերպեցին և իրականացրին Հայաստան մտնող գազատարի պայթեցումներ՝ թվով 13 անգամ, հայ-ռուսական, հայ-իրանական, հայ-վրացական հարաբերությունների սրմանը միտված սադրիչ գործողություններ, պլանավորեցին և գործողություններ իրականացրին Հայաստանի տարրեր բնակավայրերում, մասնավորապես, Երևանի «Էրեբունի» հյուրանոցում, ատոմակայանի տարածքում ահաբեկչություն իրականացնելու ուղղությամբ, ծրագրեցին և սկսեցին նախապատրաստել մահափորձ ՀՀ նախագահի, հասարակական-քաղաքական գործիչների դեմ, ահաբեկչական այլ ակտեր:

9. Հայաստանը միջազգային ասպարեզում վարկաբեկելու նպատակով Ադրբեջանի հատուկ ծառայություններն սկսեցին օգտագործել հայ-ադրբեջանական սահմանը պատահաբար հատած անձանց, որոնք ներկայացվում են որպես դիվերսանտ, ինչպես նաև «օգտագործում են» ՀՀ իշխանություններից դժգոհ այն տարրերին, որոնք պատրաստ են գումարի դիմաց վարկաբեկել ՀՀ իշխանություններն ու նրանց վարած քաղաքականությունը: Այդ նպատակով լայնորեն օգտագործում են նաև համացանցը պաշտոնական կայքերի, էլեկտրոնային լրատվամիջոցների միջոցով տարածելով ստի ու կեղծիքի վրա հիմնված տեղեկություններ՝ Հայաստանը ներկայացնելով որպես ահաբեկչական, թմրամիջոցների միջազգային ապօրինի շրջանառության տարանցիկ երկիր և այլն: Բացի այդ, ՀՀ և Արցախի պաշտոնական կայքերի, էլեկտրոնային ՋԼՄ-ների դեմ պարբերաբար իրականացնում են հաքերային հարձակումներ, ինչպես նաև վարում «առանց Բաքվի» թույլտվության» Ադրբեջան այցելող անձանց համար հատուկ մշակած «սև ցուցակը»:

10. Ոչ մի կերպ չկարողանալով համակերպվել 1991-1994 թթ. պատերազմում կրած պարտության հետ ադրբեջանական իշխանությունները XXI դարի սկզբներին նավթադաշտներից ստացված հսկայական միջոցների հաշվին սկսեցին տարրեր երկրներից ձեռք բերել հարձակողական և պաշտպանողական

զինատեսակներ՝ փորձելով Հայաստանի և Արցախի նկատմամբ ստանալ գերակշռություն սպառազինության առումով: Միաժամանակ աղբյուրական հատուկ ծառայությունների առջև դրվեց խնդիր ամեն կերպ ստանալ հետախուզական բնույթի տեղեկություններ, մասնավորապես, Հայաստանի և Արցախի ՁՈՒ սպառազինության, ռազմական տեխնիկայի, դրանց թարմացման, արդիականացման, ՁՈՒ թվաքանակի, բանակի մարտունակության, զորամիավորումների ու զորամասերի տեղակայման վայրերի, զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ:

11. ՀՀ ազգային անվտանգության մարմինների կողմից ձեռքակալված և ՀՀ քրեական օրենսգրքի «Պետական դավաճանություն» (299-րդ) և «Լրտեսություն» (302-րդ) հոդվածներով դատապարտված անձանց վերաբերյալ դատավճիռների, ինչպես նաև առկա այլ փաստերի, գրականության ու մամուլի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Աղբյուրականի հատուկ ծառայությունները Հայաստանի և Արցախի գինված ուժերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար դիմում են տարատեսակ քայլերի ու միջոցների, մասնավորապես.

- գործուղել են հետախուզության աշխատակիցներ հատկապես այն երկրներ, որտեղ կան հայկական համայնքներ և ՀՀ հետ կա կայուն կապ (ՌԴ, Վրաստան, Ուկրաինա, Իրան),

- սերտորեն համագործակցում են թուրքական հատուկ ծառայությունների հետ և ԹՀ տարածքում իրականացնում հավաքագրումներ Հայաստանից տարբեր նպատակներով այդ երկիր մեկնած քաղաքացիների շրջանում,

- վճարում են խոշոր չափի գումարներ հատկապես ռազմական բնագավառի հավաստի և գաղտնիության դրոշմագրով տեղեկատվության համար,

- հանդես են գալիս սփյուռքահայ տարբեր բարեգործական կազմակերպությունների անվան տակ՝ ներկայանալով հայի անունով Վարդան, Տիգրան, Արմեն, Արման, Մելքոն և այլն, և ՀՀ քաղաքացիներին փորձում են խաբել՝ իբր Հայաստանին և Ղարաբաղին օգնություն տրամադրելու նպատակով իրենց անհրաժեշտ են տարաբնույթ տեղեկություններ,



• սոցիալական կայքերում հանդես են գալիս ազգությամբ հայի կենտրոնիչ տվյալներով փորձելով ռազմական բնույթի տեղեկություններ կորզել հատկապես Հայաստանի և Արցախի գիսված ուժերում ծառայող կամ նոր գորացրված զինծառայողներից:

• իրականացնում են դիվերսիոն-հետախուզական գործողություններ, որոնք, իրավիճակը ապակայունացնելուն զուգահեռ, նպատակ ունեն նաև ստուգել Հայաստանի, Արցախի զինված ուժերի զգոնության աստիճանը:

Ինչ վերաբերում է XX դարի վերջերին և XXI դարի սկզբներին Ադրբեջանում գործունեություն ծավալած հատուկ ծառայությունների մարմիններին, ապա, ուսումնասիրելով դրանց կառուցվածքը և գործունեությունը, կարող ենք եզրակացնել.

1. Ադրբեջանի անկախացման սկզբնական շրջանում այդ երկրի հատուկ ծառայությունների գործունեության մեջ դեռևս զգալի էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի ազդեցությունը, թեև, սկսած 1993 թ. Հ Ալիևի իշխանության գալուց, նկատելի էր հատուկ ծառայությունների կառուցվածքի ու գործունեության ոլորտների փոփոխության միտում: Հետագա տարիներին արդեն Թուրքիայի անմիջական աջակցությամբ ադրբեջանական հատուկ ծառայությունների գործունեության մեջ փորձեր կատարվեցին ներդնել ԼԱՏՕ-ական չափորոշիչներ, ինչը հստակ մարմնավորում ստացավ միայն 2015 թ.: Մակայն պետք է նաև արձանագրենք, որ այդ փոփոխությունները հետապնդում են քաղաքական նպատակներ և հատուկ ծառայությունների գործունեության արդյունավետության բարձրացման միտումներ չեն նախանշում:

2. Ադրբեջանական իշխանությունները երկրի հատուկ ծառայությունների հետախուզական մարմիններին իջեցրել են հրահանգ ծախսել հակահայկական գործունեություն, այդ թվում՝ անաբեկչական, դիվերսիոն-հետախուզական, տեղեկատվա-քարոզչական, հաքերային:

3. Հակահետախուզական մարմիններն օգտագործվում են Ադրբեջանում կրոնական, էթնիկ և ազգային փոքրամասնությունների ու ընդդիմության ձայնը, սոցիալ-քաղաքական շար-

ծումները ճնշելու նպատակով: Պատահական չէ, որ միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները բազմիցս հանդես են եկել Ադրբեջանի իշխանությունների դեմ՝ մեղադրելով նրանց անօրինական ձերբակալություններ իրականացնելու, երկրում մինչև հարյուրի հասնող քաղաքական բանտարկյալների առկայության մեջ:

4. Ադրբեջանական հատուկ ծառայությունների հակահետախուզական և հակահաբեկչական մարմինների ու այլ ստորաբաժանումների աշխատակիցներն այժմ են ընկնում պաշտոնական դիրքի շարաշահումներով, հակաօրինական և հանցավոր վարքագծով՝ վերահսկելով միջին և խոշոր բիզնեսը, իրականացնելով պատժիչ և հարկահավաքման անօրինական գործողություններ «անհնազանդ գործարարների», բարձր աշխատավարձ ստացող քաղաքացիների նկատմամբ: Գործունեության այս «ուղղությունը» ի վերջո մի փուլում պետության ղեկավարի կողմից որոշվեց կանխել, և գլխատվեց երկրի հիմնական հատուկ ծառայությունը Ազգային անվտանգության նախարարությունը, պաշտոններից ազատվեցին 250 աշխատակիցներ, ձերբակալվեց տասնյակ աշխատակից, իսկ նախարարությունը վերակազմավորվեց:

Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործողությունները արդյունք են այդ երկրի ռազմաքաղաքական դեկավարության որդեգրած դիրքորոշման: Ադրբեջանի Հանրապետության պաշտոնական մի շարք փաստաթղթեր՝ Ազգային անվտանգության հայեցակարգը, Ռազմական դոկտրինը, բազմաթիվ օրենքներ ողողված են հակահայկական դրույթներով ու հայության նկատմամբ սպառնալիքներով: Հայատյացությունն այդ երկրում դարձել է պետական քաղաքականություն, ինչն արտահայտվում է քնած հային կացնահարելու, զինվորներին գլխատելու, խաղաղ բնակչին դիվերսանտ ներկայացնելու և դաժանորեն սպանելու, հողագործին այգում դիպուկահարելու, անչափահասին դիվերսանտի ձեռքով սպանելու, տարեց բնակիչներին սպանելու և խոշտանգելու եղանակով, ՀՀ և Արցախի տարածքային ամբողջականության նկատմամբ ոտնձգություններով ու ռազմական ագրեսիվ գործողություններով: Ու քանի դեռ Ադրբե-

ջանը կատարարող շրջանակները շարունակում են հայ ժողովրդի նկատմամբ իրականացնել պետական ահաբեկչական քաղաքականություն՝ նաև համագործակցելով Թուրքիայի իշխանությունների հետ, այդ երկրի հատուկ ծառայությունները պլանավորելու և փորձելու են հայության նկատմամբ մշտապես իրականացնել տարատեսակ քայքայիչ գործողություններ:

Այսպիսով, Ադրբեջանի իշխանությունների և դրանց հրահանգները կատարող հատուկ ծառայությունների հակահայ ագրեսիվ քաղաքականությունը անհրաժեշտ է դարձնում բարձրացնել Հայաստանի և Արցախի անվտանգության ապահովման մակարդակն ու քաղաքացիների զգոնության աստիճանը:

**СПЕЦСЛУЖБЫ АЗЕРБАЙДЖАНА И ИХ  
АНТИАРМЯНСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ**

**РЕЗЮМЕ**

В антиармянской агрессивной политике Азербайджана спецслужбам отведена ключевая роль. Наиболее комплексное и полное исследование их деятельности имеет важнейшее научно-практическое значение в плане анализа антиармянской политики, которая проводится военно-политическим руководством Азербайджанской Республики во главе с алиевским кланом.

В начале 1988 г. население Нагорно-Карабахского Автономного Округа начало процесс самоопределения, которое было зафиксировано в решении Окружного Совета 20 февраля 1988 года. Оно подразумевало выход Нагорного Карабаха из состава Азербайджанской ССР и вхождение в состав Армянской ССР. Однако данный процесс вызвал неадекватную волну недовольства в самом Азербайджане, которая вскоре переросла в этнические чистки и антиармянские погромы, сопровождавшиеся резней армянского населения. В результате, с 1991 г., начались полномасштабные военные действия против армии Нагорного Карабаха, которые вынуждены были дать противнику вооруженный отпор. В частности, важен тот факт, что после подписания в мае 1994 г. перемирия между Арменией и Арцахом с одной стороны и Азербайджаном – с другой, азербайджанские власти продолжили войну, перенеся её в иные – диверсионно-разведывательную, информационно – психологическую, информационно – техническую (киберсфера) и агитационно – пропагандистскую плоскости, где первостепенная роль отводится спецслужбам.

Принимая во внимание вражескую политику правящих кругов Азербайджана против Республик Армении и Арцаха, частые случаи нарушения перемирия, а также проводимые ими дипломатические действия явно антиармянского характера, исследование деятельности азербайджанских спецслужб против Армении и Арцаха более чем актуально и в наши дни.

Вышеупомянутая деятельность спецслужб Азербайджана носит прямую угрозу национальной безопасности Армении и Арцаха.

Изучение данной темы имеет непосредственную связь с

военной доктриной и стратегий национальной безопасности РА. В частности, в военной доктрине РА говорится, что внешними угрозами национальной безопасности РА являются деятельность иностранных организаций, незаконных вооруженных групп и спецслужб, которые действуют против РА (глава I, пункт III, подпункт VIII).

Азербайджанские спецслужбы принимали активное участие в резне и этнических чистках армянского населения, которые проводились как в Азербайджанской, так называемой, Демократической Республике (1918-1920), так и в Азербайджанской ССР в 1988-1991 гг. Они также принимали участие в подготовке террористических акций против армян как на территории РА, так и за её пределами, в подготовке покушения на президента РА и диверсии против действующей на территории Армении атомной электростанции, которые так и остались всего лишь подготовительными мероприятиями, поскольку были раскрыты и предотвращены органами национальной безопасности Армении.

Действия Азербайджана в значительной мере поддерживались Турцией, с которой Азербайджан имеет тесные военно-политические отношения. Отметим, что Турция принимала явное участие в этнических чистках армянского населения Азербайджана и Арцаха, которые содержат все элементы геноцида. И в 1918-1920, и в 1988-1990 годах Турция всячески поддерживала Азербайджан. К примеру: 1918-20 гг. турецкая армия не только приняла непосредственное участие в создании государства «Азербайджан», но и осуществила массовую резню местного армянского населения.

И в дальнейшем Турция продолжала политику поддержки Азербайджана, в ходе которого внесла свой ощутимый вклад в создании военной доктрины и милитаризации этого государства, а также в формировании азербайджанских спецслужб и вооруженных сил.

Данные события говорят о том, что исследованная нами тема довольно актуальна и востребована как в научном, так и политическом аспекте.

В 1994 г., подписав Бишкекский протокол о прекращении

огня в Нагорном Карабахе, военно-политическое руководство Азербайджана одновременно решило в случае создания благоприятной геополитической обстановки, путём получения военного превосходства над армянскими государствами, военными методами решить в свою пользу карабахский вопрос.

Дальнейшие действия азербайджанского руководства, в частности, закупка вооружений в беспрецедентных объёмах, острая антиармянская риторика, поощрение арменофобии, а также проводимая азербайджанскими спецслужбами диверсионная и разведывательно-подрывная деятельность против Армении и Арцаха говорят о том, что лидеры данного государства, поддерживаемые Турцией, отнюдь не настроены на мирное решение карабахского вопроса. Поэтому, подводя итоги, мы пришли к выводу, что азербайджанские спецслужбы и в дальнейшем будут вести диверсионно-подрывную и террористическую деятельность против Армении и Арцаха, имея конечную цель ослабить Армянские государства прежде всего путём психологического воздействия на её граждан - грозя полномасштабной войной.

Неоспоримые факты циничной антиармянской деятельности азербайджанского руководства и их спецслужб, делают необходимым принятие мер по поднятию бдительности и чувства ответственности среди населения Армении и Арцаха.

*AZERBAIJAN'S SPECIAL SERVICES  
AND THEIR ANTI-ARMENIAN ACTIVITY*

*SUMMARY*

The special services of Azerbaijan are among the key state structures that carry out anti-Armenian aggressive policy. A complete and comprehensive study of their activity has an important scientific and practical significance from the perspective of studying the present-day anti-Armenian policy of Azerbaijan's military and political leadership.

In early 1988, the population of the Nagorno Karabakh Autonomous Oblast (NKAO) began process of self-determination, which was fixed in the February 20, 1988 decision of the Regional Council, i.e. to leave the Azerbaijani SSR and join the Armenian SSR. Steps aimed at realizing the right of NKAO population to self-determination led to ethnic cleansing of Armenians, massacres, and deepening of anti-Armenian policy in Azerbaijan, which grew into a large-scale war against Armenians in 1991 and still continues with different manifestations. It is important to mention that after the ceasefire agreement signed between Armenia, Azerbaijan and Nagorno Karabakh in 1994, Azerbaijan moved the war to another domain - sabotage-reconnaissance, information-psychological, propagating, information-technical (cyber security), etc, where the primary role was assigned to special services.

Taking into account Azerbaijan's hostile policy against the Republic of Armenia (RA) and the Republic of Artsakh, regular violations of the ceasefire, as well as the explicit anti-Armenian actions in the diplomatic sphere, the investigation of the actions of Azerbaijan's special against Armenia and Artsakh become more actual. Azerbaijan's aggressive actions directly jeopardize the national security of the Republic of Armenia and Arstakh. In this context, the anti-Armenian actions of Azerbaijan's special services become a serious threat.

The investigation of the theme is directly related to the strategy

of the RA national security and military doctrine. According to Chapter 1 (Paragraph 3, Subparagraph 7) of the RA Military Doctrine, external threats to Armenia's military security include anti-Armenian actions and activities of foreign organizations, illegal armed groups and special services.

Azerbaijan's special services were involved in the massacres and ethnic cleansing of Armenians both in the Democratical Republic of Azerbaijan (DRA) in 1918-1920, and in the Azerbaijan SSR in 1988-1991, as well as organized terrorist acts against the Armenian people, an assassination attempt against the RA President, performed an act of sabotage against the Armenian Nuclear Power Plant at the end of the XX century and at the beginning of the XXI century. The aforesaid plots were detected at the initial stage and thwarted by the Armenian National Security Service.

Turkey, which has close military and political ties with Azerbaijan, largely backed Azerbaijan's actions. Turkey's involvement in the ethnic cleansing and massacres of Armenians both in Azerbaijan and Artsakh, is always evident. Both in 1918-1920 and in 1988-1990, Turkey provided assistance of various kinds to Azerbaijan. In 1918-1920, Turkey's Armed Forces were directly involved not only in the creation of the state called *Azerbaijan*, but also in the perpetration of Armenian massacres there. In the future, Turkey had serious contribution to the militarization of Azerbaijan, actively taking part in the creation of its ally's military doctrine, as well as in the creation of [Azerbaijani] armed forces and special services.

The abovementioned facts prove the theme is highly actual and is of scientific and political importance.

Signing the tripartite agreement between Azerbaijan, Armenia and Artsakh), well-known as the Bishkek Protocol, the military and political leadership of Azerbaijan intended to achieve military supremacy and resolve the Karabakh conflict in a military way in case of favourable geopolitical conditions. Further developments, specifically the events of the past few years, including unprecedented militarization of Azerbaijan, deepening of



Armenophobia in that country on a state level, sabotage and reconnaissance actions against the RA and Artsakh carried out by Azerbaijani authorities and Special Services, as well as Turkey's explicit support to Azerbaijan show that Azerbaijan's military and political leadership does not have real intention and willingness to solve the Karabakh issue in a peaceful way.

Therefore, summing up the work, we came to the conclusion that Azerbaijan's special services will always try to carry out various disruptive, terrorist, sabotage and reconnaissance actions towards the RA and Artsakh, aiming at weakening Armenia as much as possible, influencing the moral and psychological state of the Armenian people, threatening to resume large-scale hostilities.

Thus, the anti-Armenian aggressive policy of the Azerbaijani authorities and the country's special services makes it necessary to raise the level of security of the Republic of Armenia and the Republic of Artsakh and the level of citizens' vigilance.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ՉՆՐԱՏԱՐԱԿՎԱԾ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

*Ա) «Հայաստանի ազգային արխիվ» (ՀԱԱ) ՊՈԱԿ*

1. Ֆ. 200, ց.1, գ. 4 թ. 2, շրջերես, 3:
2. Նույն տեղում, թ. 17:
3. Նույն տեղում, թ. 36:
4. Նույն տեղում, թ. 63 և շրջերես:
5. Նույն տեղում, թ. 68:
6. Ֆ. 200, ց. 1, գ. 44, թ. 54:
7. Նույն տեղում, թ. 57:
8. Նույն տեղում, թ. 84:
9. Նույն տեղում, թ. 107:
10. Ֆ. 200, ց. 1, գ. 50<sup>1</sup>, թ. 12 և շրջերես:
11. Նույն տեղում, թ. 178 և շրջերես:
12. Նույն տեղում, թ. 179 և շրջերես:
13. Ֆ. 200, ց. 1, գ. 309, թ. 135 և շրջերես:
14. Ֆ. 200, ց. 1, գ. 155, թ. 46:
15. Ֆ. 200, ց.1, գ.427<sup>1</sup>, թ.369 և շրջերես:
16. Նույն տեղում, թ. 393:
17. Ֆ. 200, ց. 1, գ. 563, թ. 119 և շրջերես:
18. Ֆ. 200, ց. 1, գ. 571, թ. 7 և շրջերես, 8:
19. Ֆ. 200, ց. 2, գ. 25, թ. 1:
20. Ֆ. 275, ց. 5, գ. 207, թ. 29:
21. Ֆ. 275, ց. 5, գ. 217, թ. 55:
22. Նույն տեղում, թ. 48:
23. Ֆ. 1159, ց. 1, գ. 9, թ. 11:
24. Ֆ. 1159, ց. 2, գ. 6, թ. 4:
25. Ֆ. 1159, ց. 3, գ. 36, թ. 3:
26. Ֆ. 1159, ց. 3, գ. 114, թ. 42:
27. Ֆ. 1159, ց. 6, գ. 10, թ. 9:

*Բ) ՀԱԱ հասարակական-քաղաքական  
փաստաթղթերի բաժին*

28. Ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 92-94:
29. Ֆ. 1, ց. 87, գ. 12, թ. 130, 131:
30. Ֆ. 1, ց. 87, գ. 13, թ. 19, 20, 21:
31. Լույս տեղում, թ. 42:
32. Ֆ. 1, ց. 87, գ. 16, թ. 235:
33. Ֆ. 1, ց. 87, գ. 18, թ. 10, 11:
34. Ֆ. 1, ց. 87, գ. 47, թ. 9:
35. Լույս տեղում, թ. 38, 39, 40:
36. Ֆ. 1, ց. 127, գ. 650, թ. 133 և շրջերես:
37. Լույս տեղում, թ. 151-152:
38. Ֆ. 1, ց. 127, գ. 759, թ. 60:

*Գ) ՀՀ դատական դեպարտամենտի արխիվ*

39. Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, Երևանի Կենտրոն և Լորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի, Գործ N 1-19, 2004 թ.:
40. Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Մալաթիա-Մեքաստիա համայնքի առաջին ատյանի դատարանի, 28 հունիսի 2005 թ., թիվ 1-84:
41. Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Ավան և Լոր Լորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի, 25 հոկտեմբերի 2010 թ., թիվ ԵԱԼԴ/0128/01/09:
42. Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Երևան, Կենտրոն և Լորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի, 06 ապրիլի 2012 թ., թիվ ԵԿԴ-0224/01/11/:
43. Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք. Կապան, Մյուսիքի մարզի ընդհանուր իրավասության դատարանի, 29 նոյեմբերի 2013 թ., թիվ ՄԴ/0202/ 01/13/:
44. Դատավճիռ. Հանուն Հայաստանի Հանրապետության, ք.

Երևան, Կենտրոն և Նորք-Մարաշ շրջանների ընդհանուր  
իրավասության դատարանի, 11 օգոստոսի 2014 թ., Գործ  
թիվ ԵԿԴ/0069/01/14:

*Դ) ՀՀ անվտանգության մարմինների պատմության  
թանգարան-արխիվ*

45. Աղբրեջանի ՊՆ՝ դարաբաղյան ռազմաճակատի շտաբի պե-  
տի 15-ը օգոստոսի 1993 թ. գրությունը թիվ 160 զորամասի  
հրամանատարին՝ 522 հոգուց բաղկացած «աֆղանցիներին»  
ընդունելու վերաբերյալ:
46. Քաղվածք Աղբրեջանի նախագահ Հ. Ալինի և դարաբաղյան  
ճակատի հրամանատարներից մեկի հետ՝ 1994 թ. մարտի  
22-ի ռադիոզրույցից:

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԺՈՂՈՎԱՍՏՈՒՆԵՐ**

47. Գաղտնի փաստաթղթերը, Աղբրեջանի դաւադրական գոր-  
ծունեությունից մի էջ, Եր., Գլխավոր շտաբի տպարան, 1920,  
56 էջ:
48. Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքա-  
կան պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովա-  
ծու, Եր., 2000, Գիտություն, 455 էջ:
49. Հայերի կոտորածները Բաքվի և Ելիզավետպոլի նահանգնե-  
րում 1918-1920 թթ., Փաստաթղթերի ժողովածու, գիրք II,  
Եր., Գիտություն, 2012, 592 էջ:
50. Ղուլյան Յու., Հայաստան-Աղբրեջան հարաբերությունների  
պատմությունից 1918-1920 թվականներ, Եր., 2009, 452 էջ:
51. Սկրտչյան Ե., Արցախյան գրառումներ (փաստավավերա-  
գրական ժողովածու), Եր., Նոյան տապան, 2001, 408 էջ:
52. Վիրաբյան Վ., Հայաստանի պետական անվտանգության հա-  
մակարգի ստեղծումը և զործունեությունը 1918-1920 թթ., Ար-  
խիվային վավերագրեր, հավելված 1-5, Եր., 2015, ԵՊՀ, 746 էջ:

• • •

53. Барсегов Ю., Нагорный Карабах в международном

праве и политике, Документы и комментарий, т. I, М. Круг, 2008, 944 с.

54. Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и политике, Комментария к документам, т. II, М. Мелихово, 2009, 480 с.
55. Лубянка. ВЧК-КГБ. Документы, Справочник. Москва. Демократия, 1997, 352 с..
56. Нагорный Карабах в 1918 - 1923 гг. Сборник документов и материалов, сост. В. А. Микелян и др. Ереван, 1992, 756 с.
57. Чехисты Азербайджана. Документы, очерки, рассказы. Баку, Азернешр, 1981, 293 с.

### ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

58. Արամայիս (Միսար Տեր-Դանիելյան), Ղարաբաղի տազնապը (26 ապրիլի – 26 հուլիսի 1919 թ.), Եր., 1993, 118 էջ:
59. Թումյան Հ., Դեպքերը Լեռնային Ղարաբաղում 1917-1920, <http://hetq.am/arm/news/31718/depqery-lernayin-xarabaxum-1917-1920.html>.
60. Իշխանյան Բ., Բազուի մեծ սարսափները, (անկետային ուսումնասիրության սեպտեմբերեան անցքերի 1918.), Թիֆլիս, 1920:
61. Իրազեկ (Թակուր Տեր-Յակուբեան), Մօտիկ անցեալից, պատմական դէպքիւր և պարոսներ (1917-1922), Պէյրուֆ, 1956, 153 էջ:
62. Խատիսյան Ա., Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բէյրուֆ, 1968, Բ տպագրություն, 487 էջ:
63. Կրիվոպուսկով Վ., Խոովահույզ Ղարաբաղ, Եր., Ամարաս, 2008, 423 էջ:
64. Նաթայի Շ., Թուրքերը և մենք, Թուրքիզմը Անգորայէն Ղարու և թրքական օրինեթասիոն, Եր., 2015, 472 էջ:
65. Ռուբէն (Ռուբէն Տեր-Մինասյան), Հայ Տեղափոխականի մը յիշատակները, հ. է., գ. հրատարակություն, Թնեհրան, 1982:
66. Սասունի Կ., Մայիսյան խռովությունները և թաթարական ապստամբ շրջանները, (Հայաստանը 1920-ին), Բէյրուֆ,

1968, 208 էջ:

67. Վրացյան Ս., Անկախ և միացյալ Հայաստան, Եր., 1920, 23 էջ:
68. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, 704 էջ:
69. Քաջազնունի Յովի., Հայաստանի Հանրապետություն, Եր., Մ.Վարդանեանի, 1993, 32 էջ:

\*\*\*

70. Зареванд, Турция и пантуранизм, Париж 1930 (Моск. 2015), 176 с.
71. Кривоноусков В., Мятежный Карабах, Ереван, Амарас, 2013, 488 с.

\*\*\*

72. Mehmed-zade Mirza-Bala, Milli Azerbaycan hareketi: Milli az. «Müsavat» halk fırkası tarihi, Berlin, Fırka Divanı, 1938, 335 էջ:

### ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՂԹՅՈՒՂՆԵՐ

#### *Ա) Օրենքներ, իրավական ակտեր, պայմանագրեր*

73. Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն՝ հաստատված ՀՀ եսխագանի՝ 2007 թ. փետրվարի 7-ի ՆՀ-37-Ն հրամանագրով <http://www.mil.am/media/2015/07/768.pdf>.
74. Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին՝ ընդունված 2007 թ. դեկտեմբերի 25-ին <http://www.mil.am/hy/68/230/263>.
75. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք (ընդունվել է 1998 թ. հուլիսի 30-ին), «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Եր., Տիգրան Մեծ, 2015, 304 էջ:
76. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք (ընդունվել է 2003 թ. ապրիլի 18-ին), «Պաշտոնական տեղեկագիր» ՓԲԸ, Եր., Տիգրան Մեծ, 2015, 244 էջ:

\*\*\*

77. Azərbaycan Respublikası Dövlət Təhlükəsizliyi Komitəsinin Azərbaycan Respublikası Milli Təhlükəsizlik Nazirliyinə çevrilməsi haqqında Azərbaycan Respublikasının qanunu, <http://www.e->

78. Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin və Azərbaycan Respublikasının Xarici Kəşfiyyat Xidmətinin yaradılması haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Fərmanı edildi, <http://president.az/articles/17160>.
79. Milli təhlükəsizlik haqqında Azərbaycan Respublikasının qanunu, <http://www.e-qanun.az/framework/5455>.
80. Azərbaycan Respublikasının Hərbi doktrinası, [http://www.mod.gov.az/qanun/qanunvericilik/Herbi\\_doktrina.pdf](http://www.mod.gov.az/qanun/qanunvericilik/Herbi_doktrina.pdf).
81. Azərbaycan Respublikasının milli təhlükəsizlik konsepsiyası, <http://migration.gov.az/images/pdf/026fa4b410a33801f3dd49643726cf2a.pdf>.
82. Azərbaycan Respublikası Prezidenti yanında Xüsusi İdarənin yaradılması haqqında Azərbaycan Respublikası Prezidenti fərmanı, [e-qanun.az/framework/doc/7532](http://www.e-qanun.az/framework/doc/7532).
83. Azərbaycan Respublikası Milli Təhlükəsizlik Nazirliyinin Əsasnaməsi.
84. Azərbaycan Respublikasının Rabitə və İnformasiya Texnologiyaları Nazirliyi yanında Elektron Təhlükəsizlik Mərkəzi haqqında Əsasnamə, <http://www.cert.az/esasname.html>.
85. Dövlət sirri haqqında Azərbaycan Respublikasının qanun, <http://www.mfa.gov.az/files/file/27.pdf>.
86. Dini etiqad azadlığı haqqında Azərbaycan Respublikasının qanun, <http://www.e-qanun.az/framework/7649>.
87. Əməliyyat-əxtəris fəaliyyəti haqqında Azərbaycan Respublikasının Qanunu, <http://mia.gov.az/index.php/az/content/194/>.
88. Kəşfiyyat və əks-kəşfiyyat fəaliyyəti haqqında Azərbaycan Respublikasının Qanunu, [www.e-qanun.az/framework/doc/5454](http://www.e-qanun.az/framework/doc/5454).
89. Müdafiə haqqında Azərbaycan Respublikasının Qanunu, [http://www.mod.gov.az/qanun/qanunvericilik/Mudafie\\_haqqinda.pdf](http://www.mod.gov.az/qanun/qanunvericilik/Mudafie_haqqinda.pdf).
90. M. Q. Quliyevin Azərbaycan Respublikasının Dövlət Təhlükəsizliyi Xidmətinin rəisi təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, <http://president.az/articles/17159>.
91. O. S. Sultanovun Azərbaycan Respublikasının Xarici Kəşfiyyat Xidmətinin rəisi təyin edilməsi haqqında Azərbaycan Respublikası Prezidentinin Sərəncamı, <http://president.az/articles/17158>.
92. Türkiyə Cumhuriyeti Hükümeti ilə Azərbaycan Cumhuriyeti Hükümeti Arasında Askeri Egitim İşbirliyi Anlaşmasının Onaylanması haqqında Uyğun Bulunduğuna Dair Kanun (Resmî Gazete

ile yayımı: 21.4.1993 Sayı: 21559), Kanun No. Kabul Tarihi 3903 15.4.1993.

93. Türkiye Cumhuriyeti ile Azerbaycan Cumhuriyeti Arasında Stratejik Ortaklık ve Karşılıklı Yardım Anlaşmasının, Başbakanlık, Kanunlar ve Kararlar 8/12/2010, Genel Müdürlüğü, Sayı: B.02.0.KKG.0.10/101-246/5147.

\* \* \*

94. Azerbaijan: Independent Islam and the State, Europe Report N°191 – 25 March 2008.

*F) Պաշտոնական կայքեր*

95. <http://anadolujansı.gov.tr> (Անադոլու գործակալության պաշտ. կայք).
96. <http://www.arlis.am> (ՀՀ իրավական ակտերի պաշտ. կայք).
97. <http://www.arm-azpeace.com> («Հայաստանի և Ադրբեջանի միջև խաղաղության հարթակ»-ի պաշտ. կայք)
98. <http://www.cert.az> (Ադրբեջանի էլեկտրոնային անվտանգության կենտրոնի պաշտ. կայք).
99. <http://www.dmx.gov.az> (Ադրբեջանի ՀՊՊՄ պաշտ. կայք).
100. <http://www.dsx.gov.az> (Ադրբեջանի պետական սահմանապահ ծառայության պաշտ. կայք).
101. <http://www.dtx.gov.az/index.php> (Ադրբեջանի պետական անվտանգության ծառայության պաշտ. կայք).
102. <http://www.e-qanun.az> (Ադրբեջանի իրավական ակտերի պաշտ. կայք).
103. <http://www.genprocnr.am> (Ադրբեջանի գլխավոր դատախազության պաշտ. կայք).
104. <http://www.mil.am> (ՀՀ պաշտպանության նախարարության պաշտ. կայք).
105. <http://www.mia.gov.az> (Ադրբեջանի ՆԳՆ պաշտ. կայք)
106. <http://www.mod.gov.az> (Ադրբեջանի պաշտպանության նախարարության պաշտ. կայք).
107. <http://www.mtn.gov.az> (Ադրբեջանի նախկին ԱԱՆ պաշտ. կայք).



108. <http://www.mfa.gov.az/> (Ադրբեջանի ՆԳՆ պաշտ. կայք).
109. <http://www.nkrmil.am> (Արցախի ՊՆ պաշտ. կայք).
110. <http://www.osce.org/> (ԵԱՀԿ պաշտ. կայք).
111. <http://www.parliament.am> (ՀՀ ԱԺ պաշտ. կայք).
112. <http://www.polis.osce.org> (ԵԱՀԿ պաշտ. կայք).
113. <http://www.president.nkr.am> (Արցախի նախագահի պաշտ. կայք).
114. <http://www.president.az> (Ադրբեջանի նախագահի պաշտ. կայք).
115. <http://www.prosecutor.am> (ՀՀ գլխավոր դատախազության պաշտ. կայք).
116. <http://www.sns.am> (ՀՀ ԱԱԾ պաշտ. կայք).
117. <https://www.state.gov/> (ԱՄՆ պետքարտուղարության պաշտ. կայք).
118. <https://www.tbmm.gov.tr> (ԹՀ ազգային մեծ ժողովի պաշտ. կայք).
119. <https://www.un.org> (Միավորված ազգերի կազմակերպության պաշտ. կայք).
120. <https://www.uscirf.gov> (Միջազգային կրոնական ազատության հարցերով ԱՄՆ-ի հանձնաժողովի պաշտ. կայք):

## ՄԱՍՈՒՆ

121. Արցախական – 1991
122. Երեկոյան Երևան – 1988-1990
123. Զարթոնք – 1988
124. Խորհրդային Հայաստան – 1988-1990
125. Խորհրդային Ղարաբաղ – 1991
126. Հայաստանի Հանրապետություն – 1991-1993
127. Ուրբաթ - 1991
128. Օրինապահության դիրքերում – 1990

\*\*\*

129. «Правда» - 1988

130. «Պատմության կեղծարարները. Ադրբեջան», <https://www.youtube.com/watch?v=AvnTAKc25mE>.
131. «Սարդոստայն. Ադրբեջանի հատուկ ծառայությունների կողմից համացանցի միջոցով իրականացվող հետախուզական-քայքայիչ գործունեությունը», [https://www.youtube.com/watch?v=he\\_LoekPXjg](https://www.youtube.com/watch?v=he_LoekPXjg).
132. «Սովորական ցեղասպանություն. Բաքու, 1990, հունվար», <http://www.karabakhrecords.info/gallery/սովորական-ցեղասպանություն-բաքու-1990/>.
133. «Սումգայիթ 1988, Փետրվար 28 - Սովորական Ցեղասպանություն», <https://www.youtube.com/watch?v=XvC9Qr8fBN4>:
134. «Քսոմուլի», <https://www.youtube.com/watch?v=FL7k6L2WcQ4>:

### ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

#### *ա) Մենագրություններ, գրքեր*

135. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, 1917-2000, Գիրք Գ., 1985-2000, Ստեփանակերտ, Դիզակ պլյուս, 2007, 744 էջ:
136. Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, Նորավանք ԳԿՀ, Եր., 2009, 114 էջ:
137. Աղաջանյան Մ., Ասատրյան Է., Մինասյան Ս., Ադրբեջանն ընդդեմ Ղարաբաղի ժողովրդի, ազրեխայի իրավաքաղաքական հետևանքները և դրանց ազդեցությունը տարածաշրջանային անվտանգության հեռանկարների վրա, Եր., Նաիրի, 2007, 290 էջ:
138. Աղայան Էդ., Արդի հայերեն բացատրական բառարան, Եր., 1976, հատոր 1, 1642 էջ:
139. Ավազյան Ա., Հյուսիսկովկասյան վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-71 թթ.). Եր., Հեղ. հրատ., 2011, 343 էջ:
140. Բաղդասարյան Հ., Հայերի էթնիկական մաքրում,

բռնագաղթ և ցեղասպանություն Ադրբեջանում 1988-1991 թթ., Եր., Բեկոր, 2013, 380 էջ:

141. Բաղդասարյան Յու., Բաքուն և հայերը, հակահայկական քաղաքականությունն ու հայերի էթնիկական մաքրումը Ադրբեջանում, Եր., Լուսակն, 2014, 288 էջ:
142. Բաղրյան Վ., Տեսադաշտ. 1988-1994 (Ղարաբաղյան ազատամարտ), Ստեփանակերտ, Մոնա, 2011, 357 էջ:
143. Գրիգորյան Ա., Իսլամական պետություն. ակունքներից մինչև խալիֆայության հռչակում, Եր., ԵՊՀ հրատ., 2016, 236 էջ:
144. Դադայան Խ., Հայերը և Բաքուն (1850-ական թթ.-1920 թ.), Լորավանք ԳԿՀ, Եր., 2006:
145. Ջոհրաբյան Է., Ազգամիջյան կոնֆլիկտը Երևանի նահանգում 1918 թ., Եր., Հայագիտակ, 2000, 144 էջ:
146. Ջոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը և Հայաստանի «Դաշնակիցները» (1918 թ. դեկտեմբեր, 1920 թ. ապրիլ), Եր., Տիգրան Մեծ, 2002, 266 էջ:
147. Էվոյան Լ., Ադրբեջանական վերնախավի ձևավորման գործընթացը 1989-1994 թթ., Լորավանք ԳԿՀ, 21-րդ դար, Եր., 2012, 6 (46), էջ 55-71:
148. Թովաս դե Վաալ, Սև ալգի. Հայաստանն ու Ադրբեջանը խաղաղության և պատերազմի միջով, Եր., Ջանգակ, 2014, 488 էջ:
149. Թումոյան Ա., Հայաստանի անվտանգության մարմինների պատմության ուրվագծեր, ՀՀ ԱԱԾ գիտաուսումնական կենտրոն, Եր., 2009, 53 էջ:
150. Խաչատրյան Վ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., Խորհրդային Հայաստանի և ԼՂԲԻ-ի տարածային կորուստները 1920-1930-ական թվականներին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, Եր., Ջանգակ, 2015, 160 էջ:
151. Կնյազյան Դ., Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության կոպկասյան քաղաքականությունը 1918-1920 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, 2008, 200 էջ:
152. Հակոբյան Թ., Կանաչ և սև. արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, Անտարես, 2011, 520 էջ:

153. Հակոբյան Թ., Հայացք Արարատից, հայերը և թուրքերը, Եր., Անտարես, 2012, 488 էջ:
154. Հայոց պատմություն, խմբ., Միմոնյան Հր., Եր., 2012, 874 էջ:
155. Հովհաննիսյան Տ., Նարդարան. Աղբրեջանի շիաների ըմբոստ ավանը մնկ տարի անց, 25.11.2016 թ., <http://razm.info/92210>:
156. Հովհաննիսյան Վ., Դարբինյան Ա., Մանույան Կ., Ալվրցյան Հ., Ընդդեմ Աղբրեջանի հայատյաց քաղաքականության /28 Դաշնակցության հրատ., Եր., 2007, 51 էջ:
157. Հովսեփյան Ա., Հայրենական մեծ պատերազմը եսև հայության գոյամարտն էր, Եր., GSM Studio, 2012, 264 էջ:
158. Հովսևփյան Լ., Թուրքիայի զինված ուժերի արդիակա- նացումն ու ռազմարդյունաբերությունը, Եր., 2010, 208 էջ:
159. Մանուսյան Ա., Լեոնայիև Դարաբաղ, ինչպես է դա եղել, Եր., Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն ՊՈԱԿ, 2010, 120 էջ:
160. Մանուկյան Ա., Դոկտոր, դուք հետախույ՞ղ եք, Եր., Առեբեսում-Անի, 2000, 285 էջ:
161. Մարտիրոսյան Ա., Թուրք-աղբրեջանական հայատյաց քաղաքականությունը և հայերի ուժացումը, Ստեփանա- կերտ, Դիզակ պլյուս, 2009, 288 էջ:
162. Մարտիրոսյան Ս., Անձևական կիրերանվտանգության հիմունքներ, Եր., Նորավանք ԳԿՀ, 2016, 62 էջ:
163. Մկրտչյան Շ., Լեոնայիև Դարաբաղ, Աղբրեջանի իրակա- նացրած ցեղասպանության անատոմիան, Ստեփանա- կերտ, Ազատ Արցախ, 2003, 238 էջ:
164. Մարումյան Ն., Լեոնայիև Դարաբաղի Ինքնավար Մարզը 1960-1988 թվականներին, Եր., Լիմուշ, 2008, 172 էջ:
165. Մաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպա- նության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920 թթ.), Եր., Լուսակն, 2009, 248 էջ:
166. Ստեփանյան Գ., Բարու քաղաքի հայության պատմությու- նը, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2011, 650 էջ:
167. Պողոսյան Ի., Հոգերանական պատերազմ. հիմնական գոր- ծոնները, Եր., Ջանգակ-97, 2009, 288 էջ:

168. Վիրաբյան Վ., Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունները (Հայոց քաղաքական պատմության էպիզոդ), Եր., Ճարտարագետ, 1999, 40 էջ:
169. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումն ու գործունեությունը 1918-1920 թթ., Եր., Լուսակն, 2006, 288 էջ:
170. Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., ԵՊՀ, 2015, 746 էջ:
171. Վիրաբյան Վ., Հայկական հետախուզությունը Առաջին Հանրապետության տարիներին (1918-1920 թթ.), Եր., Աստղիկ, 2003, 228 էջ:
172. Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության հետախուզությունը և բանակը 1918-1920 թթ., Եր., Լուսակն, 2009, 414 էջ:
173. Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը. սկզբից մինչև մեր օրերը, Եր., Մ. Վարանդեան, 1994, 377 էջ:

\*\*\*

174. Асатрян Г., Этническая композиция Ирана: От "Арийского простора" до Азербайджанского мифа, Кавказский центр иранистики, Ер., 2012, [http://bs-kavkaz.org/wp-content/uploads/2012/10/iran\\_final.pdf](http://bs-kavkaz.org/wp-content/uploads/2012/10/iran_final.pdf).
175. Ализаде З., Азербайджан. Конец второй республики, <http://southcaucasus.com/old/index.php?page=publications&Id=2500>.
176. Варданян Т., Азербайджанцы: история одного незавершенного этнопроекта, М., Русская панорама, 2012, 88 с.
177. Галчян Р., Азербайджанские истонко-географические фальсификации, М., «Ключ-С», 2013, 210 с.
178. Демоян Г., Внешняя политика Турции и карабахский конфликт, Историко-сравнительный анализ, Ер., Музей-институт Геноцид армян, 2013, 492 с.
179. Демоян Г., Турция и Карабахский конфликт, <http://armenianhouse.org/demoyan/turkey/ch4.html>.
180. Джафарли Мамед, Политический террор и

судьбы азербайджанских немцев, Баку, 2003, Prezident Kitabxanası, 129 с.

181. Зураб Годуа, Азербайджанский пасьянс, М., ЗАО "КОН-Лига Пресс", 2001, 287 с.
182. Ибрагимов Иб., Стратегия эффективного влияния; Внешняя политика, «мягкая сила» и энергетическая дипломатия Азербайджана в 21-м веке, М., 2016, 238 с.
183. Казимян А., Полигон «Азербайджан», Ер., Центр общественных связей и информации, 2011, 615 с.
184. Мелик-Шахназарян Л., Агрессия Азербайджанской республики очертила границы Республики Арцах, Ер., 2014, 64 с.
185. Мелик-Шахназарян Л., Хачатрян А., Этнополитика Азербайджана, Ер., Де факто, 2007, 112 с.
186. Овсепян Л., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грузия) и Центральной Азии, Ер., Институт политических исследований, 2010, 167 с.
187. Сизенко А., Всё о спецслужбах России и СССР. Ростов-на-Дону, Владис, 2010, 416 с.
188. Хейфец А. Н., Советская Россия и сопредельные страны востока в годы гражданской войны (1918-20 гг.), М. 1964, 472 с.
189. Чобанян С., Государственная и национальная политика Азербайджана, Ереван, Юридическая литература, 1993, 312 с.
190. Юнусов А., Исламский фактор в Азербайджане, Баку, Адильоглы, 2013, 296 с.

\*\*\*

191. Elşad Qoca, Azərbaycan kəşfiyyatı və əks-kəşfiyyatı: 1918-1920-ci illərdə, <http://qaynar.info/xeber-azrbaycan-kfiyyat-v-ks-kfiyyat-1918-1920-ci-illrd-t31461.html>.
192. Heydər Əliyev və milli təhlükəsizlik orqanları, Bakı, 2009, 192 էջ.
193. Məmməd Cəfərli, Azərbaycan Demokratik Respublikasının milli təhlükəsizlik orqanları, Fəurın, Çırpıwı, 2004, 76 էջ.

\*\*\*

194. Bedford Sofie, Islamic Activism in Azerbaijan,

*F) Հոդվածներ*

195. Աբրահամյան Լ., Ռազմաքաղաքական իրադրությունը Բարձրում և Ղարաքաղում 1918 թ. երկրորդ կեսին, Հայագիտության հարցեր, N 2 (8), Եր., 2006, էջ 220-209:
196. Աթանեսյան Ա., Համացանցը որպես ԱՀ ազգային անվտանգության տեղեկատվական պաշտպանության հարթակ, Նորավանք, 21-րդ դար, Եր. 2013, թիվ 6 (52), էջ 35-61:
197. Աթանեսյան Է., «Ջոհի կերպարը» որպես Ադրբեջանի քարոզչության գործիք Ղարաքաղյան հակամարտության համատեքստում, Հայկական բանակ, Եր., ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2010, թիվ 3 (65), էջ 101-110:
198. Ահարոնյան Վ., Ադրբեջանն ահաբեկչական պետություն է, <http://armenpress.am/arm/print/418188>.
199. Ավագյան Ա., Թուրք ազգայնամուլների գործունեությունն Ադրբեջանում 1990-1994 թթ., «Հայկական բանակ», Եր., ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2006, թիվ 3 (49), 48-57 էջերը:
200. Արիֆ Յունուսի Արմենիա.ազ կայքին տված հարցազրույցը, 23.06.2011, <http://armenia.az/articles/8523/>.
201. Արշակյան Գ., Եղիազարյան Ա., Թուրքիայի քաղաքականությունը Անդրկովկասում և թուրք-ադրբեջանական հարաբերությունները 2002-2008 թթ., Նորավանք, 21-րդ դար, N 6 (46), Եր., 2012, 35-54 էջերը:
202. Բալասանյան Վ., Ղարաքաղյան պատերազմում չեչեններին տված դասը, 21 նոյեմբերի 2013, <http://www.yerkir.am/news/view/58587.html>.
203. Բարսեղյան Ա., Թուրք-ադրբեջանական դուետի 2015 թ.-ի հակահայկական օրակարգը, <http://politics.am/?p=160&l=am/turq-adrbejanakan+dueti+2015t-i+hakahaykakan+orakargy+>.
204. Բարսեղյան Ա., Վերջին զարգացումներն Ադրբեջանում, [http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT\\_ID=14029](http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=14029).

205. Քերարյան Կ., Ակնհայտ է, որ Կարեն Պետրոսյանին սպանել են, <http://armenpress.am/arm/news/772022/its-obvious-that-karen-petrosyan-was-killed-analyst.html>.
206. Բոյաջյան Վ., Հարավային Ադրբեջանի թնջուկը, <http://www.armtimes.com/hy/read/31387>.
207. Գիլյասանդանեան Ա., Անդրկովկասի Հանրապետությունները, «Հայրենիք», թիվ 4, Բոստոն, 1967:
208. Գրանմայն Ալիի (Լոնդոնի Մերձավոր Արևելքի ինստիտուտի պրոֆեսոր) հարցազրույցը 08.02.2012 թ., <http://www.armtimes.com/hy/read/31387>.
209. Գրիգորյան Ա., Արցախյան զինվորականների լկտի գործողությունները, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 7 մարտ 1991 թ., թիւ 50 (113), էջ 1:
210. Գրիգորյան Ա., Հեռացրել են ճշմարտության համար, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991թ., յանուար 18, թիւ 13-14 (77), էջ 6:
211. Գրիգորյան Ա., Սովորական ազգայնամոլություն, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., փետրվարի 6, թիւ 28 (91), էջ 1:
212. Գրիգորյան Ա., Ստեփանակերտ. 17-ը կոյեմբերի 1990 թ., Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1990 թ., կոյեմբերի 18, թիւ 31, էջ 4:
213. Դավթյան Գ., Բռնագաղթ. հաղթության տարբերակ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 31, թիւ 118 (181), էջ 2:
214. Դավիթավյան Տ., Ադրբեջանի հատուկ ծառայությունների հակահայ գործունեությունը 1988-1994 թթ., Բանբեր Երևանի համալսարանի, Եր., ԵՊՀ, 2015, թիվ 1 (16), էջ 3-16:
215. Դավիթավյան Տ., Ռազմական համագործակցությունը Ադրբեջանի և Թուրքիայի միջև ընդդեմ Հայաստանի (1918-1920 թթ.), Պատմություն և մշակույթ, Հայագիտական հանդես, ԵՊՀ, Եր., 2014, էջ 202-211:
216. Դեմոյան Հ., Լեռնային Ղարաբաղի եիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, <http://www.noravank>.



217. Ջոհրաբյան Է., Թուրք-թաթարական (աղբրեջանական) հակահայկական շարժումները Կարսի մարզում 1919 թ. և 1920 թ. սկզբին, Բանբեր Երևանի համալսարանի, Եր., ԵՊՀ, 2012, թիվ 138.6, 3-17 էջերը:
218. Էլիբեգովա Ա., Աղբրեջանական մտավորականության հակահայկական հոետորաբանությունը խաղաղարարության հետ համատեղելի չէ, <http://theanalyticon.com/?p=3161>, ապրիլ, 2013:
219. Էվոյան Լ., Աղբրեջանի վերնախավի ձևավորման գործընթացը 1989-1994 թթ., Լորավանք, 21-րդ դար, Եր., 2012, թիվ 6 (46), 55-71 էջերը:
220. Էվոյան Լ., «Աղբրեջանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև ռազմավարական գործընկերության ու փոխադարձ օգնության մասին պայմանագիրը»՝ թուրք-աղբրեջանական երկկողմ հարաբերությունների որակապես նոր փուլի սկիզբ, Հայկական բանակ, Եր., ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2012, թիվ 3 (73), էջ 79-88:
221. Իսրայելյան Ա., Իրանի կրոնական քաղաքականությունն Աղբրեջանի նկատմամբ (2010-2016 թթ.), <http://ysu.am/files/irani-kronakan-qaghaqakanutyun.pdf>.
222. ԼՂԻՄ իրավապահ մարմինների աշխատողների դիմումը, Ուրբաթ, 01.03.1991 թ., էջ 3:
223. Խոջագորյան Վ., Դեմոգրաֆիական պատկերն Աղբրեջանի զինված ուժերում, <http://razm.info/31391>.
224. ԽՍՀՄ Ներքին գործերի մինիստր Վ. Վ. Բակատինի Էլույթը ԽՍՀՄ Գերագույն խորհրդի երրորդ նստաշրջանի 1990 թ. փետրվարի 19-ին կայացած երկու պալատների համատեղ դոնիակ լիազումար նիստում, Օրինապահության դիրքերում, 27 մարտի 1990 թ., N 2, էջ 2, 6:
225. ԽՍՀՄ ՊԱԿ-ին, ՊՆ-ին և ԼԳՆ-ին Հայաստանի ԼԳՆ-ից և ՊԱԿ-ից ուղղված դիմումը, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., ապրիլ 5, թիվ 77-78 (141), էջ 1-2:
226. Կարսապետյան Բ., Վտանգավոր հանցագործը օղակայանի պարես, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 15 յա-

նույն 1991 թ., թիւ 10 (73), էջ 2:

227. Կիրակոսյան Ռ., Սումգայիթի ողբերգությունը կազմակերպված էր Ալլրեջանի հատուկ ծառայությունների կողմից, <http://armarthur.com/sumgajithi-olberegoutiounler-kazmakiheray/>:
228. Հակոբյան Թ., Թուրքիան սպասում է Հայաստան ներխուժելու հարմար պահի, հատված «Հայերը և թուրքերը» գրքից, <http://www.anjarc.am/2015/10/12/turkey-armenia-invade-1993>:
229. Հակոբյան Թ., Ապրիլյան 4-օրյա պատերազմ. արդյունքներ, դասեր, առասպելներ, <http://www.civilnet.am/news/2016/06/01/voices-tatul-hakobyan-37/294160>:
230. Հակոբյան Մ., Խորհրդային առաջին տարիների հայ-ադրբեջանական տնտեսական կապերի պատմությունից (1921-1922 թթ.), Բակմեր Երևանի համալսարանի, Եր., ԵՊՀ, 2011, թիվ 134.6, էջ 15-23:
231. Հակոբյան Տ., Օրինապահություն կայսերական ձևով, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 4 յանուար 1991 թ., թիւ 2 (65), էջ 1:
232. Հակոբջանյան Ա., Գորբաչովը պետք է դատվի, Արցախական, 1991 թ. սեպտեմբեր, թիվ 14, էջ 3:
233. Համբարյան Գ, Ալիևյան վարչակարգը բոլոր առումներով օգտագործեց Վահան Մարտիրոսօղյուն և նետեց ադրաբկը, <http://mamul.am/am/news/105897/>.
234. Հարությունյան Ա., Թուրքական հատուկ ծառայությունների ստեղծման պատմությունը և դրանց գործունեությունը արդի փուլում, Թուրքիա. անվտանգության ու պաշտպանության հիմնախնդիրները, վերլուծական նյութեր, Եր., Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, 2007, 158-180 էջերը:
235. Հարությունյան Գ., Տեղեկատվական պատերազմները և ԱՀ-ն, Գլոբուս վերլուծական տեղեկագիր, Նորավանք ԳԿՀ, Եր., 2008, թիվ 2, 3-5 էջերը:
236. ՀԾԴ տեղեկատու կենտրոն, Ադրբեջանի հատուկ նշանակության ջոկատների հերթական ձեռնարկումը, Հայաս-

տանի Հանրապետություն օրաթերթ, 15 մարտ 1991 թ., թիվ 58 (121), էջ 1:

237. ՀՀ ԱԱԾ մարմինների աշխատակցի օրվա առթիվ ՀՀ ԱԱԾ տնօրեն Գ. Գ. Հակոբյանի ելույթը, 18.12.2015 թ., <http://www.sns.am/index.php/am/news/296-18122015>.
238. Հովհաննիսյան Ա., ... որ վերջանա այս մղձավանջը, Երեկոյան Երևան, 27 հոկտեմբերի 1988 թ., N 252 (9323), էջ 3-4:
239. Հովհաննիսյան Տ., Լարդարան. Աղբրեջանի շիաների ըմբոստ ավանդ մեկ տարի անց, 25.11.2016 թ., <http://razm.info/92210>:
240. Հովսեփյան Ա., Թուրքիայի Հարավկովկասյան քաղաքականության արդի դրսևորումները, Բանբեր Երևանի համալսարանի, ԵՂՀ, Եր., 2014, N 1 (142), էջ 55-63:
241. Հովսեփյան Ա., Ղարաբաղյան քառօրյա պատերազմն ու թուրքական հաշվարկները, 11.04.2016 թ., <http://armedia.am/arm/news/32516/xarabaxyan-qarorya-paterazmn-u-turqakan-hashvarknery.html>.
242. Հովսեփյան Լ., Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ, Դրօշակ, Լոյեմբեր, 2010, թիվ 11:
243. Հովսեփյան Լ. Տարածաշրջանում Թուրքիան ստանձնել է կոնֆլիկտաձիլն դերակատարություն, 12 ապրիլի, 2016 թ., <https://armenpress.am/arm/news/843187/taratsashrjanum-turqian-standznel-e-konfliktatsin-derakatarutyun.html>.
244. Ղազախեցյան Վ., Աղբրեջանի քայքայիչ գործունեությունը Հայաստանում 1920 թ., Վեմ համահայկական հանդես, Եր., 2013 թ. հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ 225-238:
245. Ղարաբաղցիներու կոչը ղարաբաղցիներուն, Զարթօսք, 01 մարտի 1988 թ., թիվ 118 (15, 145), էջ 2:
246. Ղուլյան Յու., Աղբրեջանի հակահայկական քարոզչությունը 1918-1920 թթ., [http://raber.asj-oa.am/479/1/1\\_Gulyan\\_%2B12.pdf](http://raber.asj-oa.am/479/1/1_Gulyan_%2B12.pdf).
247. Ղուլյան Յու., Հայերի իրավաքաղաքական դրությունը Աղբրեջանում (1918 թ. սեպտեմբեր-ոկտեմբեր), Բանբեր Երևանի համալսարանի, Եր., ԵՂՀ, 2013, թիվ 140.6, էջ 58-67:

248. Ղույսան Յու., Հայերի մասնակցությունը Ադրբեջանի իշխանության մարմիններին (1919 թ. փետրվար-1920 թ. ապրիլ), Բանբեր Երևանի համալսարանի, Եր. ԵՊՀ հրատ., 2011, թիվ 134.6, էջ 3-14:
249. Մամիկոնյան Լ., Ադրբեջանը ՄԱԿ-ում հավելյալ լծակ ստացավ, <http://www.chi.am/index.cfm?objectID=80F51EE0-8DC0-11E0-9A42005056A30FF7&year=2006&month=05&legacyURL=060513/06051306>.
250. Մանուկյան Ա., Ականատեսի վկայություններ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991թ., մայիսի 3, թիւ 99 (162), էջ 1:
251. Մանուկյան Ա., Անվտանգության մարմինների ձևավորումն ու գործունեությունը Հայաստանի երրորդ Հանրապետությունում, Ազգային անվտանգության հիմնահարցերը համաշխարհայինացման պայմաններում (միջգլխաճյուղային տեսանկյուններ) հանրապետական գիտաժողովի նյութեր, 4-5 նոյեմբերի 2014 թ., Հայ-ռուսական (սլավոնական) համալսարան, Եր., 2015, էջ 214-229:
252. Մարգարյան Ա., Բանկի անվտանգության ծառայության ղեկավարը՝ Ադրբեջանի ՊՆ հետախուզության վարչության պետ, 27 հունվարի 2014 թ., <http://razm.info/30249>.
253. Մարտիրոսյան Ս., Ադրբեջանական հաքերները թիրախավորում են հայ օգտատերերին, [http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT\\_ID=15580](http://www.noravank.am/arm/articles/security/detail.php?ELEMENT_ID=15580).
254. Մարտիրոսյան Ս., Կիրերը նդհարումներ Հայաստանի և Ադրբեջանի միջև. իրավիճակի զարգացման դինամիկան, <http://theanalyticon.com/?p=4580>.
255. Մարտոյան Լ., ռուսական գեղի, ՕՍՕՆ-ի և Գետաշենի հերոսամարտի մասին, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991թ., մայիսի 15, թիւ 107 (170), էջ 2-3:
256. Մելիքսեթյան Հ., Հրապարակվել է Քարվաճառում ձերբակալված ադրբեջանցիների դատավճիռը, 29 դեկտեմբերի 2014 թ., <http://razm.info/58078>.
257. Մենդելիչ Է., Ջարդերի ձեռնարկ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 13 փետրվար 1991 թ., թիւ 33 (96), էջ 3:

258. Միրզոյան Մ., Արցախում կոլեկտիվացման շրջանում Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության հարցի շուրջ, Հայկական բանակ, Եր., ՀՀ ՊՆ ԱՌՀԻ, 2008, 2-3 (56-57), էջ 176-184:
259. Միքայելյան Դ., Ուլքեր և խաշնարածի «արտահագուստով» դիվերսանտները, 27.09.2014, [http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20140927\\_23&flag=am](http://www.hhpress.am/?sub=hodv&hodv=20140927_23&flag=am).
260. Մլիթարյան Ի., Ոստ Փոլ Գոբլի՝ Մումզայիթի ջարդը ՊԱԿ-ի կազմակերպած ոճիրն էր, 27.02.2015, <http://www.azatutyun.am/content/article/26872078.html>.
261. Մուրադյան Ի., Ադրբեջանի քաղաքականությունը լեզգիների նկատմամբ, <http://www.irates.am/hy/yZ7pj6p8E9mj9MZBfdCsKWegz>.
262. Յալանուզյան Մ., 1993 թվական. զարգացումներն Արցախում և տարածաշրջանում, Իրանը մտնում է խաղի մեջ, 24.08.2012թ., <http://razm.info/7805>.
263. Նահապետյան Հ., Քանի տարեկան է ադրբեջանցի ժողովուրդը. կրկին Ապշերոնյան մահմեդականների ինքնության շուրջ, Նորավանք ԳԿՀ, «21-րդ դար», թիվ 6 (58), Եր., 2014:
264. Ներսիսյան Թ., Մանձարձակությունը պետական քաղաքական մակարդակի վրա է, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991թ., մայիսի 3, թիւ 99 (162), էջ 2:
265. Նշանյան Մ., Քառօրյա պատերազմի «սցենարի հեղինակները», 19.04.2016, <http://www.chi.am/index.cfm?objectid=95EB2BB0-064B-11E6-9A470EB7C0D21663>.
266. Նույն սցենարով, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., մայիսի 16, թիւ 108 (171), էջ 1:
267. Նույնկին Ա., Որտե՞ղ էիր ոուս մտավորականություն, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 5 ապրիլի 1991 թ., թիւ 77-78 (141), էջ 5, ՀԱԱ, Ֆ.1159, ց.1, գ.100, ք.12:
268. Շահան Գանտահարևանի՝ Մումկայիթի Եղնոնագործութեան Զոհերու Յիշատակի Հուարքի Արտասանած Խօսքը, 2014, <http://www.aztagdaily.com/archives/175120>:
269. Շահնագարյան Դ., Քաղաքական իրադրությունն Ադրբե-

- ջանում (1991 թ. մարտ-ապրիլ), Հայաստանի Հանրապետության օրաթերթ, 18 հունիս 1991 թ., թիվ 130 (193), էջ 2:
270. Ով է շահագրգռված կոնֆլիկտի բորբոքմամբ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., ապրիլի 13, թիվ 85-86 (149), էջ 1:
271. Չոբանյան Գ., Իսլամական վարձկանները դարաբաղյան պատերազմում, Վեմ համահայկական հանդես, 2013 թ. հուլիս-սեպտեմբեր, թիվ 3 (43), էջ 163-173:
272. Չոբանյան Գ., Իսլամի քաղաքական դերը հետխորհրդային Ադրբեջանում. Լորավանք ԳԿՀ, 21-րդ Դար, թիվ 2 (48), Եր., 2013, էջ 60-81:
273. Պետրոսյան Գ., Թուրք բարձրաստիճան գեներալի՝ «հատուկ նշանակության» ելույթն առաջնագծում, 14.11.2014, <http://allturkey.am/10840/թուրք-բարձրաստիճան-գեներալի-հատուկ/#sthash.1wcAY0J4.dpbs>.
274. ՌԻՖՍՄԷ-ի ժողպատգամավորների դիմումը, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991 թ., յանուար 26, թիվ 20 (83), էջ 1:
275. Սահակյան Ռ., Հիշողություն սերունդների համար, «02 շաբաթաթերթ», 17 հունվարի 2014 թ., թիվ 1 (1150), էջ 15:
276. Սարգսյան Ա., Ադրբեջանի Կոմկոսի Կեմտկոմի I քարտուղար Ա. Խ. Վեզիրովին, Խորհրդային Հայաստան, Եր., 24 հունիսի 1989:
277. Սարգսյան Ա., Արցախյան գոյամարտը և կրոնը, 2012 թ. օգոստոս, <http://theanalyticon.com/?p=2265>:
278. Սաֆարյան Ս., Դիվերսանտի դիմագիծ. Հասան Հասանով-1, 17 դեկտեմբերի 2014 թ., <http://hetq.am/arm/news/57820/diversanti-dimagits-hasan-hasanov-1.html>.
279. Սաֆարյան Ս., Դիվերսանտի դիմանկար. Հասան Հասանով-2, 20 դեկտեմբերի 2014 թ., <http://hetq.am/arm/news/57874/diversanti-dimankar-hasan-hasanov-2.html>.
280. Ստեփանյան Գ., Հայերի կոտորածներն ու ինքնապաշտպանական մարտերը Լուխի և Արևշ գավառներում 1918-1920 թթ., <http://genhist.asj-ca.am/54/1/23-32.pdf>.
281. Վարդանյան Ժ., Վերջին 12 տարիներին Իրանում տեղի

ունեցած խոշոր ահաբեկչությունները, ժամանակագրություն, հունիս 8, 2017, <http://razm.info/104028>.

282. Փաշայան Ա., Իսլամն Ադրբեջանում. անցյալը և ներկան, Նորավանք ԳԿՀ, ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտ, Եր., 2014, 196 էջ:
283. Փաշայան Ա., Մոզահիդները դարաբաղյան պատերազմում, 06.04.2009, [http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT\\_ID=468](http://www.noravank.am/eng/articles/detail.php?ELEMENT_ID=468).
284. Քերիմլի Ա., Ադրբեջանում քաղաքական իրավիճակն անբարենպաստ է ազատ և արդար ընտրություններ անցկացնելու համար, 20.08.2010, <http://www.panorama.am/am/politics/2010/08/20/ali-kerimli/>.
285. ՕՍՕՆ. Մպանություններ, խոշտանգումներ, ավազակություն, բռնազաղթ, Հայաստանի Հանրապետություն օրաթերթ, 1991թ., հունիսի 28, թիւ 138 (201), էջ 4:
286. «Աքրամ Այլիսլի. գեղարվեստական գործը որպէս քաղաքական մանիֆեստ են քննարկում», <http://www.ara-vot.am/2013/02/12/196053/>.

\*\*\*

287. Ахметели Н., В Тбилиси возмущены исчезновением азербайджанского журналиста, Русская служба Би-би-си, Тбилиси, 31 мая 2017, <http://www.bbc.com/russian/features-40114190>.
288. Бусигын А., Британская разведка теперь вербует через Интернет, <http://www.utro.ru/articles/2005/10/13/485702.shtml>.
289. Всесоюзная перепись населения 1926 года. Национальный состав населения по республикам СССР, [http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr\\_nac\\_26.php?reg=5](http://www.demoscope.ru/weekly/ssp/ussr_nac_26.php?reg=5).
290. Гасимова Х., Особая государственная служба охраны Азербайджана заступила охранять трубу "Баку-Джейхан", <http://www.centrasia.ru/newsA.php?st=1128576000>.
291. Григорян М., «Сумгаит». Дело азербайджанского КГБ, Голос Армении, 26 мая 2015 г., N 54 (20688), с. 1, 5.
292. Гусейн-заде Р., Религия и политика: Взаимоотношения на Азербайджанском фоне, «Центральная Азия и Кавказ», журнал социально-политических исследований, Швеция, 2004, 3

(33), 148-161 сс.

293. Гусейнов А., Армия Азербайджанской Демократической республики, [http://www.ourbaku.com/index.php5/Армия\\_Азербайджанской\\_Демократической\\_республики\\_1918\\_\\_\\_1920](http://www.ourbaku.com/index.php5/Армия_Азербайджанской_Демократической_республики_1918___1920).
294. Исмайллов А., Рамиз Мехтиев, Давай, до свидания, <http://haqqin.az/news/4129>.
295. Кадымбеков З., Овчаренко Г., Азербайджан: уроки и решения, «Правда», 1988, 10 октября, N 284 (25636).
296. К дню рождения Л. П. Берия, <http://revolucia.ru/le389.html>.
297. Керимли Р., Провокация Эльдара Махмудова против Зии Мамедова?, <http://haqqin.az/news/57125>.
298. Лейла Юнус: В следственном изоляторе МНБ Азербайджана применяются страшные пытки, <http://www.panorama.am/ru/society/2013/12/17/l-yunus/>.
299. Лейла Юнус: Докладчики ПАСЕ получили взятки от властей Азербайджана и проигнорировали многочисленные нарушения, <http://www.panorama.am/ru/region/2012/06/13/layla-yunus/>.
300. Материалы по истории органов безопасности Азербайджана, Академия и музей МНБ РА, НУЦ СНБ РА, Ер., 2008, 20 с.
301. Мартирисян С., Вопросы кибербезопасности Армении, Հիփրոսի փրոփիլափան տեղեկագիր, Նորափանր ԳԿԷ, Եր., 2008, քիվ 2, 6-8 էջերը:
302. Микаилоглу Р., Создана Служба внешней разведки Нахчыванской Автономной Республики, 21 Января 2016, <http://ru.ara.az/news/308551>.
303. Мурадян И., Роль Турции и ее спецслужб в формировании кланово-политических структур в Азербайджане, [http://www.bvahan.com/ArmenianWay/aw/igor\\_muradian/turk\\_azer/2.html](http://www.bvahan.com/ArmenianWay/aw/igor_muradian/turk_azer/2.html).
304. Организация, вооружение и тактика действий ДРГ армий основных иностранных государств, [http://goup32441.narod.ru/files/gr/002\\_drg/drg\\_inostr\\_armii.htm](http://goup32441.narod.ru/files/gr/002_drg/drg_inostr_armii.htm).
305. Расулзаде З., Заработал 5 тысяч манатов – поделись с МНБ! Наша трагедия, <http://haqqin.az/news/56719>.
306. «Репортеры без границ» возмущены арестом и обвинением в шпионаже талышского правозащитника в Азербайджане, <http://www.panorama.am/ru/law/2012/07/06/reporters-mamedov/>.
307. Тарасов С., Ермолаев Д., Под псевдонимом «лакербая», <http://rosvesty.ru/1945/interes/5328-pod-psevdonom-lakerbaya/>.



308. «Туран»: В Нахичеване из-за пыток в СИЗО частично парализован активист оппозиции, <http://www.panorama.am/ru/region/2012/01/13/azer-opposition-torture/>.
309. «Туран»: Работники МНБ Азербайджана подбросили активистам намеченной на 10 марта акции протеста наркотики и «коктейли Молотова», <http://www.panorama.am/ru/society/2013/03/09/az-nida/>.
310. Фитудлаев обвинил МНБ Азербайджана в угрозах <http://www.azugor.am/ru/news/2010/06/16/eynul-atulaev/163814>.
311. Эвоян Л., Воздействие внешних акторов на внутривнутриполитическую ситуацию в Азербайджане, *Բախրեր Երևանի հա-իվախարահի*, Եր., ԵՊՀ, 2012, №14, էջ 33-43.
312. Эльчин Гулнев, Азербайджан тесно сотрудничает с НАТО и Евросоюзом, <http://minval.az/news/123474967>.
313. Энгдаль Уильям Ф., Wikileaks - опасное злоупотребление доверием, <http://www.warandpeace.ru/ru/exclusive/view/53593/>.
314. Amnesty International: Руководить Советом Европы будет Азербайджан – страна, где практикуются произвольные аресты и пытки, <http://www.panorama.am/ru/politics/2014/04/09/amnesty-international-azerbaijan/>.

\*\*\*

315. Abbaslı Kənan, Milli Təhlükəsizlik orqanlarının tarixi inkişaf mərhələlərinin müqayisəli təhlili, <https://siyasielmler.wordpress.com/2010/12/07/milli-təhlükəsizlik-orqanlarının-tarixi-inkisaf-mərhələlərinin-muqayisəli-təhlili/>.
316. Adıgözəl Məmmədov, 60 ilin mübahisəsinə son qoyan kitab, <http://publika.az/p/3905>.
317. Əliqismət Bədəlov, Vətənin təhlükəsizliyini qorumaq çox şərəfli işdir, [http://anl.az/down/meqale/xalqqazeti/xalqqazeti\\_mart2009/73000.htm](http://anl.az/down/meqale/xalqqazeti/xalqqazeti_mart2009/73000.htm).
318. Ərəstun Oruçlu: MTN-də önəmli postlar tutan Akif Çovdarov və digərləri Rusiyaya bağlı idi, <http://contact.az/docs/2015-Interview/111700136663az.html>.
319. İlham Abbasov, Azərbaycan Xalq Cümhuriyyəti dövründə milli təhlükəsizlik organlarının təşkili və fəaliyyəti, 20 Mart 2014, <http://respublica-news.az/index.php/dig-r-x-b-rl-r/dig-r-x-b-rl-r/item/2694-azaerbaydzan-khalg-dzumhuriyyaeti-doevrundae-millitaehlukaesizlik-organlarinin-taeshkili-vae-facaliyyaeti>.

320. İsmayilov Ziyəddin Şura oğlu, Kəlbəcərə tək getmə, ata, <http://www.misra.az/other/4131-klbcr-tk-getm-ata-balgq-gg-.html>.
321. Leyla Yunus həbs edildi, 31.07.2014, <http://www.azadliq.info/siyast/49677-leyla-yunusu-yolda-ourladlar.html>.
322. Mədət Quliyev. «250 yararsız şəxs MTN-dən çıxarılb», <http://azpolitika.info/?p=177327>.
323. Zekai Aksakallı: Azərbaycan və Türkiyə əsgəri yenilməzdir, <https://www.youtube.com/watch?v=35Bc9gPQ-jk>.

\*\*\*

324. Cemil Koçak, "Ey Tərihçi Belgen Kadar Konuş!" Belgesel Bir Teşkilatı Mahsusə Öyküsü, 45 tğ, <http://research.sabanci-univ.edu/10/1/3011800000169.pdf>.
325. Cümhurbaşkanı: "Ermenistan İşğal Ettiği Dağlık Karabağ'dan Çıkmalı", <https://www.youtube.com/watch?v=yT46lFQpV0M>.
326. Ergin Sedat, Azərbaycan darbesi için soruşturma açtım, <http://www.hurriyet.com.tr/azerbaycan-darbesi-icin-sorusturma-actirdim-39008622>.

\*\*\*

327. Alexander Murinson, The Ties Between Israel and Azerbaijan, Mideast Security and Policy Studies No. 110, 41 p., <https://besa-center.org/wp-content/uploads/2014/10/MSPS110-web.pdf>.
328. Azerbaijan Jails Opposition Blogger, <http://www.rferl.org/content/azerbaijan-jails-opposition-blogger/25400283.html>.
329. Azerbaijan 2015 international religious freedom report, <https://www.state.gov/documents/organization/256377.pdf>.
330. Bijan DaBell, Iran Minorities 2: Ethnic Diversity, <http://iran-primer.usip.org/blog/2013/sep/03/iran-minorities-2-ethnic-diversity>.
331. Consideration of the appeal of Elsever Mursalli, <http://en.aidhr.org/?p=590>.
332. Crackdown on human rights in Azerbaijan, <http://www.balcan-icaucaso.org/eng/Regions-and-countries/Azerbaijan/Crackdown-on-human-rights-in-Azerbaijan-155040>.
333. Faraj Kerimli sentenced to 6.5 years in prison, <http://hrf-report/faraj-kerimli-sentenced-to-6-5-years-in-prison/>.
334. Journalist Arshad Ibrahimov is arrested in the city of Ganja, <http://en.aidhr.org/?p=563>.
335. Human rights activist detained in Geychay region,

[http://www.contact.az/docs/2015/Social/022400107821en.htm#.VaLBr1\\_tmkq](http://www.contact.az/docs/2015/Social/022400107821en.htm#.VaLBr1_tmkq)

336. Lozovsky I., How Azerbaijan and Its Lobbyists Spin Congress, <http://foreignpolicy.com/2015/06/11/how-azerbaijan-and-its-lobbyists-spin-congress/>.
337. Murad Adilov sentenced to 6 years in prison, <http://hrf.report/murad-adilov-sentenced-to-6-years-in-prison/>.
338. OSCE Project Co-ordinator in Baku discontinues its operations in Azerbaijan, 4 July 2015, <http://www.osce.org/secretariat/170146>.
339. PFPA Activist Imprisoned in Solitary Confinement, [http://www.contact.az/docs/2015/Politics/051100115619en.htm#.VaKq0F\\_tmkq](http://www.contact.az/docs/2015/Politics/051100115619en.htm#.VaKq0F_tmkq).
340. Resolution of Azeri National Platform condemning verdict against Yadigar Sadigov, <http://eap-csf.eu/en/news-events/news/resolution-of-azeri-national-platform-condemning-verdict-against-yadigar-sadigov/>.
341. Six Years' Jail for Leading Azeri NGO Head, <https://iwpr.net/global-voices/six-years-jail-leading-azeri-ngo-head>.
342. Statement by National Council of Democratic Forces on Fuad Ahmadli, [http://www.contact.az/docs/2015/Politics/050800115416en.htm#.VaLCbl\\_tmk](http://www.contact.az/docs/2015/Politics/050800115416en.htm#.VaLCbl_tmk).
343. Two Prominent Azerbaijani Oppositionists Sentenced On Fabricated Charges, <http://www.rferl.org/content/caucasus-report-azerbaijan-opposition-jailings/25306224.html>
344. Two rights activists arrested in Azerbaijan, <https://humanrightsaz.wordpress.com/2014/11/26/two-rights-activists-arrested-in-azerbaijan/>.
345. Two rights activists arrested in Azerbaijan, <https://humanright-saz.wordpress.com/2014/11/26/two-rights-activists-arrested-in-azerbaijan/>.
346. USCIRF: Azərbaycanı dini azadlıqlar pisləşməkdə davam edir, [https://www.amerikaninsesi.org/a/sin\\_azadliq/2744453.html](https://www.amerikaninsesi.org/a/sin_azadliq/2744453.html).
347. U.S. Citizen Not Allowed To Leave Azerbaijan, <http://www.rferl.org/content/us-citizen-barred-from-leaving-azerbaijan-nuri/26566855.html>.

\*\*\*

348. Bundestag verurteilt Situation in Aserbajdschan, [http://www.deutschlandfunk.de/europaspiele-bundestag-verurteilt-situation-in-aserbajdschan.890.de.html?dram:article\\_id=322520](http://www.deutschlandfunk.de/europaspiele-bundestag-verurteilt-situation-in-aserbajdschan.890.de.html?dram:article_id=322520).



[2000] 78

ՀԱՅ ԴՐՈՍԱԿԱՆ ՓԻՆ. ՓԻՆ.



FL0645078

A. E.  
107015